Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

[illegible]

[illegible]

(1920)

9(47.925)
И-52

Շ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1920)

9(47.925)
Ա-52

ՄՈՍԿՎԱ—1926

19 AUG 2011
24 JAN 2006

№ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 5

9(47.925)
Ա-52

Շ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1920 թ.)

ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏՀՐԱՏ № 323
ՄՈՍԿՎԱ—1926

0 8 FEB 2013

5480

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР

20436-59

Главлит 58349. Тираж 3000.

3-я Типография Госиздата С. С. Р. Армении.
Москва, Армянский пер. 2.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Յերկու շաբաթից հետո, մայիսյան տոնի հետ միասին, մենք պիտի Հայաստանում տոնենք նաև մայիսյան ապստամբության վեցերորդ տարեդարձը ու թեակոխենք նրա յոթերորդ տարին։ Սակայն մինչև այս օր էլ այդ ապստամբության թե նկարագիրը և թե մանավանդ գնահատականը մեր հեղափոխական գրականության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել, յեթե չհաշվենք ընկ. Աշոտ Հովհաննիսյանի «Հայաստանի հուլիսն ու հոկտեմբերը» գրքույկը, վորը միակն է մայիսյան անցքերին նվիրված։

Հիշյալ գրքույկը, լինելով առ այժմ միակը և առաջին փորձը, ինչպես և հեղինակը ակնարկել է այդ մասին նախաբանում, չէր կարող զերծ լինել, և զերծ չէ, թերություններից ու սխալներից։ Մյուս կողմից էլ մի գրքի և նույնիսկ մի հեղինակի գործ չէ սպառել հիմնական հարցերը այնպիսի մի պատմական, խոշոր և մասսայական յերևույթի, վորպիսին մայիսյան ապստամբությունն է Հայաստանում։ Ընկ. Աշ. Հով.-նի գիրքը պարունակում է իր մեջ մեր կողմից նկատված մի քանի փաստական սխալներ, վորոնց մենք հնարավորության չափ մատնանշում ենք ծանոթությունների մեջ, և մի հիմնական սխալ միտք, վորի քննադատությանը առանձին գլուխ ենք նվիրում։

Նկատի ունենալով վերոհիշյալը, մենք ցանկանում ենք այս գրքույկով մեր ույժերի ներածին չափ մի փոքրիկ ծառայություն մատուցել մեր հեղափոխական գրականությանը, ծանրանալով գլխավորապես մայիսյան դեպքերի գնահատական կողմի վրա և շոշափելով առանձնապես նրանց ծագման և պարտության հիմնական պատճառները։

Մեր նպատակն էր այս աշխատության լույս ընծայումը հարմարեցնել մայիսյան ապստամբության վեցերորդ տարեդարձին։ Բայց մեզնից անկախ պատճառներով գրքի հրատարակությունը ձգձգվեց, և մենք չկարողացանք իրագործել այդ նպատակը։

Շ. Ա.

15 ապրիլի, 1926 թ.
Մոսկվա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Միակ հանգամանքը, որ յերբևիցե կարող էր քաղաքական համերաշխություն ստեղծել, և ստեղծեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Անդրկովկասի ունևոր դասակարգերի համար, անկախ նրանց ազգային խմբավորումներից, դա—պայքարն էր բոլշևիզմի դեմ։ Մնացյալ բոլոր պարագաներում այդ դասակարգերի ազգային խմբավորումների և նրանց շահերին աշկարա կամ գաղտնորեն սպասավորող քաղաքական կուսակցությունների միջև փոխադարձ ատելությունն ու պայքարն անխուսափելի եյին։ Յեվ յեթե առաջին հանգամանքը մի գրավական էր նրանց համար՝ Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու, և այն, այսպես ասած, անկախ հայտարարելու խնդրում, ապա յերկրորդը պետք հարկադրեր նրանց կատարել հաջորդ, Անդրկովկասյան ժողովրդների համար ոչ պակաս, թերևս ավելի կործանիչ քայլը,—Անդրկովկասը բաժանել յերեք ինքնուրույն և ինքնամփոփ ազգային տերիտորիալ պատառների՝ մենշևիկյան Վրաստանի, մուսաֆաթական Ադրբեջանի և դաշնակցական Հայաստանի, հակադրելով նրանց միմյանց դեմ՝ ազգային հողի վրա։

Գերման-տաճկական իմպերիալիզմի ոժանդակությունն ու աջակցությունը, ինչպես առաջին, այնպես և յերկրորդ դեպքում, խոշոր էր, յեթե չասել վճռական։ Սակայն բոլոր գույների ու ազգությունների հակահեղափոխական ույժերն Անդրկովկասում միատեղ ու միաժամանակ եյին պայքարում բոլշևիզմի դեմ դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը և Բրեստի դաշնագիրը, որը լոկ արտաքին-ձևական առիթ յեղավ Անդրկովկասն անկախ հայտարարելու*)։ Մյուս կողմից էլ տակավին 17 թ. Փետրվարյան հե-

---

*) Բնորոշ է, որ Անդրկովկասյան պատվիրակությունը՝ Չխենկելու գլխավորությամբ՝ Բաթումում խնդրում և աղերսում էր տաճիկներին ընդունել Բրեստի դաշնագիրը, գեթ որպես հաշտարար բանակցությունների հիմք։ Այսպիսով խոսքը ոչ միայն Բրեստի զիջումներին էր վերաբերում, այլև ուրիշ զիջումների—Ախալքալաքի և Ախալցխայի գավառները տաճիկ կառավարության հանձնելուն, Անդրկովկասյան յերկաթուղագիծը նրա կոնտրոլի տակ դնելուն և այլն։

ղափոխությունից հետո, սկսեցին կազմակերպվել ազգային գնդեր և ազգային խորհուրդներ, վորոնք արդեն ապագա անդրկովկասյան ազգային հակահեղափոխական հանրապետությունների սաղմերն եյին: Այդպիսով թե Փետրվարյան և թե մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անդրկովկասում կատարված բոլոր հակահեղափոխական անցքերի արմատը գտնվում եր յերկրի ներսում ծավալված բոլշևիկական շարժման ու Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքար մղելու և առանձին ազգությունների, գլխավորապես հայ, վրացական ու թրքական (ադրբեջանական) բուրժուական—կալվածատիրական խավերի միջև յեղած ներհակության մեջ, խավեր, վորոնք հակասական շահեր և տարբեր քաղաքական որիենտացիաներ ունեյին: Իսկ գերման—տաճկական իմպերիալիզմը, ապա նաև Անտանտայինը, միայն արտաքին, ճիշտ ե, չափազանց ուժեղ և վճռական գործոններ եյին թե բոլշևիզմի դեմ պայքարելու և թե ազգայնական ներհակությունն ուժեղացնելու գործում:

18 թվականի գարունը, վոր ազդանշվեց վերոհիշյալ յերկու պատմական ակտերով, նոր արյունալի գլուխ բացեց Անդրկովկասի ժողովրդների պատմության մեջ: Այդ գլխի հեղինակները հանդիսացան—վերջնականապես բուրժուազիայի և կալվածատերերի սպասավոր դարձած վրացական մենշևիկների կուսակցությունը, ադրբեջանական խաների, բեկերի և յերիտասարդ բուրժուազիայի Մուսավաթ կուսակցությունը և հայկական մարտնչող ազգայնականության կուսակցությունը—Դաշնակցությունը:

Բայց վորքան ել այդ կուսակցությունները քաղաքականապես միացած լինեյին Խորհրդային Ռուսաստանի և ներքին հեղափոխական ուժերի դեմ պայքար մղելիս, վորքան ել նրանք համերաշխ լինեյին ռուս հեղափոխական զինվորներին Շամխորում արյունահեղ կերպով զինաթափ անելու մեջ, Ալեքսանդրյան այգում խաղաղ բանվորական միտինգը հրացանազարկ անելու գործում, Բաքվի պրոլետարիատի հերոսական ապստամբությունը ճնշելու խնդրում, այնուամենայնիվ, նրանք մատնված եյին ներհակության և փոխադարձ թշնամանքի: Այն դասակարգերի զորեղ բազուկը, վորոնց շահերի պաշտպանու-

թյան համար այդ կուսակցությունները զենք և իշխանություն եյին վերցրել, տեսանելի կամ անտեսանելի կերպով հիմնականում ուղղություն եր տալիս նրանց պայքարին և ղեկավարում եր նրանց քաղաքական գործողությունները, ի հարկե, դրսի իմպերիալիստական ուժերի գլխավորությամբ: Բայց այդ դասակարգերի միջև տիրող հակասությունները՝ վերածված խորը ազգային թշնամանքի՝ միաժամանակ և անխուսափելիորեն պետք ե նրանց մղեյին և ներքին պայքարի, վորը նույնպես իր հերթին պետք ե խորացվեր և ոգտագործվեր, և խորացվում ու ոգտագործվում եր դրսի նույն ուժերի կողմից: Յեվ վորքան քիչ եր դառնում բոլշևիկական վտանգը, այնքան ավելի շատ եր ուժեղանում նրանց ներքին պայքարը: Այդ տեսակետից մենշևիկներին չեյին փրկում և չփրկեցին վո՛չ նրանց մարքսիստական ֆրազեոլոգիան, վո՛չ նրանց մինչ այդ ել կասկածելի ինտերնացիոնալիզմը, վորով նրանք գունավորել եյին իրենց անցյալում ու շարունակում եյին գունավորել:

Դաշնակցականները գուցե ժխտել ուզենան իրենց անմիջական մասնակցությունը հիշած պատմական անցքերից վորևե մեկում կամ նույնիսկ բոլոր այդ անցքերում: «Ալեքսանդրյան այգու միտինգը հրացանազարկ արին մենշևիկները, իսկ ռուսական զորքերին զինաթափեցին մուսաֆաթականները և մենշևիկները, մենք այստեղ ի՞նչ գործ ունենք»—կասի քաղաքականության մեջ անուղղելի բթամիտ դաշնակցականը: Յեթե նույնիսկ հավատալու լինենք, վոր դաշնակցականներն անմիջական մասնակցություն չեն ունեցել այդ դեպքերում, չնայած մենշևիկները և մուսաֆաթականները կարող են պնդել և պնդում եյին հակառակը, հարցը դրանում չե, այլ այն զզվելի քաղաքական պայքարի մեջ, վոր վարվում եր բանվորա-գյուղացիական հեղափոխության դեմ և վորին դաշնակցականները մասնակցում եյին վոչ պակաս չափով, քան մուսաֆաթականները և մենշևիկները: Այդ անցքերը միայն առանձին և անխուսափելի գործնական հետևանքներ եյին ընդհանուր հակա-բոլշևիկյան պայքարի: Դաշնակցականները կարող եյին միայն ափսոսալ, վոր Շամխորի զենքն ընկավ վոչ թե իրենց, այլ մուսաֆաթականների

ձեռքը։ Բայց դա միևնույն է մեզ համար. Շամխորի զենքը դաշնակցականների ձեռքում վոչ պակաս դեր կխաղար ընդդեմ հեղափոխության և ազգայնական սպանդանոցում, քան մուսաֆաթականների ձեռքում։ Հայկական Ազգային Խորհուրդը հայտարարում էր, վոր ռուսական զորքերի հեռացումը հայերի (իմա հայ բուրժուազիայի) համար կործանիչ է համարում։ Յեթե խոսքը ցարական զորքերի մասին էր, ապա դա ճիշտ էր, իսկ յեթե բոլշևիկորեն տրամադրված հեղափոխական զորքերի,—ապա դա ճիշտ չէր։ Դաշնակցության վողջ հետագա պատմությունը և քաղաքականությունը դրա ապացույցն են հանդիսանում. այդ ավելի կպարզենք հետագայում։ Իսկ ինչ վերաբերում է 1918 թվականի Բաքվի դեպքերին, մենք կարող ենք հիշել, վոր դաշնակցականները մի պահ մուսաֆաթականների դեմ կռվել են բոլշևիկների հետ միասին։ Բայց կհիշենք և կընդգծենք նաև այն, վոր նրանք կռվել են միայն այն նպատակով, վոր փոքրիկ իսկ հնարավորության դեպքում դավաճանեյին Բաքվի խորհրդին։ Յեվ այդ արին անգլիացիների ստվերն յերևալուն պես։ Վո՞րն էր ավելի լավ—դաշնակցականների դավաճանական քաղաքականությունը, թե՝ մուսաֆաթականների բացահայտ, ճակատ առ ճակատ պայքարը Բաքու քաղաքի՝ այդ բոլշևիկական ամրոցի դեմ։ Վո՞րն էր ավելի լավ—տապալել Խորհրդային Իշխանությունը անգլիացիների օգնությամբ, թե տաճիկների օգնությամբ։ Այդ մասին դաշնակցականը թող վիճի մուսաֆաթականի հետ՝ ապացուցելու, վոր ինքն ավելի խորամանկ էր և ավելի լավ էր պայքարում բոլշևիզմի դեմ։ Մեզ համար պարզ է, վոր Բաքվի Խորհրդային Իշխանության տապալման պատմության մեջ մուսաֆաթականները և դաշնակցականները հանդես բերեցին միևնույն նպատակը և միաժամանակ դրսևորեցին իրենց միջև յեղած ներհակությունը, ըստ վորում նրանցից յուրաքանչյուրը ըստ իր և հանուն իր շահերի յեր օգտագործում պայքարը բոլշևիկների դեմ։

Մենշևիկները, վոր բռնել եյին գերմանական որիենտացիայի ճամփան, իսկ մուսաֆաթականները, ըստ իրենց ավանդության, տաճկական որիենտացիայի ուղին, 18 թվի մայի-

սին թաղեցին մեռածին Անդրկովկասյան Սեյմի նեխված դիակը և հայտարարեցին Վրաստանի ու Ազրբեյջանի անկախությունը։ Դաշնակցական կուսակցությունը խրամատ մտավ Յերևանյան նահանգի տերրիտորիայում, դարձնելով այն ռազմաքաղաքական մի բազա և սպասելով հարմար մոմենտի իր հետագա արկածախնդրական գործողությունների համար, վորոնց իմաստը ինչ վոր ցնորական, ծովից-ծով, մեծ և անկախ Հայաստան ստեղծելն էր։ Հիմար այն դրությունը, վորի մեջ ընկան դաշնակցականները, կայանում էր վոչ միայն նրանում, վոր հայկական բուրժուազիայի գրեթե ամբողջ գույքը և բոլոր ձեռնարկությունները (դաշնակցականների ըմբռնմամբ հայ ազգի հարստությունը) գտնվում եյին Վրաստանում և Ազրբեյջանում—Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և այլն, այլև նրանում, վոր Յերևանյան նահանգը, թշնամի Տաճկաստանին սահմանակից լինելով և կտրված ծովերից ու Բաքու-Թիֆլիս գլխավոր յերկաթուղագծից,—այդ բուրժուազիայի համար գրեթե վոչ մի տնտեսական շահախնդրություն չէր ներկայացնում, բացի ժամանակավոր-քաղաքականից։ Այդ հանգամանքը չէր կարող չանհանգստացնել, և ուժեղ կերպով անհանգստացնում էր, Դաշնակցություն կուսակցությանը։

Ահա թե ինչու Բաքվում Խորհրդային իշխանության տապալումից և Անտանտի հաղթությունից ու տաճիկ զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց անմիջապես հետո, դաշնակցականները զինական հարձակման են դիմում յերկու ուղղությամբ, այդ հարձակումն ուղեկցելով համապատասխան ագիտացիայով Յեվրոպայում. մեկը՝ Վրաստանի վրա—Բորչալույի և Ախալքալաքի գավառների ու ապագա յերևակայական յերկաթուղագծի համար, վոր Արդահանով պիտի տաներ դեպի Սև ծովը, և Ազրբեյջանի վրա—Ղարաբաղի համար,—Շուշի քաղաքով, վորտեղից նրանք ճամփա պիտի բանային դեպի Գանձակ և Յեվլախ կայարանը և ել դենը, Քուռ գետով դեպի Կասպից ծովը։ Այս ամենը գաղտնիք չէր, այդ ամենի մասին վոչ միայն խոսում եյին, այլև մեծ Հայաստանի նման նախագծերը, տաճկական վեց վիլայեթներով և Կիլիկիայով ու վե-

րոհիշյալ Անդրկովկասյան սահմաններով, ներկայացվում եյին
Անտանտին, տպագրվում ու տարածվում եյին Ամերիկայում
և Յեվրոպայում: Դեռ ավելին, 1919 թվի մայիսին դաշնակ-
ցական կառավարությունը հայտարարեց, վոր նա վոչ միայն
փաստապես գոյություն ունեցող փոքրիկ Հայաստանի կառա-
վարությունն ե հանդիսանում, այլ և մեծ ու գոյություն չունեցող
Հայաստանի: Ցնորելու սահման չեր մնում այլ ևս, մնում եր միայն
«գործնականորեն նախապատրաստել» փոքրիկ մարդկանց այդ մեծ
իմպերիալիստական մտըրմունքի դիպլոմատիական լուծումը:

Ադրբեջանի դեմ վարած պատերազմը պաշտոնական պա-
տերազմի բնույթ չեր կրում, այլ Ղարաբաղի ու Ղազախի
սահմաններում կատարվող հաճախակի սահմանային ընդհա-
րումների, զինական ինտրիգների և պարտիզանական հարձակում-
ների բնույթ, բայց այնուհանդերձ փաստորեն նա պատերազմ
եր և նույնիսկ ավելի վատթար, քան պաշտոնական պատերազմը:

Դաշնակցական «քաջ» խմբապետները կարող են ասել,
և ասում եյին, վոր իրենք ցանկանում եյին ազատել Ղարաբա-
ղի «հայ յեղբայրներին», մուսաֆաթականների ծանր լծից,
Սուլթանովի (Ղարաբաղի նահանգապետի) դաժան հալածանք-
ներից և այլն: Մի կողմ թողնելով, վոր մուսաֆաթականները
նույն բանը կարող են ասել և ասում եյին Նախիջևանի, Բոյուքվե-
դիի և այլ շրջանների մասին նկատենք, վոր այդ ևս ինքնին քաղա-
քական կեղծավոր մի խաղ եր, ինչպես և տաճկահայերի ազատա-
գրումը նրանց ձեռքով տաճկական սուլթանի լծից: Տաճկահայ
ժողովուրդը քսանհինգ տարի շարունակ դաշնակցականների
ձեռքին խոշորագույն գործիք եր՝ նույնիսկ ամբողջ ժողովրդի
կյանքի գնով ստեղծելու մի հայկա-բուրժուական Հայաստան,
վորը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անտանտի
հաղթանակը պարուրված եր «Հայկական հարց» անվամբ՝ իր
զանազան ելևեջներով: Նրանց համար այդպիսի մի իմաստ
ուներ իր նշանակությամբ և Ղարաբաղը: Դա մի փոքրիկ պատու-
հան եր, վորի ապակիները կոպտաբար ջարդելով, դաշնակցականներն
ուզում եյին ցատկել «մեծ սենյակը»: Իմպերիալիստական պետու-
թյունների դրդումներով արկածներ կազմակերպել և թշնամու

ձեռքերով թափել տալ ժողովրդի արյունը, ապա այդ պետու-
թյունների առաջ լալ ու աղերսել մեծ Հայաստան, իբրև հա-
տուցում թափված «քրիստոնեյական արյան համար», անա
ձեզ վայրենի մի քաղաքականություն, վոր կարող եյին կռահել
և կռահել եյին միայն հայ դաշնակցականները: Դաշնակցական-
ները պետք ե վոր հասկանային, վոր տեռորով և պարտիզա-
նական հարձակումներով չեր կարող փրկվել վո՛չ Ղարաբաղի
ժողովուրդը և վոչ ել առհասարակ վորևե մի ժողովուրդ: Նր-
անք այդ տեսակետից բավականաչափ մեծ փորձ ունեյին, բայց
նրանք ուրիշ արվեստ չգիտեյին, և նրանց գոյությունն ել ու-
րիշ իմաստ չուներ:

Իրենց հերթին, Ադրբեջանի մուսաֆաթականների համար
դաշնակցական Հայաստանը մի մշտական սպառնալիք եր և
մեծ խոչնդոտ՝ Տաճկաստան տանող ճամբի վրա: Այդ տեսակե-
տից միևնույն ե, թե ո՞ւմ եր պատկանում հարձակման նա-
խաձեռնությունը: Այդ պատերազմը բղխում եր յերկու տի-
րապետող կուսակցությունների շահերից և ձգտումներից:

Վրացական մենշևիկներն ոգտագործեցին հայ-վրացական
պատերազմը՝ Վրաստանի հայ ազգաբնակության դեմ կիրառե-
լու տակավին չտեսնված հալածանքներ, մասսայական ռեպրե-
սիաներ, ձերբակալություններ, արտաքսումներ և այլն ի
հաճույս վրաց կալվածատերերի և բուրժուազիայի, վորոնք ա-
տում եյին հայ վաճառականին ու ձեռնարկուին և այդ ատե-
լությունը փոխադրում Վրաստանի հայ ազգաբնակության և
ընդհանրապես հայ ժողովրդի վրա:

Հայ-վրացական պատերազմը յերկար չտևեց և վերջացավ
Անտանտի միջամտությամբ ու Բորչալույի գավառի հայկական
(Լոռու) շրջանը Ալլահվերդու պղնձահանքերի հետ միասին չե-
զոք գոտի հայտարարելով: Բայց հայ-թրքական արյունահեղ կռո-
րածները գրեթե անընդհատ շարունակվեցին առանց վորևե կողմի
հաղթության մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը: Ցնցող այդ
դաժանություններն ու վայրագությունները, վոր յերկու կողմից ել
կատարվում եյին ժամանակավորապես ձեռքից ձեռք անցնող գյու-
ղերում, Անդրկովկասյան հակահեղափոխության պատմության

մեջ ամենամռայլ էջերն են կազմում։ Այդպիսի դաժանություններ ու վայրագություններ ազգային փոքրամասնությունների նկատմամբ սիստեմատիկորեն շարունակվում էին նաև թե՛ Հայաստանի և թե Ազրբեջանի ներսում։

Կասկածից դուրս է, վոր Անտանտը ցանկության դեպքում կարող էր դադարեցնել այդ սպանդանոցը, բայց նա Անտանտ չէր լինի, յեթե այդ ցանկանար և կատարեր. ընդհակառակը՝ այդ սպանդանոցին յերկյերեսանիորեն տոն տվողը, վորովհետև նման դրությունը նրան հարկավոր էր առնվազը մինչև Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի յելքը։ Իզուր չէ, վոր անգլիական գեներալ Ռուկերը բավականաչափ անկեղծ կերպով մենշևիկներին սովորեցնում էր դաշնակցականների և մուսաֆաթականների համար լսելի ձայնով. «դաշնակից հանրապետությունները դիտավորություն չունեն շեղվել մանր ազգերի ինքնորոշման մեծ սկզբունքից. նրանք դրանից միայն այն ժամանակ կհրաժարվեն, յերբ կհամաձայնվեն այն փաստի հետ, վոր վորևէ ժամանակավոր անկախ ազգություն կարգ պահպանելու իր անընդունակությամբ (ընդգծումը մերն է) և ագրեսիվ գործողություններով ու նույնիսկ անդադրում յերեխայությամբ և իր սեփական պատվարժանության անպետք ցուցադրությամբ ցույց կտա, վոր նա տեղերքի խաղաղության համար հնարավոր վտանգ է ներկայացնում։ Այդպիսի ազգություն մեծ պետությունները չեն հանդուրժի, վորովհետև նրանք վորոշել են, վոր ամբողջ աշխարհի խաղաղությունը պետք է պահպանվի»)։*

Ազգային հարցը Վրաստանում ստացավ վոչ պակաս սուր բնույթ, քան Հայաստանում և Ազրբեջանում։ Ապստամբության կամ նույնիսկ բողոքի փորձերը Աբխազիայի, Ոսեթյայի և Աջարյայի ժողովուրդների կողմից Վրաստանի իշխանների և կալվածատերերի ու մենշևիկյան ստրապների լծի դեմ, վոր ավելի ծանր էր, քան նույնիսկ ցարականը, ճնշվում էին հրով ու կրակով, մասսայական ձերբակալություններով, գնդակահարություններով և ապստամբ գյուղերը հրի մատնելով։

*) Ձեռքի տակ չունենալով սկզբնաղբյուրը, մեջ ենք բերում Տրոցկու «Между империализмом и революцией» գրքից, եջ 100։

Այսպիսով, բանվորա-գյուղացիական լայն զանգվածների, հեղափոխական ձգտումների և խնդիրների հանդեպ դրված էին ազգային ներհակությունը և բացահայտ, ազգամիջյան թշնամանքը, վոր, իր հերթին, իմպերիալիստական նպատակներով հրահրվում էր ու խորացվում անգլո-ֆրանսական դիպլոմատիայի կողմից։

Սակայն Անդրկովկասյան հակահեղափոխական ապետները, պրոլետարական դասակարգային կռիվների դարաշրջանում բարդացնելով և մաքսիմալ չափով սրելով ազգային հարցը, սրում էին և բարդացնում նաև հողային և բանվորական հարցերը, և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, վորովհետև այդ ամենը բխում էր միևնույն սոցիալական աղբյուրից։ Վրացական և ազրբեջանական կալվածատերերի, իշխանների, բեգերի և խաների հողերը վոչ միայն չխլվեցին և չհանձնվեցին գյուղացիներին, այլև, ընդհակառակը, կալվածատերերը դրա փոխարեն իշխանություն և զենք ստացան ընդդեմ հեղափոխական գյուղացիների։ Հայաստանում, մինչև դաշնակցականների իշխանությունը, գրեթե խոշոր հողային սեփականություն չկար, բայց մի կողմից դաշնակցականներն այդ մասին էլ հոգում էին ի հաշիվ թուրք ազգաբնակության, մյուս կողմից, հողը փաստորեն ներկայացնում էր աշխատավոր գյուղացիների հրեշավոր շահագործման ձևերի և չարաշահության մի նոր աղբյուր. յերրորդ կողմից էլ դեռ մինչ այդ էլ սակավահող հայ գյուղը իր առաջվա ցանքսերի մի յերրորդն անգամ մշակելու հնարավորությունը չուներ։

Յեթե մուսաֆաթականները կարող էին իրենց համար պարտավոր չհամարել հողային հարցը լուծել հօգուտ գյուղացիների, ապա վրացական մենշևիկներին այդ անել հարկադրում էին համենայն դեպս նրանց սոցիալիստական փետուրները, մարքսիստական ֆրազեոլոգիան և վորոշ չափով նրանց անցյալը։ Այդ պարտականությունը նրանք հարկադրված էին կատարել թղթի վրա և բառերով։ Բոլոր նրանց որենքները հողային բարենորոգումների վերաբերյալ գործնականում հանգում էին յերկու մասի. առաջինում գրվում էր — հողը գյուղացինե-

րին հանձնելու մասին, իսկ յերկրորդում՝ այն մասին, վոր չկատարվեն այդ օրենքները, իսկ յեթե կատարվեն էլ, ապա դարձյալ «հօգուտ հողատերերի, հարուստ գյուղացիների կամ պետական գանձարանի, այն էլ այնպիսի մի պետության մեջ, ուր, իրենց՝ Ժորդանիայի հայտարարությամբ՝ գյուղացիների 90% հարկադրված էր մշակել ուրիշի հողը» (Մախարաձե— Диктатура меньшевитской партии в Грузии стр. 46)։ Այստեղ ընկ. Մախարաձեն շարունակում է. «իմ խորին կարծիքով, մենշևիկների ագրարային բարենորոգումը համաշխարհային մեծ հեղափոխության դարաշրջանում, 20-րդ դարի առաջին քառորդում, Վրաստանի աշխատավորների համար ունեցած իր հետևանքներով, ավելի ցածր է կանգնած, քան 1861 թվի ցարական բարենորոգումը»։ Ահա թե ինչու գյուղացիական ապստամբությունները գրեթե ամբողջ Վրաստանում չեյին դադարում մենշևիկների՝ Վրաստանում ունեցած դիկտատուրայի ամբողջ շրջանում։

Կարիք չկա զարմանալու, վոր վրացական մենշևիկները, հեղափոխությունից հետո գործնականորեն և բացորոշ կերպով կանգնելով վրացական բուրժուազիայի կողմը, իրենց պաշտպանության տակ առան նաև վրացական կալվածատերերին և ազնվականներին։ Չէ վոր մենշևիկական II Ինտերնացիոնալը խորտակվեց դեռ ևս համաշխարհային պատերազմի սկզբում, և նրա կուսակցություններից ամեն մեկը կանգնեց իր հայրենի բուրժուա-կալվածատիրական քլիքի կողմը։

Հողային հարցի ընդհանուր պատկերն Անդրկովկասում մի փոքր լուսաբանած լինելու համար, բերենք մի քանի թվեր 17 թվականի Կովկասյան տարեցույցից*).

	Բոլոր տեսակի հողերի ընդհանուր քանակը	Դրանցից մասնատիրական
Բաքվի նահ. (առանց Բաքվի քաղաքապետության)	1,667,143 դեսյատին	442,557 դ. (Սրանցից գյուղացիական 128,318 դ.)
Գանձակի նահանգ	2,158,648 »	805,080 »
Թիֆլիսի »	2,304,308 »	1,374,838 »
Քութայիսի »	958,385 »	715,605 » (և պլյուս խիզանական—կիսաճորտ. 161,461).

*) Գյուղացիական մասնատիրական հողերը վերջին յերեք նահանգների վերաբերյալ չեն զատված. սակայն այդպիսի հողերի քանակը այդ նահանգներում (մանավանդ Քութայիսի և Գանձակի) ավելի քիչ տեղ եյին կազմում։ Այդ հողերն էլ առավելապես պատկանում եյին հարուստ գյուղացիներին։

Հնարավոր չհամարելով (հեռու չգնալու համար) բերել այստեղ շատ ավելի նոր և լրացուցիչ թվեր մասնատիրական հողերի քանակի, տեսակների, (վարելահող անջրդի և այլն), յեկամուտների և այլնի մասին՝ կարծում ենք, վոր բերված թվերն էլ բավական են, վորպեսզի հասկանալի լինի, թե ինչու Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո հողային հարցը պիտի ալեկոծեր, և ալեկոծում եր, Անդրկովկասի գյուղացիական լայն զանգվածները։

Բանվորների նյութական և քաղաքական դրությունը վատանում եր օր ըստ օրե։ Հասկանալի յէ, վոր վո՛չ մուսաֆաթականներին և վո՛չ դաշնակցականներին, վորոնք գործում եյին ազգի անունից, բանվորական հարցը չէ, վոր պետք է մտահոգություն պատճառեր։ Սակայն բանվորների նկատմամբ նույն դրությունը տիրում եր հենց Վրաստանում այն կուսակցության դիկտատուրայի օրով, վորը մոտ քսան տարի հանդես եր գալիս և աղաղակում բանվոր դասակարգի անունից։ Վրացական մենշևիկները, մթագնելով Վրաստանի բանվորության դասակարգային գիտակցությունը և արգելք հանդիսանալով նրա տնտեսական ու քաղաքական պայքարի ճամբին, մղում եյին նրան դեպի քաղաքական դաշինք բուրժուազիայի և կալվածատերերի հետ ընդդեմ այլազգի դասակարգային յեղբայրների և հեղափոխական գյուղացիության։ Յեվ վորքան նրանք ավելի եյին աշխատում սոցիալիստական ֆրազներով քողարկել բանվորների վզին փաթաթվող այդ դաշինքը, այնքան ավելի այլանդակ եր դառնում նրանց հակահեղափոխական դերը։

Բանվորների նյութական դրությունը վատթարանում եր ընդհանրապես գների բարձրացման, օրեց օր ընկնող թղթադրամով տրվող աշխատավարձի անկման և մասնավորապես արդյունագործության դրության վատթարացման զուգընթաց։ Նավթի 13 թ. տարեկան արտադրությունը 446,000,000 փթից իջավ 19 թ. 152,000,000 փթի, պղնձի արտադրությունը 18 թ. բոլորովին կանգ եր առել, իսկ մարգանեցի արտադրությունը 59,000,000 փթից—13 թվականին, 19 թվականին իջել եր մի քանի միլիոն փթի։ Ավելի լավ չեր

դրությունը նույնպես մանր և առանց այն էլ հետամնաց մշակող արդյունագործության միացյալ բոլոր այլ ճյուղերում։ Մոտավորապես նույն հարաբերությամբ պետք է կրճատվեր և բանվորների թիվը։ Քաղաքները ոչ միայն ամենևին չէյին կարողանում աշխատանք հատկացնել ավելորդ բանվորական ուժերին, այլ, ընդհակառակը, մինչև այդ գրավված բանվորները փողոց էյին շպրտվում կամ գյուղը, խորացնելով քաղաքի և գյուղի առանց այն էլ ծանր վիճակը։

Այս բոլոր հանգամանքները և ավելացրած սրանց ընկնող թղթադրամը, աճող սպեկուլյացիան, անօրինականությունը, մասսայական զեղծումներն ու կաշառակերությունը և այլն, որ միևնույն քաղաքական կացության անխուսափելի հետևանքներն էյին, ծանր ու կործանիչ կերպով էյին անդրադառնում յերկրի ընդհանուր տնտեսական դրության և նրա արտադրողական ուժերի վրա։ Անդրկովկասի տնտեսությունը, յերբ նա բաժանվեց Ռուսաստանից, որի հետ նա մի ամբողջ դարի ընթացքում սերտ էր դարձրել իր տնտեսական կապերը, առանց այդ էլ մատնված էր անկման։ Բայց ստեղծված նոր քաղաքական կացությունը իր հերթին ուժեղ չափով արագացնում էր արտադրողական ուժերի անկումը և սրում ճգնաժամը։

«Սկսած այն ժամանակից, յերբ քաղաքացիական կռիվը վերջանում էր Խորհրդային Հանրապետության հաղթությամբ, մանր-բուրժուական ռեժիմի անկումն Անդրկովկասում անխուսափելի յեր դառնում» (Л. Троцкий «Между Имп. и револ. стр. 77)։ Բայց յեթե քաղաքացիական կռիվը հակահեղափոխության հաղթությամբ էլ վերջանար, ապա դարձյալ մանր-բուրժուական ռեժիմի անկումն Անդրկովկասում անխուսափելի կլիներ։ Անդրկովկասյան հանրապետությունները գոյություն ունեյին և կարող էյին ունենալ, քանի որ սուր քաղաքացիական կռիվ էր մղվում Ռուսաստանում։ Այդ կռվի յելքը, առանձնապես Հյուսիսային Կովկասում, պետք է վերջ տար այդ հանրապետությունների գոյությանը, ում կողմն էլ որ լիներ հաղթությունը. Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթությունը Ռուսաստանում հաղթություն պիտի բերեր նաև Անդրկովկասի հեղափոխական ուժերի համար՝ իսկ Դենիկինի հաղթությունը պիտի հաստատեր նրա և նրա բարեկամների իշխանությունն Անդրկովկասի վրա։ Դա յեր պատճառը, որ Անտանտը, ամբողջ 19 թվականի ընթացքում խաղալով Անդրկովկասյան հանրապետությունների հետ, չեր ճանաչում նրանց ոչ «դե-յուրե» ոչ էլ «դե-ֆակտո»։ Նա նրանց ճանաչեց և այն էլ «դե-ֆակտո» միայն այն ժամանակ, յերբ կարմիր բանակը, ջարդելով Դենիկինին, մոտենում էր Անդրկովկասի սահմաններին և յերբ հեղափոխությունը բաղխում էր Անդրկովկասյան հանրապետությունների դռները, այսինքն՝ 20 թվի հունվարին։ Ի հարկե այդ հանգամանքը չեր խանգարում Անտանտային Բաթումում զինվորների մի փոքրիկ զորամաս պահել և Անդրկովկաս ուղարկել իր գեներալներին ու քաղաքագետներին։ Իսկ յեթե յեվրոպական իմպերիալիստներին հաջողվեց մի քանի ազգային տերիտորիալ մասեր պոկել Արևմուտքում Ռուսաստանից, օգտվելով նրանց մերձավորությունից Յեվրոպային, ինչպես օրինակ Լեհաստան, Լատվիա, Լիտվա, և այլն, ապա դա այնքան էլ հեշտ չեր հեռավոր Անդրկովկասի նկատմամբ, որը մինչ այդ ամբողջովին ներառնված էր Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցության շրջանը։ Այդ մտքով է, որ գերմանական դիպլոմատներից մեկը 18 թ. վրացական պատվիրակությանն ասել էր մոտավորապես հետևյալը։ «Յեթե Վրաստանն այդպիսի աշխարհագրական հեռավորություն չունենար, ապա ավելի ճիշտ կլիներ, որ նա մտներ գերմանական ֆեդերացիայի մեջ*)։

19 և 20 թվականները Յեվրոպայի և Անգլիայի համար հետպատերազմյան հսկայական տնտեսական ու քաղաքական դժվարությունների տարիներ էյին, բանվոր դասակարգի, զինվորների և նավաստիների ինչպես հաղթած, այնպես էլ հաղթված յերկրներում յեղած հեղափոխական շարժման վերելքի տարիներ։ Իրերի այդպիսի դրության ժամանակ Անտանտը Անդրկովկասում (Բաթումում) պահում էր մոտ հազար հինգ հարյուր (անգլիական) զինվորներ, մի քանի գեներալներ,

*) Մեջ ենք բերում հիշողությամբ վրացական պատվիրակության անդամ Ջ. Ավալովի հիշողություններից։

20436-59

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм ССР

քաղաքագետներ և այլն: Պարզ է, որ այդպիսի ուժը չէր կարող զիմադրել Կարմիր բանակին և զենքով պաշտպանել Անդրկովկասը, յեթե Կարմիր բանակը ոգնության գար վերջինիս հեղափոխական ուժերին: Նրա ներկայության իմաստն ու նպատակն եր հիմնոստացնել հակահեղափոխական քաղաքական կուսակցությունները, արտաքին և ներքին հեղափոխական ուժերի դեմ կռվելու գործում: 19 և 20 թվականներին խոսքը վոչ թե Անդրկովկասն Անտանտի ձեռքով պաշտպանելու մասին եր, այլ, ընդհակառակը, այն մասին, վոր Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները պաշտպանեյին անգլո-ֆրանսական իմպերիալիստական ծրագրները Ռուսաստանի, Արևելքի և մանավորապես Անդրկովկասի նկատմամբ: Անդրկովկասի տնտեսական և քաղաքական նշանակությունը շատ լավ հաշվի յեր առնում Անտանտը, բայց նրա ձեռքերը կարճ եյին: Անդրկովկաս մեծ զորքեր ուղարկել և Կարմիր բանակի հետ պաշտոնական ընդհարում սկսել նա չեր կարող: Նույնիսկ յերկար խոսակցություններից և խոստումներից հետո, 20 թվականի սկզբներին, Կոլչակի, Դենիկինի և ուրիշ նմանների հետ ունեցած դառն փորձից հետո, նա չխիզախեց Անդրկովկաս զենք և զինական մթերքներ ուղարկել*): Թղուկային Անդրկովկասյան Հանրապետությունները պետք է իրենք պաշտպանեյին հաղթած մեծ պետությունների շահերը, պայքարելով հեղափոխության դեմ, Խորհրդային Ռուսաստանի և ներքին հեղափոխության դեմ, և հենց դրանում եր նրանց ժամանակավոր գոյության իմաստն ու գրավականը:

Սակայն աշխատավոր ժողովրդի ուժերն ու համբերությունն արագորեն սպառվում եյին: Յեթե ամեն մի վողբերգություն ու կատակերգություն սկիզբ ունի,—իսկ դրանք միասին և միաժամանակ եյին խաղացվում Անդրկովկասում, ապա նրանք և վախճան ունեն: Տանջալից և արյունահեղ փորձություններից ու փորձերից և իրականում իր բոլոր ներքին ու արտաքին «փրկիչներին» ստուգելուց հետո, աշխատավորական լայն զանգվածները կանգնում եյին ընդդեմ այդ «փրկիչների» և հանուն խորհրդային իշխանության ակտիվ հեղափոխական պայքար վարելու ճամբի վրա:

*) Ըստ նույն Զ. Ավալովի տեղեկության:

Բանվորության և աշխատավոր գյուղացիության այն հետամնաց և խաբված խավերը, վորոնք այսպես թե այնպես, պասսիվ թե ակտիվ կերպով 18 թ. պաշտպանեցին մենշևիկներին, մուսաֆաթականներին և դաշնակցականներին,—19 թ. սկսում են հիասթափվել սրանցից ու սրանց յեվրոպական նոր տերերից—անգլիական և ֆրանսական իմպերիալիստներից: Բաքվի հերոսական պրոլետարիատի և վրաց հեղափոխական գյուղացիության շարքերը լցվում եյին նոր ու նոր ուժերով ի դեմս Թիֆլիսի բանվորների, ադրբեյջանական և հայկական գյուղացիության: Վրացական բանվորները հաս-հաս և խմբերով թողնում եյին մենշևիկյան կուսակցության շարքերը, դուրս գալով նրա դեմ մամուլում և ժողովներում: Մասնակի ագրարային հուզումներն Ադրբեյջանում (Գանձակի նահանգում), վոր տեղի ունեցան դեռևս 18 թվականին, 19-ին ստանում են մասսայական բնույթ: Հայ գյուղացիությունը, քայքայված, թալանված դաշնակցականների կողմից, լցվում է ատելությամբ և քաղցած զայրույթով իր ավանդական փրկիչների դեմ, սկսած դաշնակցականներից մինչև քաղաքակրթված յեվրոպացիները:

Հեղափոխական ուժերի աճման և վերելքին զուգնթաց, աճում եր և մեր կուսակցությունը, վերականգնվում եյին հին կապերը և ստեղծվում նոր կապեր մասսաների հետ, հաշվի առնվում 18 և առանձնապես 19 թվականների փորձերն ու սխալները, ինչ չափով վոր վերջիններս տեղի յեյին ունեցել:

Կասկած չպիտի լինի, վոր հակահեղափոխության աջողությունները Անդրկովկասում 18 և 19 թվականներին բացատրվում եյին վոչ միայն Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող քաղաքացիական կռիվներով և Գերմանիայի, Տաճկաստանի ու ապա Անտանտի ոգնությամբ, այլ և նրանով, վոր մեր կուսակցության ազդեցությունը գյուղացիական և նույնիսկ բանվորական մասսաների վրա, Բաքու քաղաքի բացառությամբ, համեմատաբար ավելի թույլ եր: Դրա համա-

պատասխան էլ թույլ էին և մեր կազմակերպչական կապերը մասսաների և հատկապես գյուղացիական մասսաների հետ։ Մենշևիկական այսպես կոչված Կարմիր (և ապա Ժողովրդական) գվարդիայի հաջողություններին վրացական գյուղացիության առանձին-առանձին և հատ-հատ ու ցրված զինական ապստամբությունների ճնշման գործում քիչ չափով չէր նպաստում և ապստամբների քաղաքական ու զինվորական ղեկավարների բացակայությունն ու մասսաների անբավարար չափով կազմակերպված լինելը։ Հիշենք 18 թվականի գարնանը Սուխումի շրջանում տեղի ունեցած այն համառ ու յերկարատև կռիվները, վոր վարում էին աբխազ, վրացի և հայ գյուղացիները, վորոնք ապրում էին իշխանական կալվածքների վրա, ընդդեմ Ջուղելու ջոկատի, վոր հետո փոխարինվեց գեներալ Մազնիյեվի զորամասով։ Գյուղացիների վատ կազմակերպվածությունը, ապստամբության ղեկավարների սակավ թիվը և անփորձությունը հաղթանակը ի վերջո թողին քանակությամբ շատ ավելի քիչ մենշևիկական զորամասին, ըստ վորում արտաքին պայմաններն այդ շրջանում առանձնապես նպաստավոր չեյին մենշևիկների համար։

Մի այլ պատճառ, վոր նպաստում էր Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունների իշխանությանը, դա Անդրկովկասի գլխավոր ժողովուրդներին իրարից անկախ ու ինքնուրույն ազգային հանրապետությունների բաժանելու և ազգային հողի վրա այդ ժողովրդներին իրար դեմ հակադրելու մեջ էր։ Ադրբեյջանի գյուղացիների հեղափոխական տրամադրությունը բթանում էր հայկական (դաշնակցական) վտանգով և ընդհակառակը։ Դաշնակցական Հայաստանի վտանգը վրացական ժողովրդի համար վերջին զենքը չէր Վրաստանի տիրապետող քլիքի ձեռքին։

Վերոհիշյալ բոլոր հանգամանքների հաշվառման հետ միասին, մեր կուսակցությունը 19 թվականի սկզբից ծավալում է իր ագիտացիոն և կազմակերպչական աշխատանքը Վրաստանում, Ադրբեյջանում և ապա (19 թվականի յերկրորդ կեսից սկսած) Հայաստանում, մնալով միասնական Անդրկովկասի

սահմաններում, միասնական Յերկրային կենտրոնով։ Մեր յերկրային կուսակցական կազմակերպության կազմակերպչական միասնությունը համապատասխանում էր մասսաների տրամադրության և հանդիսանում մեր հաղթանակի մեծագույն յերաշխիքը։ Մեր թշնամիներն իսկ իրենց համերաշխությամբ մեր դեմ մղած պայքարում թելադրում եյին մեզ մեր միասնության անհրաժեշտությունը։

Պատմական անաչառությունը պահանջում է հիշատակել, վոր թեպետ և 18 թ. սկզբից Թիֆլիսում սկսվեց վորոշ խմբակային հոսանք՝ հոգուտ Հայաստանի Կոմունիստական կուսակցության ըստեղծման՝ նրա անմիջական յենթարկումով վոչ թե յերկրային Կոմիտեյին և, նույնիսկ, վոչ թե Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին, այլ ուղղակի Կոմինտերնին, մանավորապես, յերբ վերջինս արդեն սկսել էր կազմակերպչորեն ձևակերպվել, այնուամենայնիվ, այդ հոսանքը, սկսած 19 թվականից, վոչ մի աջողություն չուներ վոչ կուսակցական և վոչ էլ անկուսակցական մասսաներում։ Ի հարկե, հիշյալ ընկերների խմբակը ղեկավարվում էր վորոշ քաղաքական և տակտիքական նկատառումներով, գլխավորապես յենթադրելով նվաճել հայ աշխատավոր ժողովրդի համակրանքը հոգուտ Հայաստանի ազգային անկախության գաղափարի և խլել այդ զենքը Դաշնակցության ձեռքից։ Սակայն նույնիսկ հարցի այդպիսի դրումը իր մեջ պարունակում էր մի խորը վտանգ, վոր կարող էր խափանել և ջլատել Անդրկովկասի ինտերնացիոնալ-հեղափոխական շարժումը։ Այդ խմբակը, վոր քիչ տհաճություններ և դժվարություններ չպատճառեց Յերկրային Կոմիտեյին, չնայած վոր չուներ վոչ մի կազմակերպություն Հայաստանում,—19 թվականի աշնան վերջերին Անդրկովկասի սահմաններում վերջնականապես լիկվիդացիայի յենթարկվեց Յերկրային Կոմիտեյի կողմից*)։

Հիշված պայմաններում մեր առջև անմիջորեն կանգնած

*) Այդ «Հայկական ինտելիգենտական» թեքումը մեր կուսակցության պատմության մեջ մի բավականաչափ ուշագրավ և հետաքրքրական յերևույթ էր։ Բայց այս աշխատության սահմանները թույլ չեն տալիս յերկար կանգ առնել այդ յերևույթի վրա։

եր մի խնդիր. նախապատրաստել և կազմակերպել ընդհանուր ապստամբություն, յերեք հանրապետություններում իշխանությունը գրավել և այդ ճանապարհով ազատագրել Անդրկովկասի աշխատավոր մասսաները համաշխարհային իմպերիալիստների և նրանց տեղական գործակալների լծից: Անհաշտություն, պարզություն և վճռականություն քաղաքականության մեջ, ակտիվ յելույթներ մասսաների առջև ընդդեմ տիրապետող կուսակցությունների և կոչ ընդհանուր կազմակերպված ապստամբության—ահա թե ինչը կարող եր մեր շուրջը, Հոկտեմբերյան հեղափոխության դրոշակի ներքո, համախմբել բանվորներին և հարյուր հազարավոր ու միլիոնավոր աղքատ, քաղցած, անհող ու սակավահող գյուղացիներին:

«Մենք վատ հեղափոխականնե՛ր կլինեյինք, յեթե պրոլետարիատի կողմից հանուն սոցիալիզմի մղվող մեծ ազատագրական պայքարում չկարողանայինք օգտագործել ժողովրդական ամեն մի շարժումը իմպերիալիզմի առանձին պատուհասների դեմ—ճգնաժամը սրելու և լայնացնելու համար» (Ленин, Собрание Сочинений т. 19, стр. 214): Յեթե համաշխարհային հեղափոխության մեծ առաջնորդի այս խոսքերը ճիշտ եյին 16 թվին Անգլիայի տիրապետության դեմ ուղղված իռլանդական ապստամբության նկատմամբ, ապա նրանք յեռապատիկ և ավելի ճիշտ եյին մեզ համար Անդրկովկասի՝ 19—20 թվականների պայմաններում, յերբ վճռվում եր Հոկտեմբերյան Հեղափոխության բախտը:

Զինական ապստամբության գործում և ընդհանրապես քաղաքական-մասսայական ամեն մի գործում, գլխավորը մասսա ունենալն ե, վոր կապված լինի կուսակցության հետ թե գաղափարապես և թե՛ կազմակերպչորեն: Միայն այդ պայմանով կուսակցությունը կարող ե ղեկավարել մասսաների վոչ միայն հարձակումը, այլ և նահանջը, վոչ միայն մասսաները կոչել ապստամբության, այլ և կանխել վաղաժամ ու անկազմակերպ յելույթները: Այս տեսակետից ապստամբության և իշխանության գրավելու մեր լոզունգը, 19 թվականին, բնավ չեր նշանակում՝ «ջարդ ու փշուր արա ինչպես կարող ես»,

այլ ուներ առաջին հերթին մասսաների մոբիլիզացիայի և կազմակերպման նշանակություն:

Հնարավոր չհամարելով այստեղ մտնել զինված ապստամբության ուղիների հնարավորությունների և դժվարությունների վերլուծման և Յերկրային Կոմիտեյի քաղաքականության մանրամասն արժեքավորման մեջ, կոմիտեյի, վորը չնայած ընդհատակյա դաժան պայմաններին—տոկուն կանգնած եր այդ ուղիի վրա, կնշենք, վոր Խորհրդային Ռուսաստանից կտրված լինելով և Կարմիր բանակի հետ ունեցած անմիջական կապի բացակայության պայմաններում, ապստամբության հաջողությունը կարող եր ապահոված լինել նախ գյուղացիության ու բանակի ակտիվ ու կազմակերպված աջակցության դեպքում, ապստամբության հենց սկզբից, քանի վոր պրոլետարիատի փոքրաքանակ և բաժան-բաժան յեղած ուժերը չեյին կարողանա դիմանալ տարվելիք առաջին իսկ կռիվներին՝ թշնամիների դեմ, վորոնց թիկունքում այսպես թե այնպես կանգնած եր Անտանտը, և վորոնք ունեյին քիչ թե շատ կազմակերպված իշխանություն, վոստիկանություն, բյուրոկրատիա և նյութապես կամ արտոնություններով կաշառված հուսալի զորամասեր բանակում. յերկրորդ՝ թեկուզ մոտավորապես միաժամանակ բոլոր յերեք հանրապետությունների մեջ տեղի ունենալիք ընդհանուր յելույթի դեպքում, վորովհետև մի հանրապետության մեջ առանձին յելույթի դեպքում մյուսները ժամանակավորապես թաքցնելով ազգային թշնամանքը, կանեյին այն ամենը, ինչ հնարավորություն կտար՝ ճնշելու այդպիսի ապստամբությունը: Նրանց կհրամայեյին անել այդ նույնպես և Յեվրոպայից:

Բայց ապստամբության խնդիրը, Կարմիր բանակի՝ Անդրկովկասի սահմաններին մոտենալով, պիտի հեշտանար նրանով, վոր նա արտաքուստ հնարավոր պիտի լիներ և առանձին հանրապետություններում, ըստ վորում հաջող ապստամբությունը նրանցից մեկում արդեն պիտի նշանակեր ճգնաժամի սրացումը և մյուսներում: Դրա համար բավական կլինեյին Կարմիր Բանակի սպառնալիքները արտաքին ուժերի դեմ և այն

հսկայական, բարոյական ույժը, վոր նա ուներ հեղափոխական ժողովրդական մասսաների աչքում իզուր չե, վոր Կարմիր Բանակի դրոշակների վրա գրված եր՝ «ոգնություն իմպերիալիզմի և իրենց դասակարգային ճնշողների դեմ ապստամբած ժողովրդներին»:

Յեվ իրոք, Դենիկինի ջախջախումից հետ, հեղափոխական ալիքները ընդգրկեցին ամբողջ Անդրկովկասը: Բայց նրանք, այդ ալիքները, սկզբում միայն խեղդեցին Ադրբեջանի մուսաֆաթական կառավարությունը: Կարմիր զրահագնացքի Բաքու մտնելուն պես, ապրիլի 28-ին Խորհրդային իշխանության կարմիր դրոշակները ծածանվեցին Բաքու քաղաքի վրա: Սակայն ծիծաղելի կլիներ կարծել, վոր լոկ մի զրահագնացքի Բաքու մտնելը կարող եր լուծել մուսաֆաթական կառավարության գոյության հարցը, յեթե այդ մոմենտին կառավարությունը կանգնած չլիներ կործանման յեզրին և յեթե հեղափոխական աշխատավոր մասսաները, և առաջին հերթին Բաքվի բանվորությունը, պատրաստ չլինեյին տապալելու այդ կառավարությունը:

Մենշևիկական Վրաստանը կարող յեղավ մի անգամ ել դիմադրել հեղափոխական ալիքների գրոհին և դիմանալ մոտավորապես տասը ամիս: Այդպիսի փորձ գյուղացիական ապստամբությունների ճնշման գործում, այդպիսի վարձկան արտոնյալ «ժողովրդական գվարդիա» (վոր հաշվում եյին մինչև 15—20,000) և այդպիսի գործակալություն՝ հեղափոխության դեմ պայքարելու,—այդ ամենն ստեղծված ի հաշիվ գյուղացիների և բանվորների ու ցարական գույքի Թիֆլիսի մնացորդների, չունեյին վոչ դաշնակցականները և վոչ ել մուսաֆաթականները: Ահա թե ինչու մենշևիկյան իշխանությանը հաջողվեց Ադրբեջանի խորհրդայնացումից հետո յերկարացնել իր գոյությունը հիշյալ կարճ ժամանակամիջոցով:

Իսկ թե ինչպես եր այդ տեսակետից դրությունը Հայաստանում, այդ հարցն է, վոր պիտի կազմի մեր հետագա շարադրության նյութը:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Համառոտ գծերով)

18 թվի վերջին, տաճիկների՝ 14 թվի սահմանները քաշվելուց հետո, Անտանտի՝ գերման—տաճկական զինվորական բլոկի վրա տարած հաղթանակից և հայ-վրացական պատերազմից հետո, դաշնակցական Հայաստանի տերիտորիան գծվեց հետևյալ սահմաններով.—Յերևանյան նահանգ, Կարսի շրջան, Գանձակի նահանգի Զանգեզուրի գավառ և այս նահանգի Ղազախի գավառի հայկական լեռնային մասը*): Այս յերկիրը, վոր փոքր Կովկասի հարավային բարձրավանդակն է կազմում և Կովկասյան (17 թվականի) Տարեցույցի տվյալների համաձայն 15 թվականին ուներ 1,600,000 բնիկ և մոտ 160,000 ժամանակավոր համարվող բնակչություն, հատկանշվում եր նախ և առաջ խոշոր արդյունագործության լիակատար բացակայությամբ և մանր արդյունագործության սաստիկ յետամնացությամբ. յերկրորդ՝ լեռնային գոտու սակավահողությամբ և անբերիությամբ. յերրորդ՝ վոչ միայն արդյունագործական, այլև ընդհանուր առևտրական այնպիսի կենտրոնի կամ կենտրոնների բացակայությամբ, վորոնք կարող լինեյին տնտեսական կապ և փոխադարձ կախում հաստատել նրա առանձին շրջանների միջև: Քննենք ավելի մոտիկից և համառոտ կերպով այդ հիմնական և կարևոր տնտեսական առանձնահատկությունները, վորոնք հիմնականում պայմանավորում եյին մեզ այստեղ հետաքրքրող յերկրի պատմական զարգացման վորոշ և տվյալ (մինչհեղափոխական) աստիճանի սոցիալ-տնտեսական կազմակերպությունը:

Արդյունագործության նկատմամբ նիշած տերիտորիան իրենից ներկայացնում եր Անդրկովկասի ամենահետամնաց մա-

*) Պարզ է, վոր մենք այստեղ նկատի ունենք վոչ թե այն մեծ Հայաստանը, վորի նկատմամբ դաշնակցական կառավարությունը ինքզինքը տեր ու տնորեն եր համարում ձևականորեն ու քաղաքականորեն և վորը գոյություն ուներ միայն նախագծում, այլ այն Հայաստանը, վորը և ձևականորեն և փաստապես ու ամեն կերպ ընկավ Դաշնակցության իշխանության ներքո:

ար։ Ցարական վարչության տվյալներով (Կովկասյան տարեցույց 1914 թվի) 1912 թ. Յերևանի նահանգում և Ղարսի շրջանում ֆաբրիկներ և գործարաններ կոչված ամեն տեսակ մանր ձեռնարկությունների ու արհեստանոցների թիվը հաշվում եր 4264, 4,323,938 ռուբ. արտադրությամբ և 9,566 բանվորներով։ Իսկ միայն Յերևանյան նահանգում ֆաբրիկների և գործարանների թիվը հասնում եր 3,306-ի, 3,380,200 ռուբ. արտադրությամբ և 8,254 բանվորներով։ Այս թվերում չեն մասնակցում Ղաթարի (Զանգեզուրի) պղնձե հանքերն ու գործարանները՝ մոտավորապես 1,500 բանվորներով։ Բայց այդ գործարանների տնտեսական դերը ամբողջ յերկրի համար մեծ չեր, յեթե նկատի ունենանք նրանց գաղութային —էքստերիտորյալ նշանակությունը։ Ամբողջ պղինձը, վոր մեծ շահույթ եր տալիս, այդ շահույթի հետ միասին արտահանվում եր արտասահման և օրգանապես չեր մասնակցում յերկրի տնտեսությանը։ Յերկրի ներսում, և այն էլ առավելապես Զանգեզուրի գավառում, մնում եր միայն տեղական բանվորների աշխատավարձը և դրանով էլ գրեթե սահմանափակվում եր Ղաթարի պղնձի տնտեսական դերը, յեթե չհաշվենք այն, վոր պղինձը վորոշ չափով աշխուժություն եր մտցնում և ներքին մանըր առևտրի մեջ։ Յերևանի «Շուստովի» կոնյակի գործարանից և յերկաթուղային արհեստանոցներից ու մի զույգ էլի յերկու-յերեք փոքրիկ ձեռնարկություններից բացի, գրեթե ամբողջ մնացյալ ձեռնարկություններն իրենցից ներկայացնում եյին մանր արհեստանոցներ, աղացարաններ, ջրաղացներ և այլն, առանց մեխանիքական շարժիչների և աննշան սարքավորումով, մի քանի, շատ հաճախ էլ, մեկ կամ յերկու բանվորներով։ Բավական է ասել, վոր միջին հաշվով Յերևանի նահանգում մի ձեռնարկության վրա ընկնում եր $2^1/_2$ բանվոր, իսկ Ղարսի շրջանում $1^1/_2$։

Յերկաթուղային տրանսպորտը ևս գտնվում եր յետամնաց վիճակում և իր գոյությունն արդարացնում եր ռազմա-ստրատեգիական նշանակությամբ ու գլխավորապես Պարսկաստանի և Յերևանյան նահանգի բամբակագործ ու գինեգործ շրջանների հետ վարվող առևտրով։ Յերկաթուղային

բանվորների թիվը հասնում եր մինչև 600—700 մարդու, վորոնց կեսից ավելին գտնվում եր Ալեքսանդրոպոլի*) դեպոյում։

Բանվոր դասակարգի սոցիալական ույժը նախ և առաջ վորոշվում է նրա՝ արտադրության մեջ ունեցած դերով, այսինքն՝ ընդհանուր ժողովրդական յեկամուտի այն մասով, վոր արտադրում է բանվոր դասակարգը. վորքան շատ է այդ մասը, այնքան ավելի մեծ է բանվոր դասակարգի հասարակական նշանակությունը և հետևաբար նրա քաղաքական դերը։ Դժվարանալով քիչ թե շատ ճշգրիտ կերպով հաշվել դաշնակցական Հայաստանի գյուղատնտեսության նախապատերազմյան ժողովրդական հասույթը, մի կողմից այն պատճառով, վոր նա նշանավոր չափով բնատնտեսության բնույթ եր կրում, մյուս կողմից էլ ցարական վիճակագրության անպետքության շնորհիվ, մանավանդ այդ բնագավառի նկատմամբ, այնուհանդերձ, առանց վորևէ ռիսկի, կարող ենք այդ հասույթը վորոշել 35—45 միլիոն ռուբ.**), հանդեպ արդյունագործական ձեռնարկություններից ստացվող մի քանի միլիոն ռուբլու, սրանից էլ հանած նյութական ծախքերը և ներառած նույնիսկ ամենամանր արհեստանոցներն ու ձեռնարկությունները, վոր չգիտես թե ինչու ցարական վարչությունը ֆաբրիկաներ և գործարաններ է անվանել։

Դրանից բացի, յեթե այդ 10—11 հազար բանվորները կենտրոնացած լինեյին մի քանի քաղաքային կենտրոններում և մի քանի տասնյակ կամ թեկուզ մի քանի հարյուր ձեռնարկների մեջ՝ կապիտալիստական շահագործման քիչ թե շատ կատարյալ սիստեմով՝ այլ վոչ թե 4,264 մանր ձեռնարկություններում՝ ցրված մանր քաղաքներում և գյուղերում, ապա նախ և առաջ նրանց աշխատանքի արտադրողականությունն անհամեմատ ավելի բարձր կլիներ, իսկ յերկրորդ՝ գոյություն կունենային այդ բանվորների հասարակական-քաղաքական գի-

*) Մենք պահպանում ենք Լենինական քաղաքի հին անունը՝ «Ալեքսանդրապոլ» այն դեպքերում, յերբ խոսքը վերաբերում է անցյալին:

**) Ինձ թվում է, վոր մեծ սխալ գործած չենք լինի, յեթե յելնենք նրանից, վոր 1,600,000 բնիկ ազգաբնակությունից մոտավորապես 1,300,000 պետք է ապրեյին ի հաշիվ գյուղատնտեսության, (մնացած 300,000 ի հաշիվ Հայաստանից դուրս ձեռք բերվող բանվորական, արհեստային և այլ յեկամուտների), և յեթե մի հոգու վրա հաշվենք ընդհանուր յեկամուտի միջին քաղված նորմը—30 ռուբ., վոր նույնպես մեծ ռիսկ չի լինի, այդ դեպքում գյուղատնտեսության հասույթը կարտահայտվի 39,000,000 ռուբլիով, միջին գներով, չհաշված նյութական ծախքերը (գլխավորապես սերմ):

տակցության և դասակարգային կազմակերպվածության անհամեմատ ավելի շատ տարրեր։ Յեթե այս ամենին ավելացնել և այն, վոր բանվորների մեծ մասը միաժամանակ կապված եր և գյուղատնտեսության հետ և վարձվում եր ֆաբրիկաներում ու գործարաններում հաճախ ժամանակավոր և սեզոնային աշխատանքի համար, ապա պարզ կլինի, վոր բանվորների հիշյալ քանակությունը հիշած պայմաններում գրեթե չեր կարող վոչ մի ինքնուրույն դասակարգային ազդեցություն ունենալ այն յերկրի սոցիալ-քաղաքական կյանքի վրա, վոր մենք այստեղ նկատի ունենք, այսինքն՝ դաշնակցական Հայաստանի։ Ի լրումն սրան հենց այստեղ հիշենք նաև այն, վոր այդ ձեռնարկությունների, և առանձնապես ավելի խոշորների մեծ մասը դադարեցրեց իր գոյությունը մասամբ պատերազմի ժամանակ և մեծ մասամբ դաշնակցական իշխանության որով։ Արդեն 15 թվականին Յերևանյան նահանգի ֆաբրիկաների և գործարանների թիվը (17 թվի Կովկասյան տարեցույցում) ցույց է տրված 2,607, 4738 բանվորներով։ Ղաթարի գործարաններն ու հանքերը 17 թվին վերջնականորեն կանգ եյին առել, իսկ Շուստովի գործարանը, վոր ազգայնացրել եր դաշնակցական կառավարությունը, 18—19—20 թ. չեր աշխատում, իսկ յեթե յերբեմն աշխատանքի նշաններ եր ցույց տալիս (19 թ. վերջերին և 20 թ.), այդ ել ցուցադրական նպատակով և չնչին չափերով։

Բացի Յերևանյան նահանգի մի քանի շրջաններից, ուր ազգաբնակությունը պարապում եր բամբակագործությամբ (մոտ 15 հազար դեսյատին) և գինեգործությամբ, (մինչև 10,000 դեսյատին) մնացյալ ամբողջ գյուղատնտեսական ազգաբնակությունը զբաղվում եր հացագործությամբ, անասնապահությամբ և մի քանի ուրիշ, զանազան շրջանների համար այլ և այլ ոժանդակիչ ճյուղերով, ինչպես որինակ մեղվաբուծություն, շերամապահություն, փայտագործություն, թռչնաբուծություն և այլն։ Հողագործության համար աննպաստ լեռնային գոտում, քարե կիրճերում և ավազոտ ստորոտներում, անտառների ու ծմակների մեջ, վոռոգման բացակայության, անբարենպաստ և փոփոխական

լեռնային կլիմայի պայմաններում,—գյուղացիությունը հարկադրված եր յերկրագործությունը դարձնել իր հիմնական զբաղմունքը, վորովհետև գոյության այլ, քաղաքային և վոչ քաղաքային աղբյուրները, այդ թվում և անասնապահությունը, հեռու եյին բավարար լինելուց։ Յեթե նույնիսկ նրա համար ավելի աժան հաց բերեյին, քան իրոք նրա վրա նստում եր տեղական հացը, ապա նա չեր կարող կենսական մինիմալ անհրաժեշտության սահմաններում վճարել այդ հացի համար։ Հացի վճարունակ պահանջի բացակայությունը, չնայած գյուղացիության մեծամասնության համարյա կիսաքաղց գոյավիճակին, և տրանսպորտի ծանր պայմանները, հացի առևտուրը դժվարին ու անշահավետ եյին դարձնում, իսկ չքավոր գյուղացիության համար դրսից բերվող հացը՝ անմատչելի։ Սակայն, չնայած այդպիսի պայմաններին և խոչընդոտներին, այնուամենայնիվ, Հայաստանի գյուղը ընդհանրապես առանց դրսի հացի չեր կարողանում լրացնել հացի յուր նույնիսկ քաղցած բյուջեն։ Յերևանյան նահանգը և Ղարսի շրջանը մինչև պատերազմը Ռուսաստանից ներմուծվող տարեկան մոտ 3 միլ. փութ հացի մի զգալի մասը ընկնում եր վոչ միայն բամբակագործ, գինեգործ շրջանները և յերկաթուղագծին մոտիկ գտնվող գյուղերը, այլ և մուտք եր գործում նաև ավելի հեռավոր լեռնային գյուղերը։ Ռուսական հացից զատ գյուղացիությունն ամեն տարի մեծ քանակությամբ հացի մանր գնումներ եր կատարում Ադրբեյջանի, Վրաստանի և Պարսկաստանի մերձակից շրջաններում։ Վորոշ գիտակների կարծիքով այդ մանր գնումները Հայաստանի համար հասնում եյին տարեկան մինչև 3 միլիոն փթի։ Մենք չենք խոսում հաճախակի կրկնվող անբերրի տարիների մասին, յերբ, անկասկած, գնվող հացի քանակը աճում եր ավելի խոշոր չափով, վորովհետև քաղցած գյուղացին ամեն ինչ զոհում եր հաց ձեռք բերելու համար։

Անասնապահությունը գյուղացիների հիմնական զանգվածի միջակ և մասամբ չքավոր մասսաների համար մի լրացում եր, ճիշտ է, շատ անհրաժեշտ և լուրջ լրացում, յերկրագործության նկատմամբ և մեծ մասով հանդիսանում եր գյուղացիական տնտեսության ապրանքային մասը։ Բայց յեթե անասնապա-

հությունն ընդհանուր առմամբ բավարար զարգացում չէր ստացել, չնայած բավականաչափ բարենպաստ բնական պայմաններին, ապա դրա պատճառներից մեկն էլ այն էր, վոր Անդրկովկասի հարթավայրում խոշոր յերկրագործները և հարուստ գյուղացիները, տիրած լինելով լավագույն արգասավոր և ոռոգվող հողերին, միաժամանակ և մեծ հաջողությամբ զբաղվում եյին անասնապահությամբ, օգտվելով և դաշտավայրերի ձմեռային արոտատեղերից և ամառայիններից (քոչի վայրեր) լեռնային շըրջանում, մեծ մրցություն ստեղծելով շուկայում։

Հայաստանի համար տերիտորիայի և ազգաբնակության տեսակետից հիմնական բազան կազմում եր Յերևանյան նահանգը, վորը հողագործագործման տեսակետից հետևյալ պատկերն եր ներկայացնում. 1915 թ. (Կովկասյան տարեցույց 17 թ.) նա ուներ 1,014,868 բնիկ ազգաբնակություն և 105,374 ժամանակավոր բնակվող, վորի մի վորոշ մասը, հավանորեն, նույնպես կապ ուներ գյուղատնտեսության հետ։ Սակայն, մենք նրանց նկատի չառնելով, դրա փոխարեն կընդունենք, վոր գրեթե ամբողջ բնիկ ազգաբնակությունը (նույն թվում և բնիկ քաղաքացիներն ու գյուղացիները՝ զուգահեռ քաղաքային աշխատանքով) կապված եր գյուղատնտեսության հետ։ Նույն տվյալներով, բոլոր տեսակի հողերի քանակությունը, վոր յենթակա յեր հարկատվության, 1,485,045 դեսյատին եր, վորից 109,222 դեսյատին մասնատիրական—գլխավորապես մանր գյուղացիական հողամասեր։ Այսպիսով բնակիչներից մի հոգուն ընկնում եր ամեն տեսակի հողից մի դեսյատինից մի քիչ ավել, հաշված բանջարանոցները, անտառները, տնատեղերը և այլն։ Իսկ վարելահողերն այդ նույն թվին կազմում եյին—580,453 դեսյատին, այսինքն մի մարդուն կես դեսյատինից մի փոքր ավել։ Բացի մի քանի շրջաններից ամբողջ նահանգի միջին բերքը մեկին յերկու—յերեք կարող եր համարվել լավ բերք. Մնացյալ շրջաններում—Ղարսի շրջանում, Զանգեզուրի գավառում և Ղազախի գավառի լեռնային հայկական մասում դրությունը յերկրագործության տեսակետից վոչ թե ավելի լավ եր, այլ ընդհանուր առմամբ ավելի վատ։

Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացումը, վոր առանձնապես սկսում ե նկատելի դառնալ 80-90 թվականներից քաղաքների, հատկապես կենտրոնական քաղաքների՝ Թիֆլիսի և Բաքվի արագ աճումը և հարստացումը, ճանապարհների և առևտրի զարգացումը, հարկային ճնշումը և ցարական-վոստիկանական կարգերի լուծը և այլն չեյին կարող տնտեսապես չազդել և ազդում եյին գյուղի վրա, ստեղծելով նրա համար տնտեսական հարստահարության մի բարդ սիստեմ և առաջացնելով նրա մեջ դասակարգային շերտավորում, այսինքն՝ գյուղական կյանքի մի բևեռում ստեղծելով մի բուռն հարստացող գյուղացիների, իսկ հակառակ բևեռում աղքատ և բատրակային տարրերի հետզհետե մեծացող քանակություն։ Գյուղում աստիճանաբար ավելորդ բանվորական խոշոր ուժ եր կուտակվում, վորը իր կիրառմանն եր սպասում—քաղաքային արդյունագործության մեջ։ Բայց արդյունագործության զարգացումն Անդրկովկասում կրում եր առավելապես լեռնագործարանային գաղութային վորսի բնույթ, վորի հետևանքով քաղաքային մշակող արդյունագործությունը սաստիկ յետ եր մնում, թողնելով տնտեսական գերիշխանությունը առևտրական կապիտալին։ Գյուղի ավելորդ բանվորական ուժը կիրարկում եր փնտրում վոչ միայն արդյունագործության, այլև գյուղատնտեսության մեջ, վորը նույնպես յետ եր մնում, վորովհետև նրա զարգացումը ևս սերտ կապված եր քաղաքի արդյունագործության հետ։ Այդ տեսակետից շատ թե քիչ զգալի կերպով զարգանում եյին գյուղատընտեսության միայն այն ճյուղերը, վորոնք քաղաքային, գլխավորապես ռուսական արդյունագործությանը հում նյութ եյին մատակարարում—բամբակագործությունը, շերամապահությունը, ծխախոտագործությունը և անասնապահությունը (բուրդ, կաշի)։ Սակայն տեխնիքական միջոցների և այլ կուլտուրական հիմքերի բացակայությունը սահմանափակում եր այդ ճյուղերի զարգացումը և դանդաղեցնում տնտեսությունների խոշորացման պրոցեսը։ Անասնապահությունը վորոշ չափով զարգանում եր նաև այդ ճյուղի արտադրույթների քաղաքային բնակչության պահանջի աճման ազդեցության ներքո (միս, պանիր, յուղ)։ Այս վերջին հիմունքներով զարգանում եր և այգեգործությունը, վորի արտադրությունների խոշոր մասը (սպիրտ, կոնյակ), ար-

տահանվում էր նաև Ռուսաստանի քաղաքները։ Այսպիսով լեռնագործարանային արդյունագործությունն, առանձնապես Բաքվի նավթն ու վորոշ չափով գյուղատնտեսությունը, կլանում էյին գյուղի բանվորական ույժի մի զգալի մասը, բայց չէյին սպառում այն։

Հայաստանում, բամբակագործության և այգեգործության շրջաններում, գյուղի շերտավորումը, համեմատաբար ավելի արագ և խորն էր տեղի ունենում, քան լեռնային մասերում։ Այնուամենայնիվ ավելորդ բանվորական ույժի ավելի մեծ քանակ գյուղերում առանց կիրարկության էր մնում ավելի շատ լեռնային, քան բամբակագործության և գինեգործության շրջաններում։ Նույնիսկ յետամնաց գյուղատնտեսական տեխնիկայի որով, աշխատանքի հասարակ կազմակերպության և հասարակ բաշխման հիմունքով կազմակերպված խոշոր ապրանքային տնտեսությունը ավելի շահավետ էր դառնում, քան մանրը, ուստի բամբակագործ և այգեգործ գյուղացին, հաճախ և քաղաքացին, աստիճանաբար դիմում էյին գյուղի բատրակային և աղքատ խավերի վարձու բանվորական ույժի կիրարկմանը։ Այդ խավերը վարձվում եյին նաև բամբակի և գինու հետ կապված մի շարք այլ աշխատանքների համար, ինչպես օրինակ տեղափոխություն, բեռնումն, պարպումն և այլն։ Այլ էր դրությունը լեռնային գյուղում։ Այստեղ արժեքավոր մշակույթների և մեծ մասամբ նույնիսկ հացահատիկների համար անպետք հողը տնտեսական զարգացման համար զգալի հետաքրքրություն էր ներկայացնում միայն անասնապահության տեսակետից։ Ուստի լեռնային շրջաններում գյուղական կապիտալի կուտակումը արտադրության ասպարեզում գլխավորապես կատարվում էր անասնապահության բնագավառում, որը, ինչպես հայտնի է, անհամեմատ ավելի քիչ աշխատանք է պահանջում, քան գյուղատնտեսության այլ, ինչպես և հիշյալ ճյուղերը։

Հարուստ գյուղացուն լեռնային շրջաններում ավելի շատ վորոշում էյին ըստ կովերի, վոչխարների, յեզների, ձիյերի քանակի, քան թե ըստ հողերի ու արտերի։ Հարկավ, անասունի շնորհիվ հարստացող գյուղացին, ունենալով արտադրության միջոցներ ու փող՝ հաց ամբարելու և չարաշահելու համար, հաճախ ոգտվում էր նաև աղքատ գյուղացու հողից և նրան էլ զանազան ձևերով շահագործում այդ

հողի վրա։ Աղքատացող գյուղացին վոչ մի ջանք ու միջոց չէր խնայում մշակելու իր հողերի գոնե մի մասը, սակայն հետզհետե զրկվելով արտադրության միջոցներից՝ նա իր հողերից ոգտվելու իրավունքը չնչին վճարով ծախում էր հարուստ գյուղացուն, վորը այդ հողերը դարձնում էր արոտատեղիներ կամ խոտհարքներ և կամ մշակելով ավելի լավ կտորներ, ուժասպառ անում և վայր ձգում։ Լեռնային շրջաններում կային նաև այլ փոքր հնարավորություններ հարստություն կուտակելու համար, ինչպես օրինակ շերամապահություն, մեղվաբուծություն, ջրաղացային տնտեսությունը և այլն։ Սակայն մի կողմից անասնապահությունը ավելի տարածված էր և բռնում էր առաջին տեղը, մյուս կողմից էլ հիշյալ տնտեսական ճյուղերը, ինչպես նաև անասնապահությունը, շատ քիչ չափով էյին կարիք զգում վարձու բանվորական ույժի։ Այդ կարիքը հիշյալ շրջաններում շատ թե քիչ զգալի յեր դառնում միայն դաշտային աշխատանքների ժամանակ 2—3 ամսի ընթացքում։ Մենք չենք խոսում այստեղ վաշխառուական և մանր-չարչիական կապիտալի մասին գյուղերում, վորովհետև նկատի ունենք միայն գյուղատնտեսական արտադրությունը։ Այս տեսակի կուտակումները ևս այս կամ այն ձևով ու չափով ձգտում էյին դեպի հիշյալ ճյուղերը։ Ի հարկե հայկական կուլակությունը չէր կարելի համեմատել յեվրոպական յերկրների ինչպես նաև Ուկրայինայի և Հյուսիսային Կովկասի կուլակության հետ, բայց Հայաստանը ևս իր նյութական կյանքի մակարդակով չէր կարելի համեմատել այդ յերկրների հետ*)։

---

*) Ընկ. Ս. Կասյանը իր «Հայաստանի տնտեսական դասակարգային ստրուկտուրան» (Նոր Աշխարհ № 1. 1922 թ. եջ 17) հոդվածում մի քանի չոր ու ցամաք ստատիստիկական թվերի հետ թվաբանական հաշիվներ կատարելով, գալիս է այն յեզրակացության, թե Հայաստանում մինչև պատերազմը հարուստ գյուղացիական ընտանիքները կազմում էյին 3 տոկոս, միջակները 41%, աղքատները 54% և մնացյալ 2%-ը հողազուրկներ էյին, այսինքն՝ բատրակներ: Ըստ վորում գյուղացիական ընտանիքի հարստությունը նա վորոշում է բացառապես նրա վրա իրավապես ամրացված հողի դեսյատինների քանակով: Նրա կարծիքով 15 դեսյատին հող ունեցող գյուղացիական ընտանիքը կարելի յեր հարուստ համարել, 5 դեսյատին՝ միջակ, $1\frac{1}{2}$ դեսյատին՝ աղքատ։

Ուսումնասիրության այդ մեթոդը, գոնե Հայաստանի նկատմամբ, միանգամայն

Ահա թե ինչու 80—90-ական թվականներից, յերբ արդեն Անդրկովկասի առևտրա-արդյունագործական կյանքը սկսում էր արագորեն աշխուժանալ, Անդրկովկասի, առանձնապես լեռնային շրջանների, մասնավորապես Հայաստանի, ավելորդ բանվորական տարրը սկսեց հոսել դեպի քաղաքները—Բաքու, Թիֆլիս, Բաթում և այլն, առաջարկելով իր աժան բանվորական ուժը:

Նախապատերազմյան տարիներին Անդրկովկասի բոլոր խոշոր ու մանր արդյունագործական բանվորների թիվը հասնում էր մինչև 100,000-ի, վորոնցից կեսը գտնվում էր Բաքվում: Այս թվի մեջ չեն մտնում յերկաթուղագծի, բեռնակիր տրանսպորտի և կառուցողական բանվորները ու զանազան հիմնարկների ու ձեռնարկների բանվոր ծառայողները և այլն: Այս հաշվով պետք է ընդունել, վոր Անդրկովկասում մշտապես զբաղված ամեն տեսակ արդյունագործական և այլ քաղաքային բանվորների թիվը մինչ պատերազմյան տարիները յեղել է 150,000-ից վոչ պակաս: Այս բանվորական ույժի ճնշող մեծամասնությունը գալիս էր գյուղերից, վորովհետև քաղաքային արհեստավորները, մի շարք պատճառներով,—մշակող արդյունագործության յետամնացությունը, ցարիզմի մաքսային քաղաքականությունը և այլն,—բավականին համառորեն քարշ եյին տալիս իրենց գոյությունը և արագորեն չեյին քայքայվում. Նրանց սպասող քաղաքային մշակող ֆաբրիկաներն ու զավոդները յետ եյին մնում:

Թե միջին հաշվով տարեկան բանվորների ինչ քանակու-

անդոր է պարզելու գյուղի սոցիալ-տնտեսական պատկերը: Մինչդեռ այդ հարցի ճիշտ գնահատությունը կարևոր է քաղաքական տեսակետից, վորովհետև դաշնակցական նացիոնալիզմի համար զորքայությունն էր, վոր հենարան էր գտնում հայ գյուղերում:

Նույնիսկ մեր որերում, Խորհրդային իշխանության պայմաններում, չնայած գյուղի չքավորության ցույց տված մեր քաղաքական ու տնտեսական խոշոր ոգնությանը, վարկի ու կոոպերացիայի զարգացմանը և այլն, կարելի յե նկատել, թե ինչպես գյուղի տնտեսական հին հարաբերությունները զգալի կերպով ձգտում են վերականգնել: Չքավորությունը իր հողերը հանձնում է գյուղի հարուստներին սեզոնով կամ մի քանի տարով մշակելու և ոգտագործելու, վերցնելով դրա համար վորոշ (մեծ մասամբ) չնչին վարձ:

թյուն էր տալիս Հայաստանը Անդրկովկասին առհասարակ, այդ նույնիսկ մոտավորապես դժվար է վորոշել, յեթե իսկ հաշվել տասնյակ հազարներով: Այնուամենայնիվ կարելի յե բերել վորոշ թվեր, վորոնք մի փոքր լույս կսփռեն այդ հարցի վրա: Սահմանափակվենք մի քանի թվերով ընկ. Յե. Մելիքի «Հայաստանի բանվորական շարժման պատմությունից 1903—1907» գրքից (եջ 28). 1892 թ. Նոր-Բայազետում տրվել է 1171 անցագիր, իսկ 1893—1247. Ղարաքիլիսայում 1893 թ. տրվել է 570, իսկ 1894 թ.—1893. Հեղինակն իրավացիորեն յենթադրում է, վոր շատերը գնում եյին առանց անցագրի, խուսափելով անցագրի համար վճարելուց: Առանձնապես սա ճիշտ է նրանց վերաբերմամբ, ովքեր գնում եյին փոքրիկ քաղաքներ, ուր ավելի քիչ էր վոստիկանական խստությունը, ինչպես և նրանց նկատմամբ, ովքեր ամառը, դաշտային աշխատանքների ժամանակ, իջնում եյին լեռներից Գանձակի և Թիֆլիսի նահանգների հարթավայրերը և խոշոր հողատերերի ու հարուստ գյուղացիների մոտ վարձվում որավարձով՝ սեզոնային աշխատանքի համար: Մարդկային այս հոսանքը Հայաստանի լեռներից դեպի Անդրկովկասյան քաղաքները հարկադրեց հայ ազգայնական մամուլին ահազանգ խփել դեռ 90-ական թվականներին. Նա դրա մեջ տեսնում էր ազգի քայքայումը: Բայց հայկական մամուլն ինչպես էլ վոր նայեր դրան և ագիտացիա վարեր, այնուամենայնիվ, այդ պրոցեսը գնալով ավելի ու ավելի պիտի զարգանար, և զարգանում էր, մի շարք խորը տնտեսական պատճառների շնորհիվ, վորոնք հետզհետե ավելի ուժեղ եյին գործում:

Բնորոշ է, վոր քաղաքները գնում եյին առավելապես ավելի յերիտասարդ, առողջ և ճարպիկ ու համեմատաբար գրագետ մարդիկ, վորոնք, գյուղացիների արտահայտությամբ, «քաղաքում չեյին կորչի»: Ավելի բնորոշ է այն, վոր քաղաքային այդ բանվորական մասսայի ճնշող մեծամասնությունը, յեթե վոչ ամբողջ մասսան, չեր կորցնում իր կապը գյուղատնտեսության հետ և քաղաքից նպաստում էր գյուղական իր տնտեսությանը ու հաճախ տուն վերադառնում դաշտային աշխատանքների ժամանակ: Բանվորական ույժի մրցությունը քա-

ղաքային շուկայում, քաղցած՝ փողոց նետվելու սպառնալիքը, ցածր աշխատավարձով քաղաքում ընտանիք պահելու դժվարությունը, գուցե և ավանդությունն ու հոգեբանությունը և այլն — հարկադրում էին կիսաքաղաքային բանվորին ուժեղ կերպով կառչած մնալ գյուղական իր տնտեսությանը։ Նույնիսկ բատրակը, վոր գյուղում տնտեսություն չուներ, գերադասում էր ընտանիքը պահել գյուղում, ուր կյանքը ավելի աժան էր, և ինքն էլ դաշտային աշխատանքների ժամանակ վերադառնում էր գյուղ, վորովհետև այդ ժամանակ աշխատանքը գյուղատնտեսության մեջ վարձատրվում էր համեմատաբար ավելի թանգ, քան քաղաքներում։

Անդրկովկասի կենդրոնական առևտրա-արդյունագործական քաղաքները, — Բաքուն, Թիֆլիսը, գյուղացիության համար վոչ միայն շուկա էին ներկայացնում ավելորդ բանվորական ուժը ռեալիզացիայի յենթարկելու համար, այլև միաժամանակ նախ՝ հիմնական միջնորդներ էին ռուսական արդյունագործության և գյուղատնտեսության միջև, յերկրորդ՝ գյուղական ապրանքների գլխավոր սպառողները և յերրորդ՝ գյուղացիական սպառման մի շարք առարկաների և նյութերի արտադրողները։ Հազիվ թե կարելի լիներ Հայաստանում գտնել այնպիսի գյուղացիական ընտանիք, վորը իր տանն արտադրեր բոլոր անհրաժեշտ առարկաները և նյութերը կամ յոլա գնար բնական փոխանակությամբ՝ գյուղի կամ շրջանի սահմաններում։ Ի դեպ, կարելի յէ ընդգծել, վոր առևտրական կապիտալի զարգացումը և կենդրոնացումը գյուղական արհեստավորներին քաշում էին դեպի խոշոր քաղաքային արհեստանոցները, վորոնք աշխատում էին պատվիրատուների համար։ Այդ մեխանիքական, փականագործային, նալ ու մեխի, մանր գործիքների և այլ արհեստանոցները աշխատում էին վոչ միայն քաղաքի շուկայի համար, այլ սկսում էին աստիճանաբար աշխատել և գյուղական շուկայի համար։ Գյուղական արհեստավորներին գլխավորապես մնում էր գյուղատնտեսական ինվենտարի սովորական ընթացիկ նորոգումը։ Հարկերը վճարելու, չիթ, կտավ, սապոն, նավթ, լուցկի, աղ, մեխ, պայտ, խոփ, մանգաղ, և այլ մթերքներ ու առարկաներ ձեռք

բերելու համար գյուղական-ընտանիքը պետք է ծախեր իր անասունների բանվորական ուժը, կամ թե իր գյուղատնտեսական արտադրանքների մի մասը։ Հասկանալի յէ, վոր գյուղերից քաղաք հոսող ապրանքների մի խոշոր մասը, վոր փոխանակվում էր փողի, կամ փողի միջոցով քաղաքային ապրանքների հետ, ընկնում էր գյուղի միջակ և մասամբ էլ աղքատ տարրերի վրա։

Այդ ապրանքաշրջառանության բնորոշ մոմենտներից մեկն այն էր, վոր նա մեծ մասով տեղի յէր ունենում Հայաստանի քաղաքներից դուրս, վորովհետև այդ քաղաքներն արդյունագործության, տրանսպորտի պայմանների և Հայաստանի աշխարհագրական դիրքի տեսակետից շատ աննպաստ դրություն էին ապրում։ Գյուղական ապրանքները բնականորեն փնտրում էին ավելի հեշտ, աժան և կարճ ուղիներ՝ դեպի հիմնական սպառողները, այսինքն՝ դեպի Բաքու և Թիֆլիս քաղաքները, ուր և կարելի յէր գտնել անհրաժեշտ արդյունագործական ապրանքներ, առանց ավելորդ տարածություն կտրելու և ավելորդ միջնորդների, ըստ վորում այդ ուղիները շատ շրջանների համար առանձին էին և տարբեր։ Իսկ այդ նշանակում է, վոր Հայաստանը տնտեսապես ձգտում էր դեպի Անդրկովկասի կենտրոնական քաղաքները և նրանց միջոցով էլ դեպի Ռուսաստան. և ձգտում էր վորպես վոչ թե տնտեսապես շատ թե քիչ կազմակերպված միավոր իր քաղաքային կենտրոնների միջոցով, այլ ապակենտրոնացած, առանձին շրջանների համար առանձին ուղիներով։ Իսկ առանձնապես մի քանի գավառների՝ Զանգեզուրի, Իջևանի (Դիլիջանի) և Ղարաքիլիսայի նկատմամբ դրությունն այդպես էր ամբողջովին։ Հայաստանի քաղաքներն իրենցից ներկայացնում էին առավելապես վարչական կենտրոններ և շրջակա գյուղերի համար ունեյին գլխավորապես տեղական, մանր առևտրական նշանակություն։ Յերևան և Ալեքսանդրոպոլ կենտրոնական քաղաքները առևտրական տեսակետից ուրիշ քաղաքների շարքում աչքի էին ընկնում, առաջինն իբրև նահանգային չինովնիկական սպառող կենտրոն, ինչպես և շնորհիվ գինու ու բամբակի, իսկ յերկրորդը իբրև նույնպես սպառող փոքրիկ զորական և յերկաթուղային հանգույցի կենտ-

րոն՝ յերկաթուղային արհեստանոցներով։ Բայց այդ քաղաքներից և վոչ մեկը մի առանձին նշան չեր ցույց տալիս առևտրական և ընդհանրապես տնտեսական կենտրոն դառնալու վոչ միայն Հայաստանի համար, այլ անգամ Յերևանի նահանգի համար։ Այդ յերևույթը բնորոշում է այն փաստը, վոր մինչդեռ Բաքու և Թիֆլիս քաղաքներն անընդհատ և հսկայական քայլերով աճում եյին, Յերևանը և Ալեքսանդրոպոլը 80 և 90-ական թվերին վորոշ արագություն ցուցադրելով ազգաբնակության աճման մեջ, այնուհետև սաստիկ յետ մնացին. այդ յերևում է հետևյալ թվական տվյալներից, վոր վերցնում ենք ընկ. Յե. Մելիքի նույն գրքից (եջ 27).

	1886 թ.	1897 թ.	1906 թ.	1908 թ.
Յերևան	14.738	29.033	30.670	31.432
Ալեքսանդրոպոլ	24.230	32.018	32.901	33.723

Տասը տարվա (1886 թ-ից մինչ 1897) փոքր թափչքից հետո Հայաստանի այդ յերկու գլխավոր քաղաքների ազգաբնակության աճումը կատարվում եր չափազանց դանդաղ, ավելի դանդաղ, քան սովորական բնական աճումը։ Ազգաբնակությունն էլ ավելի դանդաղ եր աճում նաև մյուս փոքրիկ գավառական քաղաքներում։

Այսպիսով Հայաստանի բոլոր շրջանները, յուրաքանչյուրն առանձին և տարբեր պատճառով, իսկ այդպիսով ընդհանուր առմամբ նաև արդյունագործության տեսակետից սաստիկ հետամնաց ամբողջ Հայաստանը բանվորական և ապրանքային շուկայի միջոցով իր վրա զգալով Անդրկովկասի կենտրոնական քաղաքների տնտեսական ազդեցությունը, իսկ սրանց միջոցով նաև Ռուսաստանի, պետք է զգային և այդ քաղաքների ու Ռուսաստանի և քաղաքական ու կուլտուրական ազդեցությունը։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անդրկովկասի քաղաքական պայմանների ու դաշնակցական Հայաստանի մինչպատերազմյան տնտեսական հիմնական մոմենտների վրա կանգ առնելուց հետո կարելի յեր անցնել այն հարցին՝ թե Հայաստանում տնտեսական և քաղաքական վո՞րպիսի դրություն պետք է ստեղծվեր և ստեղծվեց՝ նույնիսկ անկախ Դաշնակցության ներքին և արտաքին քաղաքականությունից և յերկրի ներսում նրա ձեռքով ստեղծված ներքին ռեժիմի առանձնահատկություններից։ Սակայն կանգ չառնել այդ հարցերի վրա ավելի հանգամանորեն, քան այդ մենք հարկադրված եյինք անել առաջին գլխում այլ կապակցությամբ, կնշանակեր գրեթե հարևանցիորեն անցնել այն կարևորագույն պայմանների վրայով, վորոնք տնտեսապես, և հետևաբար քաղաքականապես արագորեն խորացնում ու սրում եյին ճգնաժամը։ Անդրկովկասի քաղաքական կացությունը ինքնին խախտում եր այդ յերկրի ժողովուրդների տնտեսական փոխհարաբերությունների սիստեմը, վոր ուներ իր խոր պատմական արմատները։ Սակայն դաշնակցական կուսակցությունը այդ իսկ պայմաններում ձեռնարկեց մի քաղաքականության և ստեղծեց մի ռեժիմ, վոր նույնքան հարկավոր եյին նրան իր գոյությունը պահպանելու, վորքան և կործանիչ Հայաստանի աշխատավոր մասսաների համար։

Իհարկե, օբյեկտիվ պայմանները և արտաքին ույժերը, վորոնց արդյունքն ու ծնունդ եր դաշնակցականների դիկտատուրան Հայաստանում, պետք է վոր ճնշում գործ դնեյին յերկրի ամբողջ ներքին կյանքի և կառավարական կուսակցության քաղաքականության վրա։ Բայց վորքան էլ այդ այդպես

լիներ, վորքան էլ դաշնակցականները և նրանց կառավարությունն իրենցից խաղալիք ներկայացնեյին արտաքին պայմանների և ուժերի ձեռքին, այնուամենայնիվ, այդ խաղալիքը իր վորակով պիտի համապատասխաներ այդ պայմանների և ուժերի պահանջներին. այլապես նա կշպրտվեր և վտանակոխ կլիներ։ Յեվ այդ տեսակետից նույնիսկ դժվար ե մի քանի խոսքով վորոշել, թե վորտեղ եյին վերջանում և վորտեղ սկըսվում օբյեկտիվ ու սուբյեկտիվ (այդ կուսակցության համար) այն պատճառները, վորոնք գտնվում եյին նրա իրորինակ քաղաքական գործնեության հիմքում, ինչպես մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, այնպես էլ նրանից հետո։

Մի կողմից իր համար աժան և ժողովրդի համար չափազանց թանգ «հեղափոխականություն»՝ սահմանից այն կողմը —Տաճկաստանում, հեղափոխականություն, վոր 1915 թ. վերջացավ Տաճկահայաստան կոչվող յերկրամասի «ազատագրումով» վոչ թե հայերի համար, այլ հայերից. պարտիզանական և տեռորիստական քայլեր, վորոնք գրգռում եյին Տաճկաստանում ազգային կրքերը և տաճկական սուլթանի ու փաշաների բարկությունն ու ստեղծում վորոշ խռովություններ և անկարգություններ, և վորոնք հարկավոր եյին միջազգային իմպերիալիստներին, վորպես թե՛ գործնական և թե՛ ձևական առիթներ՝ Տաճկաստանի ներքին գործերին միջամտելու՝ նրան տնտեսապես և քաղաքականապես ճորտացնելու։ Մյուս կողմից, յետադիմական ռուսական ցարիզմին խղճուկ կերպով հարմարվելու քաղաքականություն Անդրկովկասում՝ դաշնակցականների այդ գլխավոր հենարանում, ուր նրանք ծնվել ու սնվել եյին. ցարիզմի դեմ մղվող համառուսական հեղափոխական պայքարից, վորպես քաղաքական խնդրից, հրաժարումն և անխուսափելի վորոնումներ՝ ցարիզմի հետ խաղաղ քաղաքական գործարքներ անելու համար (կամավորական շարժումը 15 թ.). մարտնչող, թեպետ և գլխավորապես պաշտպանության դիմակի տակ հանդես յեկող, յետադիմական-ազգայնական վարքագիծ Անդրկովկասում, վոր օգտագործվում եր ցարիզմի կողմից հեղափոխական ժողովրդական շարժումը խափանելու համար. հայ բանվորնե-

րի անջատումն նրանց միջազգային կազմակերպություններից, նրանց քաղաքական և տնտեսական պայքարի կասեցումն ու անդամալուծումն վոչ միայն շովինիստական ագիտացիայի՝ այլև տեռորների ու ծեծի միջոցով. և այդպիսով, միջազգային հեղափոխական շարժման ու աշխատավոր ժողովուրդների խաղաղ զարգացման հասարակական հիմքերի խախտումն Անդրկովկասում և այլն,—այսպես եր մի քանի բառերով դաշնակցության մինչհոկտեմբերյան քսանհինգամյա քաղաքական գործունեության եյությունը, այսպես եր նրա օբյեկտիվ ճակատագիրը, այս եր նրա պատմական կոչումը։

Յեվ ահա այդ կուսակցությունը, վոր Տաճկաստանում զինվորական և քաղաքական արկածներ եր կազմակերպում, իսկ Անդրկովկասում բռնել եր ազգայնական ռեակցիայի ուղին, պատմականորեն զարգանալով և ձևակերպվելով այդ յերկու քաղաքական ուղիներով, ձեռք բերելով համապատասխան և յուրորինակ սովորություններ ու ավանդություններ և իր շարքերում կուտակելով բիրտ պարտիզան-տեռորիստական զինվորական տարրեր և անուղեղ մտավորականություն, վորը միայն կարող եր մարդկությունը բաժանել ազգերի և այդ ուղղությամբ անիմաստ Փրազեոլոգիա բանեցնել՝ հիմարացնելու համար թե բանվորներին ու գյուղացիներին և թե ինքն իրեն —հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միացրեց այդ յերկու ուղին իր համար մի մեծ ճամբայով և դարձավ ավելի բացորոշ ու աշկարա ազգայնական յետադիմության և միաժամանակ ավելի բիրտ ու ցինիկ քաղաքական և ռազմական արկածների կուսակցություն։

Դաշնակցությունը, զենքը ձեռքին և փրփրած դեմքով դուրս գալով բանվորա-գյուղացիական հեղափոխության դեմ և Անտանտի հաղթությունից հետո վորոշակի հասկացնել տալով, վոր նա համառորեն իր սիրած մեթոդներով պետք ե ձգտի մեծ, «ծովից-ծով» Հայաստանին, դրանով էլ նա ցույց տվեց, վոր վոչ միայն մի կաթիլ ցանկություն չունի պատմության մեծ թեքումի որերին վորևե գնահատության յենթարկելու իր հին քաղաքական ուղին, այլ ընդհակառակը, այդ իսկ ուղիով նա մտնում ե իր

պատմական զարգացման նոր, վերջին և ավարտված փուլը։ Իսկ դա նշանակում է, վոր կամ այդ կուսակցությունը, այսպես թե այնպես պիտի հասներ հայերի հավաքման և մեծ Հայաստանի, կամ թեկուզ վորևե դաշնակցական Հայաստանի*), ազգային իդյալին, կամ նա վերջապես պիտի տար իր վերջնական հաշիվը պատմության անողոք դատաստանի առաջ այն հարյուր հազարավոր անմեղ զոհերի համար, վորոնց արյունով նա շաղախել եր իր քսանհինգ ամյա պատմությունը և շարունակում եր շաղախել։

* * *

18 թվի գարնանը տաճկական սուլթանի և նրա փաշաների համար դժվար չեր ընկճել իր պատմական թշնամու՝ Դաշնակցության անզոր և խղճուկ դիմադրությունը և թույլ չտալ նրան իշխանություն ձեռք բերելու Հայաստանում։ Բայց յեթե դաշնակցականներին այդ հաջողվեց, և նրանք Հայաստանում իշխանության գլուխ անցան վորոշ և կարճ պատմաժամանակով, ապա այդ այն պատճառով, վոր նրանք ինքնագործ յետադիմական զենք եյին հանդիսանում Անդրկովկասի ներքին հեղափոխական ուժերի և խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։ 18 թվի գարնան և ամառվա պայմաններում, համաշխարհային պատերազմի թեժ միջոցին, յերբ Տաճկաստանը հարկադրված եր լարել բոլոր ջանքերը, նրան բոլորովին ել ձեռնտու չեր իր ուժերը զբաղեցնել՝ Հայաստանը նվաճելու և դաշնակցականներին տապալելու համար, մանավանդ վոր վերջիններս հոժարակամ ելնելով խորհրդային Ռուսաստանի դեմ, ոբյեկտիվորեն Տաճկաստանին եր նպաստում։ Դաշնակցականների պայքարն ուղղված եր վոչ թե Ռուսաստանի դեմ ընդհանրապես, այլ միայն Խորհրդային Ռուսաստանի դեմ, բայց Տաճկաստանի համար այդ պայքարը միաժամանակ պայքար եր առհասարակ Ռուսաստանի դեմ։

*) Մեծ Հայաստանի լոզունգը դաշնակցականները արծարծեցին Անտանտայի՝ 19 թվին տարած հաղթությունից հետո, ի հարկե վոչ առանց վերջինիս կամքի ու խորամանկ թելադրանքի: Մինչև այդ, խոսքը հայ ժողովուրդը տաճկական լծից ազատելու, բարենորոգումների, ինքնավարության, յեվրոպական պետությունների հովանավորության (և այլն) մասին եր։ Բայց և այնպես այդ այն վախճանական լոզունգն եր, դեպի վորը Դաշնակցությունը պատմականորեն ընթանում եր։ Միայն պատմությունը արագացավ համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան հեղափոխությունից, վորի հետևանքով Դաշնակցությունը յուրատեսակ թռիչք կատարեց դեպի այդ հայկա-բուրժուական թագավորություն ստեղծելու բացարձակ լոզունգը։

1915 թվին այդ կուսակցության առաջնորդները ընկան մինչև այն աստիճան, վոր ուզում եյին Ջեմալ—փաշային Ասիական Տաճկաստանի, նույն թվում և Հայաստանի, նոր սուլթան դարձնել: Այս հարցով հետաքրքրվող ընթերցողին հանձնարարում ենք «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտը» գիրքը, վոր լույս է ընծայել Հայաստանի հեղափոխական թանգարանը, և վորը գաղտնի դիվանագիտական փաստաթղթեր է պարունակում։

Անդրկովկասը Ռուսաստանից բաժանվում եր իր իսկ սեփական հակահեղափոխական ուժերի շնորհիվ։ Այդ պատմական ակտը արագացնելու և ձևակերպելու համար պահանջվեց միայն վորոշ քաղաքական դիպլոմատիական և զինվորական ճնշում Տաճկաստանի կողմից, վորը հետո, համաշխարհային պատերազմի նրա համար նպաստավոր յելքի դեպքում չեր դանդաղի առաջին իսկ պահին վոչնչացնելու դաշնակցական կառավարությունը և հարթելու դեպի Թիֆլիս ու Բաքու տանող ճամբան։

Իսկ յեթե Դաշնակցությունը ստորագրեց Անդրկովկասի անկախության ակտը, ապա նա այդ արեց վոչ թե այն պատճառով, վոր հարկադրված եր, ինչպես այդ առաջին հայացքից կարող եր թվալ, այլ նրա համար, վոր նա ամեն մի հակահեղափոխություն, նույն թվում և տաճկական հակահեղափոխությունը, գերադասում եր բանվորա-գյուղացիական հեղափոխությունից և Խորհրդային Ռուսաստանից։ Այստեղ չպետք է մոռանալ վոչ միայն արտաքին պայմանների ճնշումը, այլ և այն ներքին հեղափոխական կացությունը, վորի որով կատարվում եր Անդրկովկասի՝ Ռուսաստանից անջատվելու պատմությունը,—Բաքվի պրոլետարիատի և վրացական գյուղացիության ապստամբությունները, ադրբեյջանական գյուղացիության ագրարային հեղափոխական տրամադրությունը և այլն։ Յեվ այդ դեպքում ավելի քան պարզ կլինի, վոր 18 թվի քաղաքական պայմանների որով, վորքան ել անհաճելի լինեյին այդ պայմանները դաշնակցականների հա-

մար, նրանք միանգամայն գիտակցորեն համաձայնեցին Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և այն ներքուստ բաժան-բաժան անելու, վորովհետև այդ պատմա-քաղաքական ակտերը, համաշխարհային պատերազմի և Անդրկովկասի դրության պայմաններում, անմիջորեն բղխում եյին նրանց ազգայնական—յետադիմական եյությունից և հակահեղափոխական հիմնական քաղաքական դիրքից։ Առանց վորևե տատանման ընտրելով, կամ ավելի ճիշտ, շարունակելով հակահեղափոխական ուղին, այդ կուսակցությունը պետք է անդավաճանորեն ընթանար այդ ուղիով բոլոր հաճությունների ու տհաճությունների, բոլոր խոչընդոտների և դժվարությունների միջից։ Պայքար հեղափոխության և Խորհրդային Ռուսաստանի դեմ և դիմադարձություն դեպի համաշխարհային հակահեղափոխությունը,—ահա թե վորն եր Դաշնակցության քաղաքականության անկյունաքարը, և այդ տեսակետից, այդ հիմնական հարցում, Տաճկաստանը և Գերմանիան վոչ միայն չեյին խանգարում, այլ ոբյեկտիվորեն օգնում եյին Դաշնակցությանը։

Ահա թե ինչ է գրում Դաշնակցության և նրա կառավարության պաշտոնական որգան՝ «Հառաջում», 19 թվի սեպտեմբերի 20-ին, այդ կուսակցության լիդերներից մեկը՝ Ս. Վրացյանը, վորը հետո, հայկական հակահեղափոխության հետագա պատմության մեջ, տխրահռչակ հերոսի դեր խաղաց։

«Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ինարկե մի դժբախտ անհրաժեշտություն եր։ Անկախության հռչակումն ել ավելի շատ արտաքին պայմանների հետևանք եր, քան ժողովրդների ներքին կամ արտահայտության արդյունք։ Բայց դրանով բացատրել հրահրված ազգային կրքերը՝ կնշանակեր ծառերի յետևից անտառը չտեսնել։ Դեռ Ռուսաստանից չեյինք բաժանվել և անկախության մասին չեյինք ել յերազում, բայց արդեն իրար միս եյինք ուտում վոչ պակաս յեռանդով, քան հիմա։ Դրան ապացույց, թեկուզ Անդրկովկասի ընդհանուր գյուղացիական համագումարը, վորի տխուր հիշողությունները այսոր ել թարմ են բոլորի մտքում»։

Ապա Վրացյանը գտնում է, վոր այդ յերևույթի հիմքում,

այսինքն Անդրկովկասյան ներքին դժտության մեջ կա ոբյեկտիվ պատճառների մի ամբողջ շարք, և «այդ պայմանների մեջ առաջին տեղն է գրավում, անշուշտ, այն բնական ձգտումը ազգովին հավաքվելու և կազմակերպվելու, վոր հատուկ է յուրաքանչյուր ազգի... Ժարգոնն ու ֆրազեոլոգիան եր տարբեր, բայց եյապես մենշևիկ վրացին, մուսաֆաթիստ թաթարն ու դաշնակցական հայը ազգային խնդրում միևնույն կետին եյին խփում»։ Այնուհետև Ս. Վրացյանն, առանց վորևե բացատրության, թե ինչպես և ինչ ձևով, գտնում է. «Մեր և մեր հարևանների հարաբերությունները ցավոտ խնդիր է, բայց նա վերջի վերջո, պետք է լուծվի հոգուտ այդ յերեք յերկրների խաղաղ կենակցության և անարգել զարգացման»։

Հավանորեն Վրացյանը և նրա կուսակցությունը վատ չեյին հասկանում իրենց դերը տվյալ պատմական պայմաններում։ Այդ ընդհանուր ֆրազեոլոգիայում դրսևորվում է դաշնակցական յուրորինակ մտածողությունն այն չափով, վոր չափով դաշնակցականներն առհասարակ ընդունակ եյին քաղաքականապես մտածելու։ Վոր Ռուսաստանից անջատվելը դժբախտություն եր, բայց Խորհրդային Ռուսաստանից անջատվելը անհրաժեշտություն, վոր անդրկովկասյան յերեք ղեկավար կուսակցությունները իրար միս եյին կրծում մինչև Անդրկովկասի անկախությունը ու շարունակում եյին կրծել և դրանից հետո, և վոր այստեղ խորը պատճառներ կային,—դա բավականաչափ անկեղծ խոստովանություն է։ Բայց Վրացյանը անկեղծ չէ այդ խորը պատճառների բացատրության մեջ. նա ավելի ևս անկեղծ չէ և այն բանի բացատրության մեջ, թե ինչ կերպ կարող եր խաղաղ լուծվել այդ հիվանդոտ հարցը։

Վրացյանը չի ժխտում այն փաստը, վոր Ռուսաստանից անջատվելը, բայց հարկավ, վոչ թե Խորհրդային Ռուսաստանից, դժբախտություն եր, և վոչ միայն Անդրկովկասի ժողովուրդները, այլև հենց իրենք ել մինչև Հոկտեմբեր չեյին յերազում անկախության մասին։ Բայց ինչու Հոկտեմբերից հետո նրանք իսկույն յեվեթ սկսեցին յերազել այդ մասին, իսկ ժողովուրդն ել իբրև թե ցանկացավ ազգովին հավաքվել և

կազմակերպվել։ Այդ նա չի ցանկանում, այդ նրան ձեռնտու չէ բացատրել։

Անդրկովկասի սոցիալական և քաղաքական կյանքը իրենից ներկայացնում էր ռուսական կյանքի վորոշ արտացոլումը՝ ավելի թույլ դասակարգային շերտավորումով, բայց ավելի բարդացած ազգային մոմենտով և ցարիզմի գաղութայնացման քաղաքականությամբ։ Ռուսաստանի հեղափոխական շարժումը միշտ արձագանք էր գտնում Անդրկովկասում (1905—17 թ. թ.)։ Սակայն ցարիզմի սև հարյուրակային քաղաքականությունը Անդրկովկասում բավականաչափ առատ հող էր գտնում հեղափոխական շարժումը պրովոկացիայի յենթարկելու և այն քայքայելու՝ մի ազգը մյուսի դեմ լարելով։ Յեվ այդ տեսակետից հայկական նացիոնալիզմը, վոր մարմնացած էր ի դեմս դաշնակցության, առաջին տեղերից մեկն էր բռնում, յեթե վոչ առաջին տեղը։ Պարզ է, վոր նացիոնալիզմի և շովինիզմի այդպիսի հող և մթնոլորտ ստեղծողը աշխատավորական մասսաները չեյին։ Այն ստեղծում եյին առանձին ազգերի շահագործող վերին դասակարգերը, և դա բղխում էր նրանց շահերի հակասության եյությունից, նրանց միջև զարգացող տնտեսական մրցությունից։ Ադրբեյջանական և վրացական ավատականությունը ամբողջությամբ էր լծվում դեպի Անդրկովկասում տիրապետող հայկական բուրժուազիան։ Համեմատաբար ավելի թույլ վրացական և ադրբեյջանական բուրժուական խավերը բլոկ եյին կազմում կալվածատերերի հետ այդ հարցում։ Հայկական բուրժուազիան տնտեսապես հարձակողական դիրքի մեջ լինելով, քաղաքականապես պաշտպանություն էր հայցում ռուսական ցարիզմից և հայ մտավորականությունից՝ հանձինս Դաշնակցության։ Ազգային շահագործող տարրերը լեզուն, կրոնը և պատմական ավանդությունները ոգտագործում եյին թե իրար դեմ մղվող պայքարում և թե դասակարգային նպատակներով, ոգտվելով մասսաների քաղաքական յետամնացությունից։ Աշխատավոր զանգվածները, ընդհակառակը, ֆաբրիկաների և գործարանների միջոցով և փոխանակության զարգացման շնորհիվ ավելի ու ավելի եյին իրար մոտենում և

կռում Անդրկովկասյան համագործակցող ժողովրդների աշխատավորական ընտանիքի հիմքերը։ Առաջին հանգամանքի մեջ թաքնված եյին անընդհատ ու անխուսափելի ազգային գժտության և կոտորածների սոցիալական արմատները, իսկ յերկրորդ հանգամանքը՝ խոշոր գրավականներից մեկն էր Հոկտեմբերի և խորհրդային ֆեդերացիայի հաղթանակի համար Անդրկովկասում։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ցնցեց Անդրկովկասը։ Ունևոր, շահագործող և արտոնյալ դասակարգերը և նրանց սպասարկող մտավորական տարրերը, մահու չափ վախեցած, դիմեցին ամեն տեսակ միջոցների, վորպեսզի արտաքին պատնեշ կանգնեցնեն հոկտեմբերյան ալիքների դեմ։ Բայց միաժամանակ նրանք հարկադրված եյին և ներքին պատնեշներ կանգնեցնել թե այդ ալիքների և թե իրար դեմ վոչ միայն արտաքին ույժերի ազդեցության ներքո, այլև գլխավորապես այն պատճառով, վոր դա բղխում էր տիրապետող դասակարգերի միջև յեղած ազգային հակասություններից և յերեք տիրապետող կուսակցությունների սոցիալ-քաղաքական բնությունից։ Մենշևիկական, մուսաֆաթական և դաշնակցական սյուների վրա չէր կարելի կառուցել և վոչ մի պետական ու ընդհանրապես վորևե անդրկովկասյան շենք։ Սակայն պետական շենքերը՝ կառուցված առանձին-առանձին այդ սյուներից ամեն մեկի վրա, նույնպես չեյին կարող կայուն լինել, և չեղան։ Թե մեկ և թե մյուս դեպքում այդ պետությունները, ներքին և արտաքին բարդացող ու սրվող հակասությունների պայմաններում, պետք է կառուցվեյին մասսաների շահագործման և կողոպուտի, հավելյալ արժեքի բաժանման և համաշխարհային իմպերիալիստների տնտեսական ու քաղաքական ճնշման հիմքերի վրա։ Իսկ այդ պայմաններում և այդ հիմքերի վրա անխուսափելի յեր պայքարը Անդրկովկասի ներսում, անխուսափելի եյին հավելյալ արյունը և արցունքները այդ հողի վրա։

Ահա թե ով և ինչպես յերազել սկսեց անկախության և պետական ազգային կազմակերպությունների մասին։ Ահա թե վորտեղ Վրացյանին հարկ «չը»-կար ներքին պայքարի խորը պատճառները փնտռել, վորովհետև այն ժամանակ նա կարող

եր հասկանալ, վոր քանի աշխատավոր մասսաների վզին ար-
տաքին իմպերիալիստական ույժերի ոգնությամբ նստած եյին
շահագործող դասակարգերը և սրանց՝ իրեն նման՝ քաղաքական
գործակալները, մինչև այդ ժամանակ Անդրկովկասի ներքին
գժտությունները անխուսափելի եյին, իսկ Անդրկովկասյան ժո-
ղովրդների խաղաղ կենակցությունը և անարգել զարգացումն ան-
հնարին: Վոչ թե մենշևիկ վրացին, մուսաֆաթիստ թաթարը և
դաշնակցական հայը, ինչպես արտահայտվում ե Վրացյանը, այլ
ամենաճիշտը՝ վրացական մենշևիկը, թյուրք մուսաֆաթականը
և հայ դաշնակցականը խփում եյին մեկ կետի: Սակայն պատ-
մությունը խփում եր մի այլ կետի:

Անտանտի հաղթությունից հետո, դաշնակցականները, նո-
րից գտնվելով իրենց հին տերերին և ավելի ամուր զգալով ի-
րենց փոքրիկ հայ ժողովրդի մեջքին, միանգամից ցանկացան
նվաճել իրենց նախահայրերի հին հայկական թագավորությունը:
Հանկարծակի, Անդրկովկասյան և արևելքի այլ ժողովրդների ազ-
գային բարդ հյուսվածքում, ինչ վոր կախարդական միջոցով
պետք ե առաջանար մի մեծ հայկական պետություն անտեսա-
պես իրար հետ վոչնչով չկապված տերիտորիաներից, ի հաշիվ
գլխավորապես Տաճկաստանի, իսկ հետո Ադրբեյջանի և Վրաստանի.
այնպիսի մի մեծ պետություն, վոր հայ ժողովրդի Ֆիզիքական
ույժերը հերիք չեյին լինի նրա ընդարձակ սահմանները պաշտ-
պանելու համար: Հայաստանի հարևան յերկրների այլազգի հոծ
մասսաները պետք ե բոլորովին սեղմվեյին և ամեն կողմով ճա-
նապարհ տային դաշնակցության խելակորույս եշխին: Տաճիկ-
ները, քրդերը, թյուրքերը, վրացիները և բոլոր նրանք, ովքեր
համարձակվել եյին հայ չծնվել, բնականորեն, փոխանակ սո-
վոծ փախստականներ դառնալու, փրկվելով դաշնակցական
մաուզերից, պետք ե իրենց յերկրներում հետևեյին դաշնակ-
ցության նման կուսակցություններին և կառավարություննե-
րին, վորոնք իրենց հերթին պետք ե ձգտեյին առնվազն խան-
գարելու դաշնակցության սատանայական ծրագրներին, ար-
դեն չխոսելով այն մասին, վոր այդ կուսակցություններն ու կա-
ռավարություններն ել ունեյին իրենց ախորժակն ու ծրագիրնե-

րը, չնայած նրանցից և վոչ վոք այդպես աշկարա և բացահայտ
և այդչափ շատ չեր պահանջում:

Ցեվ համաշխարհային իմպերիալիստները, և նրանց քաղա-
քական գործակալները, նման դաշնակցականների, գիտեյին, թե
ինչ են ուզում և հանուն ինչի յեն պայքարում: Բայց ի՞նչ հի-
ման վրա պետք ե կռվեր, տանջվեր և արյունաքամ լիներ
հայ ժողովուրդը այդ ցնորական գաղափարը իրագործելու հա-
մար: Արդյո՞ք այն կենսական, տնտեսական և քաղաքական շահե-
րի հիման վրա, վորոնք պահանջում եյին մի ինքնուրույն
պետական ամբողջություն կազմելու այն ցաքուցրիվ տերի-
տորյաներից, վորոնց վրա դաշնակցականները ուզում եյին
հաստատել հայկական զինասափայի իշխանությունը: Արդյո՞ք
այն հիման վրա, վոր հայ ժողովուրդը գեթ համեմատական
մեծամասնություն եր կազմում այդ հսկայական սահմաններում:
Վոչ. հարցը վոչ առաջին հանգամանքումն եր և վոչ ել յերկրոր-
դում: Դաշնակցականների պահանջած յերկրում վոչ մի քիչ թե
շատ ժողովրդական շարժում հոգուտ հայկական, այն ել դաշնակ-
ցական թագավորության, գոյություն չուներ: Այդ ապագա թագա-
վորության մեջ հայ ազգաբնակչությունը վոչ միայն բա-
ցարձակ մեծամասնություն չեր ներկայացնում, այլև նա մեծա-
մասնություն չեր կազմում նույնիսկ քրդերի ու տաճիկների նկատ-
մամբ՝ առանձին առանձին վերցրած: Դեռ ավելին: Հոչակավոր
տաճկական այն վիլայեթներում, վորոնք պետք ե այդ նոր հայկական
մեծ պետության մեծագույն մասը կազմեյին, 15 թվից հայ ազգա-
բնակչություն չկար, դաշնակցականները նրան ամբողջապես կոր-
ծանել եյին իրենց արկածախնդրական քաղաքականության հետև-
վանքով: Նրանց մնում եր վերջնականապես կործանել հայ ժողովր-
դի՝ Ռուսաստանում ապրող վերջին մնացորդները, վորպեսզի այդ-
պիսով ապացուցեյին իրենց «պատմական դերը», թեպետ և դաշնակ-
ցականներն ասում եյին, վոր յեթե յերկրագնդի վրա անգամ մի
հայ մնա, նա և չի դադարի պահանջելու իր նախնիների հայրենիքը:
Ապա ուրեմն ինչումն եր հարցը: Հարցը նրանումն եր, վոր դաշ-
նակցականները հայ բանվորներից և գյուղացիներից պահանջում
եյին, վորպեսզի նրանք հանուն մեծ Հայաստանի թափեյին

իրենց արյունը՝ բացառապես մութ կրոնական զգացումների և պատմական հին հուշերի ու ավանդությունների հիման վրա։ Նայեք թե ինչ է գրում «Հառաջ» լրագրի 19 թվի սեպտ. 20-ի №-ում վոչ անհայտ հայ սպեցիֆիկ «սոցիալիստ» և անգամ «մարքսիստ»—Դ. Անանունը, չամաչելով գոնե իր այդպիսի անվանումից.

«Հայրենիքի նվաճումը» (վերնագիրն է, Շ.Ա.)։ Ավելի բովանդակալից նշանաբան հայ մտածող մարդկանց համար, քան այս յերկու բառը, վոր զարդարում են մեր հոդվածի խորագիրը, մենք չենք ճանաչում։ Նվաճել հայրենիք—ասել է ստեղծել հարազատ ազգային պետականություն մեր նախորդներից ժառանգած յերկրամասի վրա։ Նվաճել հայրենիքը—ասել է համառ դիմադրությամբ անվիճելի ժառանգ հանդիսանալ Հայաստանին, վոր փակվեն մեզ շրջապատող չարակամ տարրերի շրթունքները, և նրանք համարձակություն չունենան լկտիաբեն հայտարարելու, թե հայը յեկվոր է իր նախորդների յերկրում, իսկ քուրդն ու թաթարը բնիկ... Ավելորդ կասկածներ, կազմալուծող շշուկներ ու ակնկալություններ և աղաչական քաղաքականություն, թե ազգային միահամուռ աշխատանք—այս յերկընտրանքն է ծառացել մեր առաջ։ Առաջին վիճակը մեր այսօրվա կացությունն է. յերկրորդ դրությունն է, վոր մեզ իր թևերի տակ պիտի առնե, վոր մեզ կարող է չգավաճանել և մեզ առաջնորդել դեպի հաղթություն...»։

Ամբողջ հոդվածը գրված է նույն վոգով, մինչև այն աստիճան, վոր հոդվածի հեղինակը հին նախապատմական Խաբայելի որինակով հուսադրում և վոգևորում է իր ընթերցողին։ Լրագրի խմբագրությունը, ծանոթության մեջ, հայտարարում է, վոր հեղինակի արտահայտած մտքերը չեն հակասում (հարկավ) լրագրի քաղաքական ուղղությանը։

Ժամանակն ու անցքերը պատռեցին այն սոցիալիստական դիմակը, վոր սազական չէր Անանունի և նրա ընկերների դեմքին, և սրանք լիակատար վորոշակիությամբ արտահայտեցին իրենց դաշնակցական հոգին։ «Հառաջը» մեծ հաճույքով ապագրում էր Անանունի հոդվածները, վորովհետև ամենակատաղի և ֆանատիկոս դաշնակցականին անգամ ավելին ասելու և գրելու բան չէր մնում։ Այդպես ուրեմն, Անանունի և «Հառաջ»-ի լեզվով հայրենիքի նվաճումը նշանակում էր չհրաժարվելով սպասումի և աղերսանքի քաղաքականությունից, միաժամանակ և միացած ազգային յեռանդուն աշխատանք տանել նախնիների յերկիրը նվաճելու համար, և վոր վերջին հանգամանքն ավելի կարևոր էր, քան առաջինը։ Անանունն այդ արտահայտության մեջ գիտակցորեն թե անգիտակցաբար, սակայն ծպտյալ կերպով ձևակերպում էր դաշնակցականների հենց այն քաղաքականությունը, վոր նրանք վարում էին և վորը հարկավոր էր Անտանտին։

Հայրենիքի՝ մեծ Հայաստանի նվաճումը, դա նշանակում էր անվերջ արյունահեղ վեճեր Տաճկաստանի հետ՝ տխրահռչակ վիլայեթների համար, Ադրբեյջանի հետ՝ Ղարաբաղի և այլ վայրերի համար, Վրաստանի հետ՝ Լոռու, Ախալքալաքի և Սև ծով դուրս գալու համար և այլն։ Այդ բոլոր տերիտորյալ վեճերը միաժամանակ հանդիսանում էին այն անհրաժեշտ պայմանները, վորոնց ոգնությամբ դաշնակից պետությունները Դաշնակցությանը պահում էին իրենց անմիջական հարևանների հետ անընդհատ զինվորական և քաղաքական ինտրիգներ վարելու դրության մեջ։ Միայն այդ ինտրիգների միջոցով համաշխարհային տերերը կարող էին մի կողմից անդամալուծել և քայքայել Հոկտեմբերյան շարժումն Անդրկովկասում և սրան վոտքի կանգնեցնել Խորհրդային Ռուսաստանի դեմ, մյուս կողմից, իրենց ազդեցության տակ պահել Տաճկաստանը, Ադրբեյջանը և Վրաստանը։ Բավական էր, վոր դաշնակիցները այդ յերկիրների վարիչներին ակնարկ անեին, վոր կոգնեն դաշնակցականներին՝ իրագործելու նրանց ծրագիրը կամ այդ ծրագրի վորևէ մասը, վորպեսզի նրանք խաղաղեյին և յերեխայաբար չխաղային մեծ պարոնների հետ։

Ցեվ այդ տեսակետից, դաշնակիցները հիմարներ կլինեյին, յեթե լրջորեն մտածեյին մեծ Հայաստանի իրականացման մասին, առանձնապես Հոկտեմբերյան Հեղափոխության և համաշխարհային ցասկոտ բարդությունների որերում։ Յուրաքանչյուր

սիրալիր բառ և թղթի յուրաքանչյուր կտոր, որ ասում կամ գրում էին դաշնակցականներին յևրոպական պետությունների պատասխանատու և անպատասխանատու ներկայացուցիչները, յուրաքանչյուր, դաշնակցականների համար դուրեկան հնչող, դիպլոմատիկան ակտ, ինչպես դե-ֆակտո ճանաչումը, Սևրի դաշնագիրը և վերջին տխրահռչակ «հայկական օջախը»,—այդ ամենը աշխատավոր մասսաների արյունն ու արցունքներն արժեր և հետապնդում էր զանազան իմպերիալիստական գործարքներ, քաղաքական կոմպանիաներ և դիպլոմատիկան կոմբինացիաներ, բայց յերբեք մեծ, և նույնիսկ ավելի քան մի կերպ գոյություն քարշ տվող Հայաստան: Բորչալուի գավառի Լոռու հայկական շրջանը նույնիսկ ավելի համարվեց Դաշնակցության համար և հայտարարվեց չեզոք գոտի:

18 թվի օգոստոսի 7-ին, մինչև Բաքվի անկումը, անգլիական գեներալ Դեստերվիլը դաշնակցական Արարատյանի առաջարկին, որը նրա հետ Բաքվի ազգային խորհրդի և Դաշնակցության անունից բանակցություններ էր վարում, Ղազվինից պատասխանում է նամակով, որում ի միջի այլոց գրում է.

«Իսկ ինչ վերաբերում է յերկրորդ հարցին (այսինքն՝ հայերի դրությանը Յերևանում. Ծ. Ա.), ապա մնում է ցավալ, որ այն սքանչելի ռազմական նյութը (ընդգծումը մերն է), որ կարելի յեր ստանալ Յերևանում, դաշնակիցները ի վիճակի չեն օգտագործելու: Ես այժմ յես հնարավորություն չունեմ վոչ մի հույս հայտնելու այդ ուղղությամբ (ընդգծումը մերն է)—մոտիկ ապագայում օգնություն ցույց տալու»: Յեվ ապա շարունակում է. «Այսպես թե այնպես, բայց վոչ մի կասկած դաշնակիցների վերջնական հաղթանակի մասին լինել չի կարող, և դրա հետևանքը կլինի Հայաստանի վերականգնումը: Այդ միակ դրությունը կարող է ձեզ լուսատու աստղ ծառայել (ընդգծումը մերն է) ձեր խավար հուսահատության մթում»: (Британский империализм в Баку и Персии в 1917—18 г.г., Воспоминания, стр. 190):

Այդ նամակից յերևում է, որ դաշնակցականները

Բաքվի ազգային խորհրդի և նրա ներկայացուցչի միջոցով անգլիացիներին հրավիրում էին Յերևան, խոստանալով նրանց տրամադրության տակ դնել հայ ժողովուրդը, որպես «սքանչելի ռազմական նյութ»: Խորամանկ գեներալը հնարավորություն և հրաման չունենալով շարժվել Անդրկովկաս և Յերևան, նախորոք հիմարացնում էր դաշնակցականներին, խոստանալով ապագայում օգնել նրանց, իհարկե, միայն «այդ ուղղությամբ»:

Հայաստանի վերականգնումը խոսքով և իրականում սքանչելի ռազմական նյութ ստանալը Հայաստանում, և այդ վորպես «լուսատու աստղ» դաշնակցության համար—ահա թե ինչ էր նշանակում հայրենիքի նվաճումը:

Իրոք, ում էր հարկավոր այդ հեքյաթային Հայաստանը, վոր ամենից առաջ Դաշնակցությունը հիմարացնելու մի լոզունգ էր: Համենայն դեպս, միայն նրանց, ովքեր ավելի քիչ էին տառապում, կամ բոլորովին չէին տառապում, և մի առանձին զոհողություն չէին կրում դրա համար.—ընդհանրապես հայկական բուրժուազիային, վորի համար մեծ Հայաստանը Տաճկաստանի և Անդրկովկասի բաժանման՝ իրեն համար մի շատ նպաստավոր յեվրոպական ծրագիր էր*). առանձնապես այդ բուրժուազիայի ռուս-կովկասյան ավելի սովոր տարրին, վորը կորցրել էր իր տնտեսական տիրապետող վիճակը Անդրկովկասում, և վորի համար կամ մեծ Հայաստան, կամ առնվազն կորցրած դրության վերադարձը, կամ իրենից հետո—թեկուզ ջրհեղեղ Անդրկովկասում. հայ բուրժուազիային սպասավորող դաշնակցական ինտելիգենցիային, վորը փառասիրաբար յերազում էր մեծ քաղաքականություն, պառլամենտական տրիբուն, խոշոր մինիստրական պաշտոններ, վորպեսզի օտարյերկրյա հյուպատոսներին «յերկար սպասել տար մինիստրական ընդունարաններում» և այլն:

Բանվորների և գյուղացիների լայն խավերի համար մեծ Հայաստանի լոզունգը դառնում էր դատարկ և ատելի մի

*) Դաշնակցական կառավարության նախկին նախագահ Բաջազնունու վկայությամբ («Դաշնակցությունն այլևս անելիք չունի») մեծ Հայաստանի նախագիծը դաշնակցական պառլամենտությունը ներկայացրել էր դաշնակիցներին առանց կառավարության գիտության, փախստական հայերի ազդեցության տակ: Պարզ է, թե ինչպիսի փախստական հայեր կարող էին ազդել դաշնակցական պառլամենտության վրա:

հնչյուն կյանքի այն կոշմարային պայմանների ոտով, վորոնց մասին մենք դեռ ևս կխոսենք: Յեթե մինչև այդ դաշնակցականները, ագիտացիա մղելով տաճկահայ ժողովրդի տանջանքների մասին, կարող եյին հոգեբանորեն ռուս-հայկական մասսաների մեջ համակրանք առաջացնել դեպի այդ ժողովուրդը, ապա այժմ նախ և առաջ այդ ժողովուրդը չկար, իսկ յերկրորդ՝ Անդրկովկասյան հայ աշխատավորն ինքը ուրիշների համակրանքի կարիքն ուներ:

* * *

1918 թվի ոգոստոսի սկզբին Յերևանում բացվեց այսպես կոչված Հայաստանի Խորհուրդը, վոր իրենից ներկայացնում եր Թիֆլիսի Հայկական Ազգային խորհրդի նորոգված կազմը և բաղկացած եր մի քանի կուսակցությունների ներկայացուցիչներից—դաշնակցականներից, վորոնք խորհրդում բացարձակ մեծամասնություն չեյին կազմում, բայց առաջին տեղն եյին գրավում (47-ից 18) մենշևիկներից և ժողովրդական ազատության կուսակցությունից (կադետներից)*): Բացի Դաշնակցությունից, բոլոր մյուս կուսակցությունները ներկայացնում եյին մտավորական խմբակներ, վորոնք Դաշնակցությունից տարբեր մի առանձին սոցիալական հենարան չունենալով և ընդհանուր առմամբ նրա հետ միասին դիմադարձ լինելով դեպի հակահեղափոխությունը, իրապես, կամա ակամա, դառնում եյին Դաշնակցության մի տեսակ թույլ այլակերպությունները: «Ազգին սպառնող վտանգի» մոմենտում այդ խմբավորումների ներկայացուցիչները ցանկացան փրկել ազգը նրանով, վոր մտան խորհուրդ, վորպեսզի «համաժողովրդական» բնույթ տան դաշնակցականների այլանդակ և անտանելի դիկտատուրային Հայաստանում և եյապես ծածկեն այդ կուսակցության վոճրագործ քաղաքականությունը: Այն, վոր նրանք նստած եյին խորհրդում, դրանից ազգը վոչինչ չեր շահում, յեթե միայն չեր կորցնում: Իրոք, ինչ նշանակություն ուներ այդ կուսակցությունների ներկայությունը խորհրդում, յերբ ամբողջ

*) Առ յերևույթ խորհրդի մեջ մտցրել եյին նաև յերեք անկուսակցական՝ յերեք թյուրքի, մեկ ռուսի և մեկ ասորու:

իշխանությունը փաստորեն պատկանում եր դաշնակցականների արևելյան բյուրոյին և նրա խմբապետներին: Գուցե նրանք ուզում եյին ոգտագործել խորհրդի տրիբունը, ագիտացիայի համար, բայց ում դեմ կարող եր ուղղված լինել նրանց հիմնական քաղաքական ագիտացիան (իսկ խնդիրը հիմնականումն եր, մնացյալն, ինքնին բղխում եր հիմնականից) յեթե վոչ բոլշևիզմի և բանվորա-գյուղացիական հեղափոխության դեմ: Իսկ ինչ վերաբերում ե կառավարության քաղաքականության և գործողությունների այս կամ այն առանձին թերությունների և պակասների քննադատության, ապա այդ քննադատությունը կորցնում եր իր նշանակությունը այն ընդհանուր «ազգային գործի հանդեպ», վորը այդ կուսակցություններն ընդհանուր առմամբ դաշնակցականների հետ միասին եյին վարում*): Առանձնապես հեղափոխական կամ ազգային վտանգի մոմենտներում, այդ կուսակցություններն իրենք հարկադրված եյին հենվել և հենվում եյին Դաշնակցության, նրա խմբապետների և մաուզերիստների վրա:

Մի տարի անց, 19 թվի ոգոստոսի 1-ին, խորհուրդը գիջեց իր տեղը պարլամենտին: Դա մի նոր կատակերգություն եր, վոր խաղացվում եր քաղցի ու համաճարակների, աղքատության և խավարի մեջ խեղդվող փոքրիկ յերկրում: Բանից դուրս յեկավ, վոր դաշնակցականներին պետք եր նույնիսկ պարլամենտ, վոր ձևականորեն ընտրել եր ժողովուրդը, բայց փաստորեն նշանակվել իրենց կողմից, վորպեսզի ավելի լավ ցուցահանեյին կործանվող ժողովրդի «անկախությունը» արտաքին աշխարհի առջև, խաբեյին ժողովրդական մասսաները, խաբեյին և մխիթարեյին, թերևս նաև իրենք իրենց:

Հայաստանն անկախ եր միայն իր ժողովրդից և կախված եր ումից և ինչից միայն ուզում եք,—դոնքիշոտ դաշնակցական մտավորականից, խմբապետից և մաուզերիստից, ամեն մի անգլիական գեներալից, ամերիկական փթած ալյուրից և խտացրած

*) Բացի միայն ընկեր Հ. Ազատյանից, վորն իրոք յեռանդուն կերպով դուրս յեկավ իսկապես մերկացնելու Դաշնակցությունը և նրա կառավարությունը: Դրա համար ել նրան ուժեղ կերպով հալածեցին, և նա հարկադրված յեղավ հեռանալ Հայաստանից:

կաշից, վրացական յերկաթուղագծից և Բաքվի նավթից, արտաքին աշխարհի պայմաններից, միջազգային քաղաքականության և դիվանագիտության ամեն մի փոփոխությունից և այլն։

Այդ պարլամենտական խեղկատակության մեջ, ուր տեղերի 90 տոկոսը պատկանում եր դաշնակցականներին, միայն եսերները քիչ թե շատ կազմակերպված քառանդամ ոպոզիցիա եյին ներկայացնում, առանց վորի կատակերգությունը կկորցներ իր իմաստը։ Եսերական կուսակցությունը և նրա պարլամենտական պատվիրակությունը միայն բավարարվում եյին կառավարական ռեժիմի առանձին թերությունների և յերկրի դրության մասին խոսելով։ Ռեալ քաղաքականություն և գործնական քայլեր—դա եսերների գործը չե, մանավանդ, վոր նրանք չունեյին նույնիսկ վորոշ և հաստատուն որիենտացիա և անհուսալի կերպով շվոթվում եյին քաղաքականության մեջ։

Փետրվարի 20-ին պահանջելով ազատել բանտարկված կոմունիստներին և պատճառաբանելով, վոր կոմունիստները Հայաստանում վոչինչ չեն արել, Վահան Մինախորյանը (պարլամենտի անդամ) միաժամանակ գրում եր. «Մենք, վոր վոչ մի առիթ բաց չենք թողել Ռուսաստանի բոլշևիզմի վտանգավոր ու յերազական կողմերը մերկացնելու համար» և այլն։ («Սոցիալիստ Հեղափոխական» 8 փետրվարի 1920 թ. № 1)։ 20 թվի մայիսի սկզբին, Ադրբեյջանի մուսաֆաթական կառավարության անկումից հետո, Հայաստանի մայիսյան շարժումից վախեցած եսերական ոպոզիցիան պարլամենտում պահանջում եր դաշնակցությունից, վորպեսզի նա հոժարակամ և հանդիսավոր կերպով հրավիրեր բոլշևիկներին և նրանց հանձներ իշխանությունը։ Ավելի «իմաստալից» բան թուլամորթ եսերները չեյին կարող մտածել։ Դաշնակցականները եսերների յելույթները դիմավորում եյին աղմկալի ծիծաղով։ Ս. Ջամալյանն ասում եր. «Հայանի յե արդեն, թե եսերները ինչ հույսեր եյին կապում Բիչերախովի և Դենիկինի հետ։ Այսոր հայտնի դարձավ մի ուրիշ բան ևս, այն, վոր սոց.-հեղ. կուսակցությունը խորհրդային իշխանության գլխին հազար տեսակ լուտանքներ թափելուց հետո, սկսել ե նույն այդ իշխանությանն յերկրպագել»։

Ջուր տեղն եր անհանգստանում Ս. Ջամալյանը։ Յերկար չշարունակվեցին այդ յերկրպագությունները, միայն մեկ որ, և այն ել դաշնակցական պարլամենտում։ Հետևյալ որը, յերբ պարզվեց, վոր Հայաստանի խորհրդայնացման հարցը հայ բանվորների և գյուղացիների կողմից միանգամայն ռեյալ ե դրված, այդ կուսակցությունն անհետացավ վոչ միայն պարլամենտից, այլ և ընդհանրապես, քաղաքական գործունեյության ասպարեզից, այդ ասպարեզը թողնելով Դաշնակցությանը, և խայտառակ կերպով թագնվելով նրա թիկունքում։ Միայն այդ կուսակցության առանձին անհատները հետևվեցին հանգուցյալ բժ. Ս. Մելքոնյանի (ռազմա—հեղափոխական կոմիտեյի անդամ, վորին դաշնակցականները գնդակահարեցին) փառունակ որինակին և մասնակցություն ունեցան մայիսյան ապստամբության մեջ, բայց նրանք արդեն և՛ ձևականորեն և՛ փաստապես եսերներ չեյին, այլ կոմունիստներ։ Լավ ե, վոր այդ կուսակցությունն իրենից վոչ քաղաքներում, վոչ ել գյուղերում քաղաքական մի առանձին ույժ չեր ներկայացնում և պարլամենտ եր թողնված դաշնակցականների վողորմածությամբ։

Իշխանությունը պատկանում եր վոչ թե խորհրդին և պարլամենտին, այլ դաշնակցական կուսակցության, ի դեմս նրա արևելյան բյուրոյի, վորի ձեռքում և խորհուրդը և պարլամենտը հասարակ, յերկրորդական հլու գործիքներ եյին։ Դաշնակցության դիկտատուրան հենվում եր վոչ թե այդ մարմինների վրա, այլ բացառապես արտաքին պայմանների և ույժերի վրա և իբրև խաղալիք, ամբողջովին կախված եր այդ ույժերից ու պայմաններից։ Նույնիսկ Վրացյանը չեր բացասում, վոր Անդրկովկասի անկախությունը, հետևաբար և Հայաստանի անկախությունը, արդյունք եր վոչ թե ժողովուրդների կամքի արտահայտության, այլ արտաքին պայմանների։ Այստեղ միայն կարելի յե և պետք ե ավելացնել, վոր այդ պայմաններն արտակարգ բնույթ եյին կրում, կարճատև և աննորմալ եյին, և վորպես այդպիսին, անխուսափելիորեն պետք ե առաջացնեյին և ներքին արտաքո կարգի աննորմալ կացություն ամբողջ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում։ Այլ

բան է, որ դաշնակցականները մութ ջրում ուզում էին ամենամեծ և թանկագին ձուկը որսալ, և նրանք այդ աննորմալ պայմանները համարում էին նշան այն բանի, թե իբր պատմությունը հղիացել է մեծ Հայաստանով, և այլ բան, որ պատմությունը նշում էր միանգամայն այլ հակադիր ելք այդ չափազանց աննորմալ կացությունից, այդ պատմական փակուղիից։

Այնուամենայնիվ, նույնիսկ այդպիսի պայմանների որով դաշնակցական իշխանությունը կամա ակամա և տարերայնորեն պետք է իրեն հենարան փնտրեր և յերկրի ներսում։ Հայկական բուրժուազիան մնում էր յերկրից դուրս՝ արտասահմանում և մասամբ Վրաստանում։ Նրա վրա դաշնակցականները հենվում էին միայն գաղափարապես և արտաքին քաղաքականության մեջ, որովհետև փոքրիկ Հայաստանն այդ բուրժուազիայի համար առանձին հետաքրքրություն չէր ներկայացնում։ Հիմնական մասսան, աշխատավոր գյուղացիությունը և սակավաթիվ բանվորական խավերը նրա համար միայն քաղաքական նպատակներով շահագործելու առարկա էին։ Յեվ նա այդ մասսան մղում էր հարևանների հետ կռիվներ և սահմանային վեճեր վարելու։ Բավական է նշել, որ կառավարությունը զենքի տակ պահում էր ազգաբնակության գրեթե ամբողջ աշխատունակ մասը մինչև 32 տարեկան հասակը։ Մնում էին մանր քաղաքային առևտրական բուրժուազիան և գյուղացիական զորայությունը, որոնք, կորցնելով առևտրի և տնտեսավարության նորմալ պայմանները, կորցնում էին և իրենց նախկին նորմալ կերպարանքը ու դառնում կատաղի չարաշահներ, մաքսանենգներ և ուրիշի գույքն ու հողերը թալանողներ՝ և միայն այդ գնով ժամանակավորապես հաշտվում իշխանության հետ ու նրան նեցուկ լինում, «Թալանիր, մեկ է, յերկար չի տևելու»—այսպես էր քաղաքային և գյուղական ճարպիկների նշանաբանը։

Իրերի նման դրության մեջ հին խմբապետությունը, դաշնակցականների արկածախնդրական քաղաքականության անհրաժեշտ գործիքը լինելով, միաժամանակ յերկրի ներքին

պետական վարչության ամբողջ սիստեմի հիմքն էր դառնում և ամբողջովին իրենով անում էր յերկրի ներքին ռեժիմը։ Խմբապետը—դա նույն կուրորեն ազգայնաբար մարտնչող դաշնակցական մտավորականն էր գործնականում գրչի և խոսքի փոխարեն մտրակն ու մաուզերը ձեռքին։ Դաշնակցական մտավորականը և դաշնակցական խմբապետը—վերցրած միասին՝ դա դաշնակցականի ամբողջացած և կատարյալ տիպն է։ Յեթե մինչև այդ դաշնակցականներն ելի կարող էին Անդրկովկասի հայ ժողովրդի աչքում խմբապետների համար վորոշ հմայք ստեղծել, վորպես ազգային հերոսների, վորոնք գործում էին Տաճկաստանում, այժմ այդ խմբապետները, ժողովրդի վրա անսահման իշխանություն ձեռք բերելով, դառնում են ամենատխրահռչակ դեմքերը այդ մասսաների աչքում։ Խմբապետը վոստիկանության մեջ—դա չինովնիկ-կաշառակերի, ազգաբնակությունը թալանողների և յերկիրը քայքայող մութ ույժերի հովանավորն էր։ Խմբապետը բանակում—դա բանակը քայքայող թալանների կազմակերպիչն էր, սահմանները պահպանող խմբապետը—դա սահմանային արյունահեղ ընդհարումների նախաձեռնողն ու ղեկավարն էր։

Յեվ այսպես, առանց խելքի ու գիտության, յերկիրը կառավարում էին անգրագետ և վայրենի խմբապետները մտրակով և մաուզերով։ Ներքին վարչական սիստեմը դաշնակցականները վերցրել էին ռուսական ցարիզմից ըստ ձևի, սակայն խմբապետական-մաուզերիստական ներքին պետական կառուցվածքն ըստ բովանդակության գերազանցում էր նույնիսկ ցարի վոստիկանական կարգերը։ Ռուսական մտրակն ու ավինը չէր կարելի համեմատել դաշնակցական մտրակի և մաուզերի հետ, վորոնք վոչ մի օրենք և վոչ մի սահման, թեկուզ, արտաքին վայելչության համար, չէյին ճանաչում։ Խմբապետներն իրենց շուրջն էին հավաքում հին հայդուկներին և տերորիստներին և նրանց շարքերը լրացնում էին նոր ապադասակարգայնացած և ամեն մի հասարակական խիղճը կորցրած ընկած տարրերով։ Այդ հին լրացված խմբերը իրենց խմբապետների իշխանության նոր պայմաններում անչափ այլանդակ կերպա-

րանք եյին ստանում։ Խմբապետի «տղերքը», վոր ժողովրդի կողմից մաուզերիստ անունն եյին ստացել, իրենց այլանդակ վարմունքով, խայտառակություններով և ամեն տեսակ անպատիժ հանցագործություններով լրացնում եյին այն ամենը, ինչ պակասում եր դաշնակցական «անկախ» դիկտատուրայի պատկերը ամբողջացնելու համար։ Դաշնակցությունը և նրա կառավարությունը, անկախ նրանից, թե ցանկանում եյին, թե չե, ի վիճակի չեյին կռվելու այդ խայտառակ յերևույթի դեմ։ Այլ իշխանություն, քան յերկրում լիակատար անիշխանություն ստեղծող խմբապետների և մաուզերիստների իշխանությունն եր, նրանք չկարողացան և չեյին կարող հաստատել։

Կարելի յեր մաուզերիստների կյանքից, դաշնակցական դիկտատուրայի շրջանում, տասնյակ և հարյուրավոր բնորոշ որինակներ բերել, բայց այդ որինակներով չես զարմացնի հայ ընթերցողին և նույնիսկ նրան, ով բախտ կամ դժբախտություն ե ունեցել գեթ մի քանի որ լինելու դաշնակցական Հայաստանում։ Բավական ե նիշել, վոր մաուզերիստը կարող եր կանգնեցնել գնացքը ուզած տեղը անձնական կարիքների կամ քմահաճույքի և կամ «քաջություն» ցույց տալու համար, ազատելու ամեն մի բանտարկյալի, ծաղրելու դատարանը և նույնիսկ դաշնակցական նախարարին, հափշտակելու ցանկացած կընոջը, թալանելու, սպանելու և այլն, և այդ ամենն անպատիժ։

Բայց խմբապետիզմը և մաուզերիզմը իրենց արտահայտությունը գտան առանձնապես կառավարական այն զզվելի գործում, վոր ստացավ Հայաստանի հայացման և թյուրքթաթարական ազգաբնակությունից «մաքրելու քաղաքականություն» անունը։ Զինվորական և վոստիկանական խմբերը և թալանչիների ամեն տեսակ վոհմակները, խմբապետների և մաուզերիստների ղեկավարությամբ, հարձակվում եյին խաղաղ մուսուլման ազգաբնակության վրա Աղբաբայում, Բեյուքվեդիում, Զանգիբասարում, Ղարսի շրջանում և այլն, սպանում եյին և անողոքաբար կոտորում, այրում ամբողջ գյուղեր և թալանում մինչև վերջին թելը։ Ով կարողանում եր փրկվել,

նա փախչում եր Տաճկաստան, Պարսկաստան Ազրբեյջան և պատմում այնտեղ դաշնակցական գազանությունների մասին։ Մարդիկ վոճրագործ ձեռքով քայքայում եյին սեփական յերկիրը և իրենց համար անդունդ փորում։

Այդ սոսկալի վայրագ ջարդերը, վորոնց հազիվ թե կարելի լինի համեմատել հրեյական ջարդերի հետ Ռուսաստանում, դաշնակցականներն աշխատում եյին արդարացնել նրանով, վոր մուսաֆաթիստները նույնն եյին անում Ազրբեյջանում հայերի նկատմամբ, և վոր իբր թե թաթարական ազգաբնակությունն ապստամբում եր նրանց դեմ։ Բայց իրականում հարցը վոչ թե նրանումն եր, վոր մուսաֆաթականները նույնն եյին անում, թեև իրոք սրանք յետ չեյին մնում դաշնակցականներից այդ գործում, այլ նրանում, վոր դաշնակցականները պարզ և գիտակցորեն անց եյին կացնում յերկրի արյունահեղ հայացումը, գործունեյության մի ամբողջ դաշտ բացելով իրենց խմբապետների և մաուզերիստների ու ամեն տեսակի թալանչիների համար,—վորոնց վրա հենված եր նրանց դիկտատուրան։ Յեվ կերակրելով ու պահելով բանակը և վոստիկանությունն այդ թալանների միջոցով, կառավարությունը դրանով էլ քարշ եր տալիս իր վողորմելի կարճատև գոյությունը։

Այդպիսին եր դաշնակցության դիկտատուրան Հայաստանում, այդպես եյին նրանք փրկում ազգը, այդպես եյին նրանք նվաճում հայրենիքը։

Իսկ աշխատավոր մասսաները հեծում եյին և տնքում— դաշնակցական քաղաքականության կոշմարի և խմբապետական մտրակի ու մաուզերի տակ և յելք փնտրում։

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՅԵՎ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանից, Ադրբեյջանից և Ռուսաստանից, մանավորապես Բաքվից և Թիֆլիսից լիովին կտրված գոյության վոչ միայն տարիները, այլ նույնիսկ ամիսներն ու շաբաթները պետք է միանգամայն զգալիորեն և բացասաբար անդրադառնային արդյունագործության տեսակետից չափազանց հետամնաց և սակավահող գյուղացիական փոքրիկ յերկրի տնտեսական դրության վրա, մի յերկրի, վորը տնտեսապես ձգտում եր դեպի հիշյալ յերկրները և քաղաքները և նշանավոր չափով ապրում եր ի հաշիվ իր սահմաններից դուրս ստացվող բանվորական յեկամուտների։

Իսկ յեթե դաշնակցականներին հաջողվեց Հայաստանը յերկու և կես տարով կտրել արտաքին աշխարհից և այն կրակե ողակով շրջապատել, ապա դա վոչ թե այն պատճառով, վոր ժողովուրդը ամբոխ է և ամեն ինչ նրա հետ կարելի յե անել, ինչպես այդ կարծում եյին դաշնակցականները։ Այդ հարցում նրանք պետք է շնորհակալություն հայտնեյին արտաքին հակահեղափոխական ույժերին, նույն թվում և մուսաֆաթական ու մենշևիկ «հերոսներին», վորոնցից առաջինը հայերին կոտորելու, իսկ յերկրորդը հալածման քաղաքականությունն եյին վարում։ Դաշնակցականները Հայաստանի աշխատավորական մասսաներին, վորոնք սկզբում չկարողացան իրենց հաշիվ տալ, հասցրին այնպիսի մի փակուղիի, վորից ուրիշ յելք չկար, քան այն, վոր իրոք յեղավ։

Այդ հետամնաց և սակավահող շրջաններից, մանր-չարչիական և պորտաբույծ չինովնիկական քաղաքներից, վորոնց դաշնակցականները վարչապես ժամանակավոր կերպով միացրել եյին իրենց իշխանության ներքո, քաղաքներ և շրջաններ, վորոնք տնտեսապես բոլորովին կապված չեյին իրար հետ կամ կապված եյին չափազանց թույլ կապով, դաշնակցականիզմի հիմունքներով չեր կարող ստեղծվել փոքրիկ Անդրկովկասյան Հայաստան, ինչպես և դաշնակցական քաղաքականությամբ չեր ստացվի մեծ Հայաստան, կամ ընդհանրապես ավելի, քան այն Հայաստանը, վորը դաշնակցականներն ստացան ժամանակավորապես, և վորը հազիվ եր շնչում։

(Վերոհիշյալին ավելացրեք դաշնակցական կառավարության արտաքին և ներքին խելագար քաղաքականությունը և այն խմբապետական՝ մաուզերիստական կարգերը, վոր յերկրում ստեղծեցին լիակատար անիշխանություն, և այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու դաշնակցական Հայաստանը պետք է ընթանար և ընթացավ դեպի անխուսափելի կործանում, ֆիզիքական վոչնչացում և բարքերի այլասերում ու վայրենացում։)

Դժբախտաբար դաշնակցական կառավարությունը գրեթե վոչ մի վիճակագրական թիվ չի թողել յերկրի տնտեսական դրության մասին, իսկ այն թվերն ել, վոր կան (Բ. Իշխանյանի թվերը) բացարձակապես վորևե վստահության արժանի չեն։ Այնուամենայնիվ մենք կաշխատենք գոնե յեղածներից վորոշ թվեր և տվյալներ գտնել, պատկերելու համար այն դժոխային յերկիրը, վորի անունն եր «անկախ դաշնակցական Հայաստան»։

Արդյունագործության մասին կարիք ել չկա խոսելու։ Նա գրեթե գոյություն չուներ, իսկ ինչ վոր կար, այն ել չքացավ։ Պղնձի հանքերի, Շուստովի կոնյակի և գինու գործարանների և բազմաթիվ այսպես կոչված մանր ֆաբրիկաների ու գործարանների մասին մենք արդեն գրեթե ասել ենք յերկրորդ գլխում այն ամենը, ինչ կարելի յեր ասել։ Այստեղ միայն պետք է ավելացնել, վոր այդ գործարանների և մանր արհեստավորական ձեռնարկությունների լիակատար քայքայումը հետևանք եր յերկրի ընդհանուր տնտեսական վիճակի և միաժամանակ նշանացույց տնտեսական կյանքի լիակատար անկման։ Համենայն դեպս այդ ձեռնարկությունները, իբր և յերկրի

տնտեսական զարգացման առաջին սաղմեր, մի կողմից վորոշ փոխանակային աշխույժ եյին մտցնում յերկրի մեջ, մյուս կողմից, նրանց հաշվին ապրում եր մի քանի տասնյակ հազար ազգաբնակություն։ Այժմ այդ ձեռնարկությունների բանվորներն իրենց ընտանիքների հետ լրացնում եյին աղքատ մասսաների առանց այն ել լայն շարքերը ինչպես քաղաքներում, այնպես ել գյուղերում, վորովհետև նրանց մեծ մասը կազմում եյին գյուղացիական բատրակները և չքավորները։

Սակավաթիվ բանվորական խմբակները, վերադառնալով գյուղ, քաղաքները թողնում եյին սպեկուլյանտներին, մաքսանենգերին և պորտաբույծներին։ Միայն շնորհիվ նման տարրերի, այդ քաղաքները, վոր իրենցից մեծ գյուղ եյին ներկայացնում, արդարացնում եյին իրենց անունը։ Այդ տեսակետից ել դաշնակցական Հայաստանի մայրաքաղաք Յերևանը մյուս քաղաքներից մի գուցե տարբերվում եր նրանով, վոր այդտեղ մեծ քանակությամբ նստած եյին ավելի խոշոր պորտաբույծներ, Թալանչիներ և յերկրի քայքայիչներ, մինչև դաշնակցական նախարարները և պարլամենտի անդամները։ Միայն Ալեքսանդրոպոլ քաղաքը մի յերջանիկ, բայց աննշան բացառություն եր կազմում շնորհիվ մի քանի հարյուր յերկաթուղային բանվորների, վորոնք քաղաքի մեջ մի փոքր աշխուժություն մտցնելով, կարծես թե փորձում եյին նրան վորոշ ժամանակակից նշանակություն և բովանդակություն տալ։ Բանվորների աշխատավարձը, թղթե փողի կատաստրոֆիկ անկման և չարաշահության ու թանկության կատաղի աճման պայմաններում, հասնում եր չնչին չափերի. բանվորներն արդեն հնարավորություն չունեյին առաջվա նման ոգնելու իրենց ընտանիքներին գյուղում և այնտեղ ոժանդակելու իրենց տնտեսությանը։ Իսկ ինչ վերաբերում ե քաղաքի այլ աշխատավորական տարրերին, մանր արհեստավորներին, այգեպաններին, ինչպես և այն յերկրագործներին, վորոնք այդ քաղաքների ազգաբնակության նշանավոր մասն եյին կազմում, ապա նրանց սոցիալական դրությունը,

հետևաբար և բախտը, վոչնչով չեր տարբերվում գյուղատնտեսական ազգաբնակության հիմնական մասսայի սոցիալական դրությունից և սրանց՝ դաշնակցական իշխանության որով բաժին ընկած բախտից։

Ժողովրդական տնտեսության ամենահիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունն ընկավ, ինչպես յերբեք, և շարունակում եր ավելի յեվս ընկնել։ 1914 թվին ներկա Խորհրդային Հայաստանի (այսինքն Դաշնակցական Հայաստանի, հանած Ղարսի, Սուրմալույի, Նախիջևանի, և ավելացրած Լոռու շրջանները) սահմաններում ցանքսերի քանակն, առանց Յերևան և Ալեքսանդրոպոլ քաղաքների, 276.957 դեսյատին եր, իսկ 1919 թ. 75.714 դեսյատին, վոր 14 թվի նկատմամբ կազմում եր 27,3%։ Բոլոր տեսակի անասունների ընդհանուր թիվը նույն սահմաններում և դարձյալ առանց մատնանշած քաղաքների 1914 թ. 2.364.733 եր, իսկ 1919 թ. 714.643, այսինքն 14 թվի նկատմամբ 31.62%. (Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության ստատիստիքական տեղեկությունները 1925 թ. հրատ.)։ Վորքան ել կոպիտ լինեն այս թվերն, այնուամենայնիվ, մեր կարծիքով, նրանք մոտավորապես ճիշտ են վորոշում գյուղատնտեսության վիճակի տոկոսային փոխհարաբերությունը 14 և 19 թ. թ. միջև։ Իսկ ինչ վերաբերում ե այն շրջաններին, վորոնք Խորհրդային Հայաստանից դուրս են մնացել և տեղ չեն բռնում այս թվերի մեջ, ապա այդ շրջաններում գյուղատնտեսության պատկերը պետք ե ավելի մռայլ լիներ, վորովհետև այդ շրջանները նախ՝ մոտ լինելով տաճկական սահմաններին, ավելի անհանգիստ եյին (քրդական հարձակումները, սահմանից տավար քշելը և այլն), և յերկրորդ՝ վորպես առավելապես թրքական շրջաններ, ավելի եյին քայքայվում դաշնակցականների կողմից կիրառվող «մաքրման» քաղաքականության հետևանքով։

Նույն կ. վ. վ. տվյալներով (վոր ստացել եմ անձամբ) ներկա Հայաստանի նույն սահմաններում բամբակի ցանքսերի քանակը 1914 թ. 10.598 դեսյատին եր՝ 232.527 փ. մաքրված բամբակի բերքով, միջին հաշվով դեսյատինից 21,9 փութ, իսկ

1919 թ. միայն $529^{1}/_{2}$ դեսյատին—7.942 փութ, միջին հաշվով դեսյատինից 15 փութ։ Բամբակի ցանքսի այդպիսի ուժեղ կրճատումը բացատրվում էր ոչ միայն գյուղատնտեսության անկման ընդհանուր պատճառներով, այլև նրանով, որ դաշնակցական կառավարությունը բամբակի գնման մի անիմաստ մենաշնորհ էր հայտարարել իր ոչինչ չարժող թղթե դրամի որով։

1919 թվի այգեգործության վիճակի վերաբերմամբ մենք չկարողացանք թվեր գտնել, և հազիվ թե դրանք հնարավոր լինի գտնել։ Բայց մի քանի իրազեկ մարդկանց վկայությամբ, որոնք այն ժամանակ ապրում էին Հայաստանում, այգիների բերքը չէր կարող նախապատերազմյան բերքի 10—15 % ավելի լինել։ Այդ էլ վոտնակոխ էր լինում և հափշտակվում զորքերի և ամեն տեսակ թալանչի խմբերի կողմից։ Դրանից բացի այգիների մի մասը բոլորովին յերեսն ի վայր էր ձգվում և չէր մշակվում։ Գինեգործության վիճակն այլ կերպ լինել չէր կարող, որովհետև բացի ներքին անիշխանությունից, այգեգործական արտադրությունների (սպիրտ, կոնյակ և այլն) համար փակ էր միակ ռուսական շուկան։

Ընթերցողին չհոգնեցնենք ամեն տեսակի այլ թվերով։ Բերված թվերն էլ բավական են՝ պարզ պատկերացում կազմելու այն կատաստրոֆիքական վիճակի մասին, որի մեջ ընկավ գյուղատնտեսությունը՝ ժողովրդական տնտեսության այդ համարյա թե միակ և հիմնական ճյուղը, դաշնակցականների իշխանության օրով։ Պարզ էր որ այդպիսի վիճակը պետք է գնալով ավելի վատթարանար, որովհետև արագ անկման հիմքում գտնվող պատճառները ոչ միայն չէին պակասում և չէին թուլանում, այլ ընդհակառակը՝ ավելի շատանում էին և խորանում։

Յերկրի «մաքրման» և հայացման քաղաքականությունը ուղեկցվում էր թալանված և այրված թուրք գյուղերի հողերի անարխիկ գրավումով։ Դաշնակցականներն աշխատում էին այդ հողերի վրա նստացնել թյուրքահայ փախստականներին, բայց, առանց արտադրության միջոցների և նույնիսկ բնակարանների, որոնք այրվում էին դաշնակցականների կողմից, այդ բանը չէր հաջողվում։ Այդ անտեր մնացած հողերն ընկնում էին գլխավորապես քաղաքի և գյուղի ամեն տեսակ ճարպիկ մարդկանց ձեռքը, որոնք, ազգակցական և այլ կապեր ունենալով, օգտվում էին բարձր դաշնակցական խավերի հովանավորությունից։ Այդ գործում անմասն չէին նույնիսկ դաշնակցական նախարարները և պարլամենտի անդամները։ Դժբախտաբար չափազանց դժվար է որևէ ստույգ թվեր և տվյալներ գտնել՝ որոշելու այդ հետաքրքրական յերևույթի բնույթն ու չափը, յերևույթի, որ նոր կալվածատիրական խավի տարերայնորեն հանդես գալու յուրահատուկ մի սաղմային ձև էր։ Այդ հողերը մշակվում էին, թե ոչ,—դա միևնույն է, նրանք համենայն դեպս գրավվում էին ապագայի համար։ Բայց ըստ յերևույթին այդ հողերի մի մասը մշակում էին բռնագրավողները, որոնք շահագործում էին գրեթե ձրի բանվորական ույժը և կառավարական պահեստներից սերմեր էին ստանում։ Այսպես, օրինակ, սոցիալիստ-հեղափոխականների լրագիրը 20 թ. ապրիլի 27-ին տպագրել է էսէրական ֆրակցիայի կողմից պարլամենտին ուղղված մի հարցապնդում, որը պահանջում էր բացատրություն տալ, թե ինչ հիման վրա յերկրագործության նախարարը սերմը բաժանել է պարլամենտի՝ հողի հետ ոչ մի առնչություն չունեցող անդամներին, նրանց կանանց և ազգականներին։ Այդ հարցապնդմանը կցված է անունների և ազգանունների մի ամբողջ ցանկ։ Ես-էրները չափազանց ուշ, հավանորեն մասսայական խոսակցությունների ազդեցության տակ, հարցնում էին այդ մասին և յերևի առաջուց գիտեյին, որ ոչ մի պատասխան չեն ստանա։

Այսպիսով, մի կողմից դեռ մինչև այդ էլ սակավահողությունից տառապող, հայ գյուղը քայքայված պատերազմներից, տնտեսական ու քաղաքական անիշխանությունից, թալաններից, ընկնող թղթե փողից և այլն՝ հնարավորություն չուներ մշակելու նույնիսկ նախապատերազմյան ցանքային տարածության մեկ յերրորդը, մյուս կողմից, նոր հողատերերը և հին զոռբաները իրենց ձեռքն էին գցում լավագույն հողամասերը, ինչ

չափով վոր այդպիսի հողամասեր կարելի յեր գտնել Հայաստանում, և մշակում եյին չափազանց աժան բանվորական ույժով, ինչպես ասում եյին, մի փոր հացով։

Գյուղն իր կյանքում յերբեք նման տնտեսական և սոցիալական կացություն չեր տեսել։ Համաժողովրդական մասսայական աղքատացման շարունակ սրվող պրոցեսը հարյուր հազարավոր քաղցած և բացարձակապես աղքատ մարդկանց մի ամբողջ բանակի հանդեպ առաջացնում եր անխիղճ շահագործողների, չարաշահների և ավազակների մի խումբ՝ դաշնակցական պոլիցիայի ոժանդակությամբ, վորը կառավարությունից գրեթե ռեալ վոչինչ չստանալով, ապրում եր ի հաշիվ այդ տարրերի։ Իսկ յերրորդ կողմից հազարներով քաղաքներից, առանձնապես Բաքվից և Թիֆլիսից, դեպի գյուղ եյին վերադառնում բանվորները և ամեն տեսակ կիսաքաղաքային և նույնիսկ քաղաքային տարրեր, մինչև մանր քայքայված ձեռնարկուները և նույնիսկ մտավորականները, վորոնք խորացնում եյին գյուղի առանց այն ել ծանր դրությունը։

Գյուղի միջակ խավերի մի զգալի մասը քայքայվել եր դեռ համաշխարհային պատերազմի տարիներին։ Մնացած մասն ել, վոր պատերազմի ժամանակ մի կերպ յոլա եր գնացել, արդեն չեր կարող դիմանալ դաշնակցական կարգերում։ Յեթե միջակ գյուղացին դա գյուղի այն տարրն ե, վոր հազիվ և հաշվենկշռում իր փոքրիկ բյուջեն, առանց զգալի պարտքերի ծայրը-ծայրին հասցնում, ապա այդպիսի տարրը ավելի հեշտ ե քայքայվում պատերազմներից, անիշխանությունից և ընկնող վալյուտայից. բավական ե, վոր նա մի զույգ բանվորական ձեռք, կամ մի բանուկ յեզ կորցնի և չկարողանա սերմացուն պահել մինչև նոր ցանքսը, թաքցնելով քաղցած յերեխաններից, վորպեսզի նրա բյուջեյի ծայրերը արագորեն հեռանան իրարից, և այդ դեպքում նա պատրաստ ե վարձվելու հարուստի մոտ, և պարտքի տակ ու նրանից կախման մեջ ընկնելու։

Բայց հարուստը հիմար չեր, վորպեսզի այդպիսի պայմաններում գյուղացուն շահագործեր քիչ թե շատ նորմալ վարձով կամ թե պարտք տար այդպիսի ծանր ժամանակ։ Նա գերադասում եր

հարստություն կուտակել, մինիմալ ծախսեր անելով և ավելի ռեալ արժեքներով—չարաշահության, հողի չտեսնված աժան մշակման, իր հողամասերը պարարտացնելու, մաքրելու միջոցով և այլն։ Հայկական գյուղում շահագործման նյութական և բնական հնարավորությունները միշտ սահմանափակ են յեղել։ Սակայն այժմ, այդպիսի աննորմալ քաղաքական պայմանների որով, անընդհատ յերկյուղի տակ և վաղվան օրվա անորոշության մեջ, վոչ վոք չեր մտածում ոգտագործել նույնիսկ յեղած հնարավորությունները, առաջնորդվելով քիչ թե շատ լուրջ, տեւական տնտեսական ծրագրներով։ Արագ վաստակել, և այն ել մինիմալ ռիսկով—այսպես եր ժամանակի վոգին։ Յեվ այդ ժամանակից այդ վոգով ոգտվում եր, ով կարող եր։ Բայց այդպիսիների թիվը Հայաստանում հարյուրներ և հազարներ եր, իսկ տառապողների և քաղցից մեռնողների—տասնյակ և հարյուր հազարներ։

Այդպիսի դրության մեջ, ժողովրդական տնտեսության այդպիսի անկման որով, դաշնակցական Հայաստանը, վոր մինչև պատերազմը ներմուծում եր 5—6 միլիոն փութ հաց (հարևան շրջաններում և յերկրներում կատարվող մանր գնումների հետ միասին), ըստ դաշնակցական կառավարության տեղեկությունների (Բ. Իշխանյանի վիճակագրական տեղեկագիր № 2.) 19 և 20 թ. թ. ստացավ մոտավորապես յերեք միլիոն փութ ամերիկական ալյուր, մի քանի հարյուր հազար փութ խտացրած կաթ և այլ մանր-մունր ապրանքներ։ Հացի և կաթի փոխարեն նա ամերիկացիներին հանձնում եր զանազան հում նյութերի հին մնացորդները, գլխավորապես բամբակ (ըստ տեղեկությունների, մոտավորապես 50.000 փ.)։ Իշխանյանի այս թվերից նախ և առաջ ինքը սատանան գլուխ չի հանի, և յերկրորդ, նրանցից վոչ մեկին չի կարելի հավատալ։ Բայց յեթե անգամ նրանք ճիշտ լինեյին, ապա նախ և առաջ այդ ապրանքները բավարարում եյին գլխավորապես կառավարական կարիքները, իսկ յերկրորդ՝ նրանք, առանձնապես ալյուրը, ներկայացնում եյին չարաշահության, թալանի և գեղծումների ու այսպես կոչված «լիազորների» և չինովնիկների կաշառակե-

րության առարկա։ Այդ ալյուրից տալիս եյին սոված փայեր գաղթականներին, իսկ յերբեմն էլ տեղ-տեղ գյուղերում վոգորմաբար բաժանում ֆունտերով։ Բայց սովի և աղքատության ծովում այդ ամենը կաթիլ անգամ չեր հանդիսանում։

Ի՞նչ եյին նշանակում այդ թվերը և տվյալները, և ինչ են նրանք ասում, ի՞նչ եր կատարվում յերկրում, ի՞նչպես եր ժողովուրդը մեռնում, և ինչպես եյին ոգնում նրան դաշնակցականները և այլն. Թող այդ մասին խոսեն եսերական և նույնիսկ դաշնակցական լրագրները, վորոնք չեյին կարող լռել այն մասին, ինչի մասին քարերն եյին աղաղակում։

1919 թ. մայիսի 6-ին վոռն Գ. Սուրմալույից գրած թղթակցության մեջ (Սոցիալիստ-հեղափոխական № 1) գրում ե.

—«Մինչև այժմ նմանը չտեսնված աղետներից մեկը հանդիսանում ե Սուրմալույի շրջանի հայության անարյուն կոտորածը սովից։ Այդ շրջանի հայ ազգաբնակության մեկ յերրորդն ե մնացել և այդ մնացորդն էլ դատապարտված ե մահվան։ Փանիկ գյուղը, վոր մինչև գաղթը*) ունեցել ե 2500 անձ, մինչև մարտի 20-ը մնացել ե 750 հոգի, Եվջիլարը՝ 2400, մնացել ե 700, Ալի-Ղամարը՝ 1870, մնացել ե 862, Ալեթլուն՝ 1200, մնացել ե 450, Թեջրլուն՝ 1212, մնացել ե 700. այդպես նաև մյուս գյուղերը։ Վերջին յերկու գյուղերն իրենցից ներկայացնում են կատարյալ գերեզմանոցներ։ Ալի-Ղամարում տուն չկա, բակ չկա, վոր թաղված մարդ չտեսնվի. գյուղի գերեզմանատանը այս տարվա սովից մեռածների թիվը ավելի շատ ե, քան հարյուր տարվա ընթացքում. Ալեթլու մոտ և միայն 15—20 հոգի վոտքի վրա տեսա և այն էլ դեմքերը ուռած, մնացածները սովից պառկած հաց եյին աղերսում։ Այս բոլորը սոսկ իրականություն ե առանց չափազանցության։»

Նույն լրագրի նույն համարում մի այլ ես-երական թղթակից՝ Համբիկ ստորագրությամբ Ղամարլույից գրում ե. «Սովը շարունակում ե թագավորել շրջանում. սովամահությունները չեն նվազում. ժողովրդի մեծամասնությունը խոտեղենով ե սնվում,

*) Հավանորեն խոսքը հայ ազգաբնակության նահանջի մասին ե Սուրմանլույի գավառից, 18 թ. ամառվա սկզբում, տաճկական արշավանքի ժամանակ։

բոլորը նիհար են, թուլակազմ, սեփական հողը մշակելու ընդունակությունից զուրկ։ Կառավարությունից վոչ մի ոգնություն չի ստացվում, յեթե չհաշվենք այն փոքրիկ պատառը, վոր բաժանվեց վողորմության ձևով և վորից ավելի շատ ոգտվեցին դարձյալ «լիազորներն» ու հարուստ վաշխառուները, քան մեռնող աշխատավորությունը։ Յեգիպտացորենը իբրև սերմացու դրամով ծախվեց և հարուստ կեղեքիչները գնելով այն՝ հաց պատրաստեցին ու ֆունտը 9—10 ռուբլով աղքատ գյուղացուն ծախեցին։ Ցորենը բաժանվեց ըստ հողերի քանակի. պարզ ե, վոր այդ դեպքում էլ ոգտվեց հարուստը, քանի վոր համարյա ամբողջ հողը գտնվում ե նրա ձեռքին։ Գյուղացիներից շատերն էլ սովի պատճառով իրենց այգիները շատ չնչին գներով ծախելով գյուղացի տղրուկներին, իրենք զրկվեցին նաև ցորենի բաժին ստանալուց։ Վերջին որերս ցորեն ե բաժանվել միմիայն 9 գյուղերի 45-ական ֆունտ ամեն մի դեսյատինի այգու հաշվով։ Հիվանդություններից նույնպես բավական շատ են մեռնում, և յեթե որ առաջ միջոցներ ձեռք չառնվեն, ժողովրդի վերջին բեկորներն անգամ հնարավոր չե փրկել»...

1919 թ. հունիսի 13-ին նույն եսերական թերթում բանվոր Խեչոն ի միջի այլոց գրում ե Ղարաքիլիսայից. «Իսկ թե կուզեք իմանալ, թե ինչ ասել ե հացի գրվանքան 7—8 մանեթով գնելը՝ դրա համար հարկավոր ե քյասիբ և աշխատավոր լինել, այն ժամանակ միայն կգիտենաք, թե ինչ բան ե սովն ու թանկությունը. և այդպիսի ծանր պայմաններում, ինչպես պետք ե ապրի քյասիբի մի ընտանիքավոր ծառայող կամ բանվոր, վոր ստանում ե ամսական 500—600 ռուբլի»*)...

1920 թվի հունվարի 7-ին դաշնակցական «Հառաջը» խմբագրականում «65 դիակ» խորագրով գրում ե. «Հունվարի 5-ին Յերևանում փողոցներից հավաքված ե 3 դիակ, տներից 10 և հիվանդանոցներից 52—ընդամենը 65։ Այսպես ե հաղորդում

*) Այդպիսով բանվորի ամսական աշխատավարձն եր 600 ր. : 8 ր., վոր հավասար եր 75—80 ֆունտ հացի, այսինքն նախապատերազմյան 3—4 րուբլու։ Վորքան հիշում ենք, դա արդեն կարելի յեր համարել բարձր աշխատավարձ, առանձնապես 20 թվականի համար։

փողոցներում փակցված պաշտոնական բյուլլետենը։ Մի րոպե փորձեցեք կենտրոնանալ այս թվերի վրա՝ որական 65 դիակ միայն մայրաքաղաքում՝ պետության աչքի առջև։ Հապա ինչ է կատարվում գավառում՝ հետ ընկած անկյուններում, ասենք մի Դարալագյազում, կամ Նոր-Բայազետում։ Այնտեղից ստացված տեղեկությունները ուղղակի սարսափելի յեն, կատարյալ կոտորած է տեղի ունենում մեր յերկրում, սովն ու ցուրտը հնձում են անխնա ու անհաշիվ, և ամեն որ գերեզման են իջնում հազարավոր կյանքեր»...

1920 թվի մարտի 7-ին ես-երական թղթակից Յ. գրում է (Սոցիալիստ հեղափոխական № 5). «Հեշտ կերպով փող վաստակելու յեղանակը վարակել է վոչ միայն մեր վաղեմի վաշխառուներին ու խանութպաններին, այլ և ինտելիգենցիայի մի հոծ բազմության։ Սա սովորական լեզվով սպեկուլյացիա յե կոչվում։ Յեվ ով չի զբաղվում այժմ այդ որհնված գործով։ Նույնիսկ գյուղացիական չուխավորների մի ահագին յերամ է առաջ յեկել մեր իրականության մեջ, վոր կտրվելով հողից, թափառում է գյուղից գյուղ, քաղաքից քաղաք փող վաստակելու»...

Այս ամենին դեռ շատ բան կարելի յեր ավելացնել զանազան այլ, ավելի ոբյեկտիվ աղբյուրներից, կարելի յեր նաև ավելացնել ավելի ևս սոսկալի փաստեր այն ամենից, ինչ մենք դիտել ենք մեր սեփական աչքերով, բայց դրա համար անհրաժեշտ է գրել վոչ թե մի փոքրիկ գլուխ մի փոքրիկ գրքույկի համար, այլ մի ամբողջ գիրք։ Միայն մենք կխնդրեյինք ընթերցողին, վորպեսզի նա այդ կոշմարային պատկերի առջև ներկայացներ դաշնակցական հախուռն խմբապետին, վորը, մտրակն ու մաուզերը ձեռքին, քաղցած մասսային քշում եր դեպի ռազմական արկածներ, և դաշնակցական մտավորական-քաղաքագետին (վա՜յ այդպիսի քաղաքագետին), վորը համառորեն պահանջում եր «ծովից ծով» մեծ Հայաստան՝ վոչ պակաս, քան հեռավոր Կիլիկիայով, և վոչ մի դեպքում առանց ապագա յերևակայական Ղարս-Արդվին-Բաթում յերկաթուղագծի)։*

*) *Յերբ վրացական դելեգացիայի հետ յերկար իրար մեջ կռվելուց հետո (Յեվրոպայում) վերջինս,—ավելի զիջող գտնվելով հեղափոխական վտանգի հանդեպ, վոր*

Եսերական լրագրի 20 թ. փետրվարի 17-ի համարում վոմ Միխ. Ավդեևը բերում է բժշկա-սանիտարական վարչության տվյալները, ըստ վորոնց 19 թ. Յերևանում մեռել է 14,000 մարդ մաքսիմում 70,000 ազգաբնակությունից, վոր կարող եր ունենալ այդ քաղաքը, այսինքն 20% իսկ 1921 թ. հունվարին՝ 1291 մարդ։

Մեր հաշիվներով վոր ճիշտ է՝ մի քիչ կոպիտ են, վորովհետև այլ հաշիվ կատարել չի յել կարելի, դաշնակցական Հայաստանի սահմաններում դաշնակցական դիկտատուրայի ժամանակ կոտորվել է պատերազմներում ու մեռել սովից և մասսայական հիվանդություններից վոչ պակաս, քան 1/2 միլիոն մարդ մոտավորապես 2 միլիոն ազգաբնակությունից, այսինքն՝ 25%-ը)։*

Այսպիսի յե՞ր դրությունը «անկախ» ու «պարլամենտական» դաշնակցական Հայաստանի ներսում։

Իսկ մի՞թե այդ ժամանակ Ռուսաստանում տնտեսական քայքայում գոյություն չուներ. մի՞թե այնտեղ ևս բանվորներն ու գյուղացիները սոված չեյին և չեյին մեռնում։ Այո, բայց նախ և առաջ այնտեղ վոչ այդպես և վոչ այդ չափով եյին քաղցում ու մեռնում. այնտեղ գյուղատնտեսությունը այդպես կատաստրոֆիկ կերպով չեր ընկել, (Ռուսաստանում գյուղատնտեսությունը քաղաքացիական կռիվների տարիներում ընկել

*սպառնում եր Անդրկովկասին Դենիկինի պարտությունից հետո՝ համաձայնվեց դաշնակցականներին զիջել այդ ապագա Բաթումի յերկաթուղագիծը—դաշնակցական պատվիրակությունը պահանջեց, վորպեսզի համաձայնության տեքստում մատնանշված լինի, վոր յերկաթուղագիծը (*ПОЛОТНО Ж. Д.*) պետք է պատկանի Հայաստանին։ Դրանով եվ խափանվեցին բանակցությունները և նրանք վոչ մի համաձայնության չեկան (տես Զ. Ավալովի հիշողությունները)։ Այդ յերևակայական յերկաթուղագծի մասին դաշնակցականները ավելի շատ եյին մտածում, քան ժողովրդի մասին. այդ դժբախտ յերկաթուղագծի շպալները նրանց համար ավելի թանգ արժեյին, քան հարյուր հազարավոր աշխատավորների կյանքը։*

*) 1,600,000 *բնիկ ազգաբնակություն* + 160,000 *ժամանակավորապես ապրող և* + *մոտավորապես* 200,000 *տաճկական և այլ փախստականներ*=1,960,000. *Խորհրդային Հայաստանը ստացավ վոչ ավել, քան* 900,000 *ազգաբնակություն՝ ներառած նույնպես Լոռու շրջանը։ Խորհրդային Հայաստանից դուրս մնացած շրջաններում (Ղարսի նահանգ, Սուրմալույի գավառ և Նախիջևանի շրջան) փրկվածների թիվը կարելի յե հաշվել վոչ ավել, քան* 300,000 *մարդ. Հայաստանից հեռացածների և փախածների թիվը մոտավորապես* 200,000. *Այսպիսով* 1,960 *հազարից մոտավորապես փրկվեց* 1,400 *հազար, պակասում է* 560 *հազար։*

էր վոչ ավել, քան 50%-ով) ինչպես ընկել էր նա առանց այն էլ աղքատ Հայաստանում, իսկ յերկրորդ՝ վոր կարևորն է, այնտեղ բանվորներն ու գյուղացիները գիտեյին, թե ի՞նչու յեն քաղցում ու մեռնում։ Այնտեղ նրանք իրար միջև բաժանում եյին հացի վերջին կտորը և մեռնում գեներալների ու կալվածատերերի դեմ մղվող փառունակ կռվում. մեռնում հանուն հողի, ազատության և խաղաղության, հանուն իրենց արդար իրավունքի, իրենց քրտինքի և արյան։ Նրանք պատմական մի հոյակապ գործ եյին կատարում, վորպես զի այլևս չլինի վոչ պատերազմ, վոչ սով, վորպեսզի մարդը գազանի նման չխեղդի մարդուն։ Իսկ ի՞նչու համար եյին քաղցում և մեռնում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները. տաճկական լեռների և վիլայեթների, յերևակայական Բաթումի յերկաթուղագծի և Կիլիկիայի համար։ Արդյո՞ք նրանք այդ ցանկանում եյին. արդյո՞ք նրանք վորևէ գաղափար ունեյին այդ ամենի մասին։ Ո՞ւմ էր հարկավոր այդ ամենը, բանվորներին և գյուղացիների՞ն, թե՝ աշխատավոր ժողովրդի շահագործողներին, հարստահարիչներին, սպեկուլյանտներին, խմբապետներին և դաշնակցական մինիստրներին։ Բայց արժե՞ գլուխ ցավեցնել նրանց հետ, ովքեր մինչև այժմ չեն հասկացել այն տարբերությունը, վոր կար Ռուսաստանում և Հայաստանում կատարվածի միջև։ Այդպիսիների վրա կարելի յե միայն ծիծաղել, բայց կյանքն արդեն ինքն ամենից ավելի լավ է ծաղրել դրանց։

Ավելի լավ է նայենք, թե վերջի վերջո Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հասկացա՞ն թե վոչ այդ տարբերությունը։

* * *

17 թվի առաջին ամիսները, Փետրվարյան հեղափոխությունից հետո, մենք հայկական գյուղերում հարցնում եյինք գյուղացիներին. «ի՞նչու դուք ձայն եք տալիս դաշնակցականներին, այլ վոչ թե բոլշևիկներին կամ առհասարակ սոցիալ-դեմոկրատներին» և ստանում եյինք հետևյալ պատասխանը. «վորովհետև մենք հայեր ենք, իսկ սոցիալ-դեմոկրատները վրացիներ են»։ Այսպեսի յեր հայ գյուղացու քաղաքական գիտակցության աստիճանը. այսպես եյին նրան ուսուցանում զոռբաներն ու տերտերները, դաշնակցական ագիտատորներն ու խմբապետները։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ գյուղացին կուսակցությունների մասին այլ պատկերացում չուներ, իսկ մինչև Փետրվարյան հեղափոխությունը բոլշևիկների մասին չեր լսել։

Ուղիղ յերեք տարի հետո, 1920 թվի համարյա նույն ամիսներին միևնույն գյուղացիները, արդեն չսպասելով մեր հարցին, փակում եյին մեր ճամփան՝ բացականչելով*). «մենք այլևս յերբեք ձայն չենք տալու դաշնակցականներին։ Մենք հիմա հասկանում ենք այն ամենը, ինչ ասում եր ձեր կուսակցությունը յերեք տարի առաջ։ Մենք պատրաստ ենք զենքը ձեռքներիս կռվելու Դաշնակցության դեմ, միայն թե ճամփա ցույց ավեք և առաջնորդեք մեզ, մենք բոլորս կգնանք ձեր կուսակցության յետևից։ Յեթե չեք հավատում, կարող ենք գյուղական վորոշումներ հանել և ձեզ բերել։

Կատարվում էր անհավանական և չեղած մի պատմություն, կատարվում էր այն, ինչ վոչ միայն 2—3 տարի առաջ վոչ վոք չեր կարող նախատեսնել, այլ և անգամ աչքերիդ ու ականջներիդ չեյիր կարողանում հավատալ։ Գյուղացու ամուր գանգը յերեք տարվա ապրած սարսափների և քաղցի ու մահի ուրվականի հանդեպ ավելի փափուկ էր դառնում՝ բոլշևիկյան ճշմարտությունն ըմբռնելու համար։ Նա այդ 2—3 տարվա ընթացքում սկսել էր հասկանալ այն, ինչ նա հազիվ թե հասկանար 2—3 տասնամյակում՝ այլ ավելի նորմալ պայմաններում։ Եսերական լրագրի թղթակիցը Սուրմալույից գրում էր. «գյուղի գերեզմանոցում այս տարվա սովից մեռածների թիվը ավելի շատ է, քան հարյուր տարվա ընթացքում»։ Դա ճիշտ էր նաև մնացյալ բոլոր գավառների նկատմամբ։ Բայց ճիշտ էր և այն, վոր այդ նույն 19 թվին Հայաստանի

*) I-ին անդրկովկասյան գյուղացիական համագումարի (կայացավ 17 թվի մայիսին) կամպանյան անց կացնելու համար Փետրվարյան հեղափոխությունից հետո, առաջին ամիսները Թիֆլիսի բանվորական պատգամավորների Խորհրդի կողմից յես ուղարկված եյի Ղազախի գավառը։ Այդ ամիսները մենք դեռ ես աշխատում եյինք մենշևիկների հետ մի կուսակցության մեջ, վորպես ֆրակցիա։

աշխատավոր մասսաները իմացան և հասկացան ավելի շատ բան, քան նախորդ հարյուր տարվա ընթացքում։ Նրանք հասկացան վոչ թե «թեորիապես», այլ մի տեսակ իրենց հատուկ ձևով, գյուղացիորեն, դառը փորձով։

Բայց փորձից աշխատավոր մասսաները կարող եյին հասկանալ միայն մի բան. այն, վոր դաշնակցականները իրենց դեպի անդունդ են առաջնորդում։ Սակայն ինչու և ինչպես այդ մասսաները, կտրելով իրենց կապը դաշնակցական կուսակցությունից, դիմադարձ եյին լինում դեպի մեր կուսակցությունը, ամբողջապես նրան վստահելով։ Դա այն հիմնական և հանգուցային հարցն է, վոր իր ժամանակ շփոթեցնում եր մեզնից շատերին, յեթե վոչ մեզ բոլորիս։ Այդ հարցի ճիշտ ըմբռնումից և այդ արտասովոր շարժման ճիշտ գնահատությունից եր կախված մեր քաղաքականությունը Հայաստանում, մեր գործողությունները և այդ գործողությունների մեթոդները։

Արդյոք այն պատճառո՞վ չեր վստահում հայ գյուղացին մեր կուսակցությանը, վոր վերջինս նրա կարծիքով պետք է նրան ձրի հաց և շոր տար, ինչպես վոր, չգիտես ինչու, կարծում եյին շատերը, կամ ավելի ճիշտ՝ պրովոկացիայի յենթարկում կոմմունիստական ագիտացիան։ Ավելի նաիվ և ծիծաղելի պատկերացում Հայաստանի հեղափոխական շարժման մասին չեր էլ կարող լինել։ Ճիշտ է, ժողովրդին հարկավոր եր հաց և շոր, բայց նա դրա համար պատրաստ եր գիշեր և ցերեկ աշխատելու, միայն թե աշխատանքի անհրաժեշտ պայմաններ լինեյին։ Աշխատավոր ժողովուրդը այնքան էլ պարզամիտ չէ, ինչպես յերբեմն նրան պատկերացնում են, վորպեսզի հավատար նման հեքյաթներին և դրա համար էլ զենքը ձեռքին կռվեր դաշնակցականների դեմ, վոտնակոխ անելով նրա 30 ամյա ավանդությունները, մանավանդ, վոր դաշնակցական և ուրիշ կուսակցությունների հակահեղափոխական ագիտացիան աղաղակում եր հենց այն մասին, վոր Ռուսաստանում սով է, իսկ բոլշևիկները քաղցած մի ամբոխ, վորը իր ճամփի վրա թալանում և ավերում է ամեն ինչ ու ամենքին։

Դա ուղղակի հին, ռուսական որիենտացիան եր, ասում

եյին ուրիշները։ Բայց ռուսական որիենտացիայի հին ավանդական ույժը վոչնչով չդրսևորեցին մասսաները 17—18 թվականներին և լռելյան թույլ տվին դաշնակցականներին Անդրկովկասը բաժանելու Ռուսաստանից, զինաթափելու ռուսական զորքերը և ճնշելու խորհրդային իշխանությունը Բաքվում։ Ռուսական որիենտացիայի ավանդական ույժը յերևան եր գալիս իբրև մասսաների հեղափոխական տրամադրության արտահայտության յուրահատուկ մի ձև, բայց շարժման եյությունը ավելի խորն եր, քան հասարակ ռուսական որիենտացիան։ Ըստ վորում այդ որիենտացիայում արտահայտվում եր վոչ թե հասարակ հին տրադիցիոն ույժը, այլ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունը։

Դա ի՞նչ հեղափոխական շարժում է, դա պարզապես մասսաների քաղցած զայրույթն է դաշնակցական այլանդակությունների դեմ—«խորիմաստ» կերպով ասում եյին նրանք, ովքեր հեղափոխությունը չեյին պատկերացնում առանց կալվածատերերի և բուրժուազիայի՝ ամեն մի գավառում, ամեն մի շրջանում։ Այո, իրոք դա մասսաների քաղցած զայրույթն եր, բայց այդ քաղցած զայրույթը փոխվում եր հեղափոխական շարժման, ձուլվելով Անդրկովկասի հեղափոխական շարժման հետ և լուծվելով ռուսական բանվորա-գյուղացիական հեղափոխության մեջ։ Ի՞նչ փույթ, վոր այն սահմաններում, վոր արհեստականորեն անց կացրին դաշնակցականները, խոշոր բուրժուազիա և կալվածատերեր չկային. մի՞թե հայ և ոտար բուրժուազիան չեր, վոր այդ արհեստական սահմաններից դուրս և հեռու գտնվելով հանդերձ՝ քաղաքականապես անխնա շահագործում եր հայ ժողովրդին, և մի՞թե դաշնակցական կուսակցությունը քաղաքական գործիք չեր այդ բուրժուազիայի ձեռքում։

Տաճկական լեռները և վիլայեթներ չեյին, վորոնց մասին պիտի հոգար հայ ժողովուրդը, և վոչ էլ յերևակայական Բաթումի յերկաթուղագիծը, նամանավանդ, յերբ նա պարզապես կտորվում և վոչնչանում եր։ Նա հասկանում եր, վոր պատերազմներն ու ինտրիգներն իրենց դարավոր հարևանների հետ վո-

չինչ չավլին իրեն և վոչինչ չեն տալու։ Մեծ Հայաստանը հարկավոր էր շահագործողներին, սպեկուլյանտներին, խմբապետներին ու մինիստրներին։ Իսկ նրան հարկավոր էյին խաղաղ փոխհարաբերություններ հարևանների հետ, աշխատանքի խաղաղ պայմաններ, բանվորական և ապրանքային շուկա, անմիտ արյունհեղության, դաշնակցական այլանդակությունների, անիշխանության և չարաշահության դադարեցումը։

Բայց այստեղ դարձյալ, էլ ավելի կոնկրետ ձևով, մոտենում ենք միևնույն հարցին, այսինքն՝ թե ինչպես Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը կարող էր քաղաքական գիտակցության գալ այն բանում, վոր միայն բոլշևիկական կուսակցությունը նրան կօգնի լուծել վերոհիշյալ անհետաձգելի և իրեն համար կենսական պրոբլեմները։

17 թվին քաղաքականապես յետամնաց գյուղացիությունն ընդհանուր առմամբ պասիվորեն հարեց Դաշնակցությանը պարզապես վորպես «հայ լուսավորչական», մանավանդ վոր նրանից դեռ «շատ բան» չէր պահանջվում, պահանջվում էր միայն «ձայն տալ»։ 18 թիվը, այսպես կոչված տաճկա-մուսաֆաթական վտանգի տարին էր։ Գյուղացիությունն այդ տարին, դիմադարձ լինելով դաշնակցության ավանդական ույժին, օգնություն փնտռեց նրա խմբապետների մոտ։ Յեկավ 19 թիվը և նրա հետ հայ ժողովրդի յերկար սպասած «փրկիչները»—անգլիացիները, ամերիկացիները, ֆրանսացիները, իտալացիները և այլն։ Դաշնակցականները պարում էյին ուրախությունից։ Բառը բառի, խոստումը խոստումի և արկածը արկածի յետևից տեղում էյին աշխատավոր մասսաների գլխին։ Բայց այդ բառերից ու խոստումներից և վոչ մեկը չկատարվեց։ Դաշնակցական անիշխանությունը յերկրում ավելի ուժեղանում էր, ժողովրդի դրությունն ավելի վատթարանում, մեռնողների և քաղցածների թիվն ավելանում։ Վոչ ամենազոր «ինգլիզը» վո՛չ էլ ամերիկական քեռին չփրկեցին և չէյին փրկում Հայաստանը։ Ամեն մի բառ ու խոստում սկսում էր կորցնել իրեն նշանակությունը, և ժողովուրդը դադարում էր նրանց հավատալուց։ Տաճկական լեռներն ու

ծովերը, անկախությունը, ազգը, հայրենիքը և այլն—այս ամենը դառնում էր դատարկ մի հնչյուն քաղցի և մասսայական հիվանդությունների սարսափի հանդեպ։

Իսկ ինչու և ինչպես առաջացավ այդ դրությունը, և ո՞ւր է յելքը, մտածում էր գյուղացին։ Այդպիսի դրության մեջ նա, ուզեր չուզեր, պիտի մտածեր և խելքի գար։

Մինչդեռ ճշմարտությունը բոլշևիկական կուսակցության ու Հոկտեմբերյան հեղափոխության մասին հարթում էր իր ուղին դեպի հայկական գյուղը՝ չնայած վոչ մի խոչընդոտի ու սահմանների, չնայած Անդրկովկասյան ներքին ու արտաքին պատնեշներին։ Սրա հետ միաժամանակ գյուղացիությունն իմանում էր Ադրբեջանի գյուղացիների տրամադրության, ագրարային հուզումների ու բեգերի հետ ունեցած ընդհարումների և Վրաստանի գյուղացիության ապստամբությունների մասին։ Բաքվի պրոլետարիատը, 18 թվի սեպտեմբերյան հարվածներից հետո շունչ առնելով, մոտավորապես 19 թվի սկզբից նորից սկսեց տաք և յեռանդուն կոչերով դիմել Անդրկովկասի բոլոր աշխատավորներին՝ բոլշևիկյան կուսակցության դրոշակի ներքո դուրս գալ զենքը ձեռքին միասնական միջազգային շարքերով համաշխարհային և տեղական հակահեղափոխության դեմ։

Հայ գյուղացու խավար մտքերը կարծես թե սկսում էյին պարզվել. նա կարծես սկսում էր հասկանալ, վոր «վոչ բոլոր սոցիալիստներն են վրացիներ և վոչ բոլոր թյուրքերը՝ մուսաֆաթիստներ»։ Նա իրեն հատուկ ձևով աշխատում էր հասկանալ շրջապատող պայմանները և փնտռում էր մի բան, վորից բռներ՝ չխեղդվելու համար։ Բայց հայկական գյուղը քիչ լավ բան էր լսել բոլշևիկների մասին։ Միայն 17 թվին, վորոշ շրջաններում նրանք հանդես յեկան և էլ չերևացին։ 18 թվականին և 19 թվի առաջին կեսում մեր կուսակցությանը չէր հաջողվում մուտք գործել հայկական գյուղը։ Դաշնակցական մամուլը, նրա ագիտատորները, խմբապետները և ամեն տեսակ գործակալները անդադրում և համառորեն մտցնում էյին աշխատավոր մասսաների գլուխը, վոր բոլշևիկները թալանչի-

ների քաղցած մի ամբոխ է, վոր դրանք ավելի վատ են, քան
տաճիկները և մուսաֆաթականները, վորոնց նրանք հետ դաշն են
կապել՝ հայ ժողովուրդը վոչնչացնելու համար, վոր նրանք
թալանում են, կոտորում կացիններով, ազգայնացնում կա-
նանց և յերեխաներին, և վոր հայ բոլշևիկները հայ ժողովրդի
դավաճաններն են, տաճիկների, մուսաֆաթականների և ռուս
բոլշևիկների վարձկան գործակալները և այլն։

Իսկ արդյոք դաշնակցականները չե՞ն ստում բոլշևիկների
մասին, սկսեց մտածել գյուղացին, յերբ նա բավականաչափ
փորձեց այդ կուսակցությունը և նրա իշխանությունը, յերբ
նա իմացավ նրա մոլոր խոստումների ու խոսքերի գինը։—Ստում
են, ինչպես և միշտ. ուզում են ձեզ կործանել, ինչպես վոր
կործանեցին տաճկահայերին. բոլշևիկները ազգային կռիվների
և հարուստների շահերի համար մղվող պատերազմների դեմ
են, նրանք խաղաղության և հալալ աշխատանքի պաշտ-
պաններ են և այլն—շարունակ ու համառորեն պնդում եյին
նրանց Վրաստանից և Ադրբեյջանից, մանավորապես Բաքվից,
և այլ վայրերից, ազգային ճնշումներից ու հալածանքներից
փախած քաղաքային բանվորները։ Նրանք նրանց պատմում
եյին բոլշևիկական կուսակցության, խորհրդային իշխանու-
թյան, Վրաստանի և Ադրբեյջանի հեղափոխական անցքերի
մասին, ոգնելով ըմբռնել շրջապատը։

Հայկական գյուղը յերբեք չեր տեսել այդպիսի սոսկալի
դրություն, բայց նա չեր տեսել նաև քաղաքային և կիսաքա-
ղաքային ավելի գիտակից ու կուլտուրական ուժերի այդպի-
սի կուտակում։ Դուք այնտեղ կարող եյիք տեսնել վոչ միայն
Բաքվի, Թիֆլիսի և ուրիշ վայրերի նախկին բանվորներին,
այլև ուսանողների, ուսուցիչների և այլ տարրերի, վորոնք նույն
պատճառներով Ադրբեյջանից և Վրաստանից փախչում եյին
Հայաստան, գլխավորապես գյուղերը, վորովհետև հայկա-
կան քաղաքները, ուր ապաստան եյին գտնում մեծ մասամբ
դաշնակցության հետ կապեր ունեցողները, չեյին տեղավո-
րում այդ նոր փախստական ինտելիգենցիային։ Գյուղ եյին վե-
րադառնում վոչ միայն նրանք, վորոնք մինչև այդ չեյին կոր-

ցրել իրենց կապերը նրա հետ, այլ նույնիսկ նրանք, ովքեր յեր-
կար ժամանակ չեյին վերադառնում և չեյին մտածում վերա-
դառնալ։ Այդ ինտելիգենտական տարրերը Անդրկովկասյան
բանվորների հետ միասին ժողովրդական զայրույթի ազդեցու-
թյան տակ՝ դաշնակցական այլանդակությունների դեմ ուղղված,
մի տեսակ տարերայնորեն, մասսաների հեղափոխական տրամա-
դրության առաջնորդներն ու արտահայտիչներն եյին դառնում։

Այսպիսով հայկական աշխատավոր գյուղը հեղափոխակա-
նանում եր, կտրելով իր կապերը Դաշնակցությունից, հրա-
ժարվելով վոչ միայն նրան ձայն տալուց, այլ և կանգնելով
նրա դեմ ակտիվ պայքար մղելու ճամփի վրա։

Ադրբեյջանին և Վրաստանին սահմանամերձ՝ Զանգեզու-
րի, Դիլիջանի, Նոր-Բայազետի և Ղարաքիլիսայի գավառները
հեղափոխական տրամադրության ակտիվության տեսակետից
անկասկած ուրիշ շրջանից ավելի առաջ եյին կանգնած։ Այդ
բացատրվում եր նրանով, վոր, մի կողմից, այդ շրջանները հա-
մեմատաբար ավելի ուժեղ տնտեսական ձգտում եյին զգում
դեպի Բաքու և Թիֆլիս, առանձնապես դեպի այդ քա-
ղաքների բանվորական շուկաները և նրանց միջև ընկած
յերկաթուղագիծը, և, մյուս կողմից, այդ գավառներում կու-
տակվել եր գյուղ վերադարձած քաղաքային բանվորների և այլ
կուլտուրական ուժերի ավելի խոշոր քանակություն. մեծ նշա-
նակություն ուներ նաև այն հանգամանքը, վոր այդ շրջան-
ները, Ադրբեյջանին և Վրաստանին մոտիկ լինելով, ուրիշներից
ավելի շուտ և անմիջորեն եյին յենթարկվում վրացական գյու-
ղացիության ապստամբությունների և Ադրբեյջանի ագրարային
հուզումների ազդեցությանը։ Այդ մոմենտն անկասկած խոշոր
հեղափոխականացնող դեր եր խաղում հայկական գյուղի համար։

Սակավաթիվ յերկաթուղային պրոլետարիատն անշուշտ ամե-
նալավ, բայց փոքրիկ հեղափոխական ջոկատն եր Հայաստանում։
Նրա տրամադրությունը նույնպես խոշոր առնչություն ուներ
գյուղի հեղափոխական տրամադրության հետ, վորովհետև նրա մե-
ծամասնությունը կապված եր գյուղի հետ, և գյուղը ավելի շատ
ազդեցություն եր գործում նրա վրա, քան ինքը՝ գյուղի վրա։ Ցեր-

կաթուղային բանվորները, թվով վոչ ավելի հինգ հարյուր հոգի, մեծ մասով գյուղացիներ և կիսա-գյուղացիներ, դժբախտաբար չեյին կարող իրենցից ներկայացնել և չեյին ներկայացնում այնպիսի մի կենտրոնաձիգ սոցիալական և քաղաքական ույժ, վոր կարողանար շատ թե քիչ ուժեղ հենարան և ծանրության կենտրոն ծառայել ժողովրդական շարժման համար։ Բնորոշ ե, վոր յերկաթուղային պրոլետարիատի անմիջական հեղափոխական ղեկավարները նույնպես Բաքվի և Թիֆլիսի նախկին բանվորներից եյին, վորոնք փախել եյին այդ քաղաքներից և ծառայություն գտել հայկական յերկաթուղագծի վրա։

Բանակի տրամադրությունը չեր կարող գյուղի տրամադրությունից տարբեր լինել։ Բանակի մեծամասնությունը—դա նույն գյուղացիների զավակներն եյին, վորոնք սնվում եյին գյուղի քաղաքական տրամադրություններով։ Բայց հեղափոխական տրամադրությունը յերկրում համակում եր վոչ միայն շարքային զինվորական մասսային, այլ և ստորին և նույնիսկ միջին հրամանատարական կազմը։ Միջին, առանձնապես ստորին հրամանատարական կազմը, սովորաբար ավելի մոտ ե կանգնած լինում զինվորական մասսային։ Նշանակություն ուներ և մի հանգամանք, վոր դաշնակցական կարգերից դժգոհ եր դարձնում գրեթե ամբողջ հրամանատարական կազմը. այդ այն եր, վոր անգրագետ և զինվորական գործին անբանիմաց խմբապետիզմը բանակում առանձին դիրք ուներ և ինքնզինքը կոպիտ ու ցինիկաբար եր պահում։

Շատ բնորոշ ե, վոր նույնիսկ գյուղական զոռբայությունը, մասսաների հեղափոխական տրամադրության նոր վերելքի պահին, Դենիկինին ջախջախելուց հետո, սկսում եր սեթևեթել հեղափոխական մասսայի հետ, միաժամանակ չկտրելով իր կապը դաշնակցական իշխանությունից և իր միջից տալիս եր առանձին անհատ հեղափոխականների։ Հավանորեն զոռբայության համար յերկրում քիչ բան եր մնացել թալանելու, ու նա ևս կարիք ուներ խաղաղ պայմանների։ Բայց նրա յերկյերեսանի քաղաքական դիրքը բացատրվում եր գլխավորապես նրա հեղափոխական և սոված մասսաներից ունեցած յերկյուղով։

Այսպիսով գլխավոր հեղափոխական մասսան գտնվում եր

գյուղերում։ Այդտեղ գտնվում եյին և նրա անմիջական և մասսայական ղեկավարներն ու առաջնորդները հանձինս գլխավորապես Բաքվի և այլ վայրերի բանվորների։

Հոկտեմբերյան Հեղափոխության լոզունգները, Բաքվի պրոլետարիատի կոչերը, Վրաստանի գյուղացիական ապստամբությունները ու Ադրբեյջանի ագրարային հուզումները,—ահա թե ինչն եր բարձրացնում հայ աշխատավոր գյուղացիության քաղաքական տրամադրությունը, և ահա թե ինչն եր Հայաստանի գյուղացիական շարժմանը վորոշակի տոն, քաղաքական իմաստ ու նշանակություն տալիս։

Այն հանգամանքը, վոր աշխատավոր գյուղացիության տարերային, մասսայական և խորը դժգոհությունն ուժգնորեն մեր կուսակցության ղեկավարությունն եր փնտռում—այդ արդեն վորոշում եր գյուղացիության քաղաքական շարժման բնույթը, իբրև խորհրդային—հեղափոխական շարժում։

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում մասսայական տարերային ագիտացիա հոգուտ Խորհրդային իշխանության և Կոմունիստական կուսակցության վարվում եր դեռ մինչև մեր կազմակերպված աշխատանքը, կուսակցության թիկունքում, բայց այդպիսի մասսայական—տարերային ագիտացիան, ընդհանուր առմամբ մասսաների համար ճիշտ ընդգծելով հիմնականն ու եյականը, այնուամենայնիվ չեր կարող դեֆեկտներ, բացեր, անհաջող և սխալ ձևակերպումներ ու լոզունգներ չունենալ։

Բայց ավելի հետաքրքրականն այն ե, վոր այդ կարգով ընթանում եր և կազմակերպչական աշխատանքը, վորն ավելի շատ անորոշություններ և ավելի մեծ դեֆեկտներ ուներ։

Այսպես օրինակ Դիլիջանի գավառի գյուղերում դեռ ապստամբությունից ամիս ու կես առաջ հայտնաբերում եյինք ավելի հաջող կազմակերպված բջիջների կողքին հակա-դաշնակցական քաղաքական կազմակերպություններ, վորոնք կամ եյապես բոլշևիկական եյին, բայց եսերական եյին կոչվում, կամ, ընդհակառակը, գերակշռող եսերական վոգի ունեյին, բայց բոլշևիկական անուն։ Հաճախ այդ կազմակերպությունների ղեկավարները եսերներ և մենշևիկներ եյին, վորոնք իրենք իրենց վորոշում եյին, վոր արդեն բոլշևիկներ են, բայց ձևականորեն իրենց կապերը չեյին կտրում իրենց կուսակցություններից և օգտագործում եյին լեգալ, մենշևիկական և առանձնապես եսերական դրոշակը։

Ընկ. Պապիկը իր հիշողությունները (Կուսպատի արխիվ) սկսում ե հետևյալ բառերով. «Այստեղ (Նոր-Բայազետի գավառում, Շ. Ա.) կոմունիստական կազմակերպությունը ձևավորվել ե 19 թվին, յերբ ընկ. Հ. Սարուխանյանը գալիս ե Նոր-Բայազետ աշխատելու։ Մինչ այդ նա կրում եր կիսա-մենշևիկյան, կիսա-կոմունիստական բնույթ»։

Դժբախտաբար, այստեղ հեղինակի միտքը ընդհատվում ե, և նա, չբացատրելով այդ միտքը, չի բերում օրինակներ, վորոնք բնութագրեյին այդ կիսակոմունիստական կազմակերպությունը։

Ընկ. Արշակ Թոմասյանը իր հիշողություններում (Կուսպատի արխիվ) բերում ե Ղարսի կոոպերատիվի ծառայողներից մեկի՝ Վռամ Ղազանչյանի խոսքերը, վորը 1919 թվի նոյեմբերին դիմել եր նրան նույնիսկ դեռ համոզված չլինելով, վոր Թոմասյանը պատկանում ե կոմունիստական կուսակցության. «ընկ. Թոմասյան, մենք մի քանի ընկերների հետ շատ ենք մտածում կազմակերպվելու, յերբեմն հավաքվում, խոսում ենք, բայց չենք կարողանում մի բջիջ կազմել, վորովհետև շատ քիչ ենք»։

Այսպիսով հոգուտ խորհրդային իշխանության մղվող ագիտացիայի հետ միասին նույն կարգով, մի տեսակ ինքն իրեն, ստեղծվում եր խորհրդային իշխանության համար մարտնչողների կազմակերպությունը։ Աշխատավոր մասսաների հասարակական բնազդը, սուր ճգնաժամային մոմենտներին յերբեմն ժողովրդական իմաստություն ե դառնում և հրաշքներ ե գործում։

Այդպիսի յուրահատուկ, յուրօրինակ և բարդ քաղաքական պայմաններում, 19 թվի ամառվա սկզբին սկսվեց կենտրոնացած կոմունիստական աշխատանք Յերկրային կոմիտեյի անդամների՝ ընկ. ընկ. Կասյանի և Մռավյանի ղեկավարությամբ, առաջին հերթին Յերևանում և Ալեքսանդրոպոլում։

Արդեն մի քանի ամիսների աշխատանքը տալիս ե կուսակցության 400 կազմակերպված անդամներ, վորոնք նույն տարվա սեպտեմբերին կուսակցության առաջին ընդհատակյա կոնֆերանսում ընտրում են իրենց կուսակցական կենտրոնը հանձինս Արմենկոմի*)—Հայաստանի կոմիտեյի։

*) Արմենկոմ բառը անհաջող կրճատումն ե Հայաստանի կոմիտե բառերի. այդ անունը կարող ե սխալ մեկնաբանվել և հասկացվել վոչ տերիտորյալ իմաստով, բայց գործածության մեջ եր մտել, վորպես ավելի բարեհնչյուն կրճատում։

Վերևն ասածից դժվար չե հասկանալ, վոր Արմենկոմի համար դժվարությունները կայանում եյին արդեն սկսված տարերային ագիտացիան խորացնելու և շտկելու հետ միաժամանակ, գլխավորապես կազմակերպչական աշխատանքի մեջ։ Անհրաժեշտ եր ստուգել արդեն գոյություն ունեցող բջիջները, ստեղծել նորերը և նրանց դաստիարակել բոլշևիկյան դիսցիպլինայի վոգով, վորպեսզի նրանց միջոցով կարելի լիներ ղեկավարել մասսաների տրամադրությունը և նախապատրաստել նրանց գալիք անցքերի համար։ Բայց դժբախտաբար, չնայած վոր կոմունիստները Հայաստանում կիսալեգալ դրության մեջ եյին մինչև 20 թվի հունվար ամիսը և բավականաչափ թիվ եյին կազմում, Արմենկոմը չկարողացավ անհրաժեշտ յեռանդ և վճռականություն ցուցադրել ռազմական բոլշևիզմի վոգով զորեղ կուսակցական կազմակերպություն ստեղծելու գործում։ Արմենկոմի գանգատները աշխատողների բացակայության մասին բավարար հիմք չունեյին, աշխատողներ կարելի յեր գտնել և Հայաստանում, միայն դրա համար անհրաժեշտ եյին յեռանդուն միջոցներ և վճռական քաղաքականություն՝ կուսակցության շինարարության խնդրում։

Գավառներն ուղարկվում եյին, դեռ 19 թվականի աշնանից, պատասխանատու կուսակցական կազմակերպիչներ և ագիտատորներ, բայց այն դիրեկտիվների անորոշությունն ու անպարզությունը, վոր տրվում եյին այդ ընկերներին, իսկ հաճախ նույնիսկ այդպիսիների լիակատար բացակայությունն ու նրանց աշխատանքի կապի և հսկողության բացակայությունը ստեղծում եյին այնպիսի պայմաններ, վորոնց որով դժվար եր յեռանդուն, ընդարձակ և խորը աշխատանք ծավալել։

Ահա մի բնորոշ դեպք. 20 թվի հունվարի վերջերին Թիֆլիսից միաժամանակ Յերևան յեկան՝ Արմենկոմի տրամադրության տակ՝ 4 թե 5 կուսակցական պրոֆեսիոնալներ, վորոնց թվում և այս տողերի հեղինակը. այդ ընկերներին մոտավորապես յերկու շաբաթ պահում եյին Յերևանում, վորպեսզի իմանան նրանց տրամադրությունը և հայացքները, վախենալով նրանց «Թիֆլիսյան» գեր հեղափոխականությունից։ Վերջ ի վերջո

ընկ. Կասյանի*) նախագահությամբ տեղի ունեցած Արմենկոմի նիստին պարզվեց, վոր մեզնից պահանջվում ե հրաժարվել զորքում աշխատելուց և ցուցաբերել մեզ համար ինչ-վոր անհասկանալի մի մեծ զգուշություն գյուղական աշխատանքի ասպարիզում՝ վորը պետք ե կրեր խաղաղ ագիտացիոն բնույթ. վորքան հիշում ենք, պահանջվում եր նաև զեմստվային մարմինների ընտրություններին մասնակցել, այդ մարմիններում աշխատել և այլն։ Մենք հայտնեցինք, վոր մենք վորպես բոլշևիկներ չենք կարող չյենթարկվել կուսակցական կենտրոնի հրահանգներին ու ցուցմունքներին, բայց ընդհանրապես կարիք չկա՞ արդյոք ապստամբության պատրաստվել, յեթե այդ հնարավոր ե, քանի վոր կարմիր բանակն արդեն մոտենում ե Բաքվին։ Այդ հարցը Արմենկոմի անդամների մեջ տխուր խորհրդածություններ առաջացրեց, և, ուղղակի պատասխան տալու փոխարեն, վորոշվեց նոր նիստ հրավիրել ու մեզ հետ բանավեճ բանալ Արմենկոմի քաղաքականության մասին։ Սակայն ընկ. Կասյանի աքսորումը Հայաստանից խանգարեց դրան, և մենք գավառներն ուղևորվեցինք, առանց հրահանգների և ցուցմունքների։

Հայաստանի յերեք կենտրոնական գավառներում—Յերևանի, Եջմիածնի և Ալեքսանդրոպոլի գավառներում գյուղացիության մեջ գրեթե վոչ մի ագիտացիոն աշխատանք, մասնավորապես կազմակերպչական աշխատանք, չեր տարվում. բացի Քավթառլիի, Աշտարակի և կարծեմ Ղամարլույի բջիջներից, ապստամբության պահին հիշյալ յերեք գավառներում ուրիշ բջիջներ չկային, ըստ վորում այդ բջիջները կազմակերպված եյին վոչ Արմենկոմի և Ալեք-պոլի կոմիտեյի կողմից, այլ պատահաբար՝ այդ գյուղերում գտնված կոմունիստների ջանքերով։ Ըստ այնմ պարզ ե, վոր դաշնակցականներն այդ շրջաններում կարող եյին հավաքել (և հավաքեցին) հեղափոխական ույժ մեր դեմ, վորովհետև, նախ և առաջ, դաշնակցականների ազդեցությունը, շնորհիվ ուժեղ զորքայության (առանձնապես առա-

*) Ընկ. Կասյանն այդ ժամանակ ձերբակալված եր և նստած այսպես կոչված միլիցիայի ռեզերվում (դաշնակցական պահնորդական բաժին), բայց ինչ վոր գաղտնի միջոցներով ընկերները նրան բանտարգելության տեղից դուրս եյին բերում մի քանի ժամով։

չին յերկու գավառներում) ավելի զորեղ եր, քան այլ գավառներում և, յերկրորդ՝ տաճկահայ գաղթական մասսան, վոր դաշնակցականները հրապուրում եյին թալաններով և գաղթականական փայերով և վորին նրա ղեկավարների միջոցով պահում եյին իրենց ավանդությունների ազդեցության ներքո, գլխավորապես գտնվում եր, և այն ել կոմպակտ զանգվածներով, հիշյալ յերեք գավառներում։

Գլխավոր ուշադրությունը դարձնվում եր Յերևան և Ալեքպոլ քաղաքների վրա։ Բայց այդ քաղաքներում քիչ թե շատ հաջող սկսված աշխատանքը վոչ գյուղացիական մասսայի և վոչ ել բանակի շրջանում չխորացվեց։ Արմենկոմը գիտակցաբար խուսափում եր բանակում վորևե աշխատանք տանելուց, չնայած, զորամասերում տարերայնորեն բջիջներ եյին ստեղծվում և կուսակցական ղեկավարության ու կապի բացակայության պատճառով քայքայվում։ Յերևանում կար 2—3 բջիջ, վորոնցից աչքի յեր ընկնում միայն գարաժի բջիջը։

Ալեքսանդրոպոլի կոմիտեն, վոր Արմենկոմին թուլության և անվճռականության մեջ եր մեղադրում, ինքը նրանից տարբերվում եր նրանով, վոր իր գլխավոր ուշադրությունը դարձնում եր «Հայաստանի բանվոր դասակարգի» կազմակերպման վրա։ Այս թեքման մեջ նա բավականին հեռուն եր գնում և նույնիսկ պահանջում եր կուսակցական կենտրոնական մարմինը տեղափոխել Ալեք-պոլ՝ այդ «հայկական Մոսկվան», պատճառաբանելով, վոր Յերևանում բան չկա անելու։ Ճիշտ ե, կոմիտեն մեծ և հաջող քաղաքական աշխատանք կատարեց բանվորների շրջանում, և այդ աշխատանքը նրան գրեթե լիակատար հաղթանակ տվեց դաշնակցականների վրա պրոֆեսիոնալ շարժման մեջ, վորը արտահայտվեց յերկաթուղագծի ապրիլյան կոնֆերանսում (20 թ.)։ Նա նվաճել եր նույնպես բանվորների ամբողջ համակրանքը և քաղաքական տրամադրությունը և նրանց քաշել դեպի քաղաքական մեծ ակտիվություն։ Ալեք-պոլի կոմիտեյի մեղքը, կամ ավելի ճիշտ —դժբախտությունը կայանում եր նրանում, վոր նա դուրս չեկավ բանվորական շրջանակից և չմտավ գյուղացիական

ու զինվորական մասսայի խորքը։ Անհայտ ե, թե ամբողջ գավառում, թեկուզ հաշվառումից դուրս, կա՞ր արդյոք մի այլ բջիջ, բացի Քավթառլիյի, դեպոյի և Մուսայելյանի զրահագնացքի բջիջներից։ Ըստ վորում մի վերսիայի համաձայն զրահագնացքում դիսցիպլինայի յենթարկված բջիջ կար, իսկ մի ուրիշ վերսիայով չկար, վորովհետև ամբողջ գնացքը, հրամանատար ընկ. Մուսայելյանի գլխավորությամբ, բոլշևիկական եր համարվում։ Ըստ տեղեկությունների շատ կոմունիստներ, առանձնապես մտավորականներ, քաղաքում նույնիսկ չեյին մտնում բջիջների մեջ։

Ալեքսանդրոպոլի գարնիզոնում ամբողջ կազմակերպչական աշխատանքը սահմանափակվում եր «տնավարի» կերպով անձնական կապեր պահպանելով զինվորական մասերի մի քանի հրամանատարների հետ։ Բայց հեղափոխական դաստիարակչական աշխատանքի և կազմակերպված բջիջների բացակայությունը զինվորական մասերի մեջ կարող եր ի չիք դարձնել այդ հրամանատարների դերը, վորքան ել մեծ լիներ այդ դերը և վորքան ել նրանք հավատարիմ լինեյին հեղափոխական գործին։ Յենթադրել թե այդ հրամանատարները կվերցնեյին իրենց զորամասերը, պարզապես կանցնեյին հեղափոխության կողմը և դրանով կլուծվեր տվյալ զորամասերի հարցը հեղափոխության ոգտին, դա չափազանց միամիտ բան կլիներ։ Միայն անմիջական կապը զինվորական մասսայի հետ՝ ջոկված և ստուգված բջիջների միջոցով՝ կարող եր քաղաքականապես և կազմակերպչորեն ապահովել զինվորական մասերը՝ հեղափոխական կուսակցության համար։ Կարիք չկա խոսելու, վոր այդ ամենը հնարավոր եր լիովին դեռ ապստամբությունից շատ առաջ։

Մյուս գավառներից քիչ թե շատ հաջող աշխատանք տարվում եր Դիլիջանի և Նոր-Բայազետի գավառներում և Սարիղամիշում։ Այդ շրջաններում մեր ընդհատակյա աշխատողները համարձակվում եյին առանց հրահանգների մտնել և բանակի մեջ։ Ղարսի ընկերները նույնպես տարվում եյին Ալեքսանդրոպոլի քաղաքականությամբ և իրենց ուշադրությու-

նը դարձնում էյին բացառապես յերկաթուղագծի բանվորների վրա, չնայած իրենց շրջանում այդ բանվորների թիվը մի քանի անգամ ավելի քիչ եր, քան Ալեքպոլում։ Իսկ Զանգեզուրի գավառի մասին մենք չենք խոսում, վորովհետև այդ գավառի հետ վոչ մի կապ չկար։ Այսպիսով ամբողջ բանակում ապստամբության նախորյակին զինվորական բջիջներ կային Դիլիջանի գավառում (6 և միլիցիոն գնդերում), Նոր-Բայազետի գարնիզոնում, Սարիղամիշում (4-րդ գնդում)։

Ապստամբության նախորյակին կուսակցության կազմակերպության թիվն եր 850-900 անդամ և թեկնածու։ Յերևանի և Ալեքսանդրոպոլի գավառներում 150-ական մարդուց ավել չկար, հաշվելով և բջիջների մեջ չկազմակերպված անդամներին, Ղարսի շրջանում և Նոր-Բայազետի գավառներում մոտավորապես 100-ական մարդ, իսկ Դիլիջանի գավառում 350*)։ Կար նաև փոքրիկ, բայց ռազմունակ կազմակերպություն և Ղարաքիլիսայում՝ մի քանի տասնյակ անդամներով, և փոքրիկ բջիջ Իգդիրում։ Դրանք այն մաքսիմալ թվերն եյին, վոր մեզ հայտնի եյին դեռ ապստամբությունից վոչ շատ առաջ. վորակի տեսակետից—այդ փոքրիկ կազմակերպությունն իրենից ընդհանուր առմամբ բանվորների և զինվորների ակտիվ և գիտակցական մասն եր ներկայացնում։ Բայց դժբախտաբար նա իրենից կազմակերպչական և գաղափարական դաստիարակությամբ մոնոլիտ և միասնական ամբողջություն չեր հանդիսանում։ Կապը գավառական կազմակերպությունների միջև թույլ եր։ Մի կազմակերպության փորձը չեր ընդհանրացվում և հայտնվում մյուսներին։ Ամբողջ կազմակերպության համար չեյին ընդհանրացվում և ներքին պետական ու արտաքին կյանքի յերևույթները, վորպեսզի կարելի լիներ նրան դաստիարակել միասնական հեղափոխական վոգով։ Դրա մեջ եր և այն

*) Ընկ. Աշ. Հովհաննիսյանի թվերը—Յերևանի գավառ 200, Նոր-Բայազետի գավառ 60-80, Դիլիջանի և Իջևանի գավառ 150-200, Ալեքսանդրոպոլի գավառ 200, Ղարսի 100 և այլն (եջ 9-10)—ճիշտ չեն։ Որինակ Դիլիջանի գավառում դեռ անցյալ տարի հաշվվում եր մոտավորապես 200 անդամ գյուղացիներ մինչ մայիսյան ստաժով: Մնացածներն ընկան Դաշնակցության դեմ մղված կռիվներում կամ թե դուրս մնացին կուսակցությունից: 350 թիվը Դիլիջանի գավառի համար հաստատված եր գավառական ընդհատակյա կոնֆերանսում 1920 թվի ապրիլի յերկրորդ կեսում:

քանի հիմնական պատճառներից մեկը, վոր կուսակցական կազմակերպությունը, ըստ իր հեղափոխական ակտիվության և ռազմունակության, խայտաբղետ պատկեր եր ներկայացնում։ Այդ տեսակետից համարյա ամեն ինչ կախված եր ղեկավարությունից, նրան տրվող դաստիարակության բնույթից և այն պահանջներից, վոր մենք դնում եյինք կազմակերպության յուրաքանչյուր անդամի առջև։ Մյուս կողմից կուսակցական կենտրոնի թուլությունը հնարավորություն եր տալիս գավառական կոմիտեներին կամ պատասխանատու կուսակցական կազմակերպիչներին վորոշ չափով ինքնուրույն քաղաքականություն վարել տեղական կազմակերպությունները ղեկավարելու գործում։

Մեր առջև կանգնած եր հիմնական մի հարց՝ ներշնչել արդյոք կազմակերպությանը դաշնակցական կառավարության հետ զենքով ընդհարվելու հնարավորության և նույնիսկ անհրաժեշտության ու անխուսափելիության գիտակցությունը, թե՝ բավարարվել ընդհանուր ագիտացիայով հօգուտ Խորհրդային իշխանության։

Այդ հարցի առիթով կազմակերպության ղեկավար շրջաններում ընդհանուր առմամբ իշխում եյին յերկու ծայրահեղ հակադիր տեսակետներ—Արմենկոմի և Ալեքսանդրոպոլի կոմիտեյի տեսակետները։ Մնացյալ կազմակերպությունները ձևակերպվեցին ավելի ուշ և չկարողացան ակտիվ մասնակցություն ունենալ կուսակցության՝ Հայաստանում տանելիք քաղաքական ղեկավար գծի մշակման մեջ։

Այդ յերկու տեսակետների քննությանը մենք հատուկ գլուխ ենք նվիրում։ Բայց այստեղ իսկ մենք անհրաժեշտ ենք գտնում ցրել այն բավականաչափ տարածված կարծիքը, թե Արմենկոմը կանգնած եր ապստամբության կազմակերպման տեսակետի վրա և կարծում եր, վոր այդ ապստամբությունը պիտի սկսվի Դիլիջանի գավառից։*) Նույնիսկ Դիլիջանի գա-

*) Այդ կարծիքը արտահայտություն է գտել և ընկ Աշ. Հով.-ի գրքույկում, հետևյալ ձևակերպությամբ. «Հայաստանի կոմիտեն յենթադրում եր, վոր Ղազախն ու Ղարաբաղը վորպես սահմանակից շրջաններ, հեղաշրջման հենակետներ պետք է դառնային Հայաստանի համար: Գալիք ապստամբությունը պետք է սկսվեր Իջևանի շրջանում, վորտեղից այն արձագանք պետք է գտներ ամբողջ յերկրում» (եջ 14): Ապստամբություն բառը թեև արտասանվել է 20 թվի հունվարի կոնֆերանսում, բայց վոր Արմենկոմը լուրջ մտածում եր ապստամբության մասին ու նույնիսկ վորոշ ծրագիր ուներ դրա համար—այդ մեզնից վոչ վոքի հայտնի չեր։

վառի ակտիվ ընդհատակյա աշխատողներից մեկը՝ ընկ. Պետրոս Վարդանյանը իր հիշողություններում (Կուսպատի արխիվ) գրում է. «Մարտին յեկավ ընկ. Շ. Ա. Արմենկոմի կողմից նշանակված ընդհանուր գավառում լիազոր՝ վորի գալը կապված եր ապստամբություն կազմակերպելու հետ»։ Շ. Ա. տառերի տակ թագնված է այս գրքույկի հեղինակը, վորը Արմենկոմից վոչ մի հրահանգ ապստամբություն կազմակերպելու համար չեր ստացել։ Իսկ յեթե մարտ ամսից Դիլիջանի գավառում աշխատանքն ընթացավ ապստամբության կազմակերպման և նախապատրաստման ուղիով, ապա դա տեղի ունեցավ ավելի շուտ մի տեսակ կիսա-տարերայնորեն, առանց Արմենկոմի հրահանգների և նույնիսկ անկախ նրա կամքից*)։ Իսկապես նման քաղաքական մթնոլորտում ապստամբություն կազմակերպելուց զատ ուրիշ բան չեր ել մնում անելու։ Բայց ապստամբություն կազմակերպելը դեռ ևս չեր նշանակում ապստամբել ինչպես և յերբ ուզում ես, այլ նշանակում եր պատրաստել այն գաղափարապես, կազմակերպչորեն և նույնիսկ տեխնիքապես, անակնկալի չգալու համար։ Ապստամբությունը կարելի յե և պետք է կազմակերպել վոչ միայն ամիսներով, այլ նույնիսկ տարիներով։

Բերենք մի փոքրիկ որինակ ևս, վորը ցույց է տալիս, թե այդ յերկու հակադիր տեսակետները Հայաստանի քաղաքական մոմենտի գնահատության վերաբերյալ ինչպես եյին արտահայտվում ու դրսևորում նույնիսկ սովորական քաղաքական զրույցներում։ 20 թ. հունվարին մեկը մյուսի յետևից Թիֆլիս յեկան ընկ. ընկ. Մռավ-

*) Մի գուցե այդպիսի կարծիքը տարածվել է հետևյալ հասարակ փաստից. յես դեռ ևս Դիլիջանի գավառում նոր եյի սկսում աշխատանքի ձեռնարկել, վոր մարտի սկզբին պայմանական հեռագրով դարձյալ կանչվեցի Յերևան ուր և Արմենկոմն ինձ ուզում եր թողնել աշխատանքի համար։ Յես արտահայտեցի այն կարծիքը, վոր անհրաժեշտ է արագ պարզել Դիլիջանի գավառում զինական ապստամբություն կատարելու հնարավորությունը, վորովհետև ավելի ճիշտ կլինի ապստամբությունն սկսել այնտեղից, յեթե ընդհանրապես մեզ կհաջողվի ապստամբել։ Ինձ համար անձնապես ապստամբության հնարավորությունը և նույնիսկ անխուսափելիությունը պարզվեց մոտավորապես 20 թվի մարտի վերջին, յերբ յես աշխատանքի մեջ մտա։ Արմենկոմը հարցի այդ ընդհանուր դրման հետ գուցե և համաձայնվեց, վորովհետև ինձ յետ ուղարկեց։ Բայց դա դեռ չեր նշանակում, վոր Արմենկոմը կանգնած եր ապստամբության կազմակերպման տեսակետի վրա։

յանը և Ավիսը։ Վերջինս Բաքու յեր գնում ժամանակավորապես, իսկ առաջինը Յերկրային կոմիտե՝ ինֆորմացիա տալու, աշխատողներ և միջոցներ ստանալու։ Ընկ. Մռավյանը, մի փոքրիկ խորհրդակցության մեջ գանգատվելով Յերկրային կոմիտեյի վրա, նրա՝ դեպի Հայաստանի կազմակերպության կարիքներն ունեցած վոչ բավարար ուշադրության համար, մեզ կոչ եր անում գնալ Հայաստան և ասում եր. Հայաստանում պակաս հող կա կոմունիստական աշխատանքի համար։ Ընկ. Ավիսը մասնավոր զրույցում մեզ ասում եր. ինչ հողի մասին եք խոսում։ Յես ձեզ ասում եմ, վոր ամբողջ ժողովուրդը մեզ հետ է, և ամեն մի րոպե մենք կարող ենք ապստամբություն բարձրացնել և իշխանություն գրավել։ Զրույցներ Հայաստանի կուսակցական աշխատանքի պարարտ հողի մասին մենք լսել եյինք մինչև այդ, բայց Ավիսի խոսքերը մեր վրա առանձին տպավորություն գործեցին, և մենք նրան խնդրեցինք Յերկրային կոմիտե անցնել ու նրան իրազեկ դարձնել այդ մասին։

«Պարարտ հողի» և «ամբողջ ժողովուրդը մեզ հետ է» դարձվածքների տարբերությունը մի գուցե և այժմ, խաղաղ շինարարության շրջանում, այնքան ել հասկանալի չե, բայց այն ժամանակ, հեղափոխական պայքարի սուր մոմենտին, այդ տարբերությունն ավելի քան հասկանալի յեր։

Զինական ապստամբության կողմնակից եյին Ալեքսանդրոպոլի կոմիտեն և՝ սրա ազդեցության տակ՝ Ղարսի ընկերները, բայց նրանք յուրահատուկ ձևով եյին հասկանում հեղափոխական շարժման բնավորությունը, դրանից անհրաժեշտ կազմակերպչական յեզրակացություն չեյին հանում և չկարողացան հարկավոր աշխատանք ծավալել բանակում և գյուղացիության շրջանում։

Խաղաղ ագիտացիայի վոգին տիրում եր գլխավորապես Յերևանում, Յերևանի և Եջմիածնի գավառներում։ Դրանով ել հենց պայմանավորվում եր այն հանգամանքը, վոր այդ գավառներում շատ թե քիչ ուժեղ կուսակցական կազմակերպություններ չկային, չնայած դրա համար այդ տեղերում ևս ոբյեկտիվ պայմաններ գոյություն ունեյին։

Անհրաժեշտ է ընդգծել, որ միայն մասսաներին զինական կռվի անհրաժեշտության և անխուսափելիության գիտակցության ներշնչումը մեզ օգնում էր ստեղծելու հեղափոխական մարտիկների դիսցիպլինայի յենթարկված և տոկուն կազմակերպություն՝ գյուղացիներից և զինվորներից։ Յերկրորդ ուղիի վրա, այսինքն խաղաղ ագիտացիայի ուղիի վրա, մեր շուրջը և բջիջներում խմբվում եյին պակաս ցանկալի և պակաս տոկուն տարրեր։

Կարող էր արդյոք այդպիսի կազմակերպությունը ղեկավարել մասսաների պայքարը դաշնակցական կառավարության դեմ։ Դա նախ կախված էր հեղափոխական և հակահեղափոխական ույժերի փոխհարաբերություններից, իսկ յերկրորդ՝ կուսակցության զինված կռվի կենտրոնացած ղեկավարությունից և արտաքին պայմաններից։ Վորքան թույլ էր կազմակերպությունն, այնքան ավելի նշանակություն պիտի ստանար զինական ապստամբության քաղաքական և կազմակերպչական ղեկավարությունը կենտրոնի, ապա նաև տեղերի կողմից։

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ ԴԵՊՔԵՐԸ

Դենիկինի բանակի քայքայումը, վոր սկսվեց դեռ 1919 թ. նոյեմբերին, և Կարմիր բանակի շարժումը դեպի Անդրկովկասի սահմանները, որեց-որ բարձրացնում եյին հեղափոխական մասսաների տրամադրությունն Անդրկովկասում։

Քաղաքական կացությունը Հայաստանում ավելի սուր էր դառնում, առաջացնելով ընդհարումներ գյուղերում և տեղ-տեղ էլ զինվորական մասերում իշխանության և հրամանատարության հետ։ Ավելի ու ավելի բացվում ու խորանում էր անդունդը իշխող տարրերի և աշխատավոր ժողովրդի միջև։ Գյուղացիների այդ ընդհարումներն ու հեղափոխական գնդերի հուզումները նշանակում եյին նախնական փոքրիկ ճեղքվածքներ յերկրի պետական-քաղաքական որգանիզմում, վորոնք նախազգուշացնում եյին այդ որգանիզմի մոտակա և հիմնական փլուզման մասին։ Բայց բոլոր այդ տեղեկությունները կամ չեյին հասնում Արմենկոմին՝ թեպետ և նրանք չեյին կարող չհասնել՝ կամ թե ուղղակի համապատասխան գնահատության չեյին յենթարկվում։

Միակ քաղաքական անցքը, վորի վրա ուշադրություն էր դարձրել Արմենկոմը և վորի առթիվ նա կոչ հայտարարեց, դա Հայաստանի դե-ֆակտո ճանաչումն էր Անտանտի կողմից՝ 20 թվի հունվարին։

Ես-էրական լրագիրը փետրվարի 8-ի համարում, պահանջելով ազատել բանտարկված կոմունիստներին, ի միջի այլոց այդ կոչի մասին գրում էր հետևյալը. «Դժվար չէ, կարծում ենք, հաստատել, վոր տեղական բոլշևիկները, թերևս իրենցից անկախ պատճառներով, վոչ մի ակտիվ գործունեություն չեն ունեցել Հայաստանի սահմաններում, յեթե հաշվի չառ-

նենք Հայաստանի անկախության ակտին նվիրված մի գնահատություն, վոր թռուցիկի ձևով տարածվել է քաղաքում, վորն ըստ բովանդակության ավելի շուտ յեվրոպական իմպերիալիզմի դեմ է յեղել ուղղված, քան Հայաստանի կառավարության»։

Այդ կոչի մասին մի քանի խոսք կասենք մի ուրիշ տեղ, բայց նկատենք, վոր այդ կոչից իսկապես կարելի յեր այնպիսի տպավորություն ստանալ, վորի մասին գրում եր եսերական լրագիրը։

Անկախության ակտը չեր ոգնում դաշնակցականներին և վոչ մի ազդեցություն չուներ մասսաների տրամադրության վրա, ինչպես էլ վոր դաշնակցականները հանդիսավորապես տոնեցին այն։ Կարմիր բանակի առաջխաղացման յուրաքանչյուր քայլը դեպի Անդրկովկաս՝ նրանց համար նշանակում եր ավելին, քան վորևե իմպերիալիստական մի ակտ։ Անարխիան յերկրում գնալով ավելի ու ավելի ուժեղանում եր։ Դիլիջանի գավառում գյուղացիներն արդեն այլևս չեյին յենթարկվում իշխանության կարգադրություններին և գյուղերից դուրս եյին քշում նրա ներկայացուցիչներին ու դաշնակցական ագիտատորներին։ Վեցյերորդ և միլիցիոն գնդերի գրեթե բոլոր վաշտերը դեռ մարտին հայտարարեցին, թե առանց Դիլիջանի գավառային կոմիտեյի չեն կատարի իրենց հրամանատարների կարգադրությունները։ Ապրիլի միջին թվերում 4-րդ գնդի զինվորները Սարիղամիշում զենքով ապստամբեցին հրամանատարական կազմի դեմ՝ իրենց կոմունիստ ընկերներին ձերբակալելու պատճառով։ Ալեքսանդրոպոլի բանվորները գրեթե ամեն որ ընդհարվում եյին իշխանության, մաուզերիստների և դաշնակցական զանազան ագենտների հետ։ Այս ամենը նախազգուշացնում եր գալիք անցքերը, բայց, կարծեք թե, շատ քիչ եր խռովում Արմենկոմի անդորրը։

Դաշնակցական կառավարությունը, հաշվի առնելով յերկրի դրությունը, դեռ մի քանի ամիս առաջ մինչև ապստամբությունը սկսեց միջոցներ ձեռնարկել՝ քայքայելու հեղափոխական ուժերը և մեր կուսակցական կազմակերպությունը։

կոմունիստների ձերբակալություններն ու աքսորները, սկսելով 20 թ. հունվարին, շարունակվեցին մինչև ապստամբությունը և առանձնապես ուժեղացան ապրիլի միջին թվերից։ Այստեղ, ի հարկե, գործում և նույնիսկ ղեկավարում եր Անտանտի ձեռքը, բայց աստիճանաբար և սիստեմատիկորեն ուժեղացող ռեակցիան և դաշնակցականների յեռանդուն փորձերը՝ քայքայելու հեղափոխական մասսան ու գլխատելու նրան, ավելի քան համոզիչ եյին, վորպեսզի կասկած չլիներ այն ակտիվ հակահեղափոխական կամպանիայի մասին, վոր սկսում եր դաշնակցական կառավարությունը՝ ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի ներքին հեղափոխական շարժման՝ դաշնակցած մենշևիկյան Վրաստանի հետ։

Ապրիլից, յերբ արդեն որեցոր սպասվում եր Բագվի անկումը, դաշնակցականները յեռանդուն կերպով ուժեղացնում եյին Ղարաբաղ-Զանգեզուրի ճակատը և աշխատում եյին նոր ֆրոնտ բանալ Ղազախում մուսաֆաթական Ադրբեջանի դեմ, վորպեսզի այդ ճակատը մենշևիկյան Վրաստանի հետ միասին պահպանեն ընդդեմ Սովետական Ադրբեյջանի։ Դրոն ապրիլի 16-ին գրած իր կոչում՝ ուղղված Ղարաբաղի ազգաբնակությանը՝ գրում եր. չպետք է մոռանալ, վոր ընդամենը մի քանի հարյուր զոհ է պահանջվում, վորպեսզի փրկենք Ղարաբաղն ու Զանգեզուրը, վորոնք մուսաֆաթականներն ու թաճիկները վորոշել են վոչնչացնել։ Նա, ի հարկե, չեր գրում և Ղարաբաղի ազգաբնակությունից թագցնում եր, վոր մուսաֆաթականներին հետաքրքրողը այդ պահին Ղարաբաղը չեր, վորովհետև Կարմիր բանակն արդեն մոտենում եր Ադրբեյջանի սահմաններին, Իսկ Բաքվի բանվորները ուժեղ կերպով պատրաստվում եյին Բաքվում գրավելու իշխանությունը։ Դաշնակցական «Հառաջ»-ը մի քիչ հետո, մայիսի 6-ին, պարզ կերպով բացահայտում եր և ցուցադրում հայկական ու վրացական հակահեղափոխության վերստին նոր ուժով հանդես յեկած համերաշխությունը՝ բոլշևիկների դեմ պայքարելու խնդրում. «Թիֆլիսի ամբողջ մամուլը, մանավորապես վրաց թերթերը, առանց կուսակցական խտրության, ճիշտ գնահատություն են տվել Բաքվում

կատարված քաղաքական կոմեդիային (այսինքն՝ Բաքվի խորհրդայնացման. (վորպիսի ցինիկ հանդգնություն! Շ. Ա.): Վրաց մամուլի կարծիքով Բաքվում կատարվածը վոչ այլ ինչ է, բայց յեթե կեղծ բոլշևիկյան դրոշի տակ Թուրք-ադրբեյջանյան պանթյուրքական ծրագրի ավելի հանդուգն իրագործման փորձ, նոր, ավելի բացարձակ միջոցներով»: Իրոք պետք եր վարպետ լինել, վորպեսզի այդպես շփոթել ու աղավաղել քաղաքական դեպքերը. բայց հենց դրանում էլ կայանում է ամեն մի հակահեղափոխության ույժը:

Դաշնակցականների բոլոր ձեռնարկած միջոցներն ու ջանքերը Դիլիջանի գավառում ուղղված եյին գյուղացիների և բանակի ուշադրությունը թեքելու հեղափոխական խնդիրներից և ստեղծելու այնպիսի մի դրություն, վոր իրենք «հրացաններն էլ կրակեյին»: Դաշնակցականների կողմից Ղազախում ճակատ ստեղծելու պատմությունը իրեն մեջ պարունակում է թե հայկական հակահեղափոխության, և թե Հայաստանի հեղափոխական շարժման համար բնորոշ մի քանի մոմենտներ: Ապրիլի առաջին կեսում Դիլիջանի գավառն յեկավ ներքին գործոց նախարարի տեղակալ Մանասյանը՝ վորպես գավառի արտակարգ լիազոր, վորի ղեկավարությամբ մի կատաղի ագիտացիա և զանազան նախապատրաստություններ սկսվեցին՝ սահմանում ռազմաճակատ բանալու, ինչպես և մի շարք Թրքական գյուղերի թալանի ու ավերման համար—Ղարաղոյլիի և Աքսիբարայի կիրճերում, ուր վերջնական և մասսայական թալանի ու ավերումների համար դեռ բավականին նյութ կար: Լուրեր եյին տարածում, վոր մուսաֆաթականները մոտ որերը պատրաստվում են հանկարծակի հարձակվելու հայկական գյուղերի վրա, թալանելու և նրանց վոչնչացնելու: Ստեղծվում եր նյարդային մի մթնոլորտ, վորի մեջ կառավարական գործակալները, խմբապետները և պոլիցիականները գյուղերում հանդես եյին գալիս «ճիշտ և ստուգված» տեղեկություններով մուսաֆաթականների կողմից պատրաստվող հարձակման մասին:

Այդ ամբողջ պրովոկացիոն կամպանիային ուղեկցվում եր միլիցիոն գնդի նախապատրաստումով, սահմանամերձ գյուղերում գյուղացիներից նոր զինվորական խմբեր պատրաստելով, սահմանում խրամատներ փորելով և այլն: Մինչդեռ, սահմանի մյուս կողմը, առաջին շրջանում, միանգամայն հանգիստ եր, և, չնայած այդ ամենին, Ադրբեյջանի մի քանի սահմանամերձ գյուղերում բարձրացվում եյին սպիտակ դրոշակներ ի նշան այն բանի, վոր գյուղացիները կռիվ և արյունհեղություն չեն ուզում: Միևնույնն անում եյին մեր գյուղացիները Սև-քար գյուղի շրջանում: Դաշնակցականներին չոգնեցին նույնիսկ պրովոկացիոն գիշերային կրակոցները: Մեր բջիջները Սև-քարի շրջանում և միլիցիոն գնդում խոշոր դեր խաղացին արյունհեղությունը կանխելու գործում: Բայց Կոտի-գյուղի շրջանում, ուր բջիջները չափազանց թույլ եյին, դաշնակցականները հասան իրենց նպատակին: Յերկու որ անընդհատ կռիվներ եյին գնում այդ շրջանում մուսաֆաթական Բաքվի անկումի նախորյակին: Դաշնակցականները իրենց զորքերը պահում եյին թիկունքում և գյուղացիներին վոչ մի ոգնություն չեյին ցույց տալիս: Ռազմաճակատի հրամանատար կապիտան Խաչատրյանը գյուղացիների ներկայացուցիչներին պատասխանում եր. «Թող ձեզ ոգնեն ձեր բոլշևիկները»: Ադրբեյջանի բեգերին և խաներին հաջողվեց խուժել Կոտի-գյուղը, վորը թալանվեց և հրի մատնվեց: Միայն յերբ ամեն ինչ խաղաղվեց, դաշնակցականները Սև-քարից մի վաշտ և մարտկոց ուղարկեցին Կոտի-գյուղը և սկսեցին ոդի մեջ կրակել թնդանոթներից ու գնդացիրներից՝ գյուղացիների վրա տպավորություն գործելու նպատակով: Ագիտատորները, նոր նյութ հավաքելով վոճրագործ ագիտացիայի համար և, դուրս գալով միտինգներում, ասում եյին. «Տեսնում եք, մենք ասում եյինք, վոր մուսաֆաթականները հարձակում են պատրաստում, միայն մեր գնդացիրները և թնդանոթներն ոգնեցին ձեզ և կոգնեն»: Մինչդեռ այդ ամբողջ կամպանիայի ընթացքում Ադրբեյջանի կողմից վոչ մի կանոնավոր զինվոր չեր յերևում:

Հետաքրքրական է տեսնել, թե դաշնակցականները ինչպես եյին խեղաթյուրում և պրովոկացիայի յենթարկում այդ անցքերն իրենց կենտրոնական որգան «Հառաջում» (20 թվի ապրիլի 16-ին, № 77). «Ղազախի և Շամշադինի հայրենակցական

միությունը հաղորդում է, որ նույն շրջանների հայկական գյուղերը պաշարված են թաթարների կողմից: Կոտորած է սպառնում: Շամշադինի շրջանի յերկու գյուղեր՝ Ղուլալի և Թալլի՝ արդեն վոչնչացած են: Վոսկեպար հայ գյուղի տակ կանգնած են թաթարական զինված ույժերը, վորոնք սպառնում են սարերը տանող ճանապարհների վրա ընկած հայ գյուղերը վոչնչացնելու»... և այլն: Շամշադինում տեղի եյին ունեցել փոքրիկ ընդհարումներ, բայց այնտեղ վոչ մի գյուղ չեր վոչնչացել, իսկ զինական ույժերը կանգնած եյին վոչ թե Վոսկեպար հայ գյուղի տակ, այլ Թուրքական Վոսկեպար գյուղում, և կանգնած եյին վոչ թե թաթարական ույժերը, այլ դաշնակցական, վորոնք խմբապետների և պոլիցիականների ղեկավարությամբ սպանում, թալանում ու ավերում եյին այն:

Բայց դաշնակցականների հետագա ջանքերը հաջողություն չունեցան, շնորհիվ զորամասերի հեղափոխական տրամադրության և մեր կազմակերպության ջանքերին ու ազդեցության: Չնայած խստորեն պահպանվող սահմաններին, գյուղացիները, այնուամենայնիվ, կապ եյին պահում Ղազախի Թուրք ազգաբնակչության հետ և փոխադարձաբար վարակվում հեղափոխական տրամադրությամբ:

Մինչդեռ մեր ղեկավար կուսակցական մարմինը շարունակում եր հանգիստ մնալ, կարծես թե այդ բոլոր անցքերը նրան չեյին վերաբերում: Միակ հեղափոխական, և այն էլ սխալ քայլը, վոր կատարեց Արմենկոմը մայիսյան ապստամբության նախօրեյին, դա մայիսի մեկի խաղաղ դեմոնստրացիան եր Յերևանում և Ալեքսանդրոպոլում: Այնպիսի պայմաններում, յերբ Կարմիր բանակը մոտենում եր Բաքվին, յերբ հեղափոխությունը բաղխում եր Անդրկովկասի դռները, և յերբ, մի կողմից, ուժեղանում եյին ռեպրեսիաները Հայաստանում, իսկ, մյուս կողմից, աշխատավոր մասսաները վառվում եյին անհամբերությամբ՝ յերկրում խորհրդային իշխանություն հաստատելու համար, մայիսի մեկի դեմոնստրացիան պետք է զինական ապստամբության վերածվեր կամ թե վերջանար կուսակցական կազմակերպությունների և հեղափոխական ույժերի քայքայումով: Կենդանի իրականությունից կտր-

ված լինելու և մասսաների լեզուն չըմբռնելու հետևանք եր միայն մայիսի մեկին խաղաղ դեմոնստրացիա սարքելը, վոր նշանակում եր զինամարտից առաջ դուրս բերել իր ույժերը և ցույց տալ թշնամուն, յեթե, իհարկե, կար այն բանի ըմբռնումը, թե մենք կանգնած ենք այդ զինամարտի առաջ: Բացի,—կորչե՛ն դաշնակցականները, կեցցե՛ խորհրդային իշխանությունը,—լոզունգներից, մայիսի մեկին այլ լոզունգներ չեյին կարող լինել և չկային: Բայց այդ լոզունգները մասսան հասկանում եր պարզ և հասարակ ձևով ու գործնականորեն, մանավանդ վոր բոլոր ճնշվածների յերկար սպասած ազատագրողը՝ Կարմիր բանակը, արդեն շատ մոտ եր Բաքվին, յերբ նշանակվում եր, և նա արդեն Բաքվում եր, յերբ սկսվում եր այդ դեմոնստրացիան: Մյուս կողմից թշնամին չեր կարող հանգիստ նայել դեմոնստրացիային և նախորոք չխորտակել այն դիրքերը, վորտեղից նրան մահացու վտանգ եր սպառնում: Այլապես նա թշնամի չեր լինի: Մենք, յեթե ցանկանայինք կանխել դեմոնստրացիայի զինական ապստամբության փոխվելը, պետք է վոչ միայն դաշնակցականներին զոհ դարձնեյինք կուսակցական կազմակերպությունը և գլխատեյինք հեղափոխական շարժումը, այլև, խախտելով մասսաների ակտիվ կամքը, վարկաբեկեյինք ինքներըս մեզ մասսաների առջև: Մասսաները կապստամբեյին և առանց մեզ, ցաքուցրիվ ու անկանոն կերպով, տալով գյուղացիական պարտիզանական ու զինվորական դասալքված խմբեր: Իսկ առանց այդ դեմոնստրացիայի հավանորեն մեզ կհաջողվեր ապստամբության որը հետաձգել և կազմակերպել այն:

Յեթե Պետրոգրադում 17 թվի հուլիսյան դեմոնստրացիան կարող եր վարկաբեկել և վարկաբեկեց մենշևիկներին ու եսերներին, վորովհետև հեղափոխական մասսաները դեռ ևս վորոշ իլլյուզաներ եյին տածում դեպի այդ կուսակցությունները, ապա մայիսի մեկի դեմոնստրացիան Հայաստանում պետք է վարկաբեկեր միայն մեր կուսակցությունը և մասսաների հիասթափությունն առաջացներ, վորովհետև չկար մի այլ կուսակցություն, վորի վրա այդ մասսաները կարողանային դնել իրենց հույսերը: Միայն զինական ապստամբության հաղթանակը կարող եր կուսակցությունը փրկել քայքայումից և վարկաբեկումից: Սակայն խաղաղ դեմոնստրացիայի տարերայ-

նորեն զինական ապստամբության փոխվելը՝ կուսակցության համար անսպասելի կերպով՝ արդեն պետք է չափազանց բարդացներ ապստամբության գործը և դժվարացներ նրա՝ մեզ համար նպաստավոր՝ ելքը։ Նկատենք, որ Դիլիջանի կոմիտեն կատեգորիկ կերպով արգելեց ամեն տեսակի դեմոնստրացիա գավառում։ Միայն Իջևանի տեղական բջիջը չլսեց կոմիտեյի կարգադրությունը և հենց այդ, թե մյուս, օրը դաշնակցականների կողմից քայքայվեց։ Ձերբակալվեցին ակտիվ անդամներից շատերը, իսկ մնացածները փախուստի դիմեցին և կազմալուծվեցին բջիջը։

Վոչ Ալեքսանդրոպոլի կոմիտեն, վորը, ինչպես վկայում են Արմենկոմի անդամները, դեռ 20 թվի հունվարին հարց էր հարուցում ապստամբության մասին, վոչ Արմենկոմը, վորը համենայն դեպս խոսքով ընդունում էր, վոր ապստամբության հարցը կարող էր մեր առջև կանգնել միայն Ազրբեյջանի կամ Վրաստանի խորհրդայնացումից հետո՝ գոնե 28-ին, 29 ին, կամ 30-ին, չմտածեցին վերացնելու խաղաղ դեմոնստրացիան և ուժերը պահպանելու ընդհատակում՝ ապստամբության համար։ Բայց այդ հանգամանքը պատահականություն չէր։ Այստեղ գործում էյին յերկու մարմինների քաղաքականության և դրանց ներքին ավանդությունների մեջ թաղնված ավելի խոր պատճառներ, քան հասարակ պատահականությունը։

Բայց վորքան էլ անակնկալներն ու տարերքը բարդացնեյին ապստամբության խնդիրը և նրա՝ մեզ համար նպաստավոր՝ ելքը, այնուամենայնիվ, այդ ելքը հնարավոր էր, յեթե թեկուզ տարերքի առաջին օրերին հասկացվեր և գիտակցվեր ապստամբության անխուսափելիությունը կուսակցության ղեկավար մարմինների կողմից և անհրաժեշտ արագություն, վճռականություն ու արվեստ հայտնաբերվեր զինական ապստամբությունը ղեկավարելու գործում։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 28-ին Բաքուն արդեն հեղափոխական բանվորների և Կարմիր բանակի ձեռքին էր։ Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում բանվորները, գյուղացիները և զինվորները սկսեցին ուժեղ ճնշում գործ դնել կուսակցական կազմակերպությունների վրա, պահանջելով գրավել իշխանությունը։ Այլևս սպասել անհնարին էր և, թվում էր, թե կարիք էլ չկա սպասելու։ Բայց Արմենկոմը գրեթե տեղից չէր շարժվում, շարունակելով հանգիստ լինել ապստամբության նկատմամբ։

Մայիսի մեկին սկսվեցին խաղաղ դեմոնստրացիաներ Յերևանում և Ալեքսանդրոպոլում։ Յերևանում դեմոնստրացիան հաջող վերջացավ, չնայած նա հեռու չէր սովյալների բունտի փոխվելու։ Բայց Ալեքսանդրոպոլում նա բարդացավ և հեռու գնաց։ Մայիսի մեկի լոզունգները սկսեցին համակել վոչ միյան բանվորներին, այլ և զորքին ու գյուղացիությանը։ Զորամասերում և գյուղերում սկսեցին հեղափոխական մարմիններ առաջանալ կոմիտեների և խորհրդների ձևով, գլխավորապես տարերայնորեն և առանց կենտրոնացած ղեկավարության։ Մասսան ցանկանում և պահանջում էր նվաճել իշխանությունը։ Դաշնակցականները, հաշվի առնելով դրության ամբողջ լրջությունը, աշխատում էյին քայքայել հեղափոխական ուժերը, զինաթափել ընկ. Մուսայելյանի զրահագնացքը, բանտարկել կոմմունիստներին և դրանով գլխատել հեղափոխական մասսան։ Ալեքսանդրոպոլի ընկերները, զգալով ապստամբության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, Արմենկոմից հետզհետե ավելի համառորեն պահանջում էյին յելույթի և իշխանության գրավման սանկցիա։ Բայց Արմենկոմը չէր խիզախում դրան մտածելով ըստ իր վորդեգրած քաղաքականության, վոր այդ

պահանջը յերեխայություն է, վոր վոչ մի ապստամբություն չկա, այլ կա միայն պարարտ հող՝ կոմունիստական աշխատանքի համար։

Մայիսի 3-ին Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավար ընկ. Ավիսը, պահանջելով իշխանությունը գրավելու սանցիա, միաժամանակ գրում եր Արմենկոմին (Կուսպատի արխիվ). «Մենք ամբողջ ջանքը գործ ենք դնում խուսափելու համար կոնֆլիկտից,—ձերբակալումներից, ճնշումներից, զրահապատի զինաթափ անելուց, տերորներից և այլն։ Սակայն յեթե սպասածի հակառակ այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պետք է ընդունվի»։

Ալեքսանդրոպոլի կոմիտեն իրավացի յեր այն տեսակետից, վոր իսկապես չեր կարելի լռելյան թույլ տալ, վոր դաշնակցականները քայքայեյին Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը և նրա հեղափոխական ուժերը, վորովհետև այդ կազմակերպությունը, զրահագնացքը և յերկաթուղային բանվորները թե առհասարակ Հայաստանի մեր կուսակցական կազմակերպության համար և թե ընդհանուր ապստամբության տեսակետից խոշոր նշանակություն ունեյին։ Բայց կոմիտեն, կարծես թե, մոռանում եր, վոր կան և այլ գավառներ ու կազմակերպություններ, վորոնց անհրաժեշտ եր հաշվի առնել։ Ալեք-պոլի կազմակերպությունը թե ընդհանրապես և թե ապստամբության տեսակետից մեծ նշանակություն ուներ վոչ թե վորպես ինքնուրույն մեծություն, այլ իբրև ամբողջ կուսակցական կազմակերպության մի մասը։

Վոչ պակաս բնորոշ է և այն, վոր հարցի այդպիսի դրումով, այսինքն՝ «խուսափում ենք,—բայց յեթե», կոմիտեն հարձակման նախաձեռնությունը հանձնում եր թշնամու ձեռքը։ Հետագայում ամեն ինչ կախված եր նրանից, թե պիտի կարողանար նա արդյոք թշնամուց խլել այդ նախաձեռնությունը, թե վոչ։ Սպասելով Արմենկոմի սանկցիային, կոմիտեն կարող եր և պարտավոր եր ժամանակավորապես իր համար ստեղծել փաստապես գերակշռող դիրք թշնամու հանդեպ, արագ կազմակերպչական և քաղաքական միջոցների դիմելով, առանց վորևե «յեթեյի»։

Դա, հարկավ, սովորաբար հեշտ գործ չե, բայց ժամանակավորապես հնարավոր. սակայն այդ գործը կոմիտեյի համար դժվարանում եր նաև նրանով, վոր զորամասերում և քաղաքում չկային շատ թե քիչ ուժեղ ու հեղինակավոր կոմ-բջիջներ, բայց նման փոքրիկ կազմակերպություններ ու մարմիններ պետք է ստեղծվեյին, թեկուզ հենց այդ որերը, մաքսիմալ համարձակությամբ, յեռանդով և արագությամբ*)։ Յեթե նույնիսկ Արմենկոմի սանկցիան անմիջապես ստացվեր և Խորհրդային իշխանություն հայտարարվեր, ապա հազիվ թե առանց նախնական կազմակերպչական միջոցների, և նույնիսկ տեխնիքական պատրաստության, դրությունն ստեղծվածից ավելի նպաստավոր դառնար։ Իսկ ավելի ճիշտ՝ նա ավելի վատ կդառնար, վորովհետև իշխանության ձևական գրավումը կազմակերպությունը կըծանրաբեռներ բազմաթիվ նոր հոգսերով և հնարավորություն չեր տա դրությունն ամրացնելու զինվորական տեսակետից։ Իսկ կազմակերպվածության և զինվորական տեսակետից հակառակորդի հանդեպ նախորոք գերակշռող դիրք բռնելու դեպքում, վոր առաջին անհրաժեշտ քայլը պիտի լիներ, դժվար չեր նույնիսկ պահպանել պարենային պահեստները և չթույլատրել նրանց պարպումն ու թալանը, վորի վրա և կոմիտեն առաջին որերը հրավիրում եր Արմենկոմի ուշադրությունը։ Պահեստների պահպանումը, իհարկե, արդեն կնշանակեր իշխանության մասնակի և փաստական գրավումը, բայց այդ չեր պահանջում Արմենկոմի սանկցիան, ինչպես և կայարանի գրավումը, վոր կատարվել եր առանց այդ սանկցիայի։ Այդ նույն որը, մայիսի 3-ին, ընկ. Ավիսը մի այլ տեղ գրում եր Արմենկոմին. «Իշխանության գրավման հարցը,—դա վոչ թե որվա, այլ րոպեյի հարց է»։ Բայց իրոք, րոպեյի հարց եր վոչ թե Արմենկոմի ձևական սանկցիան, այլ հակառակորդի հանդեպ գերակշռող դիրք ստեղ-

*) Նկատենք, վոր Դիլիջանում հենց այդ ժամանակ 6-րդ գնդի համար ստեղծվել եր մոտավորապես նույն դրությունը, ինչ վոր Ալեքսանդրոպոլի զորամասերի համար։ Բայց շնորհիվ ձեռք առած միջոցների, գնդի բջիջի ազդեցության և ջանքերի, դաշնակցականներն ամբողջ յերկու շաբաթ չեյին կարողանում ձերբակալել բջիջը և, վաշտերը զանազան տեղեր ցրելով ու մասսայական արձակուրդներ տալով, քայքայել գունդը։ Այդ ժամկետային և անժամկետ արձակուրդի փաստաթղթերը զինվորները պատռում եյին և դեն գցում։

ծելը։ Հասկանալի յեր այս ամենը կոմիտեյին, թե չե, հնարավոր եր այդ, թե չե, բայց համենայն դեպս, այդ ուղղությամբ, ինչպես հայտնի յե, գրեթե վոչ մի վճռական քայլ չձեռնարկվեց։ Իսկ յեթե այդ տեսակետից վոչինչ չեր կարելի ձեռնարկել, ապա կարիք չկար և խոսելու Արմենկոմի սանկցիայի և Ալեքսանդրոպոլում իշխանությունը գրավելու մասին։ Պետք ե մտածվեր ապստամբության մի այլ ծրագրի շուրջը, վորը Ալեք-պոլի կոմիտեն բացարձակապես ժխտում եր։

Այդ նույն օրերը, մայիսի առաջին թվերում, Դիլիջանի գավառական կոմիտեն իր ներկայացուցչին (ընկ. Կ. Ալվազյանին) Յերևան ուղարկեց նամակով և ինֆորմացիայով, Արմենկոմին առաջարկելով անմիջապես ապստամբություն սկսել Դիլիջանի շրջանից, այն պայմանով, վոր մոտավորապես միաժամանակ ապստամբեն մյուս կազմակերպությունները և, առաջին հերթին, Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը՝ գլխավորապես յերկաթուղագիծը գրավելու համար։ Ապստամբության այդպիսի ծրագրի դեպքում կապը կարմիր բանակի և խորհրդային Ադրբեյջանի հետ ստեղծվելու յեր ինքն ըստ ինքյան։ Կարիք չկար նախապես մտածելու այդ «նախնական» կապի մասին, վորովհետև այդպիսի փորձը հղի յեր ձգձգումներով և պատահականություններով, իսկ մեզ չեր կարելի հետաձգել հարձակման օրը, վորովհետև թշնամին ինքը առաջինը կսկսեր հարձակվել և մեզ համար կստեղծեր չափազանց դժվարին կացություն։ Կարմիր բանակը և Խորհրդային Ադրբեյջանը մեզ չեյին կարող չօգնել այն ամենով, ինչով հնարավոր կլիներ. դրա մեջ կասկածելը վոչ միայն աններելի յեր, այլ նույնիսկ հանցանք։ Իսկ յեթե մենք զինական և այլ նյական ռեալ օգնություն էլ չստանայինք, ապա հենց միայն կենդանի կապը Կարմիր բանակի և Բաքվի պրոլետարիատի հետ արդեն ինքնին մեզ համար օգնություն և վոգևորության անսպառ աղբյուր կլիներ։ Բաքվի բանվորների և Կարմիր բանակի ներկայացուցիչները, փորձված կարմիր հրամանատարները և զինվորական կոմիսարները չեյին հրաժարվի արդեն ազատ և Խորհրդային սահմանից անցնելու մեզ մոտ, խոսելու մեր միտինգներում,

վոգևորելու մեզ և օգնելու իրենց փորձով՝ քաղաքացիական կռիվ մղելու և միաժամանակ զորքն ու իշխանությունը կազմակերպելու խնդիրներում*)։

Ապստամբելով Դիլիջանում, մենք պետք ե շարժվեյինք յերկու ուղղությամբ,—Նոր-Բայազետով ու Ախտայով և Ղարաքիլիսա—Ալեքսանդրոպոլ գծով դեպի Յերևան, ճանապարհին միանալով մեր կազմակերպությունների և նրանց զինված ուժերի հետ։ Կանոնավոր զորամասերից և վոչ մեկը մեր դեմ չեր դուրս գա, այլ, ընդհակառակը, նրանք մեկը մյուսի յետևից կմիանային մեզ։ Դրա մեջ այն ժամանակ վոչ մի կասկած չկար և չեր կարող լինել։

Դաշնակցականները, մոբիլիզացիայի յենթարկելով իրենց ուժերը, կարող եյին մեզ դիմադրություն ցույց տալ միայն Յերևանի տակ և Եջմիածնի շրջանում։ Բայց մենք, մեր կողմն ունենալով քաղցած և մերկ ժողովրդական զանգվածների ամբողջ զայրույթը և այն մասսայական վիրավորանքը, վոր դաշնակցականները, առանձնապես վերջին յերկու-յերեք տարին, հասցրել եյին աշխատավոր ժողովրդին, կարող եյինք միացած խոշոր ուժով ու մեծ ծանրությամբ այնպիսի մի հարված տալ Դաշնակցությանը, վոր նրա կենդանի ուժերից միայն բեկորներ մնային։ Յեվ դա ավելի վատ չեր լինի, այլ ավելի լավ, քան յեթե դաշնակցականները, մեզ չդիմադրելով, անձնատուր լինեյին կամ փախչեյին Վրաստան ու Պարսկաստան։ Մենք կարող եյինք կռվել ու հաղթել և առանց Կարմիր բանակի զինական օգնության, բայց անկասկած այդ օգնությունը, վորի մասին վերը հիշեցինք, այս կամ այն կերպ չեր կարող չարտահայտվել, ինչպես օրինակ ռազմական գործողությունները ղեկավարելու ա-

---

*) Այստեղ տեղին ե, թեպետև մի քիչ առաջ անցնելով, հիշել հետևյալ փաստը. ապստամբության առաջին օրերը Իջևանում միլիցիոն գնդի զինվորները ապստամբեցին հին սպայակազմի այն մասի դեմ, վոր հեղափոխական կոմիտեն անհրաժեշտ եր գտել գնդում թողնելու։ Պահանջում եյին գնդից հեռացնել ամբողջ հին հրամանատարական կազմը և ձերբակալել շատերին։ Իրարանցումը ուժեղանում եր, և հազիվ թե Հեղկոմին հաջողվեր վերացնել այն առանց եքսցեսների, յեթե ձիավոր բրիգադայի կարմիր հրամանատարը և զինվորական կոմիսարը դուրս չգային միտինգում և չխոսեյին. նրանք իրենց կենդանի պատմություններով նման անզգուշությունների և սխալների մասին՝ կատարված Ռուսաստանում հեղափոխության առաջին շրջանում՝ և ընկերական կոչերով միանգամից ու բոլորովին հանգստացրին գնդի զինվորներին։

պարիզում։ Լավ կլիներ նաև յեթե Արմենկոմն, ապստամբության այդ ծրագրի իրագործման դեպքում, նախորոք թողներ Յերևանն ու գնար Դիլիջան և Իջևան՝ ապստամբությունը հեղինակավոր կերպով ղեկավարելու։ Ապստամբությունն, իսկապես ասած, պետք է սկսվեր միաժամանակ և այն գավառներում, ուր այդ հնարավոր եր։ Բայց, նախ և առաջ, դա կարող եր նույնիսկ մոտավոր ճշտությամբ չհաջողվել ամեն տեսակի չնախատեսված, հաճախ պատահական բնույթ կրող, պատճառներով, յերկրորդ, ինչպես ել մենք միաժամանակ չապստամբվեյինք, այնուամենայնիվ, մեր ընդհանուր ճակատի մի փոքր մասը պետք է ծանրության և ուշադրության կենտրոն դառնար։ Այդ տեսակետից մեծ նշանակություն ուներ, բացի ապահով թիկունքից, նաև այն, թե մեր կազմակերպություններից վորն իր տրամադրության ներքո ավելի ուժեղ և ավելի լավ կազմակերպված զինվորական մասեր ուներ։ Դիլիջանի կազմակերպությունն այդ տեսակետից առաջին տեղերից մեկն եր բռնում, և այդ հայտնի յեր Արմենկոմին, կամ համենայն դեպս հայտնի պիտի լիներ Դիլիջանի ներկայացուցչի Յերևան գնալուց հետո։ Դիլիջանի կազմակերպությունը կարող եր արագ կերպով վերակազմված յերկու գունդ հանել—վեցերորդ և միլիցիոն գնդերը, մոտավորապես հազար զինվորներով, չորս թնդանոթներով, և տասից ավելի գնդացիրներով, ինչպես և ամբողջ կազմակերպությունը՝ գենքը ձեռքին և գյուղացիական զինված կամավորների գլուխ անցած։ Դաշնակցականները գավառի սահմաններում վոչ մի ռեալ ույժ չունեյին մեր դեմ հանելու, և ուստի մոտավորապես այդ զինական ույժերի կեսից ավելին կարելի յեր ոգտագործել գավառից դուրս։

Մայիսյան ապստամբության ծրագրի բոլոր առավելությունները ակներև և հասկանալի յեն վոչ միայն այժմ, այլև ակներև ու հասկանալի եյին և այն ժամանակ։ Արմենկոմը նույնպես հասկացավ ապստամբության այդ միակ ուղիղ ծրագիրը և, կարծեմ, յերկար քննությունից հետո,—հավանություն տվեց նրան։ Բայց Ալեք-պոլի կոմիտեն ժխտում եր այդ ծրագիրը, համարելով այն «հիմքից անճիշտ» (Ավիս, կուսպատ)։ Ի վերջո Ալեք-

սանդրոպոլի համար պահանջներից հետո,—ապստամբությունն սկսել անպայման Ալեքսանդրոպոլից և այնտեղից նրան տալ ընդհանուր ապստամբության բնույթ.—Արմենկոմը փոխեց իր վորոշումը և Ալեքսանդրոպոլ ուղարկեց իր յերկու լիազոր անդամներին՝ ընկ. ընկ. Գ. Տեր-Սիմոնյանին և Ս. Մելքոնյանին՝ ծանոթանալու իրերի դրությանը տեղում և սանկցիա տալու իշխանության գրավմանը, յեթե դա անհրաժեշտ լինի։

Միայն անհասկանալի յեր, թե ինչու չեր կարելի ապստամբությունն սկսել Դիլիջանից և միաժամանակ աշխատել դրա հետ համաձայնեցնել Ալեքսանդրոպոլի շարժումը։ Արմենկոմն ամբողջ պատասխանատվությունը իր այդ յերկու անդամների վրա ձգելով, ինքն իրեն միանգամայն դեպքերից զերծ եր պահում, իր վրա ընդունելով հանդիսատեսի դեր, այսինքն՝ այլ բառերով, ղեկավարող կենտրոնական կուսակցական մարմինը ինքն իրեն յենթարկում եր լիկվիդացիայի այն պահին, յերբ նա ամենից ավելի շատ եր հարկավոր։ Վոչ միայն Արմենկոմի անդամներին, այլ անգամ Յերևանի պատասխանատու կոմունիստ ընկերների մեծ մասին չեր կարելի նստել այնտեղ, վորտեղից անհնարին եր վոչ գործել, վոչ ղեկավարել և վոչ ել նույնիսկ անցքերը դիտել։ Յերևանի և Քանաքեռի գարնիզոնում ապստամբություն կազմակերպելը արդեն ուշ եր և անհնարին։ Այդ տեղում ագիտացիան ղեկավարելու համար կարելի յեր թողնել մի քանի ակտիվ ընկերներ։

Ալեքսանդրոպոլի կազմակերպության դրությունը գնալով վատանում եր ու բարդանում, իրարանցումը մասսաների մեջ հետզհետե ուժեղանում եր, և նրանց համար անհասկանալի եյին մնում կոմունիստների տատանումները. նրանք բոպե առ բոպե սպասում եյին Խորհրդային իշխանության հայտարարելուն։ Քաղաքում անիշխանությունն ու թալանները ուժեղանում եյին։ Դաշնակցականները շարունակում եյին իրենց հարձակումը բոլոր ուղղություններով՝ ագիտացիայով, պրովոկացիայով, կոմունիստներին ձերբակալելու, զրահագնացքը զինաթափելու, հեղափոխական զորամասերը կազմալուծելու փորձերով և այլն... Յեթե դաշնակցականները անմիջապես մայիսմեկյան դեմոնստրացիայից հետո մյուս գավառներում, և առաջին հերթին Յերևանում, չքայքայեցին մեր

կազմակերպությունները, ապա դա միայն այն պատճառով, վոր, չգրգռելով այդ գավառների մասսաներին, ժամանակ ունենան Ալեքսանդրոպոլի դեպքերը լիկվիդացիայի յենթարկելու՝ մոբիլիզացիայի մեջ դնելով և կենտրոնացնելով իրենց բոլոր հուսատու ույժերը։ Հալածանքներն ու ձերբակալությունները գրեթե բոլոր գավառներում (նույն թվում և Արմենկոմի անդամների ձերբակալությունը) սկսվեցին մայիսի 7-8-ին, յերբ արդեն Սեպուհի խումբը լիակատար ռազմական պատրաստությամբ շարժվում եր դեպի Ալեքսանդրոպոլ։

Ալեքսանդրոպոլի շարժման ղեկավարները, կոմիտեն և ամբողջ կուսակցական ակտիվը ապաստան եյին գտել կայարանում ընկ. Մուսայելյանի զրահագնացքում։ Վերջինս հետագայում բանտից գրում եր Յերկրային Կոմիտեյին (Կուսպատի արխիվ). «Մայիսի մեկից հետո հետապնդվող կոմունիստներն անցան իմ զրահագնացքի մեջ իրենց ապահովելու համար»։ Իշխանության առաջարկին՝ հանձնել կոմունիստներին՝ զրահագնացքը մերժողական պատասխան տվեց։ Դրանով ել կայարանում փաստապես հաստատվեց կոմունիստների իշխանությունը, վորոնք հենվում եյին զրահագնացքի և յերկաթուղային բանվորների զինված փոքրիկ խմբի վրա։ Իհարկե կայարանի իշխանության կողմն եր նաև զորքերի, քաղաքի աշխատավոր ազգաբնակության և քաղաքի շրջակա գյուղերի քաղաքական տրամադրությունը։

Վերջապես Արմենկոմի յերկար սպասած ձևական սանկցիան ստացվեց մայիսի 5-ին*)։ Յերևանից յեկած Արմենկոմի լիազոր անդամները հարկադրված եյին գրեթե լռելյայն սանկցիա տալու իշխանության գրավմանը։ Իսկապես ասած, այստեղ այլևս ուրիշ յելք չկար։ Ամեն մի սանկցիա և ամեն մի ձևական վորոշում արդեն կանխված եյին անցքերով։ Մնում եր

*) Ընկ. Աշոտ Հով.-ի տվյալները (եջ 25) Արմենկոմի անդամների Ալեք-պոլ ժամանման՝ այն ե մայիսի 7-ին, ապա հետևաբար նաև խորհրդակցության որվա մասին՝ ըստ ընկ. Դ. Տեր-Սիմոնյանի տեղեկության՝ ճիշտ չեն։ Այնուհետև ճիշտ չե նաև այն, վոր իշխանությունը վերցված ե հայտարարվել մայիսի 8-ին (նույն եջ), թեև, իրոք, դրա համար նախապես այդ որն ե վորոշված յեղել։ Այդ հարցում մենք հիմնվում ենք ընկ. Տեր-Սիմոնյանի տեղեկությունների վրա, վորը, լինելով Արմենկոմի յերկու լիազոր անդամներից մեկը, յեղել ե նաև Հեղկոմի անդամ։

յերկու յելք. կամ թողնել մասսաները և խայտառակ կերպով փախչել, կամ թե, ինչ գնով ել լիներ, պաշտպանությունից անմիջապես հարձակման դիմել։ Պարզ ե, վոր պիտի ընտրվեր և ընտրվեց յերկրորդը։ Կազմվեց Ռազմա-հեղափոխական կոմիտե և նույն որը յերեկոյան վորոշվեց մայիսի 8-ի առավոտյան գրավել իշխանությունն Ալեքսանդրոպոլում և հայտարարել Խորհրդային Իշխանություն ամբողջ Հայաստանում։ Այդ նույն որը վորոշվեց նաև առաջարկել մյուս գավառական կազմակերպություններին՝ պատրաստվել ապստամբության համար և սպասել մի հատուկ որվա, վոր պիտի նշանակեր Կենտրոնական Հեղկոմը՝ իշխանությունը գրավելու համար։ Այսպիսով, վորոշվում ե Ալեքսանդրոպոլում իշխանությունը գրավել և ամբողջ Հայաստանը Խորհրդային հայտարարել, իսկ մյուս կազմակերպություններին առաջարկվում ե առայժմ միայն պատրաստվել և սպասել։ Անհայտ ե, թե Ալեքսանդրոպոլում ինչպիսի դրդապատճառներ կարող եյին լինել, բացի խառնաշփոթությունից, անփորձությունից, գուցե և թեթև վերաբերմունքից դեպի սկսած մեծ գործը, յերբ վորոշվում եր Ալեքսանդրոպոլում յերկու որից հետո վերցնել իշխանությունը, իսկ մյուսներին՝ սպասել տալ։ Ուրիշ կազմակերպությունների համար պատրաստվելը թերևս վատ չեր, բայց ինչու դեռ սպասել, վոր Հեղկոմը ապստամբության առանձին որ նշանակեր, քանի վոր Ալեքսանդրոպոլում ընդամենը յերկու որից հետո իշխանությունը թե փաստապես և թե արդեն ձևականորեն պիտի գրավվեր և ամբողջ Հայաստանը Խորհրդային պիտի հայտարարվեր։

Դիլիջանի կոմիտեյի ներկայացուցիչը վերադարձավ մայիսի 8-ին թե 9-ին Հեղկոմի գրած պաշտոնական նամակով, վոր կրում եր վերջինիս կնիքը և ընկ. Ավիսի ստորագրությունը։ Այդ նամակը դժբախտաբար կորել ե, բայց նրա բովանդակությունը դեռ ևս թարմ ե մեր հիշողության մեջ։ Ահա այդ նամակի մոտավոր ճշգրիտ բովանդակությունը հիմնական գծերով. Դիլիջանի գավառական Հեղկոմի անդամներ են նշանակվում ընկ. ընկ. Ամիրխանյանը, Յաղուբյանը և Այվազյանը՝ կոոպտացիայի իրավունքով. Դիլիջանի կազմակերպությանն առա-

ջարկվում է ապստամբել Ալեքսանդրոպոլի յելույթից անմիջապես հետո, գրավել և ամրացնել Սեմյոնովկի և Ղարաքիլիսայի բարձրունքները և կապվել Կարմիր Բանակի հետ։ Նամակը չեր պարզում, թե ինչու գրավել այդ բարձունքները, յերբ կարելի յեր և հարկավոր եր նրանց թողնել թիկունքում և առաջ շարժվելով Դիլիջանից՝ միանալ Հայաստանի Հեղկոմի զինական ուժերի հետ Նոր-Բայազետում, Ղարաքիլիսայում և ապա այդպիսով Յերևանում։ Ամենայն հավանականությամբ, Հեղկոմը յենթադրում եր անհաջողության դեպքում,—նահանջել Դիլիջան և այնտեղ ամրանալ։ Ստրատեգիական տեսակետից այդ ծրագիրը վատ չեր, բայց ամենից առաջ պետք է մտածվեր հարձակման մասին։

Դիլիջանի կոմիտեյի այն հարցին,— թե յերբ պետք է ապստամբի Ալեքսանդրոպոլը, ընկ. Այվազյանից ստացվեց հետևյալ պատասխանը. «Շուտով կգա մի ուրիշ ընկեր և ամեն ինչ կհայտնի. նա կբերի նաև փող և կնիք»*)։

Ընկ. Ավիսի նամակը և ընկ. Այվազյանի ինֆորմացիան Դիլիջանում այնպես հասկացվեցին, թե կազմված է կենտրոնական Հեղկոմ, վորը ամենուրեք Հայաստանում ապստամբություն է կազմակերպում ընդհանուր յելույթի համար, ուստի և Դիլիջանի կոմիտեն վորոշեց պատրաստվել, իսկ ավելի ճիշտ, աշխատել կանխել ցիրուցան և տարերային յելույթները գյուղերում, և առանձնապես զորամասերում։

Հեղկոմը, չնայած Ալեք-պոլի կոմիտեյի հավակնություններին, մայիսի 8-ին տակավին պատրաստ չզգալով վերցնել իշխանությունը, այն վերցրած հայտարարեց մայիսի 10-ի առավոտյան։ Բայց հեղափոխական կոմիտեն շարունակում եր մնալ կայարանում և զրահագնացքում։ Քաղաքի

*) Ընկ. Այվազյանը կոմիտեյից հանձնարարություն եր ստացել իր հետ փող և կնիք բերելու Դիլիջանի գավառի ապագա Հեղափոխական կոմիտեյի համար։

Ընկ. Աշ. Հովհաննիսյանն իր գրքում գրում է (եջ 25), վոր Դիլիջանի կազմակերպության ներկայացուցիչը մասնակցում եր մայիսի 5-ի (կամ ըստ ընկ. Աշ. Հով.-ի, 7-ի) խորհրդակցությանը, ուր վորոշվեց մայիսի 8-ին իշխանությունը գրավել։ Ընկ Այվազյանին, բացի նրանից ինչ գրված եր ընկ. Ավիսի նամակում և ինչ նա բանավոր հաղորդեց կոմիտեյին, վորևե այլ կարևոր հանգամանք, ինչպես և իշխանությունը Ալեք-պոլում գրավելու որվա մասին, հայտնի չեր։ Այստեղ ապստամբության ժամկետին մենք մեծ նշանակություն ենք տալիս, վորովհետև հեղափոխական և ամեն տեսակի կռվում, յերբ նա սկսված է, հենց որերն են, վոր վճռում են կռվի յելքը։

և շրջակա գյուղերի աշխատավոր ազգաբնակությունը, ինչպես և գարնիզոնի զինվորները, ուրախ եյին նոր իշխանությանը դիմավորելու, բայց նա փաստորեն չեր յերևում։ Անփորձ և անկազմակերպ մասսաները չգիտեյին ովքեր են բոլշևիկները և ովքեր պրովոկատորները, ում լսել, ում հավատալ և ինչ անել։ Անարխիկ տրամադրությունը տիրանում եր զորամասերին, թուլացնելով հեղափոխական դիսցիպլինան նրանց մեջ։ Զինվորական մասսաներում չկային նախապես կազմակերպված կուսակցական կադրեր, վոր անմիջապես կապված լինեյին նրանց հետ, վորպեսզի նրանց ոգնությամբ կարելի լիներ պայքարել դաշնակցական պրովոկացիայի դեմ և քաղաքականապես ու կազմակերպչորեն ղեկավարել զորամասերի տրամադրությունը։ Դաշնակցականները շարունակում եյին ել ավելի յեռանդուն կերպով իրենց պրովոկացիոն աշխատանքը։ Տարերային հեղափոխական շարժումը խորանում եր նաև գյուղերում, բայց այնտեղ ևս մարդիկ չկային, վոր կանոնավորեյին տարերքը և փաստապես իրականացնեյին Խորհրդային իշխանությունը։ Բացառություն կազմում եր միայն Քավթառլիի շրջանը, ուր, շնորհիվ այնտեղի փոքրիկ բջիջի, իրոք հաջողվում եր իրականացնել նոր իշխանությունը և վերացնել հինը։ Այնտեղ նույնիսկ կազմակերպվում եյին փոքրիկ զինված գյուղացիական խմբեր, սակայն նրանք Ալեք-պոլի համար զգալի նշանակություն չեյին կարող ունենալ։ Բայց անարխիան տիրացավ առանձնապես Ալեքսանդրոպոլին, և քաղաքային այդ քաոսում յեթե փաստորեն մի վորևե իշխանություն կար, ապա դա համենայն դեպս դաշնակցական իշխանությունն եր։

Դժվար չէ հասկանալ, վոր այդպիսի պայմաններում արագությունն ու վճռական քաղաքականությունը միայն, մի գուցե, կարող եյին փրկել դրությունը, կամ, համենայն դեպս, հետաձգել վերջնական պարտության որը և մյուս կազմակերպություններին հնարավորություն տալ Ալեքսանդրոպոլին ոգնության գալու։ Ակտիվ հակահեղափոխության խստիվ չեզոքացում, պրովոկատորների և խուլիգանների գնդակահարություն, առաջընթացում, թեկուզ մի քանի վերստով, դեպի Յերևան, յեռանդուն անկե-

գալ ագիտացիա և, գործողություններ հակառակորդի թիկունքում և շարքերում,—ահա թե ինչ եր պահանջում իրերի դրությունը Հեղկոմից, վորն, առանց վորևէ ձերբակալության*), առանց գնդակահարության, առանց մի քայլ անգամ առաջ անցնելու և թշնամու հետ խաղաղ բանակցություններ վարելով, ուզում եր իշխանություն ստանալ, մի բան, վոր առանց զենքի, արյան և հաղթանակի վոչ վոքի չի տրվում: Հատկապես դաշնակցական կառավարության ու Սեպուհի խմբին արած առաջարկները,—անձնատուր լինել, միանգամայն անտեղի եյին և քայքայիչ ազդեցություն եյին գործում մասսաների և զորքի տրամադրության վրա: Ժամանակ շահելու համար բացառապես հույս դնել թշնամու միամտության վրա և թեկուզ դրանով նրան թերագնահատել, դա նշանակում եր միամիտ լինել և գերագնահատել ինքնիրեն, իսկ կռվում դրանից ավելի վատ բան լինել չի կարող: Թշնամին հավանորեն գիտեր այդ խաղաղ առաջարկների գինը, վոր այնպես արագ կերպով օղակ եր կազմում Հեղափոխական Կոմիտեյի շուրջը Յերևանի և Ղարաքլիսայի կողմերից: Բայց հազիվ թե այդ խաղաղ բանակցությունները Հեղկոմի համար մանեվրելու նշանակություն ունեյին, վորովհետև զորահրամանատար ընկ. Մուսայելյանը առաջարկում եր Ղարսի ընկերներին չձերբակալել դաշնակցականներին և աշխատել նրանց հետ մի ընդհանուր լեզու գտնել, իսկ Ղարաբուրունի հեռագրախոս ընկերոջ այն հարցումին,—արդյո՞ք չխորտակել Սեպուհի զորագնացքները, վորոնք իրենց հետ «մահ ու սարսափ» եյին բերում հեղափոխության, Հեղկոմի և կոմունիստների համար,նա միամիտ և բարեսիրտ կերպով պատասխանում եր. «Թող գան, այդ զինվորները մեր ընկերներն են» (Կուսպատի արխիվ): Բայց թշնամին, շատ լավ գիտենալով, վոր ամբողջ աշխատավոր ժողովուրդը կոմունիստների և Խորհրդային իշխանության կողմն է, այնուամենայնիվ, բացարձակապես չեր ցանկանում «հաշվի առնել» այդ և արագ ու արդեն ինքնավստահ գնում եր ընկճելու ապստամբությունը:

*) Պատմում են, վոր վորոշ ընկերներ իրենց նախաձեռնությամբ քաղաքում բանտարկեցին մի քանի դաշնակցականների, բայց նրանք էլ Հեղկոմի անմիջական կարգադրությամբ ազատ արձակվեցին:

Մինչդեռ, Հեղկոմի համար այդ չափազանց դժվարին և բարդացող օրերում բավական եր միայն Դիլիջանի Հեղափոխական կոմիտեյին տալ «ապստամբիր» խոսքը, վորպեսզի հետևյալ օրը վեցերորդ գունդը, Ղարաքլիսա հասնելով և ազատելով ձերբակալված ընկերներին ու ցրելով այնտեղի հակահեղափոխական ուժերը, գնար Ալեքսանդրոպոլ և մտներ հեղափոխական կոմիտեյի տրամադրության ներքո: Դիլիջանի ապստամբությունը միանգամից և սուր կերպով կփոխեր իրերի դրությունը հօգուտ Հեղկոմի, հեղափոխական մասսաներին հավատ և ույժ կներշնչեր և կքայքայեր հակառակորդի ծրագիրը: Բացի Դիլիջանի գավառից խոշոր և վճռական նշանակություն կարող եր ունենալ նաև վորևէ մի այլ գավառի քիչ թե շատ հաջող յելույթը: Յեվ ընդհակառակը, այլ շրջաններում անհաջողությունն սկզբից և եթ ավելի ևս կդժվարացներ Հեղափոխական կոմիտեյի դրությունը և կուժեղացներ հակառակորդին: Հասկանալի յե, վոր այդ օրերը, վորքան էլ նրանք դժվարին լինեյին, Հեղկոմը պարտավոր եր, ինչ գնով էլ լիներ, արագ կապվել այլ կազմակերպությունների հետ, կանչելով նրանց պատասխանատու ներկայացուցիչներին, կամ ուղարկելով իրեն ներկայացուցիչներին՝ փոխադարձ ինֆորմացիայի և այլ շրջանների ապստամբության օրվա ու կարգի կոնկրետ հնարավորությունները քննելու համար: Բայց շփոթված Հեղափոխական կոմիտեն այդ հարցում ևս բավականաչափ բավարար նախաձեռնություն և վճռականություն ու արագություն չհայտնաբերեց:

Զանգեզուրի գավառը մայիսյան ապստամբության իր առանձին պատմությունն ունի. այնտեղ էլ այդ ժամանակ կարմիր բանակի ազդեցության տակ հեղափոխական շարժումն ընդգրկում եր մասսաներին, վորոնք կոմունիստ ընկերների ղեկավարությամբ փորձեր եյին անում խորհրդայնացնելու գավառը: Բայց այդ գավառը շատ հեռու յեր և կտրված, վորպեսզի կարելի լիներ նրա հետ կապվել, մանավանդ վոր մինչև այդ էլ նրա հետ կապ չկար: Յերևանում ապստամբության մասին խոսք չեր կարող լինել:

Դաշնակցական խմբապետների և մաուզերիստների այդ հակահե-
ղափոխական վորջում կուսակցական կազմակերպությունը
շատ թույլ եր՝ ապստամբելու համար։ Այնտեղ կարելի յեր
հույս դնել միայն զորամասերի վրա, բայց նրանց հետ մինչ
այդ վոչ մի կապեր չկար, իսկ ապստամբության համար Նոր
կապ եր ստեղծելն արդեն չափազանց դժվար եր։ Յերևանի
գավառի գյուղերում և Եջմիածնի ամբողջ գավառում նույն-
պես կուսակցական կազմակերպություններ չկային, վորպես-
զի կարելի լիներ այնտեղ ապստամբություն բարձրացնել։ Իգ-
դիրում յելույթի փոքրիկ հնարավորություն կար, բայց Իգ-
դիրի բջիջը մայիսի 8-ին թե 9-ին ձերբակալվեց և բանտ
նետվեց։

Սակայն Հեղկոմը, կարծես թե, մոռացել եր Նոր-Բայազետի և
Ղարաքիլիսայի մասին, կամ թե նրանց առանձին նշանակություն
չեր տալիս և չգիտեր, թե ինչ է կատարվում և ինչ կարելի
է անել այդ տեղերում։ Այդ շրջաններում կային փոքրիկ,
բայց բավականին ռազմունակ կազմակերպություններ, վորոնք
այդ իսկ օրերին հաջող ապստամբություն կարող եյին
բարձրացնել և թեթևացնել Հեղկոմի դրությունը կամ գույն
և վորոշակի փրկել նրան այդ դրությունից։ Յեթե Նոր Բա-
յազետը մի քիչ հեռու յեր և դժվար եր նրա հետ կապվել,
չնայած այդպիսի արդարացում չեր կարող լինել, ապա դրա
փոխարեն Ղարաքիլիսան քթի տակ եր և գտնվում եր յերկա-
թուղագծի վրա։ Կարելի յեր այնտեղ, թեկուզ զրահագնացքի
շոգեշարժով, ուղարկել մի քանի պատասխանատու ընկերներ,
գոնե Ալեքսանդրոպոլի ակտիվ բանվորներից, վորոնք տեղական
ընկերների հետ կկարողանային հաջող ապստամբություն կազ-
մակերպել։ Զրահագնացքի շոգեշարժը՝ զարդարված կարմիր
դրոշակներով՝ իրոք, յերևացել եր Ղարաքիլիսայում մայիսի 1-ին
թե 2-ին, և վոգևորելով ընկերներին, նախազգուշացրել, վոր-
պեսզի նրանք ապստամբության պատրաստվեն ու «սպասեն»
զրահագնացքի գալուն, վորը և խոստացվում եր ուղարկել
ապստամբությունն ազդանշելու համար։ Բայց դաշնակ-
ցականները վորոշեցին չսպասել զրահագնացքին. նրանք

մայիսի 8-ին և 9-ին ձերբակալելով ու բանտ նետելով կազմակերպության համարյա բոլոր ղեկավարներին, սկսեցին հակահեղափոխական խումբ կազմակերպել՝ Ալեքսանդրոպոլի վրա հարձակվելու համար։ Սակայն վորքան էլ նրանք ջանք ու արվեստ գործադրեյին, ավելի քան 100—150 մարդ մաուզերիստներից, պոլիցիականներից, գյուղական զոռբաներից, և ամեն տեսակ մութ քրեական տարրերից, չեյին կարող հավաքել, և չհավաքեցին։ Ընկերների ձերբակալությունը դեռևս չեր նշանակում, վոր ամեն ինչ կորված է Ղարաքիլիսայում ապստամբության համար։ Զրահագնացքի գալը, թեկուզ և մի քանի ժամով, կցրեր դաշնակցականների հակահեղափոխական խումբը, կազատեր ընկերներին և նրանց կդներ ապստամբության գլուխ։ Բայց ընկերները զուր եյին սպասել և սպասում եյին զրահագնացքին, և նրա առաքումն էլ զուր եր խոստացված։ Զրահագնացքը մասերի բաժանել զինվորական տեսակետից չեր կարելի, իսկ շարժվել լիակատար ռազմական կազմով,— նշանակում եր կայարանը հանձնել և բոլորովին կտրվել քաղաքից։ Մյուս կողմից Հեղկոմի համար ավելի անվտանգ տեղ չկար, քան զրահագնացքը, իսկ յերկաթուղագծով յերթևեկելը նրա համար անհարմար եր և անհնարին։

Մնում եյին Ղարսն ու Սարիղամիշը. և Հեղկոմն իր հայացքն ուղղեց այդ կողմը՝ Ղարսի և Սարիղամիշի կազմակերպություններից պահանջելով անմիջապես ապստամբել, խոստանալով զրահագնացքն ուղարկել օգնության։ Հեղկոմը թերևս ինքն էլ չեր գիտակցում իր խոստումի անիրագործելիությունը, կամ թե անիրագործելի խոստումների գինը՝ զինված պայքարի օրերին։ Ղարսում կազմակերպված Հեղկոմը, հենվելով յերկաթուղագծի և զարաժի բանվորների փոքրիկ ույժերին, ապա նաև հույս դնելով մասսաների և զորամասերի հեղափոխական տրամադրության վրա, պաշտոնապես մայիսի 10-ին ազգաբնակչությանը տեղեկացրեց Հայաստանի խորհրդայնացման մասին, առաջարկելով հին իշխանության բոլոր ներկայացուցիչներին և հրամանատարական կազմին, նույն թվում և նահանգապետ Կորգանովին, գեներալ Փիրումովին և ուրիշներին, պարզ-

պես յենթարկվել Հեղկոմին, հանգիստ մնալով իրենց տեղերում։ Ղարսի գարնիզոնի զորամասերի մեծ մասը հայտնեց իր պատրաստակամությունը՝ պաշտպանելու նոր իշխանությունը, իսկ մնացյալ զորամասերը դաշնակցական ագիտացիայի ազդեցության տակ՝ գլխավորապես «Բաքվի կատակերգության» և տաճկական վտանգի մասին, տատանվեցին և իրենց չեզոք հայտարարեցին։ Բայց այստեղ ևս ստեղծվեց տարօրինակ մի դրություն. Նոր իշխանությունը հայտարարված էր, բայց հին իշխանությունը փաստապես մնում էր իր տեղը և մասամբ, մանավանդ շրջակա թուրք գյուղացիության համար, մնում էր անհասկանալի, թե ի՞նչ տարբերություն կա հնի ու նորի միջև, և ի՞նչումն է իսկապես կատարված հեղաշրջման իմաստը։ Նույնիսկ հին իշխանության ներկայացուցիչներին՝ ձևականորեն յենթարկվելու և այդ մասին հայտարարելու համար ժամանակ էր տրվում մի ամբողջ օր։ Զարմանալի հանգստություն, զարմանալի միամիտ ու անփորձ վերաբերմունք դեպի կատարվող հեղաշրջումը։ Այսպիսով դաշնակցական իշխանությունը Ղարսում պետական արտակարգ հանձնաժողովի գլխավորությամբ, որ ղեկավարում էր բոլշևիզմի յերդվյալ թշնամի Ն. Աղբալյանը, բավական ազատ և հանգիստ ժամանակ ուներ՝ մտածելու և վորոշելու իր անելիքի մասին։ Յեվ նա մտածեց, վորոշեց ու գործի անցավ։ Հին իշխանության ներկայացուցիչները և հրամանատարական կազմը ձևականորեն հայտարարեցին նոր իշխանության ճանաչման մասին, վորովհետև այդ չէր խանգարում դրա հետ միաժամանակ ուժեղացնել պրովոկացիան և խմբեր կազմել՝ տաճկահայ փախստականներից՝ այդ «տարօրինակ», նոր Խորհրդային Իշխանությունը լիկվիդացիայի յենթարկելու համար։ Հենց այդ նույն օրը, մայիսի 10-ին, քաղաքում կատաղի պրովոկացիա և շրջակա գյուղերում խմբերի կազմակերպում ըսկըսվեց։ Հեղկոմը վոչ կազմակերպված ուժեր, վոչ բավարար չափով աշխատողներ ուներ՝ դաշնակցականների խմբերը ցրելու և քայքայելու ու նրանց պրովոկացիայի կազմալուծող ազդեցությունը հակազդելու համար։ Հետևյալ օրը, մայիսի 11-ին, դաշնակցական խմբերը մտան քաղաք և գրավեցին կայարանը։

Հեղկոմն ամրացավ գարաժում, սպասելով զրահագնացքի գալուն, բայց նա Ալեք-պոլից չէր շարժվում։ Այնտեղ կայարանում, այստեղ գարաժում։ Ընկ. Մելիքյանը, ապստամբ զորամասերի հրամանատարը, իր շուրջը հավաքելով վորոշ հավատարիմ զորամասեր և աշխատելով փրկել Հեղկոմը, Բուչկիևի ֆորտից թնդանոթային կրակ բացեց քաղաքի վրա։ Բայց դաշնակցականների պրովոկացիան զորքերում և Հեղկոմի անելանելի կացությունը, վորն արդեն գտնվում էր զինված գաղթականական խմբերի սեղմող օղակում, արագ կերպով կազմալուծող ազդեցություն էյին գործում նաև հեղափոխական զորամասերի վրա, վորոնց մեջ չկային կազմակերպություններ և աշխատողներ, վոր կարողանային կարգի բերել զորամասերը, նրանց արագորեն վերակազմել և գործի դնել։ Սրա հետևանք էր նաև այն հանգամանքը, վոր թնդանոթային կրակը յերկար չտևեց, և Ղարսի ամբողջ գարնիզոնը մնաց չեզոք հանդիսատեսի դերում։ 12-ից 13-ի գիշերը, ճեղքելով դաշնակցական օղակը և խիզախորեն պաշտպանվելով, Հեղափոխական կոմիտեն իր մոտիկ աշխատակիցներով արդեն փախչում է Ալեքսանդրոպոլի կողմը, վերջ տալով իր կարճատև գոյության։ Այդպես վերջացավ մայիսյան ապստամբությունը Ղարսում, վոր ղեկավարվում էր Ալեք-պոլի Հեղկոմի քաղաքականության ազդեցության տակ և նրա հրահանգներով։

Սարիղամիշում իշխանությունը վերցվեց մայիսի 11-ին, բայց Ղարսի ապստամբության յելքը արդեն վորոշում էր Սարիղամիշի բախտը։ Ղարսի անկումից հետո Սարիղամիշը բոլորովին կտրվեց Ալեքսանդրոպոլից, ուստի և Սարիղամիշի ապստամբությունը չկարողացավ վորևէ ազդեցություն գործել Ալեքսանդրոպոլի դրության վրա։

Նոր-Բայազետում ապստամբությունն սկսվեց մայիսի 12-ին հեռավոր Ղարանլուղի գավառամասից՝ անկախ Ալեքսանդրոպոլից և առանց Հեղկոմի գիտության։ Բայց այնտեղ հեղափոխական շարժումը մասսայական դարձավ ու կազմակերպվեց միայն հետևյալ օրերին, յերբ Ալեքսանդրոպոլի բախտն արդեն վորոշված էր։ Իսկ Դիլիջանը, ինչպես հայտնի

յե, շարունակում էր սպասել խոստացած ընկերոջը նոր հրահանգներով։

Այսպիսով, կենտրոնական Հեղկոմի առանց այն էլ անհուսալի դրությունը դառնում էր ավելի ևս անելանելի, իսկ հակահեղափոխությունն ուժեղանում էր, վոգևորվում, և հարձակվելով ամեն կողմից, շրջապատում էր քաղաքը։ Մայիսի 13-ին Հեղկոմի բախտը արդեն կարելի յեր վորոշված համարել։ Մնում էր միայն կամ իրագործել Ղարաքիլիսայով Դիլիջան նահանջելու ծրագիրը, փրկելու կազմակերպությունը և կենդանի զինվորական ուժերը, վոր միանգամայն հնարավոր էր, կամ թե փորձ անել դիմադրություն ցույց տալու թշնամու ուժերին։ Վորոշվեց անել վերջինը, բայց իզուր, վորովհետև այդ պետք է արվեր մի քանի որ առաջ, դիմավորելով թշնամուն այն ժամանակ, յերբ նա դեռ ևս հեռու յեր քաղաքից։ Արդեն ուշ էր. և՛ բանակի հրամանատարական կազմը, առանձնապես միջին, և՛ բանվորները, և՛ անգամ կուսակցական կազմակերպությունն արդեն կորցրել եյին ամեն մի հավատ դեպի Հեղկոմի ընդունակությունն ու կարողությունը՝ սկսված գործը հաջող յելքի հասցնելու։ Ղարսի պարտության լուրը ավելի ևս ուժեղացնում էր լքումը։ Հեղկոմի փորձերը՝ կազմակերպելու զորամասերը և թշնամու դեմ առաջադրելու, չհաջողվեցին։ 14-ի գիշերը Հեղկոմը վերջապես թողեց զրահագնացքը և փախավ, ինքն էլ չգիտենալով թե ուր, յերբ արդեն Սեպուհի խումբը Աղին կայարանի կողմից, իսկ Ղարաքիլիսայի խումբը Ջաջուռի, շրջապատել եյին քաղաքը։ 14-ի վաղ առավոտյան կայարանը, ապա մի փոքր հետո և քաղաքը, արդեն Ղարաքիլիսայի փոքրիկ խմբի ձեռքին եյին։ Միևնույն որը, մի քանի ժամից հետո, քաղաք մտավ և Սեպուհի խումբը։ Սկսվեցին կատաղի պատիժներ քաղաքում մնացած հեղափոխականների համար, գնդակահարություններ և բանտարկություններ, խուզարկություններ ու թաքնվածների վորոնումներ։ Թշնամու ձեռքն ընկան ուրիշ ընկերների թվում նաև ապստամբության գլխավոր ղեկավարներից յերկուսը՝ Հեղկոմի անդամներ՝ ընկ. ընկ. Մուսայելյանը և Ս. Մելքոնյանը։ Հակառակորդի ամբողջ ուժը բաղկացած էր մաքսիմում 600—700 հոգուց՝ մաուզերիստներ և տաճկահայ գաղթականներ։ Հեղկոմի զինվորական ուժերը, Ալեքսանդրոպոլում հաշվելով քաղաքի հեղափոխական գարնիզոնը, զրահագնացքը, դեպոյի զինված բանվորներին և կուսակցական կազմակերպությունը՝ գերազանցում եյին հակառակորդի ուժերը։ Բայց այդ ուժերի գլխավոր և հիմնական մասը, քաղաքի գարնիզոնը, կազմակերպված չեր իր ժամանակին և գտնվում էր մեծ մասամբ անհուսալի և տատանվող ձեռքերում հանձինս հրամանատարական կազմի։

Այսպես վերջացավ Հայաստանի առաջին Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի պատմությունը։ Այն ժամանակ, յերբ Սարիղամիշում չորրորդ գունդը դեռ բարձր էր պահում Խորհրդային իշխանության դրոշակը, յերբ Նոր-Բայազետում դեռ նոր էր ծավալվում խոշոր մասսայական ապստամբությունը, յերբ Դիլիջանում ամեն ինչ պատրաստ էր հաղթական յելույթի համար և այլն, այդ նույն ժամանակ Հայաստանի Հեղկոմի մի մասը փախչում էր Հայաստանից, իսկ մյուս մասը տանջվում դահիճների ձեռքին։ Ընկեր Ավիսը, դեռ 20 թվի հունվարին ասում էր. «Ամբողջ ժողովուրդը մեզ հետ է»։ Դա ճիշտ էր թե այն ժամանակ և թե առանձնապես 20 թվի մայիսին, և նույնիսկ հենց այն որերը, յերբ Հեղկոմը փախչում էր Հայաստանից։ Բայց Հեղկոմի պատմությունը չափազանց բացառիկ և ուսանելի մի պատմական որինակ է հենց այն բանի, թե ինչպես կուսակցությունը կարող է այդպիսի խայտառակ պարտություն կրել այն պահին, յերբ ամբողջ ժողովուրդը և նույնիսկ ամբողջ զորքը իրենց քաղաքական ակտիվ տրամադրությամբ, ուժեղ ցանկություններով ու ձգտումներով գնում են այդ կուսակցության հետևից։

Աշխատողներ չկային, պարեն չկար*),—հետագայում գանգատվում եյին Ալեք-պոլի ընկերները. բայց այդպիսի իշխանու-

*) Ընկ. Աշ. Հովհաննիսյանը վորոշ տուրք է տալիս այդ կարծիքին այն իմաստով, վոր պարենային դժվարությունները լուրջ կերպով ազդեցին ապստամբության հաջողության վրա, բայց պարենային դժվարությունները վոչ թե պատճառ եյին, այլ հետևանք այն անարխիայի, վոր Հեղկոմը ժամանակին չկարողացավ վերացնել և այն շփոթության ու անվճռականության, վորի հետևանքով նա չկարողացավ իր ձեռքը գցել վոչ Ալեք-պոլի և վոչ էլ Ղարաքիլիսայի և Դիլիջանի պարենային պահեստները։

թյամբ, այդպիսի քաղաքականությամբ վոչ հաց կճարվեր, վորքան լիներ, և վոչ էլ նույնիսկ աշխատողներ: Հաց բավականաչափ կար Ալեքսանդրոպոլում և առանձնապես Ղարաքլիսայում ու Դիլիջանում, վոր կբավեր իշխանությունը ամրապնդելու առաջին շրջանում: Հարկավոր եր միայն ժամանակին գրավել պահեստները, ուր դաշնակցական կառավարությունը պահում եր իր պարենային պաշարները՝ ռազմական արկածների համար: Պարենային դժվարությունները մեր առաջ պիտի ծառանային միայն իշխանությունը վերցնելուց ու ամրացնելուց հետո, բայց այդ դեպքում մենք արդեն կարող եյինք ավելի հանգիստ մտածել՝ հաղթահարելու այդ դժվարությունները: Աշխատողներ եւ կային, կարելի յեր շատ նոր աշխատողների գործի քաշել, իսկապես ասած, նրանք իրենք իրենց էլ կգտնվեյին, յեթե Հեղկոմը համարձակորեն վերցներ իշխանությունը և ամուր կերպով պահեր այն իր ձեռքերում: Կազմակերպված ռեալ զինվորական ույժ և վճռական քաղաքականություն հին իշխանությունը լիկվիդացիայի և ակտիվ հակահեղափոխությունը իզոլիացիայի յենթարկելու գործում մինչև պրովոկատորների և թալանչիների գնդակահարություն, և կենդանի անընդհատ կապ մասսաների հետ, ահա թե վորն եր ամենագլխավորը, և ինչ եր պակասում Հեղկոմին:

1873 թ. Ենգելսը Իսպանիայում կատարված ապստամբության մասին գրում եր. «Այնուամենայնիվ ապստամբությունը, թեև անիմաստ կերպով սկսված, դեռևս կարող եր հաջողությամբ պսակվել, յեթե այն քիչ թե շատ խելացի կերպով ղեկավարվեր» (1871—1875 թ. թ. հոդվածները:) Ընկ. Լենինը 17 թվի նոյեմբերի 8-ին կուսակցության կենտրոնական կոմիտեյի անդամներին գրած իր նամակում, բերելով Մարքսի հետևյալ մտքերը ապստամբության արվեստի մասին՝ «պետք ե ամեն որ ձգտել թեկուզ փոքրիկ հաջողությունների (կարելի յե ասել, ամեն ժամ, յեթե հարցը մի քաղաքի մասին ե), ամեն կերպ պահպանելով «բարոյական գերակշռությունը...» պաշտպանությունը զինված ապստամբության մահն ե» և այլն, նամակի վերջում ավելացնում

եր. «Յեվ ռուսական և համաշխարհային հեղափոխության հաջողությունը կախված ե յերկու-յերեք որվա պայքարից» (Ленин—Собрание сочинений т. 14 ч. II, стр. 270—271):

Ալեքսանդրոպոլի ապստամբության զինվորական ղեկավարներից մեկը, ընկ. Մելիք Շահնազարյանը, իր հիշողություններում գրում ե. «Կարևոր հարցերի շուրջն ընդունվող վորոշումների փոփոխությունը տատանեցին միջին հրամանատարական կազմի հավատը՝ դեպի ապստամբության ղեկավարների ընդունակությունը՝ սկսված գործը վճռականորեն և յեռանդուն կերպով, անհրաժեշտության դեպքում զենքը ձեռքին, հասցնելու մինչև հաղթանակ (մայիսյան որերը 20 թվին, հոդվածների ժողովածու, նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության հինգամյակին, եջ 23):

Այս մեջբերումներից հետո մեզ համարյա վոչինչ չի մնում ասելու Հայաստանի առաջին Ռազմա-հեղափոխական կոմիտեյի ռազմա,—հեղափոխական ղեկավարության մասին:

* * *

Հայաստանի այն շրջաններում, ուր Ալեքսանդրոպոլի ազդեցությունը նկատելի կամ զգալի չեր, ուր մենք հենվում եյինք զինվորական և գյուղացիական մասսաների վրա, վորոնց հետ մենք կենդանի կապ ունեյինք փոքրիկ, բայց հեղինակավոր և դիսցիպլինայի յենթարկված բջիջների միջոցով, ուր իր ժամանակին կազմակերպչական և քաղաքական աշխատանք եր կատարվել, ուր մենք ապստամբությունն սկսել եյինք բանակից կամ բանակից ու գյուղերից միաժամանակ,—այդ շրջաններում մայիսյան ապստամբությունն այլ պատկեր ե ներկայացնում:

Սարիղամիշի ընկերները, գլխավորապես հենվելով 4-րդ գնդի վրա, մայիսի 11-ին գրավեցին իշխանությունը: Յելույթից հետո անմիջապես ձերբակալվեցին դաշնակցական բոլոր ակտիվ և վտանգավոր տարրերը: Այդ գնդի համար սարսափելի չեյին կարող լինել դաշնակցական խմբերը, իսկ կանոնավոր զորամասերից վոչ մեկը չեր գնա նրա դեմ, և դաշնակցականներն իրենք էլ չեյին ուղարկի: Չնայած դրան, Սարիղամիշի Հեղկոմը անհրաժեշտ միջոցներ ձեռք առավ իշխանությունն ամ-

ըացնելու համար, ամրացնելով կայարանը, կարգի բերելով զորամասերը և այլն։ Դաշնակցականները, հնարավորություն չունենալով զինված ույժ ուղարկել 4-րդ գնդի դեմ, սկսեցին ազգայնակության և զորամասերի մեջ ուժեղ պրովոկացիա տարածել։ Բայց այդ էլ չօգնեց նրանց։ Հեղափոխական իշխանությունը, կտրված արտաքին աշխարհից, դեռ յերկար ժամանակ, մինչև մայիսի 18-ը, դիմանում եր, յերբ Հեղկոմն ինքը վորոշեց լիկվիդացիայի յենթարկվել։ Սահմանամերձ տաճիկները վոչ միայն չեյին խանգարում հեղափոխական իշխանության, այլև, ընդհակառակը, նույնիսկ նրա հետ խաղաղ բանակցություններ և ապրանքա-փոխանակություն եյին սկսել։

Նոր-Բայազետում ապստամբությունն սկսվեց տարերայնորեն Ղարանլուխի և Բասարգեչարի գավառամասերում, զինվորական մասերից, մայիսի 12—13-ին։ Բայց շնորհիվ ագիտացիոն և կազմակերպչական յեռանդուն և զորեղ միջոցների տեղական ընկերների կողմից, վորոնց գլուխ կանգնած եր Յերևանից հենց նոր վերադարձած ընկ. Սարուխանյանը, հաջողվեց սկզբից յեվ յեթ տիրանալ շարժմանը և այն կազմակերպված հունի մեջ դնել։ Մայիսի 13-ին Ղարանլուխում ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ կազմակերպված Հեղկոմը ձերբակալեց գեներալ Սիլիկովի կայանը և զորամասերի գլուխն անցած՝ շարժվեց դեպի Նոր-Բայազետ։ Ճանապարհին Հեղկոմի զինվորական ույժերն աճում եյին ամեն քայլափոխում ի հաշիվ նրանց միացող զինված գյուղացիների, վորոնց գլուխ եյին կանգնած տեղական բջիջները։ Կարճատև կռվից հետո մայիսի 17-ին քաղաքը գրավվեց։ Այդ ժամանակ Ալեքսանդրոպոլի դահիճները, այսինքն այն նույն խմբերը, վորոնք Ալեքսանդրոպոլում ճնշեցին ապստամբությունը, արդեն մոտենում եյին քաղաքին։ Ճիշտ է, այդ «կամավորական» (կարգա փորձված հակահեղափոխական) խմբերի յետևից գալիս եյին և մի քանի ընտրված կանոնավոր զորամասեր, բայց վոչ թե կռվի, այլ գլխավորապես դեմոնստրացիայի համար։ Հեղափոխական զորքերը, հինգ վերստի վրա դիրքեր գրավելով, ամրացան։ 19-ի առավոտյան համառ կռիվներ սկսվեցին։ Բայց մի քանի նախկին սպաների դավաճանության շնորհիվ, վորոնք առանց Հեղկոմի գիտության ազատեցին գեներալ Սիլիկովի կայանը (այդ դեռ ևս գիշերը, մինչև կռվի սկիզբը), բացեցին ճակատի աջ թևը և անցան թըշնամու կողմը, ճակատի դրությունը սուր կերպով փոխվեց հօգուտ թշնամու։ Չնայած դրան, մնացյալ զորամասերն, առանձնապես նրանցից մեկը, վոր բաղկացած եր կոմունիստներից և կամավոր գյուղացիներից, չշփոթվելով, թշնամու դեմ հարձակում սկսեցին, սկզբում նույնիսկ հաջողություն ունենալով։ Այնուամենայնիվ կռիվները վերջացան դաշնակցական խմբերի հաղթությամբ, շնորհիվ գլխավորապես հիշյալ դավաճանությունների, վորոնք կազմալուծեցին և քայքայեցին հեղափոխական ճակատը։ Հեղափոխական գյուղացիները կոմունիստների հետ փախան լեռները։ Բայց և այնպես դահիճների ձեռքն ընկան մի շարք հեղափոխական գյուղացիներ ու կոմունիստներ, նույն թվում և ընկ. Սարուխանյանը, վորոնց պատիժը, մասնավորապես և ընկ. Սարուխանյանի պատիժը, բացառիկ գազանային եր*)։

Դիլիջանի կոմիտեն վոչ մի կարգադրություն չստանալով ու չգիտենալով, թե ինչ է կատարվում գավառի սահմաններից դուրս, և սպասելով Ալեքսանդրոպոլից խոստացված ընկերոջ, վորը այնպես էլ չեկավ ու չհայտնվեց,—վորոշեց ապստամբություն բարձրացնել այն ժամանակ, յերբ արդեն հայտնի եյին Ալեքսանդրոպոլի ապստամբությունը և նրա ճնշումը, մոտավորապես մայիսի 15—16-ին։ Մինչև այդ, Նոր-Բայազետի և Ղարաքլիսայի կողմն ուղարկված ընկերները կամ չեյին վերադառնում, կամ վերադառնում եյին անորոշ տեղեկություններով, վորոնցից ի վերջո պարզվեց, վոր Ալեքսանդրոպոլում ամեն ինչ վերջացած է, Նոր-Բայազետում ապստամբություն է գնում, և վոր Ղարաքլիսայում գյուղացիությունը կաջակցի Դիլիջանի ապստամբությանը։

Ստանալով Բաքվի համայնությունը՝ ապստամբներին օգնության յերկու հեծելազոր գնդեր ուղարկելու, Դիլիջանի Հեղկոմը

*) Նրան քաղաքի փողոցներում քարշ տալուց և լավ ծեծելուց հետո, բանտ են նետում և յերկրորդ թե յերրորդ օրը գնդակահարում։

մայիսի 19-ին իր ուժերով առանց կռվի գրավեց Իջևանը և խորհրդային իշխանություն հայտարարեց գավառում։ Անմիջապես ձերբակալվեցին համարյա բանակի ամբողջ հակահեղափոխական հրամանատարական կազմը, գլխավոր պոլիցիականները և ակտիվ դաշնակցականները, թվով մոտավորապես 40-50 մարդ։ Բանտարկվածների թվում եր և գավառի արտակարգ լիազոր Մանասյանը, որին, իր խնդրով, թույլ տրվեց, հեռագրով խոսել կառավարության հետ, որպեսզի նա չդիմադրի ապստամբներին և կարմիր բանակին։ Կառավարությունը դրան ոչինչ չպատասխանեց։

Հետևյալ օրը Իջևան յեկան խոստացված յերկու հեծելազոր գնդերը, որոնք մեծ խանդավառություն առաջացրին բանակում և գյուղացիական մասսաներում։ Դրանցից մեկը գիշերը յետ կանչվեց, իսկ մյուսը, ապստամբների հետ միասին, շարժվեց Դիլիջանի վրա։ Դիլիջանը գրավվեց մայիսի 22-ին առանց կռվի, միայն մաուզերիստների հետ ունեցած փոքրիկ հրացանաձգության մեջ սպանվեց կարմիր բանակայիններից մեկը, որ Ղազանի թաթար եր։ Այդ հանգամանքը առիթ տվեց ուժեղ հակահեղափոխական ագիտացիա սկսել այն մասին, թե Ադրբեյջանում Խորհրդային իշխանություն չկա, թե այնտեղից շարժվողները Կարմիր բանակի դիմակի տակ ծպտված թաթարներ ու դենիկինցիներ են և այլն։

Մայիսի 23-ի գիշերը, 2-րդ Կարմիր հեծելազոր գունդը, ստացված հրամանի համաձայն, Դիլիջանից անսպասելի կերպով և առանց նախազգուշացնելու վերադարձավ Ադրբեյջան, որն եւ ավելի ուժեղացրեց դաշնակցականների պրովոկացիան և առաջ բերեց որոշ խուճապ ազգաբնակության և զորքի մեջ։ Այդ միևնույն գիշերը, Սեպուհի խումբը, ճնշելով Նոր-Բայազետի ապստամբությունը, արդեն մոտեցել եր Դիլիջանին։ Թշնամուն հաջողվել եր նախապես գրավել հարմարագույն դիրքերը Սեմյոնովկայի բարձունքի և Ղարաքիլիսայի շոսեյի կողմից։ Հակառակորդի ուժը և մարտունակությունը գերազանցում եր մեր ուժերը այդ մոմենտին, ռուսական գնդի հեռանալուց հետո, որ չեր նախատեսնված։ Մայիսի 23-ի Հեղկոմն ստիպված եր առանց կռվի հանձնել Դիլի-

ջանը և Իջևանը*), հավաքելով իր ուժերը Ադրբեյջանի տերիտորիայի վրա, որպեսզի կազմակերպի նրանց, կարգի բերի և միաժամանակ պարզի դրությունը և իր հետագա անելիքները։ Շամշադինի գավառամասում կռիվը դաշնակցականների հետ դեռ շարունակվում եր, բայց հեղկոմը միևնույն նկատառումներով կարգադրեց դադարեցնել կռիվը և հավաքվել Թաուզ կայարանը։

Հեղկոմի համար ակնբախ եր, որ առանց Կարմիր Բանակի և Յերկրային Կոմիտեյի օգնության միջոց չկար կռիվը շարունակել։ Դրա համար էլ հեղկոմը մեծ ջանք թափեց Բաքվում այդ ուղղությամբ հավատացնելով Յերկրային Կոմիտեյին, որ Կարմիր Բանակի զորամասերը ունեն ոչ այնքան մարտական, որքան քաղաքական նշանակություն, որ փոքրաթիվ կարմիր բանակային զորամասերի յերևումը ապստամբների հետ Հայաստանի տերիտորիայի վրա, մասսաների կողմից բացատրվում եր որպես Խորհրդային Ռուսաստանի օգնությունը և ուշադրությունը դեպի հայ գյուղացիությունը։ Միայն այս կերպով Դիլիջանի հեղկոմին կհաջողվեր իր ճամբի վրա նորից բարձրացնել Ղարաքիլիսայի և Նոր-Բայազետի գյուղացիությունը և բանակը Ալեք-պոլի պարտությունից հետո։ Յերկրային Կոմիտեյի հետագա օգնությունը, աշխատակիցներով և միջոցներով, կարող կլիներ վերջնականապես ապահովել հաղթանակը դաշնակցական կառավարության դեմ, որը շարունակում եր գործել մեր դեմ, համարյա թե միևնույն Սեպուհի խմբով։

*) Դիլիջանից նահանջելիս մենք կորցրինք ապստամբության մի քանի ղեկավարների, դրանց թվում և ընկ. Յենոք Մկրտումյանին, հեղափոխական կոմիտեյի փոխ-նախագահին, Դիլիջանի գավառի աշխատավոր գյուղացիության իսկական առաջնորդին ու սիրելիին, և զինվորական մասսաների յեռանդուն ղեկավար ընկեր Ակոբջանյանին։ Ընկեր Յենոքը լուրջ վիրավորվեց և գերի վերցվեց։ Որոշ ժամանակից հետո, բանտում յերկար տանջանքներ կրելով նա գնդակահարվեց. ընկ. Յենոքը ինչպես բանտում, այնպես էլ գնդակահարության ժամանակ իրեն պահում եր բացառիկ հերոսությամբ։ Ակոբջանյանը թաղվեց Դիլիջանի տակ, բայց հանգիստ չթողին անգամ նրա դիակը, որ քարշ եյին տալիս Դիլիջանի փողոցներում և այլանդակում։ Ինչպես ընկ. Յենոքը, այնպես էլ ընկ. Ակոբջանյանը զոհ գնացին շնորհիվ իրենց անզգուշության և հեղափոխական տաքարյունության։ Մեր այդ զոհերի դիմաց դաշնակցականները կորցրին մի հարյուրակ ձիավոր, որը Աչաջուր գյուղի տակ համարյա ամբողջովին ոչնչացավ իր խմբապետ Մուրադով։

Այս նահանջի գլխավոր պատճառը ռուս գնդերի անսպասելի կերպով հեռանալն եր, որ բացատրվեց մուսաֆաթական ապստամբությամբ, Բաքվում և Գանձակում, և լքում առաջ բերեց ապստամբների շարքերում։

Բաքվի նոր խոստումը՝ օգնել ընկերներով և պարենով, և դժվարին պայմաններում կարմիր բանակային զորամասերով, ապա ստանալով Բաքվից նոր քաղաքական և զինվորական աշխատողներ և մի փոքրիկ կոմունիստական զորամաս՝ Բաքվի կոմիտեյի կողմից կազմակերպված՝ մոտավորապես 300-400 մարդ և այլն, վոգևորեցին ապստամբներին և Հեղկոմին, վորն սկսեց նոր հարձակման ուժեղ պատրաստություն տեսնել։ Հեղկոմի զինված ուժերը հանում եյին մինչև 1500 սվինի 4 թնդանոթով և հեծելազոր հարյուրակով, չհաշվելով Շամշադինի տեղական ուժերը։ Ապստամբների դեմ կանգնած եր Սեպուհի նույն խումբը և Յերևանի պահակային բատալյոնը։ Հակառակորդի ուժերը վոչ մի տեսակետից ապստամբ հեղափոխական ուժերին չեյին գերազանցում։ Պլյուս դրան հայտնի յեր, վոր պահակային բատալյոնը (այնտեղ համապատասխան աշխատանք եր կատարվում) կանցնի ապստամբների կողմը կռվի ժամանակ։ Բայց հարձակումը ձգձգվեց Գանձակի մուսավաթական ապստամբության շնորհիվ, վորը և ժամանակավորապես չափազանց կրիտիկական դրություն ստեղծեց ապստամբների համար։ Հարկ յեղավ նույնիսկ Գանձակ կարմիր բանակին օգնություն ուղարկել ապստամբների մարտկոցը։ Գանձակի ապստամբությունը լիկվիդացայի յենթարկելուց հետո, ապստամբ ուժերը հարձակման դիմելով, արագորեն ջարդեցին թշնամուն և գրավեցին Իջևանը։ Առաջին իսկ կռվում, պահակային բատալյոնը անցավ ապստամբների կողմը։ Հետևյալ օրը, հանգստի ժամանակ, Շամշադինի գավառամասից փախչող դաշնակցական խմբերը բոլորովին անսպասելիորեն սարերից կրակ բացեցին Քարվանսարայի վրա և մեծ խուճապ առաջացրին։ Հրամանատարական կազմը, վորի մի մասը տեղին անծանոթ եր, բացառապես, վերջերը նշանակված, միանգամայն անպետք հրամանատարի պատճառով շփոթության մեջ ընկավ և չկարողացավ կարգի բերել զորամասերը, վորոնք, կտրվելով իրարից, նորից անկանոն կերպով նահանջեցին դեպի Ադրբեջանական տերիտորիան։ Հենց այդ ժամանակ ընկ. Լեգրանը գնում եր Հայաստան՝ դաշնակցական կառավարության

հետ բանակցություններ վարելու։ Բաքու կայարանում, իր վագոնում, Դիլիջանի ռազմա-հեղափոխական կոմիտեյի ներկայացուցչի, հանձինս տողերիս գրողի, կարճ զեկուցումից հետո տված այն հարցումին՝ «ինչ անել», ընկ. Լեգրանը պատասխանեց. «վոր ապստամբության մասին եք խոսում, այդ մասին մեզ հայտնի չե. մենք գիտենք, վոր Ալեք-պոլում ապստամբություն ե յեղել, վորը վաղուց արդեն ճնշված ե։ Ինչպես կարող ենք մենք ձեզ օգնել, յերբ արդեն խաղաղ բանակցություններ ենք սկսում հայկական կառավարության հետ։ Ավելի լավ ե, առաջարկեք բոլոր ապստամբներին ցրվել»։ Ընկ. Լեգրանի խոսքերը հուսահատեցրին հեղկոմին, վորը մինչև այդ դեռ ևս հույս ուներ Յերկրային Կոմիտեյի և կարմիր բանակի օգնությունն ստանալու։

Ապստամբների ընդհանուր միտինգում Ռազմա-հեղափոխական կոմիտեյի ներկայացուցիչը հայտարարեց, վոր ապստամբությունը լիկվիդացիայի յե յենթարկվում, բայց հաղթանակը դաշնակցական կառավարության դեմ և Հայաստանի խորհրդայնացումը շատ հեռու չե, և վոր ցանկացողները կարող են հետևել հեղկոմին, գնալ Գանձակ և կազմակերպվել կարմիր բանակին կից։ Մոտավորապես 1000 ապստամբ՝ լավագույն կռվողներ և հեղափոխականներ՝ ընտրեցին վերջին ուղին, հայտարարելով. «մենք զենքը վայր չենք դնի մինչև դաշնակցականներին չհաղթենք»։ Հետագայում նրանցից Բաքվում 11-րդ բանակին կից կազմվեց առանձին հայկական մի գունդ, վորին վիճակված եր մի քանի ամսից հետո, միևնույն տարվա նոյեմբերի 29-ին, մտնելով Դիլիջան, Յերևանի խճուղիով գնալ Յերևան և կազմել Հայաստանի ապագա կարմիր բանակի առաջին հիմնական կորիզը։

* * *

Այսպես վերջացավ Մայիսյան ապստամբության պատմությունը։ Դիլիջանի կազմակերպությունը, վորը պետք ե սկսեր առաջինը, սկսեց վերջինը և վերջացրեց նույնպես վերջինը։ Չորորդ գունդը, վորին վիճակված եր Մայիսյան ապս-

տամբության պատմության մեջ մեծ դեր խաղալ, մեկուսացած մնաց և, հակառակ իր կամքին, չկարողացավ կատարել այդ դերը։ Նոր-Բայազետի կազմակերպությունը, որը իրոք լիովին ապացուցեց իր հասունությունը և մարտունակությունը հեղափոխական կռվի մեջ, նույնպես մնաց մյուս կազմակերպություններից մեկուսացած և չկարողացավ կատարել այն վճռական դերը, որը նա կարող էր ունենալ Մայիսյան ապստամբության պատմության մեջ։

Համեմատեցեք Ալեք-պոլի և Ղարսի ապստամբությունները Սարիղամիշի, Նոր-Բայազետի և Դիլիջանի ապստամբությունների հետ։ Մինչդեռ դուք տեսնում եք Ալեք-պոլում և Ղալսում թշնամու զինված ուժի հանդեպ թեթև և անզգույշ գործելակերպ, դեպի ակտիվ հակահեղափոխությունը համարյա մարդասիրական վերաբերմունք, անկարգ նահանջ առանց կռվի, դրա հակառակ՝ Սարիղամիշում, Ն. Բայազետում և Դիլիջանում մեծ զգուշություն և զգալի հմտություն ու վճռականություն հեղափոխական իշխանության ամրացման գործում, թշնամու դեմ համարձակ ռազմական գործողություններ, նահանջ կռվելով և այլն։

Քանի քանի թանկագին և արժեքավոր ընկերներ կորցրինք մայիսյան կռվում, հեղափոխական մասսաների քանի ղեկավարներ, որքա՜ն փառունակ մարտնչողներ՝ կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության համար.—ընկերներ Մուսայելյան, Ա. Մելքոնյան, Ղարիբջանյան՝ Ալեքպոլում, Ստյոպա Ալլահվերդյան՝ Յերևանում, Սարուխանյան՝ Նոր Բայազետում, Յենոք Մկրտումյան, Հակոբջանյան, Վաղինակ՝ Դիլիջանում, և դեռ քանի քանի անհայտ ու հայտնի ընկերներ։ Քանի՜ տասնյակ ընկերներ հյուծվեցին ու տանջվեցի՜ն դաշնակցական բանտերում խմբապետների ու մաուզերիստների լիրբ ու վայրենի ռեժիմի տակ։ Հեղափոխական, ինչպես և ամեն մի կռվում զոհերը անխուսափելի յեն, սակայն ուրիշ բան է հաղթության և ուրիշ՝ պարտության զոհերը։ Այդ զոհերը բացառապես մեր պարտության զոհերն եյին։

Ո՞վ մեզ հաղթեց, և ինչպես, այն ժամանակ, յերբ ամբողջ աշխատավոր ժողովուրդը և համարյա բոլոր զինվորական մասերը իրենց քաղաքական տրամադրությամբ մեզ հետ եյին.—միևնույն փոքրաքանակ հակահեղափոխական խումբը, բաղկացած 7—800 մաուզերիստներից և գաղթականներից խմբապետների ղեկավարությամբ։ Նա հաղթեց յուրաքանչյուրիս առանձին ու մեկուսացած դրության մեջ և զանազան ժամանակներում, և միայն այդ կերպ նա մեզ բոլորիս հաղթեց։ Այլ կերպ նա չեր կարող հաղթել։

Իսկ ինչու այդ ամենն այդպես յեղավ։ Կուսակցական կազմակերպության, Արմենկոմի և Ռազմա-հեղափոխական կոմիտեյի թուլությունը, կենտրոնացած ուժեղ ու վճռական քաղաքականության" բացակայությունը դեռ մինչև ապստամբությունը, ապա ապստամբության կենտրոնական զինվորական և քաղաքական ղեկավարության անշնորհքությունը և այլն. այո, այդ ամենը տեղի ուներ, և այդ հանգամանքներից յուրաքանչյուրը այս կամ այն դերը խաղաց, այս կամ այն չափով ազդեց մայիսյան ապստամբության ընթացքի ու յելքի վրա։ Բայց այդ ամենը պատահականություն չեր և չեր էլ կարող պատահականություն լինել. այդ բոլոր հանգամանքների հիմքում թաքնված եյին ավելի խորը պատճառներ։

Չի կարելի մի քանի խոսք չասել այդ հիմնական պատճառների մասին. դրանք պետք ե պարզել և գիտակցել թեկուզ այսոր, որպեսզի անցյալի փորձի վրա դաստիարակենք ինքներս մեզ, մեր կազմակերպությունը և հասունացող հեղափոխական յերիտասարդությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ (ԱՐՄԵՆԿՈՄԻ) ՔԱՂԱՔԱ-ԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԼԵՔ-ՊՈԼԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼԸ

Նախորդ գլուխներում մենք համառոտակի ծանոթացանք
այն աշխատանքի հետ, վոր կատարեց Արմենկոմը Հայաստա-
նում, և այն դրության հետ, վորի մեջ նա ընկավ ապստամ-
բության ժամանակ։ Ինքնին հասկանալի յե, վոր թե այդ աշխատան-
քը և թե այդ դրությունը հետևանք եյին տվյալ-պատմական մո-
մենտի վորոշ գնահատության, շրջապատող քաղաքական միջա-
վայրի և սրա հետ կապված՝ մեր քաղաքական խնդիրների
վորոշ ըմբռնման, մի խոսքով վորոշ քաղաքականության։

Հայաստանի մեր կուսակցական կազմակերպությունը Ան-
դրկովկասյան Յերկրային կազմակերպության առավելապես
գյուղացիական մասերից մեկն եր, վոր ղեկավարում եր Յերկ-
րային Կոմիտեն։ Բայց Հայաստանի մասշտաբը Անդրկովկասի
նկատմամբ այնքան էլ փոքրիկ չեր, վորպեսզի Արմենկոմը
քիչ թե շատ ինքնուրույն քաղաքականություն չունենար
և իր հերթին չազդեր Յերկրային Կոմիտեյի՝ դեպի Հայաստանն
ունեցած քաղաքականության վրա։

Վորևե քաղաքական մարմնի, հետևաբար նաև Արմեն-
կոմի, քաղաքականությունը բնութագրելու համար պահանջ-
վում են տվյալ շրջանին վերաբերող ոբյեկտիվ տվյալներ
և գրավոր փաստաթղթեր։ Այդպիսի տվյալներ և փաստաթղթեր
Արմենկոմի քաղաքականության վերաբերյալ շատ քիչ կան։ Այդ
իսկ պատճառով մենք դժբախտաբար պետք է այս գլխում գործ
ունենանք աղքատ և սակավաթիվ տվյալների և փաստաթղթերի
հետ։ Բայց, այնուամենայնիվ, այդ տվյալները և փաստաթղթերը
մեզ կօգնեն, թեկուզ և համառոտ կերպով ու հիմնական գծե-

րով, լուսաբանելու Արմենկոմի քաղաքականությունը։

Այս հարցում ավելի արժեքավոր են և այդ տեսակետից
գրեթե միակն են հանդիսանում այն տվյալները, վոր
հայտնում է ընկ. Կասյանը «Զախության հիվանդությունը
մեզանում» իր հոդվածում։ (Նոր-Աշխարհ, 22 թ. Թիֆլիս)։ Ուստի
մենք կսկսենք հենց այդ տվյալներից, նախապես հայտնելով,
վոր այդ հոդվածում բացի հեղինակի մի քանի դատողու-
թյուններից և տեղեկություններից Արմենկոմի քաղաքականու-
թյան մասին, տվյալ դեպքում մեզ վոչինչ չի հետաքրքրում.
վոչ հարուցած վեճը մի պատմական փաստաթղթի (1920 թ.
հունվարի կոնֆերանսի բանաձևի) շուրջը ընդհանրապես, և
վոչ էլ մասնավորապես հեղինակի վորևե դատողությունը, վոր
անմիջապես վերաբերում է այդ փաստաթղթին, վորովհետև
այդ հարցը պետք է համարել դեռևս չպարզված։ Այդ հանգա-
մանքը չի կարող խանգարել մեզ պարզաբանելու թե Արմեն-
կոմի քաղաքականությունը և թե Ալեք-պոլի կոմիտեյի սխալը։

Ընկ. Կասյանը Արմենկոմի գաղափարական ղեկավարնե-
րից մեկն եր, յեթե վոչ միակը, Արմենկոմի գոյության սկզ-
բից մինչև 20 թվականի հունվարի վերջը։ Հիշյալ հոդվածում
նա իր լիակատար պաշտպանության տակ է առնում Հայաս-
տանի կոմիտեյի քաղաքական վարքագիծը առանց վերապա-
հումների, ուստի և նրա հաղորդած տեղեկությունների ոբ-
յեկտիվության վերաբերմամբ, թեկուզ և նրանք հաղորդվում
են ուշացած՝ հետագա դեպքերի լույսի տակ՝ կասկածելու ա-
ռանձին հիմունքներ չունենք։ Ճիշտ է, ընկ. Կասյանը, և
Մռավյանը քսան թվի փետրվարին աքսորվեցին Հայաս-
տանից, և Կոմիտեն վերակազմվեց մարտի վերջին յերկու
թե յերբեք նոր ընկերներով, բայց այդ հանգամանքը չփոխեց,
և հազիվ թե մի ամսի ընթացքում փոխեր, Արմենկոմի քաղա-
քական գիծը։

«Համառուսական յեվ արդյունագործական մաշտաբ. ահա
մեր գործունեյության յելակետը մինչև Հոկտեմբերյան հեղա-
փոխությունը» (Նոր-Աշխարհ, եջ 4. ընդգծումը հեղինակինն է)։
Իսկ Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո, մեզ՝ Անդրկովկա-

սի կոմունիստներիս համար ստեղծվեցին «նոր վայր» և աշխա-
տանքի «անսովոր» պայմաններ այն իմաստով, վոր (ի հարկե Ար-
մենկոմի տեսակետից) մենք, կտրվելով ռուսական արդյունա-
գործական պրոլետարիատից, ըստ յերևույթին, կորցրեցինք նաև
համառուսական և արդյունագործական մաշտաբը, իբրև մեր
գործունեյության յելակետ, ընկանք յերոպական իմպերիալիզմի
նոր գաղութի դրության մեջ, ուր մենք հարկադրված եյինք
ընտրել Անդրկովկասում գործելու նոր մաշտաբ, նոր քաղա-
քականություն, աշխատանքի նոր միջոցներ։ Այսպիսով, Ար-
մենկոմի լեզվով նոր վայր նշանակում եր նոր տերերի (Ան-
տանտի) նոր գաղութ, իսկ անսովոր պայմանները*)—աշխա-
տանքի նոր մաշտաբ, հետևաբար և աշխատանքի նոր միջոցներ
ու ձևեր և այլն, մի կողմ նետելով «տրադիցիան ու շաբլոնը»։

Իսկ տվյալ պայմաններում ի՞նչ նոր մաշտաբ և նոր ըն-
թացք կարող եյինք մենք ունենալ Անդրկովկասում. «Բռնել մեր
նավի կուրսը դեպի համաշխարհային պրոլետարական հեղափոխու-
թյունը,—կատարել մեր միջազգային պարտականությունը դեպի այն
բանակը, վորը կուրծքը դեմ տված ունի ակտիվ հակահեղափոխու-
թյանը—ահա ժամանակի հրամայական թելադրանքը։ (Նոր-Աշ-
խարհ, եջ 5. ընդգծումը հեղինակինն է)։ Յեվ այդպիսով Անդր-
կովկասյան կոմունիստները, իրենց նավի ղեկը պետք է բռնեյին
վոչ թե անմիջորեն դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը, այլ
դեպի համաշխարհայինը, վորովհետև առաջինը «ազդանշանն
եր» վերջինի, վորպես «բացարձակ ճշմարտություն» (նույն
տեղը, եջ 5)։ Ըստ ընկ. Կասյանի՝ նրանք նաև պետք է հաշվի
առնեյին տվյալ յերկրի տնտեսական, ազգային, կուլտուրական,
պատմական և այլ առանձնահատկությունները։ Այդ «ծայր
աստիճանի» մարքսիստական թեորյան Արմենկոմը գտնում եր
Հայաստանում վարած իր քաղաքականության հիմքում և նույ-
նիսկ այն առաջարկում եր Յերկրային Կոմիտեյին ամբողջ
Անդրկովկասի համար, նշավակելով այդ թեորիայի ամեն մի

*) Նոր վայր և անսովոր բառերը ընկ. Կասյանի կողմից առնված են չակերտ-
ների մեջ։ Այդ չակերտների իմաստը ընթերցողի համար մնում է գաղտնիք, վորով-
հետև հեղինակի հետագա մտքերից յերևում է, վոր այդ բառերը գործ են ածված իրենց
իսկական, պարզ իմաստով։

քննադատությունը «յերեխայություն, ձախության հիվանդու-
թյուն, հեղափոխական անհամբերություն» և այլ նման բառերով։
Արմենկոմը սիրում եր հաճախ հիշեցնել Անդրկովկասի, մաս-
նավորապես Վրաստանի և Հայաստանի, հիշյալ առանձնահատ-
կությունների մասին վոչ թե այն պատճառով, վոր այդ ղեկավար
ընկերներ և կուսակցական մարմիններ վորոշել եյին պարզապես
հաշվի չառնել այդ առանձնահատկությունները, այլ այն պատ-
ճառով, վոր Անդրկովկասի չափազանց սուր հեղափոխական
պայմաններում ավելի քիչ եր հարկ լինում խոսել նրանց մա-
սին, վորովհետև ինքնին հասկանալի յեր, վոր չեր կարելի նրանց
հաշվի չառնել։ Ավելի շո՛ւտ հարկ եր լինում խոսել և հիշեցնել
առաջիկա և նույնիսկ արդեն մասամբ տեղի ունեցող հեղափոխա-
կան կռիվների մասին։ Ընդհակառակը, ամեն տեսակի առանձնա-
հատկությունների մասին ամենից ավելի շատ խոսում եյին նրանք,
վորոնք մեր կուսակցության խնդիրներին Անդրկովկասում մո-
տենում եյին խաղաղ ժամանակի հոգեբանությամբ, յերբ հարցը
վերաբերում եր ներքին ապստամբության, և, չհավատալով ի-
րենց ույժերին ու չպատրաստվելով զինական պայքարի հա-
մար՝ փրկություն եյին սպասում միայն դրսից։ Առաջին տեսա-
կի մտածողության տեր ընկերների համար այդ ժամանակ
Անդրկովկասի առանձնահատկություններն եյին՝ Անդրկովկասի
բանվորների և աշխատավոր գյուղացիների ուժեղ որիենտացիան
դեպի Հոկտեմբերյան Հեղափոխությունը և Խ. ր՞րդային Ռու-
սաստանը, Բաքվի պրոլետարիատի քաղաքական ակտիվու-
թյունը, գյուղացիական ապստամբությունները Վրաստանում,
ագրարային հուզումները Ադրբեջանում և, վորքան էլ այդ տարօ-
րինակ լիներ շատերի ու նույնիսկ Արմենկոմի համար, Հայաստա-
նի գյուղացիության հեղափոխական ռազմական տրամադրությու-
նը։ Իսկ յերկրորդ կարգի մտածողների համար այդ առանձնահատ-
կություններն եյին՝ Անդրկովկասի, առանձնապես Վրաստանի ու
Հայաստանի, քիչ թե շատ ուժեղ արդյունագործական պրոլե-
տարիատի բացակայությունը, գյուղացիական մասսաների քա-
ղաքական և կուլտուրական հետամնացությունը, առանձնապես
Հայաստանում, ազգային պատմական ավանդությունները և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ (ԱՐՄԵՆԿՈՄԻ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԼԵՔ-ՊՈԼԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼԸ

Նախորդ գլուխներում մենք համառոտակի ծանոթացանք այն աշխատանքի հետ, վոր կատարեց Արմենկոմը Հայաստանում, և այն դրության հետ, վորի մեջ նա ընկավ ապստամբության ժամանակ։ Ինքնին հասկանալի յե, վոր թե այդ աշխատանքը և թե այդ դրությունը հետևանք եյին տվյալ-պատմական մոմենտի վորոշ գնահատության, շրջապատող քաղաքական միջավայրի և սրա հետ կապված՝ մեր քաղաքական խնդիրների վորոշ ըմբռնման, մի խոսքով վորոշ քաղաքականության։

Հայաստանի մեր կուսակցական կազմակերպությունը Անդրկովկասյան Յերկրային կազմակերպության առավելապես գյուղացիական մասերից մեկն եր, վոր ղեկավարում եր Յերկրային Կոմիտեն։ Բայց Հայաստանի մասշտաբը Անդրկովկասի նկատմամբ այնքան էլ փոքրիկ չեր, վորպեսզի Արմենկոմը քիչ թե շատ ինքնուրույն քաղաքականություն չունենար և իր հերթին չազդեր Յերկրային Կոմիտեյի՝ դեպի Հայաստանն ունեցած քաղաքականության վրա։

Վորևե քաղաքական մարմնի, հետևաբար նաև Արմենկոմի, քաղաքականությունը բնութագրելու համար պահանջվում են տվյալ շրջանին վերաբերող ոբյեկտիվ տվյալներ և գրավոր փաստաթղթեր։ Այդպիսի տվյալներ և փաստաթղթեր Արմենկոմի քաղաքականության վերաբերյալ շատ քիչ կան։ Այդ իսկ պատճառով մենք դժբախտաբար պետք է այս գլխում գործ ունենանք աղքատ և սակավաթիվ տվյալների և փաստաթղթերի հետ։ Բայց, այնուամենայնիվ, այդ տվյալները և փաստաթղթերը մեզ կոգնեն, թեկուզ և համառոտ կերպով ու հիմնական գծե-

րով, լուսաբանելու Արմենկոմի քաղաքականությունը։
Այս հարցում ավելի արժեքավոր են և այդ տեսակետից
գրեթե միակն են հանդիսանում այն տվյալները, վոր
հայտնում է ընկ. Կասյանը «Ձախության հիվանդությունը
մեզանում» իր հոդվածում։ (Նոր-Աշխարհ, 22թ. Թիֆլիս)։ Ուստի
մենք. կսկսենք հենց այդ տվյալներից, նախապես հայտնելով,
վոր այդ հոդվածում բացի հեղինակի մի քանի դատողու-
թյուններից և տեղեկություններից Արմենկոմի քաղաքականու-
թյան մասին, տվյալ դեպքում մեզ վոչինչ չի հետաքրքրում.
վոչ հարուցած վեճը մի պատմական փաստաթղթի (1920 թ.
հունվարի կոնֆերանսի բանաձևի) շուրջը ընդհանրապես, և
վոչ էլ մանավորապես հեղինակի վորևե դատողությունը, վոր
անմիջապես վերաբերում է այդ փաստաթղթին, վորովհետև
այդ հարցը պետք է համարել դեռևս չպարզված։ Այդ հանգա-
մանքը չի կարող խանգարել մեզ պարզաբանելու թե Արմեն-
կոմի քաղաքականությունը և թե Ալեք-պոլի կոմիտեյի սխալը։
— Ընկ. Կասյանը Արմենկոմի գաղափարական ղեկավարնե-
րից մեկն եր, յեթե վոչ միակը, Արմենկոմի գոյության սկզ-
բից մինչև 20 թվականի հունվարի վերջը։ Հիշյալ հոդվածում
նա իր լիակատար պաշտպանության տակ է առնում Հայաս-
տանի կոմիտեյի քաղաքական վարքագիծը առանց վերապա-
հումների, ուստի և նրա հաղորդած տեղեկությունների ոբ-
յեկտիվության վերաբերմամբ, թեկուզ և նրանք հաղորդվում
են ուշացած՝ հետագա դեպքերի լույսի տակ՝ կասկածելու ա-
ռանձին հիմունքներ չունենք։ Ճիշտ է, ընկ. Կասյանը, և
Մռավյանը քսան թվի փետրվարին աքսորվեցին Հայաս-
տանից, և Կոմիտեն վերակազմվեց մարտի վերջին յերկու
թե յերեք նոր ընկերներով, բայց այդ հանգամանքը չփոխեց,
և հազիվ թե մի ամսի ընթացքում փոխեր, Արմենկոմի քաղա-
քական գիծը։
«Համառուսական յեվ արդյունագործական մաշտաբ. ահա
մեր գործունեյության յելակետը մինչև Հոկտեմբերյան հեղա-
փոխությունը» (Նոր-Աշխարհ, եջ 4. ընդգծումը հեղինակինն է)։
Իսկ Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո, մեզ՝ Անդրկովկա-

ռի կոմունիստներիս համար ստեղծվեցին «Նոր վայր» և աշխատանքի «անսովոր» պայմաններ այն իմաստով, որ (ի հարկե Արմենկոմի տեսակետից) մենք, կտրվելով ռուսական արդյունագործական պրոլետարիատից, ըստ յերևույթին, կորցրեցինք նաև համառուսական և արդյունագործական մաշտաբը, իբրև մեր գործունեյության յելակետ, ընկանք յերոպական իմպերիալիզմի նոր գաղութի դրության մեջ, ուր մենք հարկադրված եյինք ընտրել Անդրկովկասում գործելու նոր մասշտաբ, նոր քաղաքականություն, աշխատանքի նոր միջոցներ։ Այսպիսով, Արմենկոմի լեզվով նոր վայր նշանակում եր նոր տերերի (Անտանտի) նոր գաղութ, իսկ անսովոր պայմանները*)—աշխատանքի նոր մասշտաբ, հետևաբար և աշխատանքի նոր միջոցներ ու ձևեր և այլն, մի կողմ նետելով «տրադիցիան ու շաբլոնը»։

Իսկ տվյալ պայմաններում ի՞նչ նոր մաշտաբ և նոր ընթացք կարող եյինք մենք ունենալ Անդրկովկասում. «Բռնել մեր նավի կուրսը դեպի համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը,—կատարել մեր միջազգային պարտականությունը դեպի այն բանակը, որը կուրծքը դեմ տված ունի ակտիվ հակահեղափոխությանը—ահա ժամանակի հրամայական թելադրանքը։ (Նոր-Աշխարհ, եջ 5. ընդգծումը հեղինակինն ե)։ Յեվ այդպիսով Անդրկովկասյան կոմունիստները, իրենց նավի ղեկը պետք ե բռնեյին ոչ թե անմիջորեն դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը, այլ դեպի համաշխարհայինը, որովհետև առաջինը «ազդանշանն եր» վերջինի, որպես «բացարձակ ճշմարտություն» (նույն տեղը, եջ 5)։ Ըստ ընկ. Կասյանի՝ նրանք նաև պետք ե հաշվի առնեյին տվյալ յերկրի տնտեսական, ազգային, կուլտուրական, պատմական և այլ առանձնահատկությունները։ Այդ «ծայր սահմանի» մարքսիստական թեորյան Արմենկոմը գտնում եր Հայաստանում վարած իր քաղաքականության հիմքում և նույնիսկ այն առաջարկում եր Յերկրային Կոմիտեյին ամբողջ Անդրկովկասի համար, նշավակելով այդ թեորիայի ամեն մի

*) Նոր վայր և անսովոր բառերը ընկ. Կասյանի կողմից առնված են չակերտների մեջ։ Այդ չակերտների իմաստը ընթերցողի համար մնում ե գաղտնիք, որովհետև հեղինակի հետագա մտքերից յերևում ե, որ այդ բառերը գործ են ածված իրենց իսկական, պարզ իմաստով:

քննադատությունը «յերեխայություն, ձախության հիվանդություն, հեղափոխական անհամբերություն» և այլ նման բառերով։ Արմենկոմը սիրում եր հաճախ հիշեցնել Անդրկովկասի, մասնավորապես Վրաստանի և Հայաստանի, հիշյալ առանձնահատկությունների մասին ոչ թե այն պատճառով, որ այլ ղեկավար ընկերներ և կուսակցական մարմիններ վորոշել եյին պարզապես հաշվի չառնել այդ առանձնահատկությունները, այլ այն պատճառով, որ Անդրկովկասի չափազանց սուր հեղափոխական պայմաններում ավելի քիչ եր հարկ լինում խոսել նրանց մասին, վորովհետև ինքնին հասկանալի յեր, վոր չեր կարելի նրանց հաշվի չառնել։ Ավելի շա՛տ հարկ եր լինում խոսել և հիշեցնել առաջիկա և նույնիսկ արդեն մասամբ տեղի ունեցող հեղափոխական կռիվների մասին։ Ընդհակառակը, ամեն տեսակի առանձնահատկությունների մասին ամենից ավելի շատ խոսում եյին նրանք, վորոնք մեր կուսակցության խնդիրներին Անդրկովկասում մոտենում եյին խաղաղ ժամանակի հոգեբանությամբ, յերբ հարցը վերաբերում եր ներքին ապստամբության, և, չհավատալով իրենց ույժերին ու չպատրաստվելով զինական պայքարի համար՝ փրկություն եյին սպասում միայն դրսից։ Առաջին տեսակի մտածողության տեր ընկերների համար այդ ժամանակ Անդրկովկասի առանձնահատկություններն եյին՝ Անդրկովկասի բանվորների և աշխատավոր գյուղացիների ուժեղ որիենտացիան դեպի Հոկտեմբերյան Հեղափոխությունը և Խ. բ՞րդային Ռուսաստանը, Բաքվի պրոլետարիատի քաղաքական ակտիվությունը, գյուղացիական ապստամբությունները Վրաստանում, ագրարային հուզումները Ադրբեջանում և, վորքան ել այդ տարօրինակ լիներ շատերի ու նույնիսկ Արմենկոմի համար, Հայաստանի գյուղացիության հեղափոխական ռազմական տրամադրությունը։ Իսկ յերկրորդ կարգի մտածողների համար այդ առանձնահատկություններն եյին՝ Անդրկովկասի, առանձնապես Վրաստանի ու Հայաստանի, քիչ թե շատ ուժեղ արդյունագործական պրոլետարիատի բացակայությունը, գյուղացիական մասսաների քաղաքական և կուլտուրական հետամնացությունը, առանձնապես Հայաստանում, ազգային պատմական ավանդությունները և

այլն։ Ո՞վ էր իրավացի։ Առաջինները իրավացի էին տվյալ պատմական մոմենտում, իսկ յերկրորդները՝ յերբ վոր ուզեք, բայց ամենից քիչ հենց այդ մոմենտում։

Սակայն անցնենք հիմնական հարցին, վորովհետև գրեթե ամեն ինչ այստեղից էր բղխում, այսինքն նոր մասշտաբին, մեր յետ-հոկտեմբերյան գործունեյության նոր յելակետին։ Մեր թշնամիները, Անդրկովկասը զենքի ույժով բաժանելով Ռուսաստանից, մեզ անջատեցին մեր գաղափարական ղեկավարից՝ ռուսական արդյունագործական պրոլետարիատից, բայց մենք այդ հանգամանքին նայում էինք իբրև ժամանակավոր յերեվույթի, վոր իր տակ վոչ անտեսական և վոչ էլ քաղաքական մասսայական հիմք չուներ։ Մենք չէինք ցանկանում հաշտվել այդ դրության հետ և ձեռք էինք առնում բոլոր միջոցները, վորպեսզի նորից միանանք ռուսական հեղափոխական պրոլետարիատին, վորն իր հերթին զենքը ձեռին մաքրում էր ինքզինքը դեպի մեզ բերող ուղին։ Բայց մենք իսկապես կլինեյինք «հողմաղացի դեմ կռվող դոն-քիշոտներ» (ibid. եջ 7), յեթե մենք մեր քաղաքականության մեջ ղեկավարվեյինք հոգեկան ցանկություններով, բացառապես հին կուսակցական ավանդություններով, այլ վոչ թե ներքին և արտաքին օբյեկտիվ հնարավորություններով։ Անդրկովկասում Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո կային արդյոք այդ հնարավորությունները, կա՞ր արդյոք լայն մասսայական բանվորագյուղացիական շարժում Հոկտեմբերյան Հեղափոխության լոզունգներով, կայի՞ն արդյոք կոմունիստական կազմակերպություններ համառուսական դպրոցի հին փորձված կադրով, վոր գլխավորեր այդ շարժումը։ Այդ մասին մենք խոսել ենք առաջին գլխում, այդ չէր կարող բացասել վոչ վոք և վոչ էլ Արմենկոմը. այդ էին ասում նաև մեր թշնամիները, յերբ նրանք բանտ էին նետում հարյուրավոր հեղափոխական բանվորների և գյուղացիների և նրանց ղեկավարներին—կոմունիստներին, առանձնապես Վրաստանում և Ադրբեջանում։ Ինչ չափով վոր այդ այդպես էր, այդ չափով էլ մենք լրիվ հիմք ունեյինք չհաշտվելու նոր գալութի դրության հետ և այդ չա-

փով էլ զենքը ձեռքներիս մենք պետք է օգնեյինք ռուսական բանվորությանը՝ հարթելու այն ուղին, վորը մեզ պետք է նորից միացներ և վորը մեզ, Նավթային Բաքվի միջով, տանում էր Մոսկվա ու Լենինգրադ, այլ վոչ թե անմիջապես Փարիզ և Լոնդոն։ Հենց այդ իմաստով էլ համառուսական արդյունագործական մասշտաբը, իբրև մեր հեղափոխական գործունեյության յելակետ՝ կորցված չէր, և այն վոչ մի րոպե չէր կարելի կորցնել։ Հոկտեմբերյան Հեղափոխությունը ի հարկե ազդանշան էր համաշխարհային հեղափոխության, բայց մեզ՝ անդրկովկասցիներիս համար նա ավելի անմիջական նշանակություն ուներ, քան, օրինակ, Տաճկաստանի, Պարսկաստանի, Յեգիպտոսի կոմունիստների համար։ Մեր նավի կուրսը դեպի համաշխարհային հեղափոխությունն ընդհանուր առմամբ և վերջին հաշվով բռնում էինք ինչպես մենք, այնպես էլ բոլոր յերկրների կոմունիստները, բայց մեզ՝ Անդրկովկասի կոմունիստներիս համար կար ավելի մոտակա հեղափոխական գործնական ընթացք, վոր մեզ տանում էր անմիջապես դեպի Հոկտեմբերյան Հեղափոխությունը 19 և 20 թվականների Անդրկովկասի պայմաններում։ Այդ տարիները մենք սպասում էինք համաշխարհային հեղափոխության, և նա, իրոք, սարերի յետևում չէր. մենք նրա մասին շատ խոսում էինք և պետք է խոսեյինք, բայց մենք նրան չէինք սպասում ծալած ձեռքերով։ Համաշխարհային հեղափոխության ագիտացիայի ընդհանուր ֆոնի վրա մենք վոչ մի րոպե Ռուսաստանում չէինք մոռանում մեր անմիջական գործնական խնդիրները. մենք նրանց չպետք է մոռանայինք և Անդրկովկասում, վորովհետև միայն այդ ձևով մենք ավելի լավ կարող էինք կատարել մեր միջազգային պարտականությունը հանդեպ համաշխարհային հեղափոխության բանակի, ընդդեմ համաշխարհային հակահեղափոխության։

Անդրկովկասյան այն կոմունիստը, վոր վոչ բավականաչափ պարզ կերպով էր հասկանում այդ ամենը և իր աշխատանքում չէր յելնում դրանից՝ անխուսափելիորեն պետք է միևնույն տեղում կանգնած տատանվեր և ինքզինքը

հանգստացներ ընդհանուր ֆրազներ գործածելով համաշխարհային հեղափոխության և համաշխարհային իմպերիալիզմի մասին: Այդ դեռ քիչ է, նա պետք է կտրվեր բանվորական և գյուղացիական մասսաներից, որովհետև այդ մասսաները գնալով ավելի ու ավելի եյին մարտական ընթացք բռնում դեպի Հոկտեմբերյան Հեղափոխությունը և բանվորա-գյուղացիական Խորհրդային Ռուսաստանը:

Ելնելով իր այդ հիմնական թեզից, նոր մաշտաբից և նոր աշխատանքից, Արմենկոմը գալիս էր այն յեզրակացության, որ Հայաստանում աշխատող կոմունիստների դրությունը դժվարանում էր նաև նրանով, որ նրանք կորցրել եյին ոչ միայն ռուսական պրոլետարիատին, այլ նույնիսկ Բաքվի պրոլետարիատին և, հավանորեն, իբրև դրա անխուսափելի հետևանք, նույնիսկ աշխատանքի անդրկովկասյան մաշտաբը: Այդ մասին ընկ. Կասյանը գրում է.—«Սակայն մենք ունեյինք Բաքվի արդյունագործական բանվորությունը, որն այնուամենայնիվ պատվանդան էր հանդիսանում մեր հեղափոխական գործունեյության զուտ պրոլետարական ուղղությամբ: Իսկ յերբ այդ ղեկավարին էլ կորցրինք, այսինքն յերբ Անդրկովկասն էլ բաժան-բաժան յեղավ, մենք՝ Վրաստանի և մանավանդ Հայաստանի կոմունիստներս՝ այլևս դարձանք զուտ գյուղացիական յերկրում, մանր բուրժուական միջավայրում գործող բանվորական կուսակցություն» (Ibid, էջ 5):

Լավ է, որ մենք, Հայաստանի կոմունիստներս, այդպես «անհուսալիորեն» կորցրած ռուսական և Բաքվի պրոլետարիատին, այնուամենայնիվ, մնացինք բանվորական կուսակցություն զուտ գյուղացիական յերկրում, մանր բուրժուական միջավայրում: Դա ամենակարևորն էր, մնացյալը համեմատաբար ավելի հեշտ էր: Բայց այդպիսի պայմաններում և մեր քաղաքական խնդիրների նման ըմբռնումով ինչպես մենք կարող եյինք պրոլետարական կուսակցության անդամներ մնալ: Մենք պետք է վերածվեյինք թեորետիկ կոմունիստների փոքրիկ ինտելլիգենտական մի կաստայի, որը տեսական ագիտացիա պիտի մղեր առանց կենդանի գործնական և մարտական աշ-

խատանք տանելու մասսաների մեջ: Ընկ. Կասյանը գրում է.—«Այն յերկրում, ուր սպեկուլլացիան և թալանը ոչ այնքան դասակարգային հասկացողություններ եյին՝ հիմնված տնտեսական առավելությունների վրա, որքան քաղաքական՝ հիմնված իշխանության իրավունքի վրա,—ասում ենք, այդպիսի յերկրում... Մեր քաղաքականությունը պիտի լինի ոչ թե կապիտալիստական, այլ գաղութային յերկրի կոմունիստների քաղաքականություն: («Նոր, Աշխարհ» էջ 8, ընդգծումը հեղինակինն է):

Բայց, իրոք, այդ վերացական դատողությունները ճիշտ կարող եյին համարվել մեր կուսակցության նկատմամբ միայն իբրև տեսական ընդհանուր հասկացողություններ, որոնք անմիջական առնչություն չունեյին այն կոնկրետ արտաքին և ներքին պայմանների հետ, որոնց մեջ մենք, Հայաստանի կոմունիստներս, աշխատում եյինք 19 և 20 թվականներին: Այդ պայմաններում մեր կուսակցությունը պետք է ոչ թե ընդհանրապես գաղութային յերկրի կոմունիստների քաղաքականությունը վարեր, այլ այնպիսի մի գաղութային յերկրի, որին նոր եյին գաղութայնացնում, և որը արագորեն հիասթափվում էր նոր տերերից և նրանց տեղական քաղաքական գործակալներից, չէր ցանկանում այդ գաղութայնացումն ու ձգտում էր մտնել Խորհրդային յերկրների սիստեմի մեջ, որոնց գլուխ էր կանգնած ռուսական պրոլետարիատը: Զգալով դրան, նա կանգնում էր ակտիվ զինական պայքար վարելու ուղիի վրա՝ իր այդ նպատակը իրագործելու համար: Հայ գյուղացիությունը պատրաստվում էր կռվել (և կռվեց) Դաշնակցության և նրա կառավարության դեմ, և ղեկավարություն էր փնտրում մեր կուսակցության կողմից ոչ թե դեպի մեզ և դեպի համաշխարհային հեղափոխությունն ունեցած սիրուց, այլ սեփական շահերի համար: Տնտեսական ձգտումը դեպի անդրկովկասյան կենտրոնները և Ռուսաստանը, դաշնակցական կառավարության զինվորական արկածները, խմբապետական ռեժիմը, սպեկուլյացիան և թալանները — պայմանավորում եյին գյուղացիական հեղափոխական շարժումը դաշնակցական Հայաստանում: Սպեկուլյացիան և թալանը, ճիշտ է, ոչ

այնքան դասակարգային հասկացողություններ եյին, վորքան քաղաքական, բայց դա լիովին բավական եր, վորպեսզի մենք ակտիվ կերպով միջամտեյինք աշխատավոր մասսայի քաղաքական պայքարին, կանոնավորեյինք և կազմակերպեյինք այն, այլապես «մենք վատ հեղափոխականներ կլինեյինք... յեթե չկարողանայինք օգտագործել ամեն մի ժողովրդական շարժում» (Լենին), այլապես մենք կլինեյինք յերազողներ այնպիսի մի «զուտ» հեղափոխության մասին, վորի վերաբերմամբ ընկ. Լենինը մի ուրիշ տեղ գրում եր. «Նա, ով սպասում ե «զուտ» հեղափոխության, նա յերբեք նրան չի հասնի։ (Ленин т. 19, стр. 230)։

Մենք՝ Հայաստանի սահմաններում փակված՝ չեյինք աշխատում ինքնուրույն և ինքնամփոփ ներքին սոցիալական հեղափոխություն կատարելու։ Այդ տեսակետից, մենք շատ գործ չունեյինք անելու Հայաստանի ներսում, վորովհետև Հայաստանի հեղափոխական շարժումը սոցիալական մեծ իմաստ եր ստանում այն չափով, ինչ չափով նա դիմադարձ եր լինում դեպի համառուսական և անդրկովկասյան հեղափոխական շարժումը՝ սերտորեն ձուլվելով այդ շարժման հետ։ Մենք աշխատում եյինք ումաքառում դուրս գալ այդ փակ դրությունից, տապալելով հակահեղափոխական դաշնակցական կառավարությունը, վորն ինքնին առանձին ույժ չեր ներկայացնում, բայց Անտանտի ձեռքում, իբրև քաղաքական գործիք, ուներ վոչ փոքր նշանակություն Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի ներքին հեղափոխական շարժման ու Տաճկաստանի ազգային ազատագրական շարժման դեմ կռվելու գործում, ինչ չափով վոր այս վերջին շարժումն ուղղված եր համաշխարհային իմպերիալիզմի դեմ։ Հենց այդ իմաստով մենք մեր մասշտաբի համար քիչ գործ չեյինք անում Հայաստանում. այդ իմաստով և այդ տեսակետից էլ մեր Հայաստանյան քաղաքականությունը պետք ե լիներ անհաշտ ու մարտական և, ի հարկե, համաչափվեր վոչ միայն ներքին հնարավորությունների, այլև արտաքին՝ Կովկասի և Ռուսաստանի հնարավորությունների հետ։ Մյուս կողմից, մեր ակտիվ մարտական աշխատանքը Հայաստանում վորոշ, և վոչ փոքր, ազդեցություն ու-

ներ ամբողջ Անդրկովկասի հեղափոխական շարժման վրա, իսկ իր հերթին Անդրկովկասի հեղափոխական շարժումը, Բաքվի պրոլետարիատի գլխավորությամբ, նույնպես մեծ նշանակություն ուներ Հոկտեմբերյան հաղթանակը տանվողն Հյուս.-Կովկասի հակահեղափոխության դեմ արագացնելու գործում։ Այդ տեսակետից, այդ իմաստով և նշանակությամբ Բաքվի պրոլետարիատը բնավ կորսված չեր մեզ համար, նա ուներ վոչ միայն Ադրբեյջանյան, այլև համաանդրկովկասյան նշանակություն և պրոլետարական հենարան եր հանդիսանում մեր Յերկրային կուսակցական կազմակերպության համար, վորի մի մասն եյինք կազմում մենք Հայաստանում։

Իր քաղաքականության հիմունքները այդ կերպ վորոշելուց հետո, Արմենկոմին մնում եր նշել քաղաքականության ավելի ևս կոնկրետ և գործնական գիծ։ Յեվ նա նշեց այն, անցկացնելով 19 թվի սեպտեմբերյան ընդհատակյա կոնֆերանսում, կրկնելով 20 թվի հունվարի ընդհատակյա կոնֆերանսում և վերջինից էլ ձեռք բերելով այդ քաղաքական գծի հավանությունը՝ ըստ ընկ. Կասյանի վկայության*)։ «1) Վճռական պայքար Անտանտի դեմ. 2) վճռական պայքար այն ներքին ույժերի դեմ, վորոնց վրա հենվում ե նա—դաշնակ կառավարության և արտասահմանյան հայ բուրժուազիայի ագենտներէ. 3) անխնա վարկաբեկումն ցարական և բուրժուական Ռուսաստանի և 4) վորպես դրական հակադիր այդ բացասական լոզունգների՝ միջազգային հեղափոխական պրոլետարիատի կոմունիստական պայքարի ու բանվորա-գյուղացիական Ռուսաստանի բարոյական հմայքի բարձրացումը և Խորհրդային հանրապետության հաստատումը Հայաստանում»։ («Նոր աշխարհ» եջ 8)։

Եվ ի՞նչ եք ուզում, կասի ընթերցողը. վճռական պայքար մեր բոլոր թշնամիների դեմ, և ապա Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում։ Բայց չշտապենք։ Վճռական պայքարը Արմենկոմի լեզվով նշանակում եր մեր հին և

*) Ընդունել եր հունվարի կոնֆերանսը այդպիսի քաղաքական գիծ, թե վոչ, համենայն դեպս Արմենկոմը կանգնած եր այդ տեսակետի վրա, և մեր խոսքն էլ հենց Արմենկոմի տեսակետի մասին ե։

միշտ նոր տեսական, ագիտացիոն-պրոպագանդիստական, գրական և այլ տիպի պայքար՝ վոր մենք տանում եյինք և տանում ենք ամեն մի ժամանակ և բոլոր պայմաններում, գտնելով և դնելով այդ պայքարի հիմքում ամեն մի տվյալ մոմենտում և ամեն մի տվյալ տեղում վորոշ քաղաքական և գործնական խնդիր։ Այդ խնդիրներից Արմենկոմը տվյալ մոմենտին վո՞րն եր համարում հարվածային և կենտրոնական՝ Հայաստանի համար.—պայքա՞րը Անտանտի դեմ, ցարական և բուրժուական Ռուսաստանի մերկացո՞ւմը, կոմունիստական պայքարի բարոյական պրեստիժի բարձրացո՞ւմը, թե՞ Հայաստանում Խորհրդային Իշխանության հաստատումը։ Արմենկոմը նման հարցեր յերբեք չեր դնում իր առաջ։ Նա իր «նավի կուրսը» պահում եր ուղիղ դեպի համաշխարհային հեղափոխությունը, վորը նրա համար «բացարձակ ճշմարտություն» եր. նա ինքն իրեն չեր հարցնում, թե վորոնք են իր մոտակա գործնական խնդիրները այդ ուղիի վրա։ Վոր ագիտացիան և պրոպագանդը պետք ե ուղեկցեյին բոլոր մեր քաղաքական և գործնական ձեռնարկություններին Հայաստանում—դա հասկանալի յե բոլորին։ Բայց միայն ընդհանուր ագիտացիան և պրոպագանդը տակավին բավական չեն Խորհրդային Իշխանություն հաստատելու համար։ Խորհրդային Իշխանությունը առանց զենքի, առանց արյան վոչ վոքի չի տրվում։ Ի՞նչ եր մտածում այդ մասին Արմենկոմը, այսինքն այն մասին, թե ի՞նչպես, յե՞րբ և ի՞նչ ձևով նա պետք ե Խորհրդային Իշխանություն հաստատեր Հայաստանում։ Ահա այդ մասին ընկ. Կասյանի վկայությունը։ «...Կոնֆերենցիան առաջադրել եր անպայմանորեն (ընդգծ. հեղինակինն ե) բարձրացնելու ապստամբության դրոշը և ընդհանուր ճակատ ստեղծելու՝ ինչ գնով ել ուզում ե լինի. նախ՝ յեթե դաշնակ կառավարությունը հանդգնություն ունենա Անտանտի թելադրանքով և մենշևիկյան Վրաստանի հետ միասին օգնել մուսավաթական կառավարությանը՝ խոչընդոտ հանդիսանալու Կարմիր Բանակին՝ Բաքուն հարկադրանոք գրավելու դեպքում, յերկրորդ՝ յեթե նա Ադրբեյջանի կամ Վրաստանի բանվորա-գյուղացիական ապստ-

տամբությունը թիկունքից խանգարել ուզենա» (ibid. եջ 10)։

Վերջիվերջո, 20 թվի հունվարին, Արմենկոմն ստիպված եր, ըստ յերևույթին՝ մասսաների մեջ աշխատող ընկերների (առանձնապես Ալեք-պոլի) ազդեցության տակ՝ խոսել ապստամբության մասին։ Բայց նա այնպես խոսեց, վոր ավելի լավ եր, յեթե չխոսեր։ Միայն հարցի այդպիսի դրումը—«յեթե, յեթե»—վոր այլ բառերով նշանակում եր «այն չափով, ինչ չափով», արդեն նշանակում եր ամեն մի ապստամբության կազմակերպության բացասումը։ Իրոք, ի՞նչ իմաստ կարող եյին ունենալ «այդ յեթեները», յերբ այդ յեթեներից և վոչ մեկի վրա վոչ մի շեշտ չեր դրվում։ Դա նշանակում եր նստել ձեռքերը ծալած և սպասել քամու։ Իսկ ի՞նչ կարող եր պատահել, յեթե վոչ մեկը և վոչ մյուսը։ Կարող եր պատահել այն, վոր կամ Կարմիր Բանակը չպիտի գրավեր Բաքուն, կամ վոչ մի ապստամբություն Ադրբեյջանում և Վրաստանում չպետք ե լիներ, կամ թե Դաշնակցությունը այդ դեպքում պետք ե հանդիստ նստած մնար Հայաստանում, և այն ժամանակ մենք նրան չպետք ե ձեռք տայինք։ Բայց քաղաքականությունը քաղաքականություն ե կոչվում հենց նրա համար, վոր նա նախատեսում և նախագծում ե։ Իսկ ինչ եր նախատեսում Արմենկոմը և ինչ նախագծում. այդ դեպքերից վո՞ր մեկի համար եր նա պատրաստում իրեն և մեր կազմակերպությունը։ Վոչինչ նա չեր նախատեսում և կոնկրետ ընդգծում, վոչ մի դեպքի համար նա չեր պատրաստվում և վոչ վոքի չեր պատրաստում։ Դեռ մինչև Բաքվի Խորհրդայնացումը և նույնիսկ այն օրերից ի վեր, յերբ Արմենկոմը Յերևանում հունվարի կոնֆերանսին անց եր կացնում իր այդ բանաձևը, դաշնակցականները պատրաստվում եյին ֆրոնտ բանալ Ղազախում և Ղարաբաղում, վորպեսզի այն պահեն Խորհրդային Ադրբեյջանի դեմ։ Վրացական մենշևիկները նախագծում եյին պայթեցնել Փոյլիի կամուրջը Կարմիր Բանակի հանդեպ և հարձակվել Ադստաֆայի վրա։ Մուսաֆաթականները պատրաստվում եյին ուժեղ դիմադրություն ցույց տալու Գանձակում Կարմիր Բանակին։ Յերկրային կոմիտեն ամբողջ Վրաստանում և Ադրբեյջանում ռազմա-հեղափոխա-

կան կոմիտեներ եր կազմում և մասսաները կոչում եր ապստամբության: Իսկ ինչ եր անում Արմենկոմը այդ ժամանակ հունվարի կոնֆերանսի հրահանգներն իրագործելու համար: Գործնականորեն վոչինչ: Կոնֆերանսից հետո, ընդհակառակը, պրոֆեսիոնալ աշխատողներին հրահանգում եյին— վոչ մի աշխատանք չտանել բանակում, վոչ մի կոչ չանել ապստամբության: Այն մոմենտում, յերբ անդրկովկասյան հակա-հեղափոխությունը զենքը ձեռքին դուրս յեկավ Կարմիր Բանակի և Անդրկովկասի հեղափոխական շարժման դեմ, Արմենկոմը հաշվի առած չուներ վոչ մի զինված մարդ և անգամ վոչ մի ատրճանակ. իսկ յեղածն էլ դուրս եր նրա հաշվառումից:

Այժմ մենք դիմենք մի փաստաթղթի, վորը իր ծագումով արդեն վերաբերում է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին: 20 թվի սկզբին լույս տեսավ Ս. Ատենյանի (Կասյանի) անլեգալ բրոշյուրը «Ուր է յելքը» վերնագրով: Այդ բրոշյուրում ընկ. Կասյանը տեսականորեն դատելով համաշխարհային իմպերիալիզմի քաղաքականության, համաշխարհային հեղափոխության և հայ ժողովրդի անելանելի դրության մասին, և այդ դրությունը բացատրելով իբրև հետևանք արևմտյան իմպերիալիզմի քաղաքականության և այլն, ընթերցողին բերում է այն յեզրակացության, թե հայ ժողովրդի համար այդ դրությունից ազատվելու յելքը կայանում է Հայաստանում Խորհրդային Իշխանություն հաստատելու մեջ: Կանգնելով այն հարցի առաջ, թե ինչպես այն հաստատել, և այդ հարցի վրայից թռչելով ընդհանուր, անհասկանալի և անորոշ ֆրազներով, վերջին յերեսներում նա սկսում է պատմել Խորհրդային Իշխանության բոլոր բարիքների մասին: Բերենք ամենահեղափոխական ցիտատները, վոր գրված են նույնիսկ մեծ վոգևորությամբ: «Հայ բանվորությունն ու գյուղացիությունը պետք է անհրաժեշտորեն հետևի բոլոր յերկրների ու ազգերի յեղբայրակից ու վիճակակից բանվորության ու գյուղացիության օրինակին. պետք է վճռականապես և անսասան կերպով բռնի բանվորա-գյուղացիական հեղափոխական ուղին: (Ն. Նախիջևանի հրատարակություն 1920 թ.,

էջ 79. ընդգծումը հեղինակինն է): Իսկ հետևյալ էջում. «Յեթե Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ցանկանում են ազատագրել իրենց, ձգտում են վերջ տալ իրենց հայրերի ու մայրերի, յեղբայրների ու քույրերի, զավակների ու մանուկների տանջանքներին ու տառապանքներին, հառաչանքներին ու արտասուքին,—նրանք պետք է ըմբոստանան արևմտյան արնախում, խարդախ ու նենգամիտ իմպերիալիստների դեմ, անխնա կռիվ հայտարարեն՝ ինչպես ամեն տեղ, այնպես էլ Հայաստանում, կապիտալի տիրապետությունն ու իշխանությունը պահպանող և ամրապնդող իմպերիալիզմի դեմ, պետք է գործակցեն այն ուժերին, վորոնք տապալել են ուզում, բնաջինջ անել են ձգտում մարդկության մեծագույն մասը ստրկացնողներին:

«Յեթե Հայաստանի տառապող ժողովուրդը ուզում է ունենալ իրոք ազատ յերկիր, սեփական հայրենիք, սրտին ու մտքին մոտ բնակավայր,—նա պետք է վճռականապես պահանջե հայկական իշխող դասակարգից և դաշնակցական կառավարությունից՝ հնազանդվել յուր անսասան կամքին. Նա պետք է ձգտե հաղթահարել բոլոր խոչընդոտները՝ հաստատելու յուր սեփական իշխանությունը, կառուցելու յուր հարազատ բանվորա-գյուղացիական պետությունը, ստեղծելու յուր ազատ սոցիալիստական հայրենիքը»:

Այսպիսով Հայաստանի բանվորներն ու գյուղացիները պետք է «ընտրեյին բանվորա-գյուղացիական հեղափոխության ուղին», «ըմբոստանային» արևմտյան իմպերիալիզմի դեմ և դաշնակցական կառավարությունից «պահանջեյին», վոր նա հնազանդվեր իրենց կամքին: Այդ ամենը ասված է մի տեղում և միևնույն հարցի շուրջը: Ըմբոստանալով արևմտյան իմպերիալիզմի դեմ և դաշնակցական կառավարությունից պահանջելով, վոր նա հնազանդվի աշխատավոր ժողովրդի կամքին, և ապա հաղթահարելով ինչ որ անհայտ խոչընդոտներ, մենք պետք է հանգեյինք Խորհրդային Իշխանության: Վորքան աշխատեք, բայց չեք կարող հասկանալ, թե հատկապես ինչ է առաջարկվում բանվորներին ու գյուղացիներին: Անորոշու-

թյունն ու անպարզությունը, վորպես Արմենկոմի քաղաքականության բնորոշ գծեր, անխուսափելիորեն անդրադարձել են այս բրոշյուրի այն էջերի վրա, ուր հեղինակը խոսում է բանվորների և գյուղացիների հետ նրանց՝ Խորհրդային Իշխանության հաստատման ուղիի վրա ունեցած գործնական խնդիրների մասին: Ինչ կերպ բանվորներն ու գյուղացիները պետք է ըմբոստանային արևմտյան իմպերիալիզմի դեմ, անմիջորեն չըմբոստանալով դաշնակցական կառավարության դեմ, յերբ արևմտյան իմպերիալիզմը ճնշում եր հայ ժողովրդին Դաշնակցության և նրա կառավարության միջոցով. և ինչպես նրանք պետքե ըմբոստանային, զենքով թե խոսքով. ինչ եր նշանակում Հայաստանի իշխող դասակարգերից և դաշնակցական կառավարությունից «պահանջել», վոր նրանք հնազանդվեն բանվորների և գյուղացիների կամքին, և ինչպես պետք է պահանջեյին. ինչպես ուզում եք հասկացեք, բայց այս գրքում չկան այդ հարցերի պարզ, վորոշակի պատասխանները: Մինչդեռ այդ հարցերով մեզ դիմում եյին մեր բջիջները քաղաքներում ու գյուղերում. «Ի՞նչ է մեզ առաջարկում ընկեր Կասյանը, չենք հասկանում»—ասում եյին նրանք: Իսկ ընկ. Կասյանը մեր կազմակերպության համար հեղինակություն եր:

Մի քանի խոսք ասենք նաև մի այլ փաստաթղթի մասին և սահմանափակվենք դրանով: Դա այն կոչն է, վոր բաց է թողնված 20 թվի հունվարին Դաշնակցական Հայաստանի՝ Անտանտի կողմից դե-ֆակտո ճանաչելու մասին, վորի ես-երական գնահատության հետ մենք ծանոթացանք վեցերորդ գլխում: Այդ գնահատականը հետաքրքրական է միայն այն տեսակետից, վոր նույնիսկ մեր գաղափարական հակառակորդները, հանձինս ես-երների, գոհունակությամբ արձանագրելով մեր գործնեյության թուլությունը Հայաստանում, մեզ առնում եյին իրենց պրովակացիոն պաշտպանության տակ: Այդ կոչում Արմենկոմը ընդհանուր գնահատություն է տալիս հիշյալ դիվանագիտական ակտին, վոչ մի խոսք չասելով դաշնակցության և նրա կառավարության դեմ, վորը և առիթ

եր տվել ես-երներին համարել այն ավելի ուղղված յեվրոպական իմպերիալիզմի, քան դաշնակցական կառավարության դեմ: Այդ կոչը, ի հարկե, լինելով ուղղված յեվրոպական իմպերիալիզմի դեմ, միաժամանակ ուղղված եր և Դաշնակցության դեմ, բայց բնորոշ է, վոր Դաշնակցությունը և նրա կառավարությունն անհետացել են այդ կոչի մեջ. այդ խոսքերը նույնիսկ ուղղակի դուրս են թռցել կոչից, վորովհետև Արմենկոմը իր այդպիսի տեսական բարձունքից կարծես թե չեր նկատում դաշնակցական կառավարությունը կամ նրան, իբրև իր մոտակա և անմիջական թշնամուն, առանձին նշանակություն չեր տալիս:

Հիշյալ ակտը գնահատության յենթարկելուց հետո, Արմենկոմի կոչը վերջանում է Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ուղղված հետևյալ բառերով.

«Հայ ճնշված և վոտնահարված տարրերը գիտեն կռվել, գիտեն կուրծքը դեմ տալ:

«Դրացի ժողովրդների հետ միացած նրանք վոտքի կկանգնեն իրենց միացած թշնամիների դեմ և գրկախառնվելով հերոսական Կարմիր բանակի հետ կտանեն իրենց ազատության և անկախության պանծալի տոնը... կեցցե՛» և այլն:

Ամեն ինչ լավ և գեղեցիկ է ասված, միայն ասված չէ, թե ո՞ւմ դեմ, անգլիական գեներալի, թե՞ դաշնակցական խմբապետի, բանվորներն ու գյուղացիները պետք է իրենց կուրծքը դեմ տային, միացած թշնամիների մեջ գտնվո՞ւմ եր դաշնակցական խմբապետը, թե խոսքը վերաբերում եր միայն համաշխարհային իմպերիալիստներին: Նույնիսկ կարևորն այն չէ, թե Արմենկոմն այդ ամենը այդպես ել հասկանում եր, այլ այն, վոր այդ մասին պարզ ու վորոշակի չեր ասվում բանվորներին ու գյուղացիներին, չեր ասվում այն պատճառով, վոր ընդհանուր ագիտացիան հօգուտ համաշխարհային հեղափոխության, խորհրդային իշխանության և ընդդեմ արևմտյան իմպերիալիզմի և այլն համարվում եր ավելի կարևոր, քան անմիջական քաղաքական և գործնական պայքարն ընդդեմ դաշնակցականների ու նրանց կառավարության: Իհարկե, Դաշնակ-

թյունն ու անպարգությունը, վորպես Արմենկոմի քաղաքականության բնորոշ գծեր, անխուսափելիորեն անդրադարձել են այս բրոշյուրի այն էջերի վրա, ուր հեղինակը խոսում է բանվորների և գյուղացիների հետ նրանց՝ Խորհրդային Իշխանության հաստատման ուղիի վրա ունեցած գործնական խնդիրների մասին։ Ինչ կերպ բանվորներն ու գյուղացիները պետք է ըմբոստանային արևմտյան իմպերիալիզմի դեմ, անմիջորեն չըմբոստանալով դաշնակցական կառավարության դեմ, յերբ արևմտյան իմպերիալիզմը ճնշում եր հայ ժողովրդին Դաշնակցության և նրա կառավարության միջոցով. և ինչպես նրանք պետքե ըմբոստանային, զենքով թե խոսքով. ինչ եր նշանակում Հայաստանի իշխող դասակարգերից և դաշնակցական կառավարությունից «պահանջել», վոր նրանք հնազանդվեն բանվորների և գյուղացիների կամքին, և ինչպես պետք է պահանջեյին. ինչպես ուզում եք հասկացեք, բայց այս գրքում չկան այդ հարցերի պարզ, վորոշակի պատասխանները։ Մինչդեռ այդ հարցերով մեզ դիմում եյին մեր բջիջները քաղաքներում ու գյուղերում. «Ի՞նչ է մեզ առաջարկում ընկեր Կասյանը, չենք հասկանում»—ասում եյին նրանք։ Իսկ ընկ. Կասյանը մեր կազմակերպության համար հեղինակություն եր։

Մի քանի խոսք ասենք նաև մի այլ փաստաթղթի մասին և սահմանափակվենք դրանով։ Դա այն կոչն է, վոր բաց է թողնված 20 թվի հունվարին Դաշնակցական Հայաստանի՝ Անտանտի կողմից դե-ֆակտո ճանաչելու մասին, վորի ես-երական գնահատության հետ մենք ծանոթացանք վեցերորդ գլխում։ Այդ գնահատականը հետաքրքրական է միայն այն տեսակետից, վոր նույնիսկ մեր գաղափարական հակառակորդները, հանձինս ես-երների, գոհունակությամբ արձանագրելով մեր գործնեյության թուլությունը Հայաստանում, մեզ առնում եյին իրենց պրովակացիոն պաշտպանության տակ։ Այդ կոչում Արմենկոմը ընդհանուր գնահատություն է տալիս հիշյալ դիվանագիտական ակտին, վոչ մի խոսք չասելով դաշնակցության և նրա կառավարության դեմ, վորը և առիթ

եր տվել ես-երներին համարել այն ավելի ուղղված յեվրոպական իմպերիալիզմի, քան դաշնակցական կառավարության դեմ։ Այդ կոչը, ի հարկե, լինելով ուղղված յեվրոպական իմպերիալիզմի դեմ, միաժամանակ ուղղված եր և Դաշնակցության դեմ, բայց բնորոշ է, վոր Դաշնակցությունը և նրա կառավարությունն անհետացել են այդ կոչի մեջ. այդ խոսքերը նույնիսկ ուղղակի դուրս են թռցել կոչից, վորովհետև Արմենկոմը իր այդպիսի տեսական բարձունքից կարծես թե չեր նկատում դաշնակցական կառավարությունը կամ նրան, իբրև իր մոտակա և անմիջական թշնամուն, առանձին նշանակություն չեր տալիս։

Հիշյալ ակտը գնահատության յենթարկելուց հետո, Արմենկոմի կոչը վերջանում է Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ուղղված հետևյալ բառերով.

«Հայ ճնշված և վոտնահարված տարրերը գիտեն կռվել, գիտեն կուրծքը դեմ տալ։

«Դրացի ժողովրդների հետ միացած նրանք վոտքի կկանգնեն իրենց միացած թշնամիների դեմ և գրկախառնվելով հերոսական Կարմիր բանակի հետ կտանեն իրենց ազատության և անկախության պանծալի տոնը... կեցցե՛» և այլն։

Ամեն ինչ լավ և գեղեցիկ է ասված, միայն ասված չէ, թե ո՞ւմ դեմ, անգլիական գեներալի, թե՞ դաշնակցական խմբապետի, բանվորներն ու գյուղացիները պետք է իրենց կուրծքը դեմ տային, միացած թշնամիների մեջ գտնվո՞ւմ եր դաշնակցական խմբապետը, թե խոսքը վերաբերում եր միայն համաշխարհային իմպերիալիստներին։ Նույնիսկ կարևորն այն չէ, թե Արմենկոմն այդ ամենը այդպես ել հասկանում եր, այլ այն, վոր այդ մասին պարզ ու վորոշակի չեր ասվում բանվորներին ու գյուղացիներին, չեր ասվում այն պատճառով, վոր ընդհանուր ագիտացիան հօգուտ համաշխարհային հեղափոխության, խորհրդային իշխանության և ընդդեմ արևմտյան իմպերիալիզմի և այլն համարվում եր ավելի կարևոր, քան անմիջական քաղաքական և գործնական պայքարն ընդդեմ դաշնակցականների ու նրանց կառավարության։ Իհարկե, Դաշնակ-

ցություն կուսակցությունը համաշխարհային հեղափոխության և
Կարմիր բանակի հանդեպ ի՞նչ էր իրենից ներկայացնում. հա-
մաշխարհային հեղափոխություն կլիներ կամ կգար Կարմիր բա-
նակն Անդրկովկաս և այն ժամանակ դատարկ բան կլիներ դուրս
քշել դաշնակցականներին Հայաստանից, կամ հարկադրել նրանց
«հնազանդվել բանվորների և գյուղացիների անսասան կամքին»:
Նման հոգեբանությունը վորոշակի զգացվում էր վոչ միայն
Արմենկոմի քաղաքականության մեջ, այլ նրանով, բացի Ար-
մենկոմի անդամներից, վարակված էին նաև մեր ընկերներից
շատերը: Առանձնապես յենթադրվում էր, վոր յեթե Ադր-
բեջանում և Վրաստանում Խորհրդային Իշխանություն հաս-
տատվի, ապա նա Հայաստանում կհաստատվի ինքնին:
Մյուս կողմից կարծվում էր նաև, թե առանց Վրաստանի
խորհրդայնացման դժվար է պատկերացնել Խորհրդային Իշ-
խանության գոյությունը Հայաստանում: Այլ խոսքերով խոր-
հրդային Իշխանությունը մեզ մոտ պիտի գար Բաքվից—Թիֆ-
լիսից—«ուղիղ գծով— գնացքով»: Ինչպես 20 թվի մայիսին,
այնպես էլ հետագա դեպքերի ժամանակ՝ Վրաստանի Խորհր-
դայնացումից հետո դաշնակցականները միանգամայն պարզ ու
գործնականորեն «ցույց տվին» այդպիսի հայացքի սխալ լինելը,
ուստի այդ սխալի մասին յերկար կանգ չենք առնի: Միայն
ընդգծենք, վոր Ադրբեջանի և Վրաստանի խորհրդայնացումից
հետո, մենշևիկյան Վրաստանը չէր կարող կանգուն մնալ յեր-
կար, քան այդ յեղավ, վորովհետև Անդրկովկասի աշխատավոր-
ները, նույն թվում և Վրաստանի աշխատավորները, չէին կա-
րող հանգիստ նայել, թե ինչպես վրացական մենշևիզմը Ան-
դրկովկասում դառնում է համաշխարհային և տեղական հա-
կահեղափոխության միակ պատվանդանը:

Վերը բերված տվյալներից և փաստաթղթերից, վոր մենք
համառոտ քննադատական դիտողությունների և պարզաբանու-
թյունների յենթարկեցինք, դժվար չէ հասկանալ, վոր Արմեն-
կոմի քաղաքականության այդչափ անորոշության ու ան-
պարզության մեջ այնուամենայնիվ մի բան պարզ էր և վո-
րոշ. այդ այն էր, վոր Արմենկոմն իր աշխատանքը Հայաստա-

նում դիտում էր, իբրև ընդարձակ և ընդհանուր հեղափոխա-
կան դաստիարակչական ագիտացիա և պրոպագանդ առանց
կոնկրետ բովանդակության և մոտակա նպատակի՝ տվյալ տե-
ղի ու տվյալ մոմենտի համար: «Վճռական պայքար Անտան-
տի դեմ»՝ «բանվորա-գյուղացիական կուրծքը», «միջազգային
հեղափոխական պրոլետարիատի բարոյական հմայքի բարձրա-
ցումն» ու «գրկախառնություն» Կարմիր բանակի հետ և այլն,
այս ամենը, վորպես ընդհանուր բոլշևիկյան ագիտացիա հօգուտ
հեղափոխության, չուներ ծանրության կենտրոն, չէր խփում մո-
տավոր վորոշակի կետի և կազմակերպչորեն չէր կենսագործ-
վում: Արմենկոմն յերբեք իր առաջ չէր դնում ապստամբու-
թյան խնդիրը՝ նրա հեռանկարի և գաղափարական ու կազմա-
կերպչական նախապատրաստման տեսակետից: Հարցը նրանում
չէր, վոր մենք պետք է դավադիրներ դառնայինք և մի կողմ
թողնեյինք ամեն մի սովորական ագիտացիա և նույնիսկ աշ-
խատանք՝ լեգալ, զեմստվային մարմինների և այլ կազմակեր-
պությունների մեջ, թեպետ և այն ժամանակ ամենից քիչ կարող
էին հետաքրքրել մեզ դաշնակցական այդ մեռած զեմստվոները:
Այլ հարցը նրանումն էր, վոր այդ մի կողմ չնետելով՝ մենք
պետք է ընտրեյինք Հայաստանում մեր վարելիք գործունե-
ության ծանրության վորոշ կենտրոն:

Ընկ. Լենինը մինչև 1905 թվի հեղափոխությունը, այդ
տարվա հուլիսին, գրում էր. «Անկասկած է, վոր մենք դեռ
ևս շատ պիտի աշխատենք բանվոր դասակարգին դաստիարակե-
լու և կազմակերպելու համար, բայց ամբողջ հարցն այժմ նրա-
նում է, թե վորտեղ պետք է գտնվի այդ դաստիարակության և կազ-
մակերպության ծանրության քաղաքական կենտրոնը: Արհեստակ-
ցական միություններում և լեգալ ընկերություններում, թե՞ զի-
նական ապստամբությունը կազմակերպելու մեջ՝ հեղափոխական
բանակ և հեղափոխական կառավարություն ստեղծելու գործում:
Թե մեկում և թե մյուսում բանվոր դասակարգը դաստիարակվում
և կազմակերպվում է: Յեվ մեկը և մյուսը, հարկավ, անհրաժեշտ
են: Ամբողջ հարցն այժմ, ներկա հեղափոխության ընթացքում,
հանգում է, սակայն, այն բանին, թե ինչի մեջ պիտի գտնվի

բանվոր դասակարգի դաստիարակության և կազմակերպության ծանրության կենտրոնը. առաջինում, թե՞ յերկրորդում։ (Ленин, Соб. соч. т. 6., стр. 305, «Две тактики)»։

Այստեղ առաջին հայացքից կարող է թվալ, որ ընկ. Լենինի վերոհիշյալ խոսքերը, որ վերաբերում եյին Ռուսաստանին և ռուսական պրոլետարիատին, չեյին կարող կիրառելի լինել Հայաստանի նկատմամբ։ Լենինի խոսքերը վերաբերում եյին Ռուսաստանի բանվոր դասակարգի կազմակերպմանը, վորովհետև Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ ռուսական պրոլետարիատը հանդիսանում եր գլխավոր շարժիչ ղեկավար ուժը։ Մեզ մոտ՝ այն ժամանակաշրջանի Հայաստանում՝ բանվոր դասակարգը շատ թույլ եր այդ տեսակետից, ուստի և մենք առանձին ուշադրություն պիտի դարձնեյինք գյուղացիության և բանակի կազմակերպման վրա։

19 թվականի աշունից, մեզ շրջապատող պայմանները այնպես եյին դասավորվում, վոր Անդրկովկասում, մանավորապես Հայաստանում, մեր վարելիք աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է գտնվեր «Հեղափոխական բանակ և Հեղափոխական կառավարություն ստեղծելու գործում»։ Յեռանդուն յեվ մասսայական աշխատանք գյուղացիական մասսաներում յեվ բանակում, կոչ ապստամբության, իբրեվ վորոշ վոգով դաստիարակող յեվ մեր շուրջը հեղափոխական մասսաներին մոբիլիզացիայի յենթարկող լոզունգը, համենայն դեպս, 20 թվականի սկզբից, պետք է դառնային մեր հարվածային խնդիրները։ Բայց Արմենկոմը, Հայաստանի բախտը կապելով բացառապես արտաքին պայմանների հետ և չհավատալով քաղաքական կռվի հնարավորությանը Հայաստանում, խուսափում եր ապստամբություն կազմակերպելու խնդրից և հրաժարվում մասսաները ապստամբության կոչելուց, հետևաբար ամեն տեսակի աշխատանքից բանակում՝ նույնիսկ մինչև Մայիսյան ապստամբությունը։ Մինչդեռ մասսայական ապստամբությունն առնվազն 20 թվի սկզբից հասունանում եր օրեցօր, իսկ Արմենկոմը չեր նկատում, և չնկատեց այդ մինչև ապստամբության բռնկումը։ Այսպես եր առաջանում Արմենկոմի քաղաքական

հիմնական սխալը և այստեղից եր սկսվում նրա թուլությունը, չնայած վոր նա կազմված եր մեր հին, լավագույն և պատասխանատու ընկերներից։

* * *

Հայտնի յե, վոր Արմենկոմը և Ալեք-պոլի կոմիտեն միմյանց յեռանդագին կերպով մեղադրում եյին—առաջինը յերկրորդին՝ «տհասության, ձախության, հեղափոխական անհամբերության մեջ» և այլն, իսկ յերկրորդը առաջինին՝ թուլության և անվճռական քաղաքականության մեջ։ Մենք տեսանք, վոր Ալեք-պոլի ընկերները վորոշ հիմք ունեյին Արմենկոմի քաղաքականությունից անբավական լինելու։ Արդ, պետք է պարզել, արդյո՞ք Արմենկոմը ևս իր հերթին հիմք չուներ Ալեք-պոլի կոմիտեյի դեմ իր արած մեղադրանքի համար։

Այստեղ քիչ տարօրինակ կարող է թվալ առաջին՝ այն, վոր մենք առանձին նշանակություն ենք տալիս այդ ժամանակվա մեր ընդհատակյա կազմակերպության գավառական կոմիտեներից մեկի սխալին, յերկրորդ՝ այն, վոր վողջ կուսակցական կազմակերպության կենտրոնական մարմինը և նրան յենթակա գավառական օրգաններից մեկը միմյանց հասցեյին այնպիսի ծանր մեղադրանքներ եյին բարդում, շարունակելով ապրել և աշխատել կողք-կողքի բավական յերկար ժամանակ, մոտավորապես կես տարի։

Իրոք չարժեր այդպիսի մեծ նշանակություն տալ Ալեք-պոլի կոմիտեյի սխալին այն դեպքում միայն, յեթե կազմակերպության կենտրոնական օրգանը կանգնած լիներ քաղաքական ճիշտ ուղեգծի վրա։ Այդ դեպքում գավառական կոմիտեներից մեկի սխալը վտանգավոր չեր լինի, յեթե անգամ իր ժամանակին նա կանխված և վերացված չլիներ։ Բայց ինչ չափով այդ սխալն իր ժամանակին վերացված չեր և ինչ չափով վոր Ալեք-պոլի կոմիտեն խլեց Արմենկոմից նախաձեռնությունը ապստամբության ժամանակ, այդ չափով ել այդ սխալը պետք է անդրադառնար (և անդրադարձավ) Մայիսյան ապստամբության բախտի վրա։ Հենց այս տեսակետից և այս

մաքով մենք ուշադրություն ենք դարձնում Ալեք-պոլի կոմիտեյի քաղաքականության հիմնական սխալի վրա։

Ինչ վերաբերում է յերկրորդ խնդրին, այսինքն նրան. վոր Արմենկոմը և Ալեք·պոլի կոմիտեն, լինելով արմատապես անհամաձայն միմիանց հետ, մեր կուսակցության՝ Հայաստանում վարելիք քաղաքականության խնդրում՝ շարունակում եյին միաժամանակ գոյություն ունենալ, աշխատել և գործել յուրաքանչյուրը ըստ իրեն,—այդ հանգամանքը մի կողմից անմիջական կապ ունենալով Արմենկոմի քաղաքականության հետ, վորը ընդհանրապես իր առաջ անմիջական մարտական խնդիրներ չդնելու հետևանքով կարիք չեր զգում անմիջորեն մոտենալ Ալեք-պոլի բանվորներին ու կուս. կազմակերպությանը ուժեղացնելու համար իր ազդեցությունն ու ղեկավարությունը նրանց վրա և նույնիսկ, թող թեկուզ իր տեսակետից, վերակազմելու Ալեք-պոլի կոմիտեն,—մյուս կողմից էլ բնորոշ եր և Ալեք·պոլի կոմիտեյի համար, վորը նույնպես բավարարվում եր միայն Արմենկոմի քաղաքականության ընդհանուր քննադատությամբ, առանձնապես չջանալով հնարավոր միջոցներով և մյուս կազմակերպությունների օգնությամբ փոխել այդ քաղաքականությունը։

Ի՞նչումն եր կայանում Ալեք-պոլի կազմակերպության ղեկավարների սխալը։

Այնպիսի գյուղացիական հետամնաց աղքատ յերկրում, ինչպիսին Հայաստանն եր այդ ժամանակ, ցրված և մեկուսացած մանր գյուղացիական սեփականատերերի յերկրում, վորոնց միայն սոսկալի սովն ու դաշնակցական իշխանությունը իր բացառիկ վայրենությամբ կարող եյին ու կարողացան հեղափոխականացնել Հոկտ. հեղափոխության դրոշի տակ, վորոնց մեծ մասը կամ չեր տեսել յերկաթուղին, կամ յեթե անգամ տեսել եր տասնյակ անգամներ, բայց չեր հասկացել, թե ինչ կերպ եր նա առանց գոմեշների շարժվում,—այդպիսի մի յերկրում, պրոլետարական կուսակցության համար, իրոք, մի առանձին նշանակություն եր ստանում ամեն մի դազգահի պրոլետար, արհեստանոցի ամեն մի բանվոր, վորի պատմա-

կան կոչումն եր ազատել թե իրեն և թե իր հետ միասին ճնշված աշխատավոր մարդկությունը բուրժուաների և հողատերերի շահագործումից։

Դժվար չէ պատկերացնել, թե այդպիսի պայմաններում ինչ արժեք ու նշանակություն կարող եյին ունենալ մի քանի հարյուր բանվորներ, մի տեղ համախմբված (Ալեք·պոլի դեպոյում), թող նույնիսկ մեծ մասամբ կապված գյուղացիական սեփականության հետ, վորոնք կարող եյին մի քանի րոպեյից մի գործարանային սուլոցով հավաքվել միտինգի, վորոնք գործ ունեյին ժամանակակից տեխնիկայի այնպիսի հսկայական գոմեշի հետ, վորպիսին շոգեշարժն է։ Այդ փոքրիկ բանվորական կղզին կուսակցական կազմակերպության համար համենայն դեպս մի փոքրիկ պրոլետարական պատվանդան եր ներկայացնում։ Յեվ մենք վատ կոմունիստներ կլինեյինք, յեթե մոռանայինք նրանց, և նրանց վրա չդարձնեյինք մեր առաջին ուշադրությունը մեր կուսակցական քաղաքական աշխատանքների ընթացքում։

Սակայն մենք ավելի լավ կոմունիստներ չեյինք լինի նաև այն ժամանակ, յեթե մեր «զուտ» հեղափոխական զգացմունքներով ու ցանկություններով տարված՝ հաշվի չառնեյինք ռեալ իրականության պայմանները, վորովհետև այդ պայմաններն իրենք վերջ ի վերջո, բայց արդեն ամենաթանգ գնով, կհարկադրեյին մեզ հաշվի առնել իրենց։ Իսկ ռեալ իրականության պայմանները Հայաստանում կայանում եյին նրանում, վոր այդ հեղափոխական ժողովրդական շարժմամբ բռնված փոքրիկ գյուղացիական յերկրում հենց միայն մաուզերիստները, կատաղի սպեկուլյանտները, մաքսանենգները և այլ տիպի ապադասակարգայնացած տարրերը անհամեմատ ավելի շատ եյին, քան պրոլետարական տարրերը։

Այս պարզ ճշմարտությունը Ալեք-պոլի ընկերները, վոր անսահման անձնվեր եյին մեր կուսակցության գործին և լի հեղափոխական մեծ ենտուզիազմով, չհասկացան, չգնահատեցին, գործնականորեն հաշվի չառան։ Ապրելով և աշխատելով հեղափոխական բանվորների շրջանում և նրանց միջոցով իրա-

դեկ դառնալով գյուղացիության և բանակի հեղափոխական տրամադրության, նրանք մի տեսակ զգում էին, թեև կարելի չէ այսպես արտահայտել, հասունացող դեպքերը, բայց պարզ չէին գիտակցում այդ հասունացող դեպքերի բնույթը, չէին կշռում ու չափում այդ գալիք դեպքերի ամբողջ ծանրությունն ու դժվարությունը, լրջորեն հաշվի չէին առնում գյուղի ու բանակի նշանակությունը և դերը, որ միանգամայն վճռական էին այդ դեպքերի համար։ Ուրիշ խոսքով, նկատելով անտառը, բայց չիմանալով թե ինչ կա անտառի յետևը և ինչպիսի ծառերից է առավելապես նա բաղկացած՝ նրանք ուզում էին Հայաստանի սակավաթիվ և թույլ պրոլետարիատը արհեստականորեն դարձնել հեղափոխական շարժման գլխավոր ուժը, կենտրոնը և առաջամարտիկը։ Ցավ այդ ձգտումներով ու հասկացողությամբ էլ նրանք խուժեցին անտառը, շփոթվեցին ու մոլորվեցին։

Մայիսյան ապստամբությունից հետո, «Կոմունիստական Ինտերնացիոնալի» № 2-ում «Կոմունիզմը Հայաստանում» հոդվածում ընկ. Ա. Ն. գրում էր.—

«Բանվորական շարժման կենտրոնը հանդիսանում էր Ալեքպոլը՝ բանվորական դեպոյի գլխավորությամբ... Դաշնակցական կուսակցությունը կարող էր իշխել անբաժան, քանի դեռ չէր լսվում բանվոր դասակարգի ձայնը (ընդգծումը մերն է. Շ. Ա.), որը կարող կլիներ հակադրել իր կամքը կառավարության արարքներին։ Գլխավոր ուշադրությունը կուսակցությունը նվիրել էր բանվոր դասակարգի կազմակերպության և պրոֆմիությունների մեջ աշխատանք տանելուն, որոնք հետզհետե անցնում էին կոմունիստների ձեռքը և յուրացնում կոմունիզմի քաղաքականությունը և տակտիկան» (էջ 266—7)։

Պետք է կարծել, որ հոդվածը պատկանում է ընկ. Ավիսի գրչին, բայց յեթե անգամ այդ այդպես էլ չի, համենայն դեպս հոդվածը գրված է այնպիսի ընկերոջ կողմից, որը համարձակորեն և զարմանալի ճշտությամբ կարող կլիներ իրենով փոխարինել ընկ. Ավիսին Ալեք պոլի կազմակերպության ղեկավարի դերում՝ 20 թ. Յեթե իրոք հեղափոխությունը Հայաստանում,

այսինքն՝ դաշնակցական կառավարության տապալումն և Խորհրդային իշխանության հաստատումն այդպիսի հեշտ խնդիր էր, որ բավական էր մի քանի հարյուր բանվորների ձայնը լսելի դարձնելը, ապա հասկանալի յե, որ մեր կուսակցության վոչ միայն գլխավոր, այլ նույնիսկ ամբողջ ուշադրությունը պետք է նվիրված լիներ միայն բանվոր դասակարգի կազմակերպմանը, ինչպես և վարվեցին Ալեք-պոլի ընկերները։

Սրանում էր կայանում Ալեք-պոլի կոմիտեյի հիմնական սխալը, որ ի վերջո հետեվանք էր մեր կուսակցության՝ այդ ժամանակվա Հայաստանի նկատմամբ ունեցած հեղափոխական խնդիրների հեշտ պատկերացման։ Մայիսյան հեղաշրջման այսպիսի պարզ ու թեթև պատկերացումով Ալեք-պոլի ընկերները վերցրին իրենց վրա ընդհանուր ապստամբության ղեկավարի դերը և չազատագրվեցին այդ քաղաքական հոգեբանությունից նույնիսկ մինչև պարտությունը, փնտրելով հեղափոխական բարդ հանգույցի հեշտ լուծումը։

ԸՆԿ. ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԽԱԼԸ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՆՑՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Նախ քան այս գլխի հիմնական հարցին անցնելը, ուշադրություն դարձնենք ընկ. Աշոտ Հովհաննիսյանի՝ սկզբունքային բնույթ կրող մի սխալի վրա, վոր միանգամայն անջատ է նրա հիմնական սխալից և նույնիսկ չի բխում այն ամենից, ինչ նա պատմում է Մայիսյան ապստամբության մասին «Հայաստանի Հեղափոխության Հուլիսն ու Հոկտեմբերը» գրքում: Մենք նկատի ունենք այն անալոգիան, վոր հեղինակը անց է կացնում Պետրոգրադի Հուլիսյան որերի և Հայաստանի Մայիսյան ապստամբության միջև, այդ անալոգիան արտահայտելով միայն գրքի վերնագրում, առանց վորևէ բացատրության, ծանոթության և վերապահության:

Ճիշտ է, թե այնտեղ և թե այստեղ հեղափոխական մասսաների յելույթ տեղի ունեցավ իշխանությունը գրավելու լոզունգով, բայց Ռ. Կ. Կ. Պետրոգրադում գիտակցաբար միջամտեց դեմոնստրացիային, վորպեսզի նրան խաղաղ կազմակերպչական ձև տար և այնքան ճկուն, զգույշ ու տակտով յեղավ, վոր կարողացավ կանխել պրոլետարիատի վաղաժամ յելույթը և պահպանել քայքայումից կուսակցությունն ու հեղափոխական մասսան: Հուլիսյան որերը խոշոր դեր խաղացին Հոկտեմբերյան Հեղափոխության զարգացման և նախապատրաստման գործում: Իսկ Հայաստանում, ընդհակառակը, կուսակցությունը փորձեց ղեկավարել ապստամբությունը և գրավել իշխանությունը, բայց չկարողացավ այդ անել և յենթարկվեց քայքայման. «Փաստերն ասում են, վոր քաղաքի վոչ միայն վորևէ մասին, այլ անգամ վորևէ մի շենքին, վոչ մի հիմնարկության բոլշևիկները չտիրացան (թեպետ և կարող եյին

տիրանալ) և չեյին փորձում տիրանալու»: (Ленин Собр. Соч.
т. 14 стр. 10): Այդպես չեր Հայաստանում: Լենինգրադի Հու-
լիսյան որերն ունեն այլ պատմություն և պատմական նշա-
նակություն, քան Մայիսյան դեպքերը Հայաստանում: Այդ է
հաստատում նաև հենց ընկ. Ա. Հովհաննիսյանի գրքի բովանդակու-
թյունը, վոր այս տեսակետից չի համապատասխանում վեր-
նագրին:

Անցնենք մեզ այստեղ հետաքրքրող հարցին և բերենք մի
քանի ցիտատներ, վորպեսզի ընթերցողի համար սկզբից և յեթ
պարզ լինի, թե ինչումն է բանը:

«Համաշխարհային պատերազմի ավերիչ ընթացքն ու ազ-
գային քաղքենիության կործանարար քաղաքականությունն է,
վոր հեղափոխության գիրկն են նետում Հայաստանի աշխա-
տավոր բազմությունը, հանձնելով սրա ղեկավարությունը փոք-
րաքանակ բանվորությանը և իր կուսակցության - Հայաստանի
կոմունիստական կազմակերպության—ձեռքը» («Հայաստ. Հու-
լիսն ու Հոկտ.» եջ 5):

«Բանվորական շարժումը Հայաստանում սոցիալական խո-
շոր յերևույթ չեր ինքնին: Դրան համապատասխան սահմանա-
փակ պիտի լիներ նաև այդ շարժումը ղեկավարող կուսակցա-
կան կազմակերպության մարտական զորությունը» (եջ 9):

«Հայաստանի յերկաթուղու բանվորությունը կազմում եր
հեղափոխական գործի վողնաշարը» (եջ 10):

Կարելի յեր շարունակել այդ ցիտատները, կամ բերել նո-
րերը, վորոնք խոսեյին միևնույն բանի մասին, այսինքն այն ան-
կյունաքարերից մեկի մասին, վորոնց վրա ընկ. Ա. Հովհաննիսյանը
կառուցում է Մայիսյան ապստամբության իր բացատրությունը:
Այսպիսով ստացվում է, վոր չնայած իր փոքրաթիվության ու
թուլության և շնորհիվ համաշխարհային պատերազմին և «ազ-
գային քաղքենիության կործանարար քաղաքականության», բան-
վոր դասակարգը օբյեկտիվորեն հանդիսանում եր հեղափոխա-
կան շարժման ղեկավարող շարժիչ ույժը, առաջապահը և վող-
նաշարը:

Ցիտատները վերաբերում են գրքի առաջին եջերին: Կար-

դալով այդ տեղերն ուզում ես միանգամից բացել վերջին էջերը և նայել, թե ինչո՞վ վերջացավ այդպիսի ապստամբությունը։ Իրոք, յեթե բանվորական շարժումն ինքնին խոշոր սոցիալական յերևույթ չեր և յեթե անգամ կուսակցական կազմակերպության մարտական ույժը պետք ե համապատասխաներ թույլ պրոլետարիատի ույժին, ապա ճշմարտապես կասկած ե առաջ գալիս, արդյո՞ք այստեղ վորևե արկածախնդրություն չեր սկսվում։ Բայց ընկ. Ս. Հ., վոչ մի տեղեկություն չտալով Հայաստանի բանվորական շարժման, պրոլետարիատի վորակի և քանակի մասին, սառնարյուն կերպով պնդում ե. վորքան ել «ինքնին տարորինակ» և զարմանալի յե, այնուամենայնիվ այդ հետամնաց գյուղացիական յերկրում յերկաթուղային պրոլետարիատը իր վրա վերցրեց հեղափոխական շարժման ղեկավարի դերը։

Ի՞նչպես կարող եր այդ պատահել. պատասխանը պարզ ե. «Համաշխարհային պատերազմի ավերիչ ընթացքն ու ազգային քաղքենիության կորստաբեր քաղաքականությունը»— յեզրափակում ե-իր այդ միտքը ընկ. Ս. Հ. Թվում ե թե համաշխարհային պատերազմը և ավելացրած դրան վորևե քաղաքականություն—արդեն իսկ դա հետպատերազմական բոլոր խոշոր պատմական անցքերի ամենահեշտ բացատրությունն ե։ Բայց այստեղ խոսքը նաև հեղափոխական պատերազմի մասին ե վորոշ պայմաններում և կոնկրետ միջավայրում, հեղափոխական և հակահեղափոխական ույժերի փոխհարաբերության և հաշվառման մասին։ Կարո՞ղ եր արդյոք յերկաթուղային պրոլետարիատը դառնալ զինական ապստամբության ծանրության կենտրոնը և իր վրա կենտրոնացնելով թշնամու գլխավոր հարվածները՝ լուծել դաշնակցական կառավարության հետ ունեցած վճռական մարտի բախտը, մի կառավարության, վոր ամեն մի րոպե կարող եր բանվորների դեմ հանել միայն ապադասակարգայնացած տարրեր ավելի շատ, քան բանվորների թիվը։ Դեռ ավելին. կարո՞ղ եր արդյոք բանվոր դասակարգը մեր կուսակցությանը տալ այնքան ույժ և յեռանդ, վորպեսզի կարելի լիներ ընդգրկել հեղափոխական շարժումը և վարել հեղափոխական պետու-

թյունն այն ժամանակ, յերբ նա փաստապես չկարողացավ իր ձեռքը ձգել և իրականացնել թեկուզ մի քանի որով այն հեղափոխական իշխանությունը, վոր այնպես անոգնական կերպով ընկած եր Ալեք-պոլի փողոցներում։

Այս հարցի վրա մենք բավականաչափ կանգ առանք իր տեղում և ցույց տվինք, թե բանվորությունը ինչ ույժ եր ներկայացնում ապստամբությունը ղեկավարելու և հեղափոխական պետություն կազմակերպելու համար։ Մենք կանգ առանք նաև այն դրության վրա, վորի մեջ ընկան այն ընկերները, վորոնք կանգնած եյին այդ տեսակետի վրա։ Դժբախտաբար, ինչպես այդ կտեսնենք քիչ հետո, գրեթե այդպիսի բախտ ե վիճակվել նաև ընկ. Ս. Հ-ին. այդ նույն հարցում՝ այն գերագնահատության պատճառով, վորով նա ցանկացել ե գունավորել յերկաթուղու պրոլետարիատի դերը։ Ուստի մենք այստեղ չենք զբաղվի այդ սխալ մտքի յերկար քննադատությամբ, վորովհետև դրա համար ստիպված կլինեյինք կրկնել շատ բան նրանից, ինչ մենք ասել ենք գրեթե բոլոր գլուխներում։ Ավելի շուտ կաշխատենք համառոտակի ցույց տալու, վոր ընկ. Ս. Հ.-նի սխալը գլխավորապես ծագում ե այն բանից, վոր նա բավականաչափ պարզ և ոբյեկտիվորեն չի դնում Մայիսյան ապստամբության գնահատության հարցը, վոր հետևանք ե կոմունիստական կուսակցության մարտական քաղաքականություն և մասնավորապես Մայիսյան ապստամբությունը արդարացնելու անհաջող փորձի՝ Հայաստանի նման մի յերկրում, ուր չկար շատ թե քիչ ուժեղ բանվոր դասակարգ։

Ցարական Ռուսաստանի նախկին գաղութային հետամնաց ծայրագավառներում, ինչպիսին եր և Հայաստանը, մեր կուսակցության վարելիք քաղաքականության հարցը ընկ. Լենինը պարզ և կոնկրետ ձևով եր դնում Կոմինտերնի յերկրորդ Կոնգրեսին, ասելով. «Մեր թեզիսների յերկրորդ ղեկավարող միտքը կայանում ե նրանում, վոր արդի համաշխարհային դրության ժամանակ իմպերիալիստական պատերազմից հետո ժողովուրդների փոխադարձ հարաբերությունները, պետությունների ամբողջ համաշխարհային սիստեմը, վորոշվում են իմպերիա-

չխատական ազգերի փոքրիկ խմբակի մղած պայքարով խորհրդային պետությունների դեմ, վորոնց գլխին կանգնած ե Խորհրդային Ռուսաստանը»։ (Соб. Соч. т. XVII, стр. 274) Доклад комиссии на II конгрессе Коминтерна)։

Յեվ հենց նույն հարցի առթիվ 276 եջում շարունակում ե. «Ռուս կոմունիստների գործնական աշխատանքը առաջ ցարիզմին պատկանած գաղութներում և այնպիսի հետամնաց յերկրներում, վորպիսին Թուրքեստանն ե և այլն... մեր առաջ հարց դրեց, թե ինչ ձևով կոմունիստական տակտիկան և քաղաքականությունը կիրառել նախակապիտալիստական պայմաններում, վորովհետև այդ յերկրների կարևորագույն բնորոշ գիծը հանդիսանում ե այն, վոր նրանց մեջ իշխում են դեռ նախակապիտալիստական հարաբերություններ, և ուստի այստեղ չի կարող խոսք լինել զուտ պրոլետարական շարժման մասին։ Այդ յերկրներում գրեթե արդյունագործական պրոլետարիատ չկա։ Չնայած դրան, մենք այստեղ մեզ վրա վերցրինք և պետք ե վերցնեյինք ղեկավարների դերը»։

Հասկանալի յե, վոր ընկ. Լենինը նկատի ուներ վոչ թե ռուս կոմունիստներին, այլ Ռուսաստանի կոմունիստներին, այսինքն՝ Ռ. Կ. Կ. անդամներին, նրանց առանձնացնելով գերմանացի, ֆրանսացի և այլ յերկրների ընկերներից, ինչ չափով վոր այդ խոսքերը ասվում եյին Կոմինտերնի կոնգրեսում։ Յեվ այդ իմաստով նա նկատի ուներ և մեզ, Հայաստանում ու ընդհանրապես Անդրկովկասում, վորովհետև ինչպես Հայաստանի, նույնպես և Վրաստանի ու Ադրբեջանի Կոմունիստներս եյապես Ռ. Կ. Կ. անդամներ եյինք։ Այդ իսկ պատճառով մեր քաղաքականությունը Հայաստանում պիտի լիներ Ռ. Կ. Կ. (այժմ Համամիութենական) քաղաքականությունը հետամնաց գյուղացիական յերկրում յուր ազգային առանձնահատկություններով։ Վոչ միայն հիմք չկա վախել խոսելու այդ մասին պարզ կերպով, այլ ընդհակառակը վորքան ավելի շատ ու պարզ խոսել այդ մասին, այնքան ավելի լավ։ Ընկ. Ա. Հ-ը մեզնից թերևս վոչ պակաս լավ եր հասկանում այդ, յերբ գրում եր իր գիրքը։ Բայց հարցը

դրանում չե, այլ նրանում, վոր նա Մայիսյան դեպքերի գնահատության մեջ լիովին և հետևողականորեն չի պահպանում այդ յ՛լակետը։

Այժմ տեսնենք, թե ինչով վերջացավ ընկ. Ա. Հ.-նի ապստամբությունը, և թե ինչու չեր կարող այլ կերպ վերջանալ։ Դրա համար վերցնենք վերջին յեզրափակող գլխից մի ցիտատ, վոր արտահայտում ե հեղինակի վերջին և ավելի ավարտված միտքը մայիսյան ապստամբության գնահատության մասին. «բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում եր մայիսյան ապստամբությունը, վոր բռնկեց Հայաստանի տարբեր վայրերում։ Սրա մեջ եր ապստամբության ուժը, բայց և սրա մեջ եր նրա թուլության ու պարտության հիմնական պատճառը։ Չկար քանակով և վորակով ուժեղ բանվորություն, վոր անցնելով մասսայական այդ շարժման առաջին շարքերը, իր գործողություններով կարողանար գույն և ուղղություն տալ նրան։ Չկար նաև կուսակցական զորեղ կազմակերպություն, վոր ղեկավարեր ապստամբական բովանդակ շարժումը՝ ապահովեր նրա հաղթությունը»։

Ճիշտ ե, վոր դա բանվորների, գյուղացիների և զինվորների լայն մասսայական շարժում եր։ Սակայն նկատենք, վոր նախ՝ վերջին հաշվով և բանակում և նույնիսկ մասամբ յերկաթուղագծում ապստամբվել եր նույն գյուղացին, յերկրորդ՝ այնքան ել պարզ չե, թե ինչպես «սրա մեջ եր ապստամբության ույժը, բայց և սրա մեջ եր նրա թուլությունն ու պարտության հիմնական պատճառը», թեպետ կարելի յե յենթադրել, վոր խոսքը վերաբերում ե ապստամբության տարերային բնույթին։ Բայց այստեղ գլխավորն այդ չե, այլ այն, վոր «չկար քանակով և վորակով ուժեղ բանվորություն» և այլն։ Այստեղ հեղինակը, կարծեք, ուզում ե բացասել այն, ինչ նա ասել ե գրքի սկզբում, բայց միանգամայն ուշ և անոգուտ կերպով։ Հենց բանն ել այն ե, վոր չկար «քանակով ու վորակով ուժեղ բանվորություն» և այդ ել պետք ե շեշտվեր գրքի սկզբում նույն իմաստով, ինչ իմաստով շեշտվում

է այդ գրքի վերջում, վորպեսզի ասացյալը հասկանալի լիներ։ Այդպիսի դեպքում գրքի հեղինակը, ընդունելով, վոր Հայաստանում, չնայած «համաշխարհային պատերազմի քայքայիչ ընթացքին և ազգային քաղքենիության կորստաբեր քաղաքականության», չկար այնպիսի ուժեղ պրոլետարիատ, վորը կարողանար շարժման առաջին շարքերն անցնել և այլն—պետք է պատասխաներ այն հարցին, թե կամ մայիսյան ապստամբությունը կոմունիստների արկածախնդրությունն եր, կամ թե այդ ապստամբությանը մենք պետք է մոտենայինք այլ ուղիով, վորի մասին մենք յերկար խոսել ենք իր տեղում և վորը միանգամայն հնարավոր եր։

Իսկ ի՞նչու չկար ուժեղ կուսակցական կազմակերպություն, և կարելի՞ յեր արդյոք այն ունենալ։ Այդ հարցին ընկ. Ա. Հ. պատասխանում է իր գրքի առաջին եջերում այն ցիտատով, վոր մենք մի անգամ արդեն մեջ ենք բերել, այսինքն՝ «բանվորական շարժումը Հայաստանում սոցիալական խոշոր յերևույթ չեր ինքնին։ Դրան համապատասխան սահմանափակ պիտի լիներ նաև այդ շարժումը ղեկավարող կուսակցական կազմակերպության մարտական զորությունը» (եջ. 9)։

Հարցի այդպիսի անորոշ դրումից ստացվում է մի դրություն, ըստ վորի կարծեք թե ամեն ինչ կատարվում եր այնպես բնականորեն, վոր ուրիշ կերպ չեր ել կարող լինել. այսինքն՝ թե կուսակցությունը թույլ եր, վորովհետև պրոլետարիատը թույլ եր. պրոլետարիատը պետք է ոբյեկտիվորեն ղեկավարեր ապստամբությունը, և ղեկավարում եր, բայց պետք է պարտություն կրեր, ու կրեց, վորովհետև թույլ եր և այլն։ Ինչպես վոր այդ ուղիով մայիսյան ապստամբությունը չեր կարող հաջողվել, և չհաջողվեց, այնպես ել այդ տեսակետով այդ ապստամբության գնահատականը չեր կարող լիովին հաջողվել, և չի հաջողվել։

Այդ ամենից հետո մենք նույն յեզրափակող գլխում (45—46-րդ եջ.) կարդում ենք. «Յեթե Արմենկոմը վստահ եր ապստամբական շարժման, անգիտանալով մասսաների հեղափոխական

տրամադրության փաստը, ապա կուսակցության Ալեքսանդրապոլի կենտրոնը, վոր ճշտորեն արձանագրեց այդ փաստը, գերագնահատեց նրա ինքնամփոփ նշանակությունը և ճակատագրական կերպով տարվեց բռնկած ապստամբությունն անարյուն հաղթանակով պսակելու ցնորքով»։ Ապա խոսվում է այն մասին, վոր հեղափոխական կոմիտեն չկարողացավ հեղափոխական շարժումը կազմակերպչական հունի մեջ դնել, անվճռական, պասսիվ հանդիսացավ և այլն։ Սրա դեմ մենք առանձին առարկություններ չունենք, բայց հիշեցնում ենք, վոր ռազմա-հեղափոխական կոմիտեն փաստորեն միևնույն Ալեք-պոլի կոմիտեն եր, վորի անվճռականությունը և պասսիվությունը զինական պայքարի գործում հետևանք եր այն սխալի, վորը ընկ. Ա. Հ. իր հովանավորության ներքո յե առնում։ Յերկուսից մեկը համենայն դեպս պիտի պարզ լինի. կամ կուսակցական թույլ և սխալ ղեկավարությունն եր գլխավոր պատճառը մայիսյան պարտության և կամ «վորակով և քանակով ուժեղ» պրոլետարիատի բացակայությունը։ Այլ խոսքերով՝ կամ այդ պատճառը առավելապես սուբյեկտիվ եր, կամ ոբյեկտիվ։ Այս կարևոր հարցն է, վոր չի պարզվում ընկ. Ա. Հ. ի գրքից։

Ճիշտ է, վոր Արմենկոմն անգիտացել եր մասսաների հեղափոխական տրամադրությունը, բայց յեթե իրոք յերկրներում չկար ուժեղ պրոլետարիատ, վորը ապստամբության գլուխը և առաջին շարքերն անցներ, և յեթե դա հաջող ապստամբության համար եական ու վճռական պայման եր, ապա նա իրավացի յեր, անգիտանալով այդ փաստը իշխանության հեղափոխական գրավման տեսակետից։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, վոր Ալեք-պոլի կուսակցական կենտրոնը ճիշտ հաշվի առավ այդ փաստը, ապա պետք է ասել, վոր նա այդ հաշվի առավ ճիշտ այնպես, այսինքն այնպիսի մի մեծ սխալով, ինչպես և, այսինքն ինչպիսի սխալով, ընկ. Ա. Հ. պատմականորեն գնահատել է այդ փաստը։

Հայաստանում 20 թվի պայմաններում Մայիսյան ապստամբության մեջ իրավացի կլիներ և անկասկած կհաղթեր այն կոմունիստը, վորը չսահմանափակվելով և չբավարարվելով սա-

կավաթիվ բանվորական շրջանակով, կգնար գյուղը և կմտներ բանակ ու այնտեղ կկազմակերպեր և կօգտագործեր գոյություն ունեցող հեղափոխական նյութը, իր առջև դրված անմիջական մարտական խնդիրները իրագործելու համար, հիմնական յելակետ ունենալով Հոկտեմբերյան Հեղափոխության դիրքերը և Անդրկովկասի հեղափոխական շարժումը, վոչ մի րոպե չիջնելով պրոլետարիատի իդեոլոգիայի և քաղաքականության բարձունքից և հմտորեն կիրառելով այդ քաղաքականությունը գյուղացիական յերկրի յուրահատուկ հեղափոխական պայմաններում:

ՄԻ ՔԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Մայիսյան ապստամբությունը հետևանք էր յերկու գըլխավոր, հիմնական և խոշոր պատմական պատճառների: Այդ պատճառներից մեկը կայանում էր նրանում, վոր Հայաստանի աշխատավոր մասսաների համար, Հոկտեմբերից հետո, Անդրկովկասի քաղաքական և տնտեսական պայմանները միանգամայն աննպաստ դասավորվեցին, ներքին ու արտաքին միացյալ հակահեղափոխական ուժերի ժամանակավոր հաղթանակի հետևանքով Անդրկովկասում: Մյուս պատճառն էլ այն էր, վոր դաշնակցական կառավարության խելագար ու արկածախընդիր քաղաքականությունը և ներքին վայրենի ռեժիմը սրեցին, խորացրին և բարդացրին այդ պայմանները:

Մայիսյան դեպքերը հանդիսանում են Հայաստանի աշխատավոր ժողովրդի պատմության մեջ բեկման մի խոշոր մոմենտ, վորպես աշխատավոր մասսաների ակտիվ և բաց կռվի սկիզբ հանուն նոր դարաշրջանի, պատմության հետագա զարգացման նոր ուղիների: Այդ դեպքերը առաջին և ամենահետաքրքիր գըլուխն են կազմում Հայաստանի հեղափոխական խորհրդային շարժման և հետևաբար ավելի մեծ ուշադրության են. արժանի, քան նրանք արժանանում են մեր կողմից: Այդ կիսակազմակերպ տարերային մասսայական ապստամբության ուսումնասիրությունը ներկայացնում է մեծ հետաքրքրություն ինչպես նրան առաջացնող պատճառների, նույնպես և նրա պարտության պատճառների տեսակետից:

Մայիսյան անցքերը Հայաստանի Խորհրդային իշխանության և նրա կոմունիստական կազմակերպության հիմքի ամուր շաղախը հանդիսացան: Սակայն այդ շաղախը էլ ավելի ամուր կլիներ, յեթե հաջողվեր ապստամբությունը. իսկ

նա կհաջողվեր, յեթե իր ժամանակին իրացված լինեյին ընդհատակի բոլոր հնարավորությունները՝ ստեղծելու համար ավելի ուժեղ և ամուր կուսակցական կազմակերպություն՝ կենտրոնացած ճիշտ քաղաքական ղեկավարությամբ։ Ապստամբությունը իր ամբողջությամբ նախապատրաստված չէր Արմենկոմի կողմից։ Բայց չնայած դրան, ապստամբության օրերին ճիշտ և վճռական քաղաքականություն լինելու դեպքում, դաշնակցական կառավարության տապալումը և Խորհրդային Իշխանության հաստատումը հնարավոր էր, յեթե նկատի առնենք բացառիկ հեղափոխական սիտուացիան,—այսինքն այն, որ թշնամին քաղաքականապես, իսկ ապստամբության առաջին օրերին նույնիսկ կազմակերպչորեն ու ռազմական տեսակետից, անհամեմատ ավելի թույլ էր մեզնից ինչպես յերկրի ներսում, նույնպես և նրանից դուրս։ Բայց շնորհիվ ապստամբության սխալ ղեկավարության մեր կողմից, թշնամին կարողացավ ստեղծել իր համար կազմակերպչական ու ռազմական տիրող դրություն հեղափոխական ուժերի հանդեպ։

Ադրբեյջանի խորհրդայնացումից և Կարմիր բանակի՝ Հայաստանի սահմաններին մոտ յերևալուց հետո, հազիվ թե վորևէ ուժ կարողանար հեղափոխական բանվորների, գյուղացիների և զինվորների զինված ապստամբության առաջն առնել։ Միակը, վոր կարելի կլիներ անել կուսակցության խելացի և ուղիղ քաղաքականության դեպքում—այդ՝ ապստամբության որվա հետաձգումն էր, այն ավելի լավ կազմակերպելու և ղեկավարելու համար։ Ժողովուրդն ինքն ապստամբեց. ապստամբությունը մասսայական էր, տարերային և ընդգրկեց համարյա բոլոր գավառները և Հայաստանի շրջանների մեծ մասը։ Ապստամբության դեմ ճգնաժամային մոմենտում ծառացան, վորպես միակ իրական մարտական ուժ, մի հազարի անգամ չհասնող գաղթականներ և մաուզերիստներ՝ խմբապետների ղեկավարության ներքո։ Կոմունիստները փորձեցին ղեկավարել ապստամբությունը, իշխանությունն ինքը փնտրում էր կոմունիստներին, բայց տարաբախտաբար նրանք չկարողա-

ցան վերցնել այն։ Հարյուր հազարավոր աղքատ ու սոված գյուղացիների, բանվորների և զինվորների հեղափոխական շարժումը այնպես հեշտորեն ճնշվեց միևնույն փոքր հակահեղափոխական խմբի կողմից։ Հեղափոխական մասսան ժամանակավորապես հիասթափվեց ու լքվեց, հեղափոխական տրամադրությունն ընկավ մի առ ժամանակ. և կարծես պետք է լիներ Ղարսի պատերազմը, վորպեսզի արագանար նոր հեղափոխական վերելքը, վորպեսզի նորից յերկրում բարձրանար հեղափոխական մրրիկը։

Ի՞նչու այդ բոլորն այդպես պատահեց։ Այդ հարցին մենք առանձին ուշադրություն դարձրինք այս գրքույկում, վորովհետև մեր հեղափոխական գրականության մեջ այդ հարցը լիովին չի պարզաբանված։ Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը նրան պարզ և վորոշ պատասխան չի ավել, իսկ ընկ. Կասյանը նույնիսկ ապստամբությունից յերկու տարի հետո, յեթե վոչ մինչև հիմա, չճանաչեց այն գլխավոր սխալները, վորոնք Մայիսյան ապստամբության պարտության պատճառը դարձան։

«Միայն այն ժամանակ, յերբ «վարի խավերը» չեն ուզում հինը և յերբ «վերի խավերը» չեն կարողանում ըստ հնի, միայն այդ ժամանակ հեղափոխությունը կհաղթի»։ (Ленин, «Детская болезнь левизны в коммунизме», Собр. соч. т. 17 стр. 172)։ Ընկ. Լենինը խոսում է հեղափոխության օբյեկտիվ պայմանների մասին, նախազգուշացնելով կոմունիստներին ավելորդ հեղափոխականությունից և անզգույշ քաղաքականությունից։ Մենք նպատակ դրինք պարզելու, թե կա՞յին այդ օբյեկտիվ պայմանները Մայիսյան ապստամբության համար, թե՝ ճիշտ են մեր թշնամիների և կասկածելի բարեկամների այն պնդումները, թե՝ այդ ապստամբությունը կոմունիստների արկածախնդրությունն էր։ Հաջողվե՞ց մեզ համոզել ընթերցողին, վոր թե արտաքին և թե ներքին օբյեկտիվ պայմանները 20 թ. մայիսին, Հայաստանում հաջող ապստամբության և իշխանության գրավման համար լիովին հասունացած էյին, վոր «վարի խավերը չեյին ուզում հինը, իսկ վերի խավերը չեյին կարողանում ըստ հնի»։

Հաջողվեց արդյոք միաժամանակ համոզել ընթերցողին, վոր հաջող ապստամբության համար պակասում եյին միայն անհրաժեշտ սուբյեկտիվ պայմաններ, այսինքն՝ կուսակցական ճիշտ քաղաքականություն, ամուր և ուժեղ մարտական կազմակերպություն և ապա զինված կռվի խելացի կենտրոնացած ղեկավարություն։ Յեթե մեզ փոքր ինչ չափով հաջողվեց համոզել մեր նպատակին, ապա մնում է այստեղ բավարարվել միայն հիշեցնելով ընթերցողին դաշնակցական տիրապետության այն պատմական շրջանի մասին, վորը առաջացավ Հայաստանում Մայիսյան ապստամբության անհաջողությունից հետո մինչև 20 թ. նոյեմբերի վերջը. կոմունիստական կազմակերպությունների կամալուծումը, դաժան և բարբարոս հալածանքներ, հեղափոխական ուժերի քայքայումը, յերկրի նոր ավերումն և դաշնակների Ղարսի արկածախնդրությունը իր բոլոր քայքայիչ հետևանքներով։ Ահա ինչ եր նշանակում բաց թողնել հաջող մոմենտը և չվերցնել իշխանությունն այն ժամանակ, յերբ այդ հնարավոր եր և անհրաժեշտ։

Իսկ ի՞նչ կլիներ մայիսյան հաղթանակից հետո. դաշնակցական կառավարությունը տապալելով կկարողանայի՞նք մենք արդյոք իշխանությունը հետագայում պահել մեր ձեռքում, կհաղթահարե՞յինք պարենավորման դժվարությունները, չե՞յինք կատարի մեծ քաղաքական սխալներ և այլն,— հաճախ մենք լսում ենք շատ ընկերների կողմից։ Պատասխանել այդ հարցերին և դժվար է և անօգուտ, քանի վոր նրանց ինքը պատմությունը չպատասխանեց։ Բայց մի բան համենայն դեպս պետք է պարզ լինի,—այդ այն է, վոր յեթե մայիսին հաղթեյինք, այդ դեպքում Հայաստանի հեղափոխական խորհրդային շարժման պատմությունը կընթանար այլ ճանապարհով, վորը համենայն դեպս ավելի վատ չեր լինի, քան այն ճանապարհը, վորով այդ պատմությունն ընթացավ մայիսյան պարտությունից հետո.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերես

1) Նախաբան 3
2) Քաղաքական կացությունն Անդրկովկասում Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո . . 5
3) Դաշնակցական Հայաստանի տնտեսական կառուցվածքը 25
4) Դաշնակցության քաղաքականությունը և նրա դիկտատուրան Հայաստանում 39
5) Դրությունը յերկրի ներսում և մասսաների տրամադրությունը 62
6) Ինչպես եր կառուցվում և դաստիարակվում Հայաստ. կոմունիստ. կազմակերպությունը 84
7) Ինչպես եյին հասունանում դեպքերը . . . 95
8) Ապստամբությունը 103
9) Հայաստանի Կոմիտեյի (Արմենկոմի) քաղաքանությունը և Ալեք-պոլի Կոմիտեյի հիմնական սխալը 132
10) Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի սխալը Մայիսյան անցքերի գնահատության հարցում . . . 156
11) Մի քանի ամփոփումներ 165

ՀՀ Ազգային գրադարան
NL0413197

5486